ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԸ ԵՎ «ԱՐՄԵՆԻԱՆ»

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄԻ

Մ. Փորթուգալյանը և «Արմենիան» հայ ազգային-ազատագրական պայքարում

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
196

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
196

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Կ 294

Խմբագիր՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Խառատյան

Կարապետյան Արմեն
Կ 294 Մ. Փորթուգալյանը և «Արմենիան» հայ ազգային-ազատագրական պայքարում/Ա. Կարապետյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019. –322էջ:

Աշխատությունը նվիրված է հայ ազգային-ազատագրական շարժման անվանի գործիչ Մկրտիչ Փորթուգալյանի կյանքին և գործունեությանը, «Արմենիա» պարբերականի հրատարակությանը: Հիմնարար կերպով բացահայտվում են «Արմենիայի» գաղափարաքաղաքական նպատակներն ու ուղղությունները, հեղափոխական և ազգային-ազատագրական գործի կազմակերպման մոտեցումներն ու սկզբունքները: Ցույց է տրված հայկական իրականության ճշմարիտ արտացոլման ընթացքը պարբերական էջերում, հայ քաղաքական ուժերի և հոսանքների նկատմամբ վերաբերմունքի արտահայտումը:

Ներկայացված է Մ. Փորթուգալյանի՝ որպես հասարակական-քաղաքական գործչի հայացքների էվոլյուցիան, լրագրի դերի, գործառույթների և նշանակության կարևորումն ու իմաստավորումը պարբերականի կողմից: Աշխատության հիմնական առանցքը կազմում է Հայկական հարցի զարգացումների շուրջ Փորթուգալյանի և նրա խմբագրած պարբերականի ունեցած դիրքորոշումների պարզաբանումն ու բացահայտումը:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-860-82-4 © ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ.....6
ԳԼՈՒԽ I
ԴԱՐԱՇՐՋԱՆՆ ՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ.....28
ԳԼՈՒԽ II
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ.....35
ԳԼՈՒԽ III
«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ «ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ».....74
ԳԼՈՒԽ IV
ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐԻՆ ԱՊԱՎԻՆԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ: ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄԸ.....84
ԳԼՈՒԽ V
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ.....104
ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ.....120
ԳԼՈՒԽ VII
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ: ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ.....140
ՄԱՍՆՈ 1904 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԵՎ ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ.....153
ԳԼՈՒԽ IX
ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՉՔԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ.....162
ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՋԱՌ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆԴԵՊ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ.....177

XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏԱԳՆԱՊՆԵՐ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ 190
ԳԼՈՒԽ XII
ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ 1908 Թ. ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՄԱՍԻՆ 212
ԼՐԱԳՐԻ ԴԵՐԻ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ 228
ԳԼՈՒԽ XIV
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ 246
ԳԼՈՒԽ XV
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ 266
ԳԼՈՒԽ XVI
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՈՒ ՎԱՍՏԱԿԻ ՄԱՍԻՆ 292
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 307
ԽՈՍՔ ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 317

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի պատմության մեջ եղել են օրհասական ժամանակաշրջաններ, երբ ազգի բուն գոյության իրավունքը դրված է եղել լինե՞լ-չլինելո՞ւ մեծ հարցականի ներքո: Այդպիսի դարաշրջաններ հանդիպել են միջնադարում և, մանավանդ, նոր ժամանակներում: Այդ կարգի օրհասական (թերևս՝ ամենաօրհասական) ժամանակաշրջան է հանդիսանում 19-րդ դարի երկրորդ կեսից մինչև 1915-20-ական թվականներն ընկած շրջափուլը, երբ թվում էր, որ համատարած կոտորածներն ու մղձավանջը կավարտվեն հայ ժողովրդի վերջնական կորստյամբ: Վերոնշյալ դարաշրջանը մի կողմից կորուստների և ողբերգության հարատև գործընթաց էր, մյուս կողմից, այն խիզախումի, անձնազոհ պայքարի և հերոսականության կնիքն էր կրում իր մեջ:

Վերոնշյալ դարաշրջանը որքան ողբերգական, նույնքան հերոսաշունչ էջեր գրեց հայ ժողովրդի տարեգրության մեջ: 19-րդ դարի երկրորդ կեսից նորից աշխուժացավ հայոց ազգային-ազատագրական շարժումը, որը դեռևս վաղ ժամանակներից միշտապես եղել է մեր ժողովրդի պատմության ուղեկից գործոնը: Ինչպես հին ժամանակներում, այնպես էլ նոր պատմության շրջանում հայ ժողովուրդը երբեք անմռունչ չի կրել օտար բռնակալությունների լուծը:

Սակայն հայ ժողովրդի պայքարը օսմանյան բռնապետության դեմ 19-րդ դարավերջին, որը նաև որոշ չափով ընդունեց զինյալ դիմակայության բնույթ, իրավ անհավասար գոտեմարտ

էր, քանզի հակամարտող կողմերի ուժերը, միջոցները, ռեսուրսներն ու հնարավորությունները խիստ անհավասար էին:

Չնայած վերոնշյալ հանգամանքին, հայ ժողովրդի լավագույն զավակները ըմբոստության դրոշ պարզեցին թուրքական բռնակալության դեմ: Այդպես եղավ, քանզի ժողովուրդը չէր կարող սպասիվ դիտորդի վիճակում գտնվել՝ մինչև իր հայրենիքի վերջնական հայաթափումն ու կորուստը:

Ճիշտ է, որ հայոց ազատագրական շարժումը ծայր էր առնում անպատեհ պահի, երբ ներքին ու արտաքին հանգամանքները բոլորովին նպաստավոր չէին այդ բանի համար: Սակայն, ինչպես ժամանակին նշում է անվանի հրապարակախոս Բախշի Իշխանյանը «Փույթ չէ ամենևին այս կամ այն ապստամբող ժողովուրդի համար, թե՛ արդյոք, իր ազատագրության գնով կկործանվի տիրող պետական ռեժիմը, թե՛ նա կմնա դարձյալ իր նախկին հզոր վիճակի մեջ»[1]: Դեռևս չկար նախնական պատրաստությունն ու պատրաստվածությունը, չկար զինված ուժն ու ուժ համախմբելու իդեալական կարողություններն ու հնարավորությունները, սակայն արդեն 1880-ական թթ. հնչում էին ընդվզումի և ապստամբելու կոչերն ու հորդորները թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ իրականության մեջ: 1880 թ. «Մշակ» պարբերականը իր էջերում զետեղում էր Վանից ստացած թղթակցություններն այն մասին, թե «Հայկական խնդիրն այսօր բոլորովին պաշտոնական հանգամանք մը առած է և Հայաստանում տիրող անիշխանությունը և հարստահարության շարունակվելը հայկական ապստամբության գոյություն տված

[1] «Մշակ», 1880 թ., թիվ 207:

է: ... Հայ ժողովուրդն արթնացած է և պատրաստվում է իր գոյությունը զինավորությամբ հայրենի երկրում պաշտպանելու»[1]:

Հայի և թուրքի միջև ընթացող պայքարը վերածվել էր հողազուրկ ռայայի և հողատեր ձրիակերների հակոտնյա բևեռների անլուծելի ու անհաղթահարելի անտագոնիզմի: Թուրքը ձգտում էր տնտեսական ու քաղաքական առումներով ոչնչացնել հայի ինքնությունն ու ինքնուրույնությունը, նրան վերջնականապես տարրալուծել թուրք-մահմեդական էթնոսի մեջ և դարձնել օսմանցի: Հատկապես Բեռլինի կոնգրեսից հետո թուրքական մամուլի և հրապարակագրության էջերում կտրուկ ուժգնացավ հակահայկական հիստերիան, որը տարվում էր հնարավոր բոլոր միջոցներով (պատմական փաստերն ու իրադարձությունները լիովին խեղաթյուրելով, ընթացիկ եղելություններին միանշանակորեն հակահայկական բնույթ ու գունավորում տալով): Իսկ այդ առումով թուրքական պետականությունը անգերազանցելի փորձ ուներ և կատարելապես տիրապետում էր ստի, երկդիմության, խարդախության ու ապատեղեկատվության հարուստ մեթոդների ողջ զինանոցին: Ամեն անգամ, երբ Արևմտյան Հայաստանում տեղի էին ունենում սոսկալի իրադարձություններ, երբ հեղվում էր հազարավոր հայ մարդկանց արյունը, սուլթանական իշխանության բանագնացները մեկնում էին եվրոպական մայրաքաղաքները, փակելու զանգվածային լրատվամիջոցների բերանները կամ այարզապես բոլորովին ծուռ հայելու մեջ՝ գլխիվայր ներկայացնելու տեղի ունեցածը: Եվ կարելի է ասել, որ թուրքական իշխանութ-

---

[1] Նույն տեղում:

յուններին մշտապես հաջողվում էր գործել վերոնշյալ սցենարով, ինչը թույլ չէր տալիս համաշխարհային հասարակայնությանը ժամանակին, ճշգրիտ և ամբողջական տեղեկատվություն ստանալու Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձությունների վերաբերյալ:

Սուլթան Համիդի իշխանության ժամանակ ստեղծվել էր ներքին և արտաքին դաժան գրաքննության համակարգ, որի նպատակն էր արևմտահայության ծանր, ստրկական վիճակի վերաբերյալ ճշմարիտ տեղեկատվությունը չհասներ եվրոպական երկրների հասարակայնությանը: Թուրքիայում արգելված էին հրատարակել այն նյութերը, որոնցում տեղ կգտնեին «իրավունք», «ազատություն», «հավասարություն», «հերոսություն», «քաջություն», «միավորվել», «բռնակալություն», «զենք» և համանման այլ տերմիններ: Խավարամոլները արգելել էին անգամ քիմիայի ու հանրահաշվի առարկաների հետ կապված որոշ նյութեր, նրանցում տեսնելով թաքնված վտանգավոր մտքեր: Այսպես, գրաքննիչները H_2O ջրի ֆորմուլայում «տեսնում» էին վտանգավոր պասկվիլ՝ «Hamid II = 0»-ի[1]:

Ավելորդ ենք համարում նշել, որ նման պայմաններում թուրքական գրաքննությունը արգելել էր մամուլում և գրականության մեջ օգտագործել «Հայաստան», «Հայկական խնդիր», «Ինքնավար Հայաստան» և այլ հասկացություններ:

Հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ճանապարհին կանգնած ամրակուռ ամրոցը՝ օսմանյան բռնապետությունը այդպես էլ խորտակել չհաջողվեց:

---

[1] Բայրամյան Լ., Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Ե., 1982 թ., էջ 28:

Ըստ ժամանակի հայ հրապարակագրության հարցադրումների, թե ե՞րբ հնարավոր կլինի որևէ ճնշված ժողովրդի կամ մի քանի ժողովուրդների կիսանկախ կամ ամբողջական ազատագրումը տիրող բռնակալական ռեժիմի լծից և որոնք էին այն գրավական միջոցները, որոնց ապավինած թուրքական բարբարոսությանը ենթակա ազգությունները կարող էին վարել իրենց ճակատագրական կռիվը, ի վերջո հանգում էին հետևյալ եզրահանգումներին. «*Կամ պիտի ընդունել նախ այն, որ բռնակալության լուծը թոթափող ապստամբ ժողովուրդը թուլացնում է իր մահացու թշնամուն, ջախջախում նրա գերազանց ուժը, հաղթում նրան և այդպես ազատվում, երկրորդ կամ այն, որ իշխող մարմինը տիրապետող դինաստիան, «մարդասիրաբար», ասենք, թե «դիվանագիտաբար» ազատություն է շնորհում իր այս կամ այն հպատակ ժողովրդին, երբ վերջինս չի ուզում այլևս մնալ պետության շրջանակում, կամ թե չէ պիտի ընդունել, որ մի երրորդ ուժ, մի միջին մարմին ինչ-ինչ մոտիվներով գրգռված միջամտում է ճնշողին ու ճնշվողին և դյուրացնում վերջինիս ապստամբության հաջող ելքը, աջակցում նրա ազատագրությանը*»[1]:

Հայ ազատագրական-քաղաքական միտքը հակված էր կարծելու, որ վերոնշյալ առաջին և երկրորդ ուղիները այնպիսի ուտոպիական միջոցներ են, որոնցով չի ազատվել և երբեք չի կարող ազատվել որևէ տաճկահպատակ ժողովուրդ: Երրորդ ուղին հանդիսանում էր ամենառեալականը և «մինչև օրս միակ

---

[1] Ալոյան Լ., «Մշակի» հրապարակախոսները 19-րդ դարավերջ, 20-րդ դարասկիզբ, Ե., 2014 թ., էջ 59:

հնարավոր միջոցը, որով ազատվել են և Հունաստանը, և Ռումինիան, և Սերբիան, և Չերնոգորիան, և Բոսնիան ու Հերցեգովինան, և Բուլղարիան, և Կրետեն»[1]: Ըստ սույն տեսակետը կրողների, այդ բոլոր երկրները ազատվել են ոչ թե զլխավորապես այն պատճառով, որ նրանք ապստամբել, հեղափոխական անանման հերոսություններ են ցույց տվել, այլ հիմնավորապես «այն պատճառով, որովհետև նրանցից մեկի թե մյուսի ապստամբությունը եղել է արդյունք եվրոպական երկրների հավաքական միջամտության, մի քանի պետության մասնակի ինիցիատիվի»[2]:

Ցավոք, հայոց ազգային-ազատագրական շարժման առջև այդպես էլ փակ մնացին վերոնշյալ երեք ուղիները: Ոչ սեփական ուժերով, ոչ հակառակորդի «մարդասիրական հոգածությամբ», ոչ դրսի միջամտությամբ չկայացավ հայ ժողովրդի և նրա բազմաչարչար հայրենիքի ազատագրությունը:

19-րդ դարի երկրորդ կեսից սկսած հայ հասարակաքաղաքական միտքը՝ հանձինս տպագիր մամուլի և ազգային քաղաքական գործիչների, գրողների, հրապարակախոսների, մանկավարժների և այլն, տենդագին ջանքեր էին թափում որոնելու ու գտնելու հայրենիքը վերահաս կործանումից փրկելու ուղիներն ու տարբերակները:

Այդ որոնումները երբեմն հախուռն էին, հակասական ու իրարամերժ, սակայն, այնուհանդերձ քաղաքական բոլոր ուժերի և գործուն անհատների կողմից օրակարգում դրված էր Հա-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

յաստանի փրկության ու նրա քաղաքական ապագայի գաղափարը: Տեղի էր ունենում ազգի հոգևոր ու բարոյական ուժերի աննախադեպ զարթոնք, որն ընդգրկել էր ողջ հայությանը՝ ամբողջական հայրենիքին՝ առանց բաժան-բաժան եղած մասերի ու հատվածների:

Հայ ազգի ինքնաճանաչման գործընթացի խորությանը նպաստեցին արևմտահայ ու արևելահայ անվանի մտավորական ու հոգևորական գործիչները՝ Մ. Փորթուգալյանն ու Ա. Արփիարյանը, Ն. Վարժապետյանն ու Մ. Խրիմյանը, Ծերենցն ու Ռ. Պատկանյանը, Գ. Սրվանձտյանցն ու Մ. Մամուրյանը, Պ. Դուրյանն ու Մ. Պեշիկթաշլյանը, Գր. Արծրունին ու Ռաֆֆին, Ստ. Նազարյանն ու Մ. Նալբանդյանը և շատ ուրիշներ: 19-րդ դարի երկրորդ կեսում Արևմտյան Հայաստանում գործած ազգային անհատների շարքում իր ծավալուն, բազմաբովանդակ և անմնացորդ նվիրումով գործունեությամբ առանձնանում է **Մկրտիչ Փորթուգալյանը**:

Սովորական մի դեմք չէր Փորթուգալյանը, որ երևաց հայ ազգային-քաղաքական հորիզոնում: Նրա գործունեությունը և գործառույթները բազմակողմ էին, բազմաշնորհ: *Ժամանակի աննպաստ և ծանր հանգամանքների մեջ նա իրեն դրսևորեց որպես լավագույնս պատրաստված մանկավարժ, բազմահմուտ գրչի մշակ՝ լրագրող բանաստեղծ, խմբագրապետ, լայն մտահորիզոնի տեր հրապարակախոս և վերջապես սթափ դատող ազգային-քաղաքական գործիչ:*

Իր ազատական ու հեղափոխական գործունեությամբ Մ. Փորթուգալյանը բացեց մի նոր էջ և ամբողջ մի դարաշրջան հայ

ազգային-ազատագրական շարժման տարեգրության մեջ: Սույն աշխատությունը մի համեստ փորձ է ներկայացնելու Մկրտիչ Փորթուգալյան ազգային-քաղաքական ու հեղափոխական գործչին, խմբագրին ու խմբագրապետին, մանկավարժ-ուսուցիչ-դաստիարակին և բոցաշունչ հրապարակախոսին:

Մի անհատի, որի անունն ու գործունեությունը շղարշված է փառահեղ դրվագներով և որի մասին հիացմունքով են արտահայտվում ժամանակակիցներն ու հետագա սերունդները (նաև օտարներն ու օտարազգի գործիչները):

Մ. Փորթուգալյանի ողջ գործունեությունը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Իր գիտակցական կյանքի արշալույսին, երբ նա 20-21 տարեկան պատանի էր, սկսեց ուսուցչական գործունեությունը գավառում, մինչև 1885 թվականը, երբ սուլթանական իշխանության հրահանգով աքսորվեց Վանից: Դա նրա գործունեության առաջին շրջանն էր, երբ ուժերի անմնացորդ նվիրումով ծառայեց հայրենի ժողովրդին բուն երկրում:

Երկրորդ շրջանը սկսվում է 1885 թ. կեսերից, երբ հաստատվելով Ֆրանսիայի Մարսել քաղաքում, սկսեց հրատարակել «Արմենիա» անունով համազգային պարբերականը և իր հետագա ազգային-քաղաքական գործունեությունը մինչև վախճանը (1921 թ.) կապված է այդ պարբերականի հետ:

Բարդ ու ինչ-որ չափով հակասական է «Արմենիա» պարբերականի անցած ուղին:

Փորթուգալյանը ստիպված էր հաշվի նստել բազում անբարենպաստ հանգամանքների ու գործոնների հետ և երբեմն

ստիպողաբար էր որդեգրում գաղափարական այն միջանկյալ ուղեգիծը, որը չէր բխում իր էությունից և իր փայփայած ուղին չէր: Այնուամենայնիվ, նա միշտ ու մշտապես գաղափարաքաղաքական ոգորումների մեջ էր, ակտիվ, բորբոքուն փնտրտուքի ու որոնումների մեջ:

Դա այդպես է անկասկած, քանզի մեծ հայրենասերը կամովին ու մեծագույն նվիրումով էր ուսերին առել իր բազմաչարչար հայրենիքի ազատագրության գործը:

Եվրոպայում նրան ամեն ինչ դժվարությամբ տրվեց: Լրագիր հրատարակելու համար նա գործի դրեց իր լրագրական ու խմբագրական հսկայական փորձը, տարիներով ստեղծած ու խնայած նյութական միջոցները: Եվրոպայի հայերի շրջանում Փորթուգալյանը նոր մարդ էր, գրեթե անճանաչ շատերին և բնականաբար հույս չէր կարող տածել որևէ հովանավոր կազմակերպության կամ անհատ մեկենասի վրա[1]: Օտար քաղաքում՝ Մարսելում, որտեղ հայությունը սակավաթիվ էր, նա, այնուամենայնիվ, կարողացավ կազմակերպել լրագրի հրատարակության գործը: Խնայած բոլոր միջոցները գործի դրեց ձեռք բերելու հայկական տառեր, կազմավորելու տպարան և հրատարակությունը սկսելուց մեկուկես ամիս առաջ գովազդ-հայտարարություն տվեց իր պարբերականի լույս ընծայման, նրա հետապնդած նպատակների և խնդիրների մասին: Հայտարարվեց բաժանորդագրություն, որը զգալի դրամական միջոցներ բերեց, որով Փորթուգալյանը կարողացավ կազմակերպել նաև

---

[1] Խուրշուդյան Ռ., «Արմենիան» և Փորթուգալյանը, «Պայքար», Ե., 1995 թ., թիվ 2-3, էջ 29:

փոխատության պարտատոմսերի վաճառք և հաջողությամբ իրացրեց այն:

1885 թ. հուլիսի 20-ին (օգոստոսի 1-ին) լույս տեսավ Փորթուգալյանի՝ այնքան սպասված ու փայփայված պարբերականի անդրանիկ համարը: Նրա լույս ընծայման ժամանակը նշվում էր միաժամանակ հին և նոր տոմարով: Այն լույս էր տեսնում շաբաթական երկու անգամ՝ չորեքշաբթի և շաբաթ օրերին (հետագայում այդ պարբերականությունը երբեմն խախտվում էր): Լրագրի գինն էր 10 սանտիմ: Թերթն սկզբնական փուլում շոնդալից հաջողություն էր արձանագրում: Բավական է նշել, որ մինչև չորրորդ համարի լույս ընծայումը, այն արդեն ուներ 400 բաժանորդ, որոնցից 300-ը՝ Թուրքիայում:

Սակայն թուրքական գրաքննությունը վտանգավոր համարեց թերթի բնույթն ու բովանդակությունը և շուտով «Արմենիա» լրագրի մուտքը կայսրության տարածք արգելվեց: Ի դեպ, մի քանի ամիս անց, 1886 թ. հունվարին այն արգելվեց նաև ցարական Ռուսաստանում:

Սույն իրողությունը անչափ խորհրդանշական բնույթ ունի: Այն ցայտուն կերպով վկայում է, որ ազգային բնույթ ու բովանդակություն ունեցող և ազգային նպատակներ հետապնդող պարբերականի գոյությունը խիստ հակոտնյա էր թե՛ օսմանյան կայսրության և թե՛ ցարական Ռուսաստանի շահերին:

Ուստի վերջիններիս կողմից թերթի վրա դրված արգելանքը միանգամայն բնական էր ու օրինաչափ: Դա այդպես է անկասկած, քանի որ «Արմենիան» իր բուն էությամբ և առաքելությամբ, բողոքի ու ցասման սլացքով ուղղված էր հայ ժողովրդի

ազգային ազատագրական շարժման երկու սույն հակառակորդների դեմ միաժամանակ։

Ուստի բնականոն էր վերջիններիս կողմից նման ռեակցիայի ու դիրքորոշման արտահայտումը։

Արգելանքը ծանր հարված էր պարբերականին, սակայն Փորթուգալյանը չվիատվեց։ Նոր բացված լրագիրը լիակատար սնանկացումից փրկելու համար նրա խմբագիրը ցուցաբերեց արտասովոր հնարամտություն ու նրբին քայլերով կարողացավ փրկել այն։ Գրաքննությանը ապակողմնորոշելու նպատակով նա սկսեց պարբերականի համարները մասնավոր նամակների ձևով ուղակել արգելված վայրերը՝ ծրարների մեջ։ Արգելված երկրներում (դա հատկապես վերաբերում է Թուրքիային) բաժանորդները լրագրին ծանոթանալուց և ուսումնասիրելուց հետո, մի քանի համար փաթաթում էին հին հագուստների մեջ, փոխադրում էին տեղից տեղ և դրանով իսկ նպաստում «Արմենիայի» գաղափարների տարածմանը։ Թերթի վրա դրված արգելանքը թողեց նաև իր հակազդեցությունը։ «Արմենիայի» ճակատագրով սկսեցին հետաքրքրվել և իրենց աջակցությունը ցուցաբերել նաև ազգային խնդիրներին ու հիմնահարցերին ոչ շահագրգիռ անձինք։ Նրանց և հայրենասեր երիտասարդների ջանքերով զգալի տարածում գտավ հալածյալ լրագիրը։ 1890-ական թվականներին լրագրի միջին տպաքանակը կազմում էր շուրջ 1000 օրինակ։ Այսպես, 1893 թ. տվյալներով առաքված է եղել 800 օրինակ, որից Պարսկաստան՝ 235, Հյուսիսային Ամերիկա՝ 189, Ռումինիա՝ 69, Բուլղարիա՝ 64, Հնդկաստան, Բիրմա, Ինդոնեզիա՝ 46, Ավստրո-Հունգարիա, Հունաստան, Բել-

գիս, Կիպրոս՝ 42, Եգիպտոս՝ 41, Ֆրանսիա՝ 36, Անգլիա՝ 21, Հարավային Ամերիկա, Ավստրալիա, Չինաստան՝ 7 օրինակ: Մոտ 50 օրինակ որպես մասնավոր թղթակցություն ուղարկվել էր Թուրքիա և Ռուսաստան[1]:

Փորթուգալյանը հնարամիտ ուղիներ էր որոնում բաժանորդների թիվը ավելացնելու ուղղությամբ: Նա պարբերաբար անցկացնում էր վիճակախաղի խաղարկություններ, որոնց համար հիմք էին հանդիսանում (որպես տոմսեր) թերթի բաժանորդական անդորրագրերը:

Խմբագրությունը զանազան արտոնություններ էր նախատեսնում բաժանորդների համար: Այսպես, ով կարողանում էր ապահովել պարբերականի հինգ բաժանորդագրություն, վեցերորդը ստանում էր անվճար:

Հայրենասեր խմբագրապետը չէր անտեսում ու չէր մոռանում նաև չունևորներին: Հատուկ ծանուցումով պատրաստակամություն էր հայտնում կես գնով՝ 10 ֆրանկով բաժանորդագրություն ձևակերպել այն անձանց համար, ովքեր ի վիճակի չէին պահանջվող ամբողջ գումարը մուծել: Բացի դրանից, պարբերականի տպաքանակի մի մասն անվճար ուղարկվում էր երգիր՝ Արևմտյան Հայաստան, որն ուներ անչափ կարևոր նշանակություն:

Ֆինանսական միջոցներից միշտ նեղվող Փորթուգալյանը գտնում էր լրացուցիչ այլ հոսքեր՝ հրատարակելով առանձին պրակներով հայրենասիրական բնույթի գրականություն, որի մասին նա մշտապես ծանուցումներ էր զետեղում պարբերա-

---

[1] «Պայքար», 1995 թ., թիվ 2-3, էջ 29:

կանի էջերում: Ընդ որում, նա նյութը վերցնում ոչ միայն հայոց պատմությունից և հայ գրականությունից, այլ հարևան երկրների ու ժողովուրդների պատմությունից: Դրանով իսկ նա ձգտում էր բոլոր միջոցներով նպաստել հայ ժողովրդի ազատասիրական գաղափարների ու տրամադրությունների կենսունակ և բորբոքուն պահելուն: Մեծ տպաքանակով տպագրված հայրենասիրական բնույթի գործերից էին Ռ. Պատկանյանի գրչին պատկանող «Վարդապետարան Հայաստանի ազատության» գրքույկը, «Ազատութիւն Պուլկարիո եւ կենսագրութիւնք պուլղար ապստամբապետաց», «Թոմաս Բոցարիս» երկերը: Ընթերցողների շրջանում կայուն հայրենասիրական տրամադրությունները արմատավորելուն էր ուղղված 1890 թվականին նրա հրատարակած «Արմէնիայի յուշարար. Ա տարեկան» ժողովածուն, որում ընդգրկված էին 1885-86 թթ. պարբերականի էջերում տպագրված առավել կարևոր ու արդիական նյութերը: Մարսելում Փորթուգալյանի ձեռնարկած հիրավի վեհ, ազգօգուտ, հայրենանվեր գործին մեծապես սատար եղավ վանեցի աշակերտներից ամենաուշիմն ու համարձակը՝ Մկրտիչ Ավետիսյանը: Սկզբնական շրջանում նա իր ուսուցչի հենարանն ու նեցուկը եղավ ամեն հարցում (նա պարբերականի միակ հաստիքային աշխատողն էր): Սակայն երկում ստեղծված ծանր, տագնապալից իրավիճակի թելադրականով Մ. Ավետիսյանը վերադարձավ Վան և 1894-95 թթ. ընթացքում անփոխարինելի դեր խաղաց Վանի ինքնապաշտպանության կազմակերպման գործում: Մ. Ավետիսյանը հրապարակախոսական սուր հարցադրումներով հաճախ էր հանդես գալիս պարբերականում:

Իսկ Փորթուգալյանի աջակցությամբ և հրատարակությամբ ««Արմենիայի» տպարանէն 1890-ին լոյս կը տեսնէ Մ. Թերլեմէզեանի «Թիւքիայի հայեր եւ նրանց դրացիներ» անունով գրքոյկը (42 փոքրադիր էջերով) Մ. Ա. (Մկրտչ Աւետիսեան) ստորագրութեամբ»[1]:

Ուսուցիչ-խմբագրապետը անհուն ցավով ու վշտով ընդունեց իր սանի և երբեմնի աշխատակցի ողբերգական նահատակության լուրը Վանի 1896 թ. հունիսյան ինքնապաշտպանական մարտերում:

«Արմենիան» դարձավ իսկապես ժողովրդական թերթ, սիրելի ու հարազատ ժողովրդային լայն խավերին: Այդպիսին էր այդ լրագրի բովանդակությունը, որը շատ ձգող ու հրապուրիչ էր շարքային ընթերցողների համար: Ինչ-որ տեղ և ինչ-որ չափով այդ կարգի ու այդպիսի լրագրի գոյությունը հայկական դժնդակ իրականության մեջ կարող էր հրաշք համարվել, քանզի բազում ու բազմաթիվ էին տարատեսակ խոչընդոտները, իսկ նպաստավոր ոչինչ չկար ազատ լրագրի, գործունեության համար: Մինչև այդ, լույս աշխարհ եկած արևելահայ ու արևմտահայ մամուլի օրգանները, առանց որևէ բացառության, գտնվել են խիստ գրաքննության անողոք աքցանների մեջ:

Եվ ահա այդպիսի հուսահատական իրավիճակում Եվրոպայում սկսում է լույս տեսնել մի լրագիր, որն ազատ էր գրաքննության հոշոտող ճիրաններից և բուռն, ցասկոտ քննադա-

---

[1] Յ. Վարդիվառեան, Մեծ երազի՝ ճամբուն ուղեւորները եւ համապարփակ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան, Նոր Ճրագի, 2015 թ., Ա հատ., էջ 73:

տություն էր հնչեցնում հայ ժողովրդին ծանր անագորույն վիճակի մեջ դրած բոլոր կեղեքիչների հասցեին՝ չվարանելով ու չվախենալով որևէ բանից ու որևէ մեկից: Լրագրի քննադատության հիմնական թիրախը դարձավ թուրքական իրականությունը, սուլթան Համիդը, նրա կառավարությունն ու պաշտոնյաները, ապա ցարական իրականությունը: Թերթը մերթընդմերթ, նայած ստեղծված կացությանն ու հանգամանքներին, ուժեղացնում էր քննադատության տարափը այս կամ այն կողմի հանդեպ: Օրինակ, XX դարասկզբին, մասնավորապես հայակեր փոխարքա Գոլիցինի, հայկական դպրոցները փակելու և եկեղեցական գույքը բռնագրավելու անարգ քաղաքականության դեմ ողջ ուժով ու թափով ծառս եղավ «Արմենիան»՝ իր հոլովույթի մեջ առնելով արևելահայկական, կովկասյան և բուն ռուսական իրականության մեջ կատարվող ամբողջ անցուդարձը:

Պարբերականի՝ 1885 թ. մինչև 1908 թվականն ընկած ժամանակամիջոցի յուրաքանչյուր համար լեցուն էր թուրքական բարբարոսական իրականությունը ներկայացնող առատ նյութերով, նամակներով, տեղեկագրերով, ակնարկներով ու թղթակցություններով: Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող որևէ քիչ թե շատ նշանակալից իրադարձություն անպայման արձագանք էր գտնում պարբերականում: Սակայն, բացի անհրաժեշտ լրատվությունն ապահովելուց, թերթը հանգամանալից, բազմակողմ ու բազմաշերտ լրագրողական քննություն էր իրականացնում, ներկայացնում երևույթի պատճառահետևանքային կողմերը, ընդհանրացնում անհրաժեշտ եզրահանգում-

ներով ու հետևություններով: «Արմենիան» ինչ-որ չափով տարեգիր եղավ հայության կյանքում կատարվող իրադարձությունների, քանզի թերթելով նրա էջերը, կարելի է հստակ վերականգնել մեր հայրենիքի ու ժողովրդի այդ շրջանի հոգևոր կենսագրության հավաքական խճանկարը:

Պարբերականը նախևառաջ հասարակական-քաղաքական բնույթ և ուղղվածություն ուներ, բայց նաև տնտեսական, գրական ու մշակութային ելևէջումներով ու անդրադարձումներով, բազմաբովանդակ, հարուստ ու ծանրակշիռ պարբերականը շարժեց հայության լայն զանգվածների հետաքրքրությունը:

Իհարկե, «Արմենիայից» առաջ հայ իրականության մեջ գործել են մամուլի այնպիսի կարևոր օրգաններ, որպիսիք էին «Հյուսիսափայլը», «Մշակը», արևմտահայ մի քանի պարբերականներ, սակայն վերոնշյալ օրգանները ստիպված են եղել գործելու գրաքննության մամլիչի ներքո և էական շատ բանով չէին կարող ազդել հասարակական մտքի զարգացումների վրա՝ այն արմատապես վերափոխելու և շտկելու առումով:

Իրավացի է այն դիտարկումը, որ «*«Արմենիա»-ով՝ առաջին ըմբոստութեան ձայնն էր որ կը բարձրանար բռնութեան դէմ»*[1]: *Ընդգծենք, որ դա համակարգված, մշակված, պարբերաբար ու անընդմեջ հնչող բողոքի ու ցասումի ձայնն էր, որ հայ ժողովրդի անվեհեր զավակները՝ հանձինս Մկրտիչ Փորթուգալյանի և իր զինակիցների, այդպես անվախ ու շիկացած հնչեցնում էին ի՛ լուր և ի՛ տես տերությունների, ժողովուրդների և համաշխարհային հանրության:*

---

[1] Վարդիվառեան Յ., նշվ. աշխ., էջ 66:

«Արմենիան» հայկական առաջին պարբերականը եղավ, որ Արևմտահայաստանում ստեղծված դժոխային իրավիճակի, համիդյան սարսափների, հայության կրած առօրյա, ամենօրյա կեղեքումների ու նվաստացուցիչ, գրեթե ստրկական կացության մասին բարձրաձայնեց ամբողջական թափով ու խորքով, լիակատար ճշմարտությամբ, առանց խնայելու, վախենալու կամ վարանելու:

Արևմտահայության դառն ճակատագրի հանդեպ Փորթուգալյանը լրագրի հրատարակության առաջին իսկ համարից հանդես բերեց բացառիկ սրտացավ ու սևեռուն վերաբերմունք և կարծես հենց ինքն իրեն էր պատասխանատու համարում ողբերգության դատապարտված մի ամբողջ ժողովրդի դառն կացության և նույնքան անհեռանկար ու վտանգաշատ ապագայի համար:

Նա փորձեց առաջին հերթին ողջ հայության (հատկապես գաղութահայության) ուշադրությունը, կարեկցանքն ու գործուն աջակցությունը ուղղել դեպի տառապյալ արևմտահայությունը:

«Արմենիան» քննադատության սլաքն ուղղեց նաև եվրոպական պետությունների, նրանց դիվանագիտության ու պաշտոնեության դեմ: Իհարկե, եղան պահեր, երբ Փորթուգալյանը ևս եվրոպական տերությունների միջամտության հետ որոշ հույսեր կապեց, սակայն ընդհանուր առմամբ հորդորում էր հայությանը ապավինել միայն սեփական ուժերին: Այս կապակցությամբ տեղին չէ և արդարացված չէ որոշ հետազոտողների այն դիտարկումը, ըստ որի Մ. Փորթուգալյանին վերագրվում է «եվրոպական դիվանագիտության վրա ճնշում գործի

դնելու» լավատեսական առաքելություն: Մասնավորապես, նման կարծիք է հայտնել մեծանուն պատմաբան Լևոն իր մեծարժեք աշխատություններից մեկում[1]:

Առհասարակ, Մ. Փորթուգալյանի կյանքի և գործունեության, նրա հոգեզավակի՝ «Արմենիայի» վերաբերյալ սփյուռքում և հայրենիքում (առանձին կողմերով) շատ է գրվել ու նշվել, որոշակի հակիրճ բնութագրումներ ու դիտարկումներ են արվել, սակայն ամբողջական գիտական գործ մինչև վերջերս չկար: Խորհրդային ժամանակներում սույն հիմնահարցի շուրջ իրենց աշխատություններում հիմնարար նրբագծերով անդրադարձել են անվանի պատմաբաններ Ջոն Կիրակոսյանը և Ազատ Համբարյանը: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ջ. Կիրակոսյանը իր «Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը» աշխատության մեջ վերոնշյալ հիմնահարցին հատկացրել է մի ամբողջ գլուխ՝ «Արևմտահայության ազատագրության խնդիրը «Արմենիա» և «Հնչակ» թերթերի էջերում»[2]: Ջ. Կիրակոսյանը հիմնականում ճշմարտացի, օբյեկտիվ բնութագրումներ է տալիս «Արմենիայի» քաղաքական ուղղվածությանը, նշում, որ այն առաջին թերթն էր, որը ժողովրդի տառապանքների ու բողոքների մասին խոսեց բարձրաձայն, վառեց հայ գաղութների մեջ ազգասիրության ու հայրենասիրության կրակը[3]: Իրավացի է սույն հեղինակի այն դիտարկումը, որ «Արմենիայի» էջերում քննարկվում էին հայոց

---

[1] Լևոն, Թուրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Փարիզ, 1934 թ., էջ 141:
[2] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Ե., 1980 թ., էջ 229-330:
[3] Նույն տեղում:

հարցի բոլոր ասպեկտները, վերլուծվում էր նրա երեկվա անհաջողությունը, գնահատականներ էին տրվում հայոց քաղաքական, կրոնական, հասարակական դեմքերին: Ջ. Կիրակոսյանը նշում է, որ պարբերականի առաջին տարիների համարներում իրենց գաղափարներն էին տարածում, առաջարկություններ անում քաղաքական տարբեր ուղղությունների հարող մարդիկ, որոնց շարքերում կային «և՛ Բակունինի հետևորդ անարխիստներ, և՛ Լավրովի հետևորդ նարոդովոլականներ, և՛ չափավոր ուղղությունների համակիրներ»[1]: Փաստական առատ նյութի շնորհիվ հետազոտողը համոզիչ ապացուցում է պարբերականի անցած ուղու էվոլյուցիան, հակասական մոտեցումները, ապագայի հանդեպ երբեմն անորոշ, մանվածապատ հայացքները, որոնք արդյունք էին հայ իրականության մեջ պատմականորեն ձևավորված դժնդակ իրավիճակի: Պատմաբանը «Արմենիայի» դերակատարությունը հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքում գնահատում է միանշանակորեն դրական, գտնելով, որ այն նպաստել է ժողովրդի ինքնաճանաչման պրոցեսի զարգացմանը, ազգային-ազատագրական պայքարի ուղիների բացահայտմանը[2]:

Վաստակաշատ պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Համբարյանը քննարկվող հիմնահարցի շուրջ իր տեսակետն է արտահայտել «Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին» մեծարժեք աշխատության

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

մեջ: Նա Մ. Փորթուգալյանին բնութագրում է որպես արևմտահայության ազատագրության գործի նշանավոր հրապարակախոս և գործիչ[1]:

Նա անում է մի քանի կարևոր դիտարկումներ Փորթուգալյանի գաղափարական զինանոցը, ըստ հարկի և ըստ էության, բացահայտելու և պարզաբանելու ուղղությամբ, որոնք ստորև մեջբերենք հերթականությամբ.

1. Փորթուգալյանը համոզված է, որ հեղափոխությունը պետք է կատարեն ոչ թե այս կամ այն խավերը, այլ բոլորը. ամբողջ արևմտահայությունը: Կարևոր էր հնամարվում շեշտել արևմտահայության տարբեր սոցիալական խավերի միջև եղած ոչ թե տարբերությունների ու ներհակությունների վրա, այլ համերաշխության:

2. «Արմենիայի» խմբագիրը ուշադրություն էր դարձնում այն իրողության վրա, որ Արևմտահայաստանում հայերից բացի ապրում են այլ ժողովուրդներ ևս, որոնք նույնպես ճնշվում և հարստահարվում են: Ուրեմն, պետք է նրանց միջև սերտ համագործակցության եզրեր գտնել, որը նույնպես կապում էր իրադարձությունների զարգացման հետ:

3. Փորթուգալյանը վճռականապես մերժում էր այն տեսակետը, որը արևմտահայության ազատագրման գործում առաջնակարգ նշանակություն էր տալիս Եվրոպայի օգնությանը:

---

[1] Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990, թ., էջ 71:

Պարբերականը մշտապես հորդորում էր նախապատրաստվել և ապավինել սեփական ուժերին[1]:

Մ. Փորթուգալյանին և «Արմենիային» նվիրված ուսումնասիրություն է հրապարակել բանասիրության դոկտոր, պրոֆեսոր Լենդրուշ Ալոյանը[2]: Նա ընդգծում է, որ «Արմենիա» պարբերականը ազատ էր բացահայտել ճշմատությունը Հայաստանի մասին, հասարակական կարծիք ստեղծելու Եվրոպայում և դրանով իսկ ճնշում գործադրելու միջազգային դիվանագիտության վրա՝ նրան հարկադրելով վերարծարծել Հայկական հարցը[3]:

Սույն հետազոտողը որոշ կերպով վեր է հանում այն տարաձայնությունները, որ գոյություն ունեին Փորթուգալյանի և հայ ազատագրական շարժման այլ գործիչների միջև: Ըստ Լ. Ալոյանի, արևմտահայ իրականության լուսաբանումը թերթի հրապարակախոսության մեջ ունի ճանաչողական մեծ արժեք[4]:

Մ. Փորթուգալյանի կյանքի և գործունեության, «Արմենիա» պարբերականի՝ որպես ազատագրական շարժման բովում թրծված օրգանի վերաբերյալ բավական ծավալուն և ուշագրավ գործ է հրապարակել ճանաչված պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի առաջատար գիտաշխատող Սուրեն Սարգսյանը[5]: Շուրջ

---

[1] Նույն տեղում, էջ 71-72:

[2] Ալոյան Լ., «Արմենիա» շաբաթաթերթը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2010 թ., թիվ 3, էջ 109-114:

[3] Նույն տեղում, էջ 110:

[4] Նույն տեղում, 114:

[5] Սարգսյան Ս., «Արմենիա» պարբերականը ազատագրական գաղափարախոսության ակունքներում, Ե., 2014 թ.:

680 էջ ընդգրկող աշխատության մեջ շոշափվում են 19-րդ դարավերջի հայ ազգային-ազատագրական շարժմանն առնչվող բազմաթիվ հարցեր ու հարցականներ: Հեղինակը շրջանառության մեջ է դրել հարուստ փաստական նյութ, արխիվային նյութեր, տպագիր սկզբնաաղբյուրներ, հայերեն և օտարազելու մեծածավալ գրականություն: Մկրտիչ Փորթուգալյանի կյանքն ու գործը ներկայացված է բազմակողմանիորեն՝ որպես արևմտահայ-ազգային ազատագրական շարժման գաղափարաբանության ակունքներում կանգնած մեծ ահատի:

Ս. Սարգսյանի վերոնշյալ աշխատությունը նոր, թարմ հարցադրումներով զարգացնում է սույն հիմնահարցի շուրջ հայ պատմագիտական միտքը, լրացնում և հարստացնում այն:

Հաշվի առնելով այս ամենն ու քննարկվող հիմնահարցի շուրջ առկա հարուստ, փաստաշատ նյութն ու տեսական-վերլուծական փորձառությունը՝ մենք փորձել ենք մեր համեստ ներդրումը ունենալ փորթուգալյանագիտության մեջ՝ հատկապես մեծ գործչի հոգեզավակի՝ «Արմենիա» պարբերականի ուսումնասիրության գործում՝ այն հնարավորինս դիտարկելով հայ ազգային-ազատագրական շարժման լայն համապատկերի վրա:

Գլուխ I

ԴԱՐԱՇՐՋԱՆՆ ՈՒ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

Յուրաքանչյուր գործիչ, գուրծուն հեղափոխական թե տեսաբան, իր դարի ու դարաշրջանի ծնունդն է:

Ժամանակն ու հանգամանքներն են սնում, աճեցնում մեծ հեղափոխականներին և հեղափոխական շարժման տեսաբաններին:

Մկրտիչ Փորթուգալյանի ապրած դարաշրջանը բախտորոշ, փոթորկահույզ և ողբերգական դեպքերով լեցուն մի շրջան էր հայոց պատմության մեջ:

19-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվեց հայ ազգային ազատագրական պայքարի հուժկու և սրընթաց վերելքով, ազգային համընդհանուր զարթոնքի բացահայտումով: Օսմանյան բռնապետության դժնդակ լծի ներքո հալումաշ եղող արևմտահայության ազատագրական շարժումները նոր ուժ և թափ ստացան[1]: 1877-78 թվականների ռուս-թուրքական պատերազմից, Սան-Ստեփանոյի և Բեռլինի դաշնագրերի կնքումից հետո արյունարբու սուլթան Համիդը որդեգրեց նոր քաղաքականություն և գործողության մեջ դրեց նոր կուրս՝ Հայկական հարցը լուծել հայ ժողովրդի ամբողջական բնաջնջման ճանապարհով:

Արևմուտքում կորցնելով իր տիրապետությունների գերակշիռ մասը, սուլթանը հայացքը դարձրեց արևելք և ուժեղացրեց ոստիկանական-համիդեական ռեժիմի բիրտությունն

---

[1] Տե՛ս Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Ե., 1995 թ., էջ 20:

ու կամայականությունը Արևմտահայաստանում: Բեռլինի դաշնագրից սպասվող հույսերը ի՛ դերև ելան, տեղի տալով խոր հիասթափության և հուսահատության: Օսմանյան կայսրության տարածքում ապրող հատկապես քրիստոնյա ժողովուրդների դրությունը առավել վատթարացավ[1]: Կայսրության տարածքում իշխում էր անիշխանությունը, անապահովությունը, կամայականությունն ու հալածանքը, իսպառ բացակայում էր անձի և գույքի անձեռնմխելիության որևէ երաշխիք:

Կայսրության բնակչությունը բաժանվում էր երկու մասի՝ ուղղափավատների և անհավատների:

Այս առումով շատ ծանր ու դժոխային իրավիճակ էր ստեղծվել գավառներում և ծայրամասերում և ականատեսը ճշմարտացի է արձանագրել, որ «Տաճկաստանի ասիական վիլայէթները հանդիսանում են ապօրինի կարգերի մի վայր»[2]: Սուլթան Համիդը, որի համար «կեղծիք, նենգութիւն, երկդիմութիւն, խոստումնազանցութիւն իր պատանեկան տարիքէն իսկ՝ իր աղօթագրքի պատգամներն եղած էին»[3], փոխեց իր նախորդների քաղաքականությունը քրդերի հանդեպ և հայ-քրդական հարաբերություններում: Սուլթանը, կատարած քաղաքական այս շրջադարձով գտավ հնարավոր հեռատես քայլը՝ քրդերի միջոցով վերջ տալ Հայկական հարցին: Առհասարակ, հայ և օտարազգի բազմաթիվ պատմաբաններ և հրապարակագիրներ

---

[1] Տե՛ս Германские источники о геноциде армян, Е., 1991, с. 71:

[2] Դօ Ա., Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները: Երևան, 1912, էջ 10:

[3] Գ. Եազըճեան, Ապտիլ Համիտ Բ. կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980 թ., էջ 139:

աներկբա հաստատում են, որ հայ ժողովրդի բնաջնջման պլանը սուլթան Համիդի ձեռքի գործն է[1]:

19-րդ դարի երկրորդ կեսից սուլթանական կառավարությունը պարբերաբար մահմեդական գաղթականներով վերաբնակեցնում էր Արևմտյան Հայաստանը, որի նպատակն էր փոխել բնակչության էթնիկական կազմը հայկական գավառներում: Թուրքական իշխանությունները գաղթականներին անհրաժեշտ որևէ բանով չէին ապահովում, փոխարենը նրանց իրավունք տալով անպատիժ կերպով թալանելու հայկական բնակավայրերը: Այս առումով իրավացի է Ռոլան Ժեկմենը, որը ի լուր աշխարհի բարձրաձայն հայտարարում էր. «Ես չգիտեմ կարելի՞ է մի որևէ այլ երկիր տեսնել, որի կառավարությունը այդպես ձգտեր իր սեփական պրովինցիաները լցնել վայրի հորդաներով և ինքը նրանց առջև այդպիսի երկընտրանք դներ՝ կամ ապրիր թալանով ու կողոպուտով, կամ աղքատությունից ոչնչացիր»[2]:

Ժամանակի ընթացքում ձևավորվել էր մի յուրօրինակ, աննախադեպ սոսկալի վիճակ, ուր իսկապես «... հայ գիւղացին կողոպտելը քիւրտ ցեղախմբերու համար իրաւունք էր, դարերու սովորութեամբ նուիրագործած»[3]:

Հայության հոծ զանգվածները երեխայական միամտության չափ սին հույսեր էին փայփայում, որ Բեռլինի դաշնագրի՝ Հայկական հարցին առնչվող 61-րդ հոդվածը վերջ կդնի անտանելի

---

[1] Տե՛ս Германские источники о геноциде армян, с. 71.

[2] Տե՛ս Положение армян в Турции до вмешательств держав в 1895 г., Москва, 1896, с. 62-63.

[3] Գաբիկեան Խ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1962, էջ 30:

հալածանքներին, սակայն նոր զոհերն ու զանգվածային բռնությունները եկան հաստատելու, որ այդպես շարունակվելու դեպքում վերոնշյալ հոդվածը կդառնա հայության կործանման ազդակը:

Կոնգրեսից հետո բռնությունների սաստիկ ահագնացումը նկատելի էր անգամ «անգեն» աչքով և որին ամեն օր և ամեն քայլափոխի ականատես էին նաև մեծ տերությունների հյուպատոսությունների ներկայացուցիչները: Անասելի չափեր ընդունած պանդխտությունն ու գաղթականությունը ամայացնում էին երկիրը: Անձնապաշտպանությունը բացարձակապես արգելված էր: Հայությունը գտնվում էր բացարձակապես անպաշտպան վիճակում:

Բոլորի համար պարզ էր, որ սուլթանական վարչակարգը հաստատապես վճռել էր հազարավոր տարիներ իր բնօրրան-հայրենիքում ապրող հայ ազգին բնաջինջ անել աշխարհի երեսից: Բնականաբար, այս ահավոր վտանգը պիտի առաջ բերեր իր հակազդեցությունը:

Եվ ճշմարիտ են բոլոր այն հետազոտողներն ու քաղաքագետները, որոնք առանց որևէ կասկածամտության պնդում և հիմնավորում են այն տեսակետը, թե «... Աւելորդ է ըսել, թէ յեղափոխականութիւնը ծնունդն է միմիայն թրքական հարստահարութիւններու»[1]:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո ազատասիրական, հայրենաշունչ գաղափարները թափանցում են արևմտահայ և արևելահայ իրականության բոլոր ոլորտները,

---

[1] Սերոբեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1937 թ., էջ 171:

հայրենասիրության ջերմ պաթոսով համակելով հայության ամենալայն զանգվածներին: Արևմտահայության համար պարզորոշ գծագրվում էր լինել-չլինելո՞ւ ահեղ հարցականը: Ժամանակի հայ հասարակական-քաղաքական միտքը տենդագին ուղիներ էր որոնում Արևմտյան Հայաստանը փրկելու վերահաս հայաթափումից և կործանումից: Հայ ազգային-ազատագրական շարժման գործիչներին լիիրավ հասկանալի է դառնում, որ առջևում, ամենամոտ ապագայում վճռվելու էր հող և հայրենիք ունենալ-չունենալու հարցը: Բեռլինյան խայտառակ դրաման դարձակետ դարձավ հայ հասարակական-քաղաքական մտքի համար: Եվրոպական վեհաժողովի հակահայ ընթացքից թևաթափ եղած հայ ազգային գործիչները Խրիմյան հայրիկի շուրթերով (բաժին-բաժին արվող հարիսայի ու երկաթե շերեփի հանրահայտ քարոզով) հայ ժողովրդին պարզ և հստակ հասկացնել տվեցին, որ ամեն մի ազգ հույսը իր վրա պետք է դնի և հայության ազատագրության համար գոյություն ունի մեկ ճանապարհ՝ դա արյան և ընդվզումի ճանապարհն է:

Հայ քաղաքական մտքի կողմից միանգամայն օրինաչափորեն ընդունվում է «բռնութեան դեմ՝ բռնութիւն» կարգախոսը և կռվի գաղափարը ընկալվում «... որպէս պատմութեան օրէնք»[1]: Որքան տպլթանը ուժեղացնում էր ճնշումն ու կեղեքումը, նույնքան փոթորկվում, շիկանում էր պայքարի տրամադրությունն ու տրամադրվածությունը, որը համակում է Անդրկովկասի և գաղթաշխարհի հայության մեծ մասին:

---

[1] Նորեան Ա., Դրուագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից, Բոստոն, 1917 թ., էջ 76:

Ազգային ինքնագիտակցության վերելք ապրող հայ ժողովուրդը մահացու վտանգի դեմ հանդիման ամուր փարվեց մաքառումի և հարատև պայքարի տեսլականին:

Հայը, որ առաջ մոռացել էր զենքն ու զինավարժությունը, այժմ կրկին զենք ճարելու և զենքին տիրապետելու փնտրտուքների մեջ էր: Ազատագրական պայքարի գաղափարախոս Ռաֆֆին պատգամում էր իր ժամանակակիցներին. «Ով որ ճանաչում է Տաճկաստանը, ով որ գիտե, թե ինչ աղբյուրներից են ծագում հարստահարությունները, նա ևս մեզ հետ կհամոզվի, թե զինյալ քրդի դեմ միայն զինյալ մարդը կարող է պահպանել յուր կայքը, յուր ընտանիքը, յուր պատիվը»[1]:

Այսինքն, հայ ժողովրդի ընդվզումը ոչ միայն ինքնաբուխ էր, այլև միանգամայն արդարացված և օրինաչափ հակազդեցություն, քանի որ լուռ հանդուրժողականության պայմաններում մոտիկ ապագայում հայաթափվելու էր ողջ երկիրը:

Ահա այս խորապատկերի վրա հասկանալի է, թե ինչո՞ւ և ինչպե՞ս ծնվեցին և ասպարեզ մտան հայ ազատագրական շարժման այնպիսի հզոր ու համազգային ընդգրկումի գործիչներ, ինչպիսին Մկրտիչ Փորթուգալյանն էր:

---

[1] Ռաֆֆի, Երկ. ժող., հատ. տասներորդ, Ե., 1991 թ., էջ 440:



Գլուխ II
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՈՒՐՎԱԳԻԾԸ

Մկրտիչ Փորթուգալյանը ծնվել է 1848 թ. հոկտեմբերի 9-ին Կ. Պոլսում: Հայրը՝ Ռաֆայել Փորթուգալյանը սեղանավոր էր, կյանքի փորձով և իմաստնության լեցուն մի այր, որպես ուսումնասեր անձնավորություն մեծապես հարգված հայ համայնքի կողմից: Նա ուներ բավական հարուստ գրադարան, որից պիտի օգտվեր որդին:

Փոքրիկ Մկրտիչը հաճախում է Գում-Գափուի Մայր-վարժարանը՝ ժամանակի լավագույն կրթօջախներից մեկը, որտեղ դասավանդում էին տեղի առաջադեմ ուսուցիչները, այդ թվում՝ Հ. Մալեզյանը դասավանդում էր հայոց լեզու և ընդհանուր պատմություն, Հակոբ Ոսկանը՝ ֆրանսերեն, Հերեթիկ Հոճանը՝ թուրքերեն: Արդեն աշակերտական օրերից խորապես ապրում և ազդվում է ազգային կյանքի և եղելությունների անդրադարձներով: Դա հենց այն շրջանն էր, երբ հայ ազգային գործիչներն ու առաջադեմ երիտասարդները խանդավառվել էին Եվրոպայում տեղի ունեցած հեղափոխությունների դեմոկրատական և ազատասիրական գաղափարներով և հայոց ազգային կյանքի մաքրագործման իդեալներով: Առաջադեմ անհատները՝ Նիկողայոս Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը և ուրիշներ բուռն պայքար ծավալեցին ազգային սահմանադրության ընդունման համար: Սակայն ամիրայական հետամնաց խավը սոսկալի վախով և տագնապով է արձագանքում հայ երիտասարդության ազատա-

սիրական եռանդագին գործունեությանը, դրա մեջ տեսնելով իրենց ազդեցության և տիրապետության չքացումը:

Այդ հողի վրա շիկանում էր մթնոլորտը, «Լուսավորեալ»-ի և «Խավարեալ»-ի բանակռիվները նոր թափ էին ստանում: 1861 թ. Սահմանադրական Մարմինը իր նիստերը գումարում է Մայր-վարժարանի մեջ, որի պատճառով սովորողները փոխադրվում են Ս. Խաչ եկեղեցին: Մկրտիչը գաղտնագողի և սաստիկ հուզումով հետևում էր այդ ժողովների ընթացքին, որտեղ ընդհարվող կողմերը չափազանց ակտիվությամբ վիճաբանում են միմյանց հետ: Շուտով Մայր-վարժարանի տնօրինությունը անցնում է «խաւարեալ»-ների ձեռքը և ուսումնարանի նոր տեսուչ է կարգվում Տեր-Գևորգ քահանան, որն առավել իրեն բնորոշ «կուսակցական» գործով է զբաղվում, քան կրթական: Ավարտական վերջին տարում՝ 1862 թվականին Մկրտիչը թողնում է վերոնշյալ կրթօջախը և անցնում Սամաթիայի «Սուրբ Սահակեան» վարժարան, ուր սահմանադրականներն էին վարում կրթական գործը: Իսկ 1863 թվականին, երբ Բ Դուռը վավերացրեց Ազգային սահմանադրությունը, նա արդեն «Ս. Սահակեան» վարժարանի շրջանավարտ էր. դպրոցն ավարտելուց հետո Փորթուգալյանը սկզբնական շրջանում աշխատում է գրավաճառ-թղթավաճառ և ուսուցիչ «Pierre Troy»-ի վաճառատանը: Փիեր Թրոուան հայտնի գրասեր և հայասեր անձնավորություն էր, որի բարերար ազդեցության ներքո Փորթուգալյանը ինքնաճանաչման և ինքնազարգացման մեծ ճանապարհ անցավ:

1859 թվականին վախճանվեց հայրը, իսկ 1865 թ. զրկվեց նաև մորից: Սրանք ծանր հարվածներ էին նրա զգայուն հոգեկան աշխարհին:

1866 թ. Փորթուգալյանը ձեռնարկում է սեփական գրատուն-թղթավաճառանոց: Սակայն մի տարի անց ստիպված է լինում հրաժարվել այդ գործից՝ ժառանգական խնդիրների առթիվ ծագած տնական դատավարության հետևանքով:

1867 թվականից նա յուր անձը նվիրաբերում է մանկավարժական ասպարեզին: Նախ Պաղճյան Կարապետ վարժապետի (հետագայում՝ Բարդողեմիոս վարդապետ) առաջարկությամբ ուսուցիչ-դաստիարակի պաշտոն է ստանձնում Ենիքեոերիզյանների մեծահարուստ տան մեջ, ապա Թ. Թերզյանի թելադրականով մտնում է Պեշիկթաշ Չոպանյան Հակոբ աղայի տունը՝ որպես նրա երկու զավակների դաստիարակ: Սակայն այդ կարգի դաստիարակչական-մանկավարժական գործն իր սրտով չէր, քանի որ կտրված էր հասարակական կյանքից: Ինքնակենսագրականում որպես խոստովանանք այդ մասին գրում է հետևյալը. «Այդ երկու հարուստ և ազնիւ ընտանիքների տուներին մէջ, ուր պաշտօն վարեցի, աշխատանքս թեթև էր և շատ հանգիստ վիճակ մը ունէի, բայց այդ հանգստութիւնը արդէն անհանգիստ կընէր զիս, որ կը փափաքէի հանրային գործունէութեան շարժման մէջ մտնել»[1]: Այո՛, նրան օդի պես անհրաժեշտ էր հանրային ամբիոն ու ասպարեզ, որտեղից կարող էր իր հայրենասիրական ոգին և գաղափարները սփռել լայն հասարակայնության շրջանում:

---

[1] Քառասուն տարուան աշխատատրը, Կ. Պոլիս, 1914 թ., էջ 11:

Փորթուգալյանը մի որոշ ժամանակ զբաղվում է հրատարակչական գործունեությամբ: Կարապետ Պարոնյանի և Հովհաննես Թոզլեյանի հետ համախորհուրդ կազմում է հրատարակչական ընկերություն: Այդ ժամանակ թարգմանական գրականության մի շրջան է բացվում նրա համար: Թարգմանում է Ա. Դյումայի «Տիկին Մոնսորո» գործը, որը պրակ առ պրակ հրատարակվում է:

1863-ից մինչև 1869 թվականը ձգվող տարիները նախապատրաստական շրջան հանդիսացան Փորթուգալյանի որպես մեծ հայրենասերի ազգային հզոր շնչով լեցուն փոթորկոտ գործունեության համար: Դրա համար արդեն առկա էին որոշակի նախադրյալներ: Վերջապես հաստատվել էր արևմտահայոց «Ազգային Սահմանադրությունը»-ը, բեմերից շեշտված հպարտությամբ հնչում էր «Հայաստան» անունը, հայոց պատմությունից և դյուցազներգությունից քաղված թատերգություններ էին բեմադրվում

Նվիրյալ ազգասերը պիտի ցանկանար հայրենի երկիրն ու նրա սրբազան արժեքներն ու հիշատակները ճանաչել առավել մոտիկից: Ահա թե ինչու վճռականորեն որոշում է գործել գավառահայության շրջանում:

Եվ առիթը շատ չի ուշանում:

Պոլսաբնակ երկու եվդոկիացի մեծահարուստ հայեր, որոնք կայսրության մայրաքաղաքում գրասենյակներ ունեին, որոշում են Եվդոկիայի «ազգային վարժարան»-ի համար իրենց ծախքով ուսուցիչ ուղարկել: Կարդալով ծանուցումը Փորթուգալյանը ներկայանում է Գևորգ Սեֆերյանին, իսկ 1869 թ. հուլի-

սին ուղևորվում է իր նոր պաշտոնատեղին: Այդ ժամանակ Փորթուգալյանը ընդամենը 21 տարեկան էր:

Վառ հույսերով, նվիրական երազներով ու կարոտով լի երիտասարդը մեկնում է գավառ, թողնելով մայրաքաղաքային փափուկ կյանքը՝ իր պաշտելի ժողովրդին ծառայելու անշահախնդիր նկրտումներով:

Եվդոկիայի վարժարանը թեև կրում էր «Ոսկեան ճեմարան» տիտղոսը, բայց իրականում նմանվում էր տիրացուական մի դպրատան: Այդ ժամանակ հայոց գավառներում իշխում էր բացահայտ կամայականությունն ու տգիտությունը: Հասարակ ժողովուրդը շատ էր ընկճված, վեհերոտ ու համակերպված, իսկ մի բուռ ջոջեր սանձարձակ կերպով վարում էին եկեղեցին ու Առաջնորդարանը, դպրոցները, վանքերն ու ազգային կալվածքները: Այդպիսին էր վիճակը նաև Եվդոկիայում:

Երիտասարդ, առաջադեմ հայրենասերը ժամանելով գավառ, բնականաբար չէր կարող հանդուրժել այս վիճակը և միանգամից պայքար սկսեց դրական բարեփոխումներ իրագործելու համար:

Դեռևս 1869 թ. Կ. Պոլսում հիմնվել էր «Անձնուէր» ընկերությունը, որը կիրակի օրերին հայերեն լեզվով հայոց պատմություն և գրականություն էր դասավանդում գավառից եկած չափահաս պանդուխտների համար: Սեբաստացի առաջադեմ մտավորականները գավառ վերադառնալով ձգտում էին «Անձնուէր»-ի նման մի մասնաճյուղ ստեղծել, բայց նախաձեռնող ձեռքը չկար: Փորթուգալյանին հաջողվում է մի քանի համախոհ ակտիվիստներով կազմակերպել այդ մասնաճյուղը, որով դրվում է Եվդոկիայի կազմակերպված մտավորական կյանքի

սկիզբը[1]: Սկսվում են կիրակնօրյա բովանդակալից դասախոսություններն ու ակտիվ բանավեճերը:

Կղերական ջոջերը զգալով իրենց հեղինակությանն ու առաջնորդությանը դիպչող վտանգը, ստոր միջոցների են դիմում այն քայքայելու և կազմաքանդելու համար: Հասարակ ժողովուրդը ոգևորված Փորթուգալյանի եռանդագին գործունեությամբ հանրագրով դիմում է իր իրավունքները պաշտպանելու համար: 1869 թվականին Կ. Պոլսի պատրիարքական գահին բազմած Խրիմյանը օրհնություն և քաջալերական կոնդակ է հղում Եվդոկիայի «Անձնուէր»-ին՝ հանձնարարելով տեղի հոգևոր առաջնորդ Հակոբ վարդապետ Ճգնավորյանին, անձամբ օժանդակել ու խրախուսել ընկերության անդամներին: Մեկ տարին լրանալուց հետո Փորթուգալյանը հակառակ «Անձնուէր» ընկերության անդամների թախանձանքներին, ետ է վերադառնում Կ. Պոլիս: Սակայն այնտեղ գտնվող ազդեցիկ եվդոկիացիները կրկին համոզում են նրան վերադառնալու Եվդոկիա:

Փորթուգալյանը վերահաստատվում է իր նախկին գործին, բայց այս անգամ էլ պայքարը բորբոքվում և շիկանում է: Պահպանողականները նրան թուրքական իշխանությունների առջև ներկայացնում են որպես հեղափոխականի: Փորթուգալյանն այնուհետև անցնում է Սեբաստիա և ութ ամիս դեգերելուց հետո վերադառնում է նորից մայրաքաղաք: 1874 թ. նա ստանձնում է «Ասիա» պարբերականի խմբագրի պարտականություն-

---

[1] Տե՛ս Սարրաֆեան Կ., Ակնարկ մը արմենական կուսակցութեան վրա, Պէյրութ., 1960 թ., էջ Ե:

ները։ Միաժամանակ մանկավարժական գործունեություն է ծավալում։ Որպես հրապարակագիր աշխատակցում է Կ. Փանոսյանի «Մանգումե» պարբերականին, որի էջերում «Ազգային խոհեր» խորագրի ներքո հոդվածաշար է հրապարակում, որոնցում հաջորդաբար քննում է ազգային լեզվին, հայ Առաքելական եկեղեցուն ու Ազգային վարչությանը վերաբերող տեսական ու գործնական խնդիրներ։ 1875 թ. Կ. Պոլիս է ժամանում և այնտեղ հաստատվում թիֆլիսեցի հայտնի դերասան Միհրդատ Ամերիկյանը, որը փորձում է հիմնել նոր շաբաթաթերթ։ Այն շուտով լույս է տեսնում «Շար կարծեաց» անունով։ Փորթուգալյանը սիրով ու նվիրումով թղթակցում է նոր պարբերականին՝ բազմապիսի նյութերով։ Նա հաճախ էր սիրում կրկնել հետևյալ կարգախոսը. «Փոխանակ հայաստանցին Կ. Պոլիս գալու, պոլսեցին Հայաստան երթալով այդ երկիրը զարգացնելու է»[1]։

Մ. Ամերիկյանի հետ ծանոթությունը և համագործակից լինելը առիթ, պատճառ և հնարավորություն է դառնում, որպեսզի Փորթուգալյանը ծանոթանա «Մշակ»-ին և նրա մեծահռչակ խմբագրի հետ։ Արծրունին խորապես հետաքրքրվում է Փորթուգալյանով և հրավիրում Թիֆլիս, ուր համատեղ քննում են «Արարատեան» ընկերութեան ծրագիրը։

Շուտով Փորթուգալյանը ստանում է կազմակերպչական ավելի լուրջ ու պատկառելի գործերի պատասխանատվությունը։ 1876 թվականի ապրիլին նա ժամանակի այլ անվանի մտավորականների՝ Ա. Արփիարյանի, Ջ. Շիշմանյանի և ուրիշների

[1] Նույն տեղում։

հետ հիմնադրում է մի կրթական կառույց՝ «Արարատյան ընկերություն հայոցը»: Հենց Փորթուգալյանն էլ ընտրվում է նրա ատենապետը: Ընկերության գլխավոր նպատակն էր կրթություն և լուսավորություն տարածել հայ ազգի բոլոր խավերի շրջանում, բարձրացնել նրա ինքնագիտակցությունը և նպաստակառուցել սեփական իրավունքների և շահերի հետևողական պաշտպանությանը: Ա. Արփիարյանը հետաքրքիր հուշեր է պատմում Փորթուգալյանի հետ կայացած առաջին հանդիպումից: Ըստ նրա վկայակոչման. «Քանի մը տարի է ի վեր Կ. Պոլիս շատ կը խօսուէր հրապարակագրի մը վրայ, որ յեղափոխական համբաւ ստացած էր: Եւրոկիա ուսուցիչ եղած ու շղթայակապ բանտարկուած էր: Պոլիս «Ասիա»ն հրատարակած էր, զոր Ներսէս Պատրիարք, թունդ պահպանողական եւ թրքամոլ այն ատեն, ջնջել տուած էր: Հիմայ «Ասիա»ի խմբագիրը Փանոսեան վարժարանը ապաստանած էր իբր դասատու: Հետաքրքիր էր տեսնել այդ երիտասարդը, Փանոսեան վարժարանի իր մէկ պաշտօնակցին փափաքս յայտնեցի: Խոստացաւ զիշեր մը զինքը Օրթագեղ հրաւիրել»[1]: Նախատեսված հանդիպումը կայանում է և մեծ է լինում Արփիարյանի զարմանքը, երբ պատկերացրած ու երևակայած վիթխարի, հաղթանդամ տղամարդու փոխարեն տեսնում է վտիտ ուսերով կարճահասակ մի կերպար. «կլուակոտ, յաղթանդամ, զոռացող ոչ ոք կար, նիհար, կարճահասակ, ուռած կոպիճներով, գառնուկի նման մէկը դէմս էր

[1] Քառասուն տարուան աշխատատրը, նշվ. աշխ., էջ 16:

իբր Փորթուգալեան։ Թուրք կառավարութիւնը, Ներսէս Պատրիարքը ահաբեկողը ա՞ս էր»[1]։

Սակայն զրույցի ընթացքում երևում է Փորթուգալեան անհատի հոգու և մտքի ուժն ու թռիչքը. «Երկաթի պէս մեկը երեւցաւ ինձի. զգացի թէ այդպիսի նկարագրի տէր անձերով է որ կարելի պիտի ըլլար զորեղ գործեր ընել»[2]։ «Արարատյան» ընկերությունը հետզհետե թափ է առնում ու զորեղանում։ Խանդավառ և ուժեղ անհատներ են անդամագրվում նրան։ Փորթուգալյանի հեղինակությամբ ընկերությանն է անդամակցում հասարակական հայտնի գործիչ Մինաս Չերազը։ Շուտով Փորթուգալեանը հրավեր է ստանում անցնելու Կովկաս և այն իրագործում է 1876 թ. հունիսին։ Կարևոր նշանակություն են ձեռք բերում նրա հանդիպումները «Մշակի» հռչակավոր խմբագրի հետ։ Հենց Արծրունու հետ համատեղ քննության են առնում «Արարատյան» ընկերության ծրագիրը, որոշ բարեփոխումների ենթարկելով այն։ Սույն այցելությամբ ու հանդիպումներով Փորթուգալյանը արևմտահայ ու արևելահայ գործիչների հասարակական, բարոյական ու մշակութային սերտ ու կայուն համագործակցության հիմքն է դնում։ Արծրունին խոստանում է կայուն կերպով օժանդակել «Արարատյան» ընկերությանը, եթե վերջինս «իր գործունէութեան անմիջական դաշտը Հայաստանն ընտրէ, այսինքն հոն դպրոցներ ու վարժապետանոց բանար, սերունդը տեղւոյն վրայ կրթելու համար»[3]։ Մի քանի շաբաթ Թիֆլիսում անցկացնելուց հետո Փորթուգալյանը վերա-

---

[1] Նույն տեղում։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

դառնում է Կ. Պոլիս և այցի արդյունքների մասին տեղեկացնում է Մ. Չերազին: Եվ հենց վերջինիս միջոցով էլ ձեռք բերած պայմանավորվածությունները ներկայացնում է ընկերության վերին մայրմնի քննարկմանը: Ընդհանուր ժողովը ընդունում է օրակարգում դրված առաջարկները և Վան-Վասպուրականը ընտրում է որպես գործունեության կենտրոն: Փորթուգալյանը հոժարակամ ստանձնում է դեպի գավառ՝ Արևմտահայաստանի խորքերը գնալու և գործելու պատասխանատվությունը: 1876 թ. սուրբ Աստվածածնի օրը՝ նա սրտագին և հուզիչ ողջագուրումներից հետո մեկնում է գավառ: Որպես ճանապարհածախս, նա ընդամենը ութ ոսկի է ստանում ընկերության դրամարկղից: Փոքր Հայքով՝ Սամսոնից, Եվդոկիայից, Սեբաստիայից, Խարբերդից, Տիգրանակերտից անցնելով նա հասնում է Վան, որտեղ պաշտոնական մարմինները շատ սառն ընդունելություն են ցույց տալիս նրան: Նշենք, որ վերոնշյալ ճանապարհորդությունը տևում է շուրջ չորսուկես ամիս:

Չնայած ժամանակները շատ խառնակ էին ու վտանգավոր, քանզի Թուրքիան պատերազմական կացության մեջ էր Բալկաններում և ներքին իրավիճակը չափազանց լարված, այնուամենայնիվ Փորթուգալյանը շարունակեց իր ուսումնասիրությունը ու շրջագայությունը Վասպուրական աշխարհում: Նա խորապես ուսումնասիրում է տեղական պայմաններն ու առանձնահատկությունները և բազմակողմանի փաստարկված տեղեկագրերով Կեղրոնին ծանոթացնում Վասպուրականի գյուղերի բարոյական, մտավորական, տնտեսական ու առողջական կացության մասին: «Արարատյան» ընկերության այս համարձակ քայլը համակիրներ է գտնում հայության տարբեր

խավերի մեջ. «նուէրներ կ'ըլլային, դիմումով մը՝ Մկրտիչ Սանասարեան տարեկան հազար ֆրանք կը կապէր Ընկերութեան, Բարեգործականի պատրաստ դրամագլուխի տոկոսէն 40 ոսկի կը յատկացուէր. արդէն իսկ գիւղերու մէջ քանի մը դպրոցներ բացուած էին»[1]: Ընկերության բացած առաջին կրթօջախը Վասպուրականի Այլուր գյուղում էր:

Սակայն, ի վերջո, ռուս-թուրքական պատերազմը ընդհատում է Փորթուգալյանի գործունեությունը Վանում: Թուրքական իշխանությունների նկատմամբ նրա կարծր դիրքորոշումը և բացահայտ ըմբոստ պահվածքը մեծացրել էին ձերբակալվելու հավանականությունը: Պատմաբան Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն փաստարկում է, որ թուրքական իշխանությունները խիստ մտահոգված էին Փորթուգալյանի ակտիվ հասարակական գործունեությամբ, քանի որ 1877 թ. սկզբին Վանում նրա հիմնադրած «Լուսավորյալ Միությունը», «Երկրագործական ընկերությունը» հայ պատանիներին ու երիտասարդներին հայրենասիրական ջերմ ոգով դաստիարակելու, նրանց եվրոպական կրթական կենտրոններում ուսում տալու նպատակներ էին հետապնդում[2]:

Անսալով իր բարեկամների հորդորներին, Փորթուգալյանը նախ անցնում է Պարսկաստան, ապա՝ Կովկաս: Վերստին հայտնվելով Թիֆլիսում, նա ազգային-հասարակական եռուն գործունեություն է ծավալում: Մշակի» խմբագիրը նորից հան-

---

[1] Նույն տեղում, էջ 17-18:

[2] Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը, Ե., 1980 թ., էջ 273:

գանակության է դիմում և հավաքված գումարն ուղարկում «Արարատյանին»:

Իսկ Փորթուգալյանը ի թիվս այլ ձեռնարկումների, Թիֆլիսից «կը ղրկէ նաև Ն. Տէր-Նիկողոսեանցի «Մայրենի լեզու»-ին Ա. Տարին՝ որ աւելի վերջ միւս տարիներուն հետ, Պոլիս տպագրուելով, Ընկերութեան տարեկան 400 ոսկի զուտ շահ կը բերէր»[1]:

1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո Փորթուգալյանը վերադառնում է Կ. Պոլիս: Նրա և ինչպես ողջ հայության կյանքում սկսվում է մի նոր շրջան: Թե՛ պատերազմի ժամանակ և թե՛ նրա ավարտից հետո հայությունը կանգնած էր ներքին և արտաքին բազմաբարդ երկընտրանքների առջև:

Բալկաններում թուրքերի դեմ ծագած ապստամբությունների հզոր ալիքը ստիպել էր սուլթանին ավելի շրջահայաց և զգուշավոր վերաբերմունք դրսևորել իր հպատակների հանդեպ: Միջազգային բարդ ու լարված հանգամանքներից ելնելով սուլթանը 1876 թ. դեկտեմբերին հռչակեց օսմանյան սահմանադրությունը, որով փորձ էր արվում կասեցնել միջազգային իրավունքի տարածումը օսմանահպատակ քրիստոնյաների վրա: Միաժամանակ սուլթանը միջազգային հասարակական կարծիքը հանդարտեցնելու համար հայտարարում էր, որ կայսրության ճգնաժամի ծագումն ու հիմնական պատճառները պայմանավորված են օրենքների ոչ ճիշտ կիրարկմամբ[2]:

---

[1] Քառասուն տարուան աշխատաւորը, նշվ. աշխ., էջ 18:

[2] Տե՛ս Борьян Б., Армения, Международная дипломатия и СССР, ч. I, М.-Л., 1928, с. 228.

Բարդ իրավիճակում էին հայտնվել նաև հայ ազգային իշխանության պատասխանատուները: Ներսես պատրիարքի արևմտահայությանը ուղղված շրջաբերականում նշված էր, որ հայությունը մինչև օրս պահպանվել է որպես ազգ և պահպանել է իր կրոնը, եկեղեցին, լեզուն, ապա այդ ամենը կարողացել է անել միայն օսմանյան կառավարության հովանավորության, աջակցության և բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ[1]: Պարզ ու հասկանալի է, որ պատրիարքը գործունեության այլ այլընտրանքային տարբերակներ գրեթե չուներ, ուստի ստիպված էր արևմտահայերին հորդորել, որպեսզի ձեռք մեկնեն թուքական իշխանություններին:

Հայ ազգային շրջանակների վերաբերմունքը միանշանակորեն պարզ ու հստակ չէր նաև Բեռլինի համաժողովից հետո ստեղծված իրավիճակի հանդեպ: Այսպես, Մինաս Չերազի պես այրերը համոզված էին, թե «Պէրլինի վեհաժողովէն մի ոսկեհանք շահեցանք. մեզ անկ է խիզախել եւ հանել ոսկին»[2]: Վերոնշյալ տրամադրություններին դեմ հանդես եկան Գրիգոր Զոհրապը, Ռաֆֆին, Գր. Արծրունին և ուրիշ շատեր: Տասնյոթամյա Զոհրապը Մ. Չերազի դեմ հրապարակեց «Թէ ի՞նչ շահեցանք Պէրլինի վեհաժողովէն» հրապարակագրական անդրանիկ նյութը: Նրանում իրատես հայացքով արձանագրվում է, թե «շիտակը խօսելով, ինչպէ՞ս, միթէ Վանայ աւարութիւնը չշահեցա՞նք, միթէ Մշոյ, Տիգրանակերտի և Կարնոյ հարստահարութիւններն ու աղէտքը չշահեցա՞նք, միթէ Ուլնիոյ եպիսկո-

[1] Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1876 թ., էջ 6:
[2] Չերազ Մ., Թէ ի՞նչ շահեցանք Պէրլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878 թ., էջ 19:

պոսին բանտարկութիւնը չշահեցա՞նք, Զէյթունցւոց երջանիկ վիճակը չշահեցա՞նք եւն, եւն։ Դեռ ի՞նչ կ'ուզենք որ շահէինք Պերլինի Վեհաժողովէն»[1]։

Սա բուցարձակ ճշմարտություն է, պատմական իրողությունների ռեալ, փաստարկված գիտակցում։

Իրոք, բեռլինյան հանրահայտ դրամայից հետո հայ հասարակական-քաղաքական շրջաններում տեղի ունեցավ տեսակետների բախում և հստակեցում։ Գործիչների մի մասը հույսեր և ակնկալիքներ էր փայփայում եվրոպական պետությունների տված խոստումներից, որոնք արձանագրվել էին Բեռլինի դաշնագրի համապատասխան հոդվածների ներքո։

Սակայն առավել մեծ թիվ էին կազմում հայազգի այն գործիչները, ովքեր նպատակահարմար էին գտնում խնամքով, լռիկ-մնջիկ նախապատրաստվել համառ պայքարի։ Փորթուգալյանը վերոնշյալ գործիչների շարքում էր։ Այս առումով ճշմարիտ դիտարկում է կատարել պատմաբան Սուրեն Սարգսյանը, նշելով, թե «լավագույնս յուրացնելով 16 և 61-րդ հոդվածների դասերը՝ հոդվածեր, որոնք խթանեցին վերազնահատելու հայության ուժերը, նպատակներն ու գործունեության ձևերը, Մ. Փորթուգալյանն ակտիվորեն մասնակցում է ազգային ազատագրությանը նպատակաուղղված հեղափոխական-քաղաքական մտքի ու նոր պայմաններում գործելու տարբերակների մշակմանը»[2]։

---

[1] Գևորգյան Մ., Գրիգոր Զոհրապը հրապարակագիր և գեղագետ, Ե., 2010 թ., էջ 53։
[2] Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 39։

Բեռլինում խաղացված խայտառակ դրամայից ստացած դասերը լավ յուրացրած Փորթուգալյանը հաստատապես հանգեց այն համոզմանը, որ մինչ վճռական մարտերի դուրս գալը, հարկավոր է նորից խիզախ և հերոսական ազդակներով ու մղումներով դաստիարակել հայության նոր սերունդներին, ազատել նրանց հոգևոր-բարոյական ստրկության կապանքներից, արժանապատիվ ու ըմբոստ շունչ հաղորդել, տեսական ու գործնական առումներով վարժեցնել զենքին և զինավարժությանը: Ռուս-թուրքական պատերազմն ու դրանից հետո կատարված քաղաքական ու դիվանագիտական իրադարձությունները դարձի բերեցին շատերին, որոնք հասկացան, թե իսկը ժամանակն է զավառահայությանը դուրս բերել նիրհած ու ընկճված վիճակից և նախապատրաստվել ազատագրական լուրջ մաքառումներին: Սույն մտորումներով ու նաև հարցերով և հայցականներով ծանրաբեռ Փորթուգալյանը 1879 թ. սկզբին վերադարձավ Վան, այնտեղ, որտեղ պլանավորել, գծագրել էր իր ապագա բուռն գործունեության հիմնական հանգրվաններն ու փուլերը: Նույն թվականի աշնանը Վան քաղաքում նա բացում է Վարժապետանոց, որը նոր տիպի ուսումնական հաստատություն էր իր բովանդակությամբ ու կառուցվածքով: Այն պետք է աշակերտներ ընդուներ առանց ազգային խտրականության: Վանի թաղային դպրոցներից ամեն տարի «մրցումով պիտի առնուէին յաջողագոյն աշակերտները, Վասպուրականի գիւղերէն ալ նոյն դրութեամբ. Հայաստանի ամէն քաղաքներն

ալ իրենց գոնէ մէկ ներկայացուցիչները պիտի կրնային ունենալ հոն»[1]:

Փորթուգալյանի կրթական սույն ձեռնարկումը ամպրոպի պես պայթեց Վանի երկնակամարում: Այն իր ժամանակի լավագույն կրթական հաստատությունն էր ոչ միայն Վանում, այլև ողջ արևմտահայկական իրականության մեջ: Վարժարանը բացվել էր գործունեության չորս տարվա շրջանով, այնտեղ դասավանդելու համար Փորթուգալյանը բարձր վարկավորում ունեցող ուսուցիչներ հրավիրեց թե դրսից, թե՛ տեղական միջավայրից, ինչպես օրինակ «Պէյլէրեան Տաճատ, Թագտրեան, Փիլիպոսեան, Հ. Ճանիկեան, Խ. Խրիմեան՝ որոնք իրեն եռանդուն գործակիցները եղան»[2]: Վան այցելած օտարազգի գործիչներն են ջերմ հիացմունքով խոսել սույն կրթօջախի մասին: Մասնավորապես, Ֆրանսիայի կրթական նախարարության բարձրաստիճան մի պաշտոնյա՝ Էրնեսթ Շանթրը 1882 թ. մասնավոր այցով լինելով Վանում, այցելել է սույն հաստատություն: Տպավորությունները չափազանց հիացական են լինում. «Այդ վարժարանը հիանալի կերպով կազմակերպուած, մեր այցելութեան միջոցին վաթսունէ աւելի ուսանող աշակերտներ ունէր: Դասարանների մաքրութեան եւ անոնց մէջ տիրող վիճակին ըսելիք չկար բնաւ եւ այդ բոլոր պատանիները, իրենց հասակի եռանդին հակառակ, լուրջ, կարգապահ եւ մանաւանդ աշխատասէր կ'երեւ էին»[3]:

---

[1] Քառասուն տարուան աշխատատրը, նշվ. աշխ., էջ 18:
[2] Նույն տեղում, նշվ. աշխ., էջ 18-19:
[3] Նույն տեղում, էջ 19:

Ֆրանսիացի պաշտոնյայի համար հաճելի անակնկալ էր սույն վարժապետանոցում տեսնել ֆրանսիական ոճով ձևավորված դպրոցական նյութեր և կահ-կարասիք: Բայց զարմանքն առավել մեծ է լինում, երբ «վարժապետների խնդիրքին համեմատ պատմութեան եւ աշխարհագրութեան վրայ ֆրանսերէն լեզուով հարցումներ ըրինք մի քանի աշակերտների եւ շատ լաւ պատասխաններ ստացանք մեր լեզուով, նոյն իսկ ժամանակակից պատմութեան մասին»[1]:

Օտարերկրացի պաշտոնյան ավելացնում է, որ բնական գիտություններն էլ զանց առնված չէին և «հաճոյքով քննեցինք ու անսանք որ շատ լաւ սորվեր էին կենդանաբանութեան եւ երկրաբանութեան վերաբերեալ այն տեղեկութիւնները որ մեր համանման վարժարանների մէջ կըսորվեցնեն»[2]:

Ահա այսպիսին էր Թուրքիայի խորքերը այցելած օտարազգի պաշտոնյայի կարծիքն ու տպավորությունը Փորթուգալյանի հիմնադրած կրթօջախից:

Սակայն ի տարբերություն օտարերկրացի պաշտոնյայի հիացական վերաբերմունքի, թուրք-հայկական իրականության մեջ անպակաս էին դավերն ու խարդավանքները անձնուրաց գործիչի հանդեպ: Իր նկատմամբ գործադրվող պարսավանքներն ու բամբասանքները հերքելու նպատակով Փորթուգալյանը 1881 թ. լինում է Կ. Պոլսում, հանդիպում Ներսես պատրիարքին ու անհրաժեշտ պարզաբանումներ տալիս: Վերադառնալով Վան, այս անգամ նա առանց «Միացյալ ընկերության»

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

աջակցությամբ (վերջինս ստեղծվել էր 1880 թ. հունիսի 1-ին, Գրիգոր Արծրունու հովանավորությամբ ու նախաձեռնությամբ), սեփական միջոցներով հիմնադրեց կրթական մի նոր հաստատություն՝ Կեդրոնական վարժարանը, որը փակված վարժապետանոցի շարունակությունն էր հանդիսանում: Այդ պահին Կ. Պոլսից Վարագ էր վերադարձել Խրիմյան Հայրիկը, որը կոչ ու հորդորներ էր հղում Վանի հայությանը՝ կարելվույն չափ օժանդակել նորաբաց Կեդրոնականին:

Խրիմյան Հայրիկի շրջաբերականից մեջբերենք հետևյալ հատվածը. «Ի գիտութիւն ուսումնասէր ազգայնոց կը յայտարարեմ որ հանգանակութիւն բացուած է յանուն Վանայ Կեդրոնական դպրոցին, որուն հիմնադիր տեսուչն է Փորթուգալեան Մկրտիչ էֆէնտին, սորա անձնուէր հայրենասիրութեան եռանդը շատերուն յայտնի է: Փորթուգալեան էֆէնտին բնիկ պոլսեցի է, բայց իր բուռն հայրենասիրութեան ոգին զինքն վարեր է Հայաստան եւ ինքն իբրեւ անխոնջ մշակ կը տքնի, կ'աշխատի մեր հայրենեաց յառաջդիմութեան համար: Ուստի ուսումնասէր ազգայնոց նուիրական պարտքն է որ ձեռն տան, քաջալերեն զինքն իր ձեռնարկութեան մէջ»[1]: Ահա այսպես էր Խրիմյան ազգային գործիչը աջակցում, քաջալերում իր գաղափարակցին ու զինակցին, գնահատում ու կարևորում ազգային կյանքի մեջ նրա ունեցած դերակատարությունը:

Իհարկե, Վանի հայ հասարակայնության կողմից շատ ջերմ աջակցություն եղավ: Փորթուգալյանը բնավ էլ միայնակ չմնաց իր ձեռնարկումների մեջ: Դրան նպաստեց Վան քաղաքում

[1] Նույն տեղում, էջ 20:

ձևավորված հայրենասիրական բարձր ու ոգեշունչ մթնոլորտը, ազնիվ ու անկեղծ մտավորական խավի առկայությունը:

Սակայն Վանում և շրջակա գավառներում Փորթուգալյանի դերն ու դերակատարությանը բնավ չսահմանափակվեց լոկ ուսուցչությամբ: Դա այդպես է անկասկած և առհասարակ, քանզի հետամնաց գավառում ուսուցիչը ամեն բան է, բանախոս, հասարակական տրամադրություններ ստեղծող ու բորբոքող, կազմակերպիչ, գնահատող ու արժեքավորող:

Որպես հրապարակախոս նա անզուգական էր և իր տաղանդը շողարձակեց առաջին իսկ բանախոսություններից, հզոր ներգործություն թողնելով Վանի հայ հասարակության տարբեր շերտերի վրա: Ականատեսի անմիջական վկայությամբ՝ «Ասիայի» խմբագիրը Վանի մեջ հաստատվելով «առաջին օրէն իսկ կազմեց ժողովրդական լսարաններ՝ ուր ուսման և ազատ խօսքի անձկակարոտ սերունդ մը կը վազէ լսելու Փորթուգալեանի հրաշունչ բանախօսութիւններն ու ճառերը»[1]:

ԱՄՆ-ում լույս տեսնող «Ավետաբեր» պարբերականում մի հոդվածագիր գրել է հիացումով լի այս տողերը. «Թէ Տաճկահայաստանի եւ թէ Ամերիկայի մէջ, ուր տասներեք տարիէ ի վեր կը բնակիմ ... երբեք տեսած չեմ ատենախօս, որ բեմէն ժողովուրդին խօսելու արհեստին մէջ գերազանցած ըլլայ Պ. Փորթուգալեանը»[2]: Վանի կրթական գործի երախտավորներից մեկը՝ Համբարձում Երամյանը հիշատակել է, որ ինքը լինելով երիտասարդ ուսուցիչ, հրապուրված վարժապետանոցի

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ատինքնող հմայքից, տեսուչի թույլտվությամբ ամբողջ մեկ տարի հաճախում է պատմության, ֆրանսերենի և «գիտութեանց դասերուն բարձրագոյն կարգին»[1]: Նա հետագայում հիմնած իր վարժարանը ջանացել է կառուցել Փորթուգալյանի ղեկավարած կրթօջախի մոդելի հիման վրա և վերջինս իր գործնական խորհուրդներով և առաջարկներով հաճախ է աջակցել Հ. Երամյանին:

«Կեդրոնական» վարժարանի հիմնադրության սկզբնական շրջանում Մ. Փորթուգալյանը բարոյականից զատ, ստիպված էր մաքառել նյութական ծանր զրկանքների դեմ-հանդիման, որին մասնակից եղան Թոքատից փոխադրված հինգ շնչից բաղկացած իր ընտանիքի անդամները:

Բարեբախտաբար, նա հեշտ հանձնվողներից չէր և հոգեկան բավարար ուժ և արիություն ունեցավ մաքառելու ամեն տեսակ խոչընդոտների դեմ:

«Կեդրոնական» վարժարանը հետզհետե վերաճեց բարձրագույն տիպի օրինակելի ուսումնական հաստատության: Դա Վասպուրականում բարձր կարգի առաջին կրթական հաստատությունն էր, որում ազգային ցավի, մտահոգությունների ու արժանապատվության ոգով հոգևոր սնունդ ստացան, աճեցին և դաստիարակվեցին բազմաթիվ գիտուն երիտասարդներ, որոնցից շատերը դարձան Արմենական կուսակցության հիմնադիրներն ու համակիրները:

Իրավ է, որ Վասպուրականի ազգային ու կրթական վերածնության այդ փուլում «... Խրիմեան-Փորթուգալյան-Կամսարա-

---

[1] Նույն տեղում:

կան կազմեցին երրորդութիւն մը, որուն շուրջ սկսաւ խմբուիլ թէ պատրաստ երիտասարդութիւնը, եւ թէ Փորթուգալեանի շունչին մեծցող դպրոցական նոր սերունդը»[1]:

Շատ շուտով կրթական տույն հաստատությունը ձեռք բերեց Վանի ազգաբնակչության լայն հատվածների անսքող ջերմ համակրանքը, դեպի իրեն ձգելով հատկապես պատանիների ու երիտասարդների խմբերին:

Փորթուգալյանի հիմնադրած կրթական անզուգական այս օջախը ընդհանուր կրթական-մշակութային մտքի և մակարդակի հետ զուգընթաց Վասպուրականի երիտասարդության հոգում զարգացրեց քաղաքական մտքի հեղափոխությունը, որն ունեցավ անշրջելի բնույթ և նշանակություն: Նրա ստեղծած, ձևավորած ավանդույթներով Վանի հասարակական կյանքում մեծ նշանակություն են ձեռք բերում, կիրակնօրյա դպրոցը, հրապարակային զեկուցումները, բանախոսություններն ու ելույթները, մարզական երթերը, զինավարժությունները, ուխտագնացությունները «... յար և նման Ռաֆֆիի «Կայծեր»-ի ցուցմունքներին»[2]:

1870-1880-ական թվականների Վանի մտավոր այս զարթոնքը մեծապես պայմանավորված էր Փորթուգալյանի անձնուրաց և խանդավառ գործունեությամբ:

Տարիներ շարունակ Վանը ապրեց ու շնչեց նրա ձևավորած հոգևոր ու բարոյական նոր մթնոլորտի մեջ: Այս շրջանում Վանում հիմնադրված հասարակական-քաղաքական բնույթի ըն-

---

[1] Նույն տեղում, էջ 40:

[2] Յիշատակարան նուիրած 1896-ի եւ 1915-ի Վասպուրականի հերոսամարտերուն, հր.ատ. «Համա-Վասպ. հայրենակց. միութեան, 1945 թ., էջ 7-8:

կերություններից հիշատակման արժանի են «Կրթասիրաց ընկերությունը», «Հայկազյան ընկերությունը», «Մամիկոնյան Ուսումնասեր ընկերությունը», «Առաջադիմասեր ընկերությունը», «Միություն ի փրկությունը», «Ուսումնատարած ընկերությունը», «Սև Խաչ միությունը», «Վանուհեաց միությունը», «Մենեքերիմյան Ուսումնասիրացը», «Քաջ Արծրունեաց ընկերությունը»: Վերոնշյալ ընկերությունները հիմնադրվել և իրենց հիմնական գործունեությունը ծավալել են Վանում:

Բացի նրանցից, Կ. Պոլսում և այլուր հիմնադրված մի շարք խոշոր ընկերություններ ունեին իրենց մասնաճյուղերն ու վարժարանները Վանում և Վասպուրականի գավառներում: Այս ընկերությունները ևս մեծ դեր խաղացին Վանի հայության և մանավանդ երիտասարդ սերնդի ազգային-հոգևոր զարթոնքի ու հայեցի դաստիարակության գործում:

Պետք է հստակ շեշտել, որ առանց դպրոցական լայն ցանցի զարգացման, հնարավոր չէր աճեցնել այնպիսի հեղափոխական սերունդ, որը խանդավառված ազգային տեսլականով անվախորեն պայքարի ելներ թուրքական բռնակալության դեմ: Ազգային ինքնագիտակցության առավել քան բավարար մակարդակ նվաճած այդ սերունդը պարզորոշ գիտակցեց, որ մարդկային շատ ավելի դրական արժանիքներ կրող հայ ազգը չպետք է ստրուկ լինի իր իսկ հայրենիքում:

Վասպուրականի մշակութային-հեղափոխական դպրոցները և նրանց դաստիարակած սերունդները պայմանականորեն կարելի է դասել հետևյալ կարգով.

1. Հայրիկի դպրոցը, և նրա սերունդը
2. Փորթուգալյանի դպրոցը, և նրա սերունդը

3. Հեղափոխական դպրոցի սերունդը[1]:

Արևմտահայ նշանավոր մտավորական և հեղափոխական գործիչ Սահակ Չթչյանը իրավ ճշմարտացիորեն նկատել է, որ «Նալբանդեանի եւ Պատկանեանի յեղափոխաշունչ բանաստեղծություններից առաջ յեղափոխական շեփորը հնչեցրել էին Խրիմեանի սաները»[2]:

Հետազոտողները հստակ դիտարկում են, որ Խրիմյանի ձևավորած կրթական-մտավորական դպրոցը վիթխարի հեղաշրջում առաջ բերեց Վանում և գավառներում:

1877-78 թթ. ռուս-թուքական պատերազմից հետո ասպարեզ եկավ Փորթուգալյանի դպրոցը, որը հոգեկան շարունակությունն էր Խրիմյան դպրոցի և խրիմյանական ազգային-կրթական ու մշակութային ավանդույթների:

Մ. Փորթուգալյանի աճեցրած, դաստիարակած սերունդը ապրեց և գործեց, իրոք, մի բացառիկ ժամանակաշրջանում: Դա այն շրջանն էր, երբ Սան-Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի նպաստավոր հոդվածներից հուսավառված երիտասարդությունը փափագում էր օր առաջ տեսնել Հայաստանի ազատագրության բաղձանքը իրականության վերածված:

Պետք է շեշտադրել, որ Մկրտիչ Փորթուգալյանը իր համարձակ գործունեությամբ առավել շիկացրեց վանեցի երիտասարդության ազգային ինքնագիտակցությունը և այն մշտապես պահեց բորբոքուն վիճակում:

---

[1] «Ազատամարտ» (Երևան), 1993 թ., թիվ 16:
[2] Նույն տեղում:

Արդեն 1880 թվականի աշնանը Փորթուգալյանի նախաձեռնությամբ և «Հայկազյան» ընկերության եռանդուն ջանքերով կազմակերպվեց Վանի անդրանիկ քաղաքական ակումբը, ուր հավաքվում էին «խուռներում երիտասարդութիւն և ժողովրդի խառն դասակարգից, կարդում, թէում, հանրօգուտ գործերով զբաղվում և մտածում»[1]:

Կիրակի օրերին ակումբի պատասխանատուները Արարուց, Նորաշենի, Հանկոյսների թաղերի եկեղեցիներին կից ծխական դպրոցների սենյակներում և «Հայկազյան» դպրոցի սրահում մատչելի դասախոսություններ էին կարդում ժողովրդական լայն խավերի համար: Այդ շրջանում ընթերցասիրությունը տարածվել էր Վանի համակ երիտասարդության շրջանում: Կարդում, ուսումնասիրում էին գրական, գեղարվեստական ու պատմագիտական բնույթի գրականություն:

Պատկերավոր կերպով ասած, Գամառ-Քաթիպայի (Ռ. Պատկանյան) հայրենաշունչ երգերը «... գիշերները կարձագանքէին Այգեստանի սաղարթախիտ պարտէզներուն մէջ: Ռաֆֆիի ու Ծերենցի վէպերը նոր և անդիմադրելի թափով մը կը հրդեհէին մոխիրներու տակ թաղուած կայծերը»[2]:

1885 թ. Արսեն վարդապետ Թոխմախյանի, Մանվել Անանյանի, Խաչատուր Սոլսխյանի, Մովսես Մալոյանի, Խաչիկ Նաթանյանի, Մարտիրոս Տեր-Մկրտչյանի ջանքերով Վանում հիմնադրվեց «Հայրենասիրաց Միությունը», որը շուտով զգալի հեղինակություն վաստակեց Վանի հայ հասարակայնության լայն

---

[1] Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Շահեն Կուժիկեանի Ֆ., 3բ, 29, էջ 7:
[2] Յուշեր Արմենակ Եկարեանի, Գահիրէ, 1947 թ., էջ 6:

հատվածների մեջ: Վերոնշյալ «Միությունը» ուներ իր զինակիր խումբը, որը «կը հանգէր համազգեստ, կը կրէր զէնքեր, եւ ունէր իր տասնապետերն ու հարիւրապետը»[1]: Զինակիր խումբը հսկում էր կարգ ու կանոնն ազգային և հանրային խրախճանքների, ուխտագնացությունների ընթացքում:

Հատկանշական է այն վկայակոչումը, որ ազգային Սահմանադրության տարեդարձների առիթներով «Հայրենասիրաց» միության անդամները զինակիր խմբի հսկողությամբ «... հսկայ բազմութիւն մը Վարագայ վանք կառաջնորդեն, կը խօսին կրակոտ ճառեր եւ կընեն ուրախութիւններ»[2]:

Մկրտիչ Փորթուգալյանն իր համախոհներով և հետևորդներով մեծապես օժանդակում է սույն՝ «Հայրենասիրաց» միությանը, ապա հետագայում ընդլայնում է նրա սահմաններն ու աշխարհագրությունը, որը Վանից և Թիֆլիսից զատ, մասնաճյուղեր ունեցավ նաև Սալմաստում, Լոնդոնում և Եվրոպայի հայաշատ վայրերում:

Այդ ժամանակաշրջանի Վանի հասարակական-քաղաքական կյանքի բովից պետք է հիշատակել Պողոսյան և Ապողոսյան խմբավորումների միջև ընթացող լարված ու համառ պայքարը, որը 1880-ական թթ. հասել էր աննախադեպ շիկացումի:

Վասպուրականի հայ հասարակության բոլոր առաջադեմ խավերն ու անհատները, հեղափոխական երիտասարդությունը հարում էին Ապողոսյան կուսակցությանը, որի նշանավոր ոգեշնչողներն ու պարագլուխները հանդիսացան Խրիմյանն ու

---

[1] Տէր-Մկրտչեան Եր., Գանձեր Վասպուրականի, Պոսթոն, հատ. 1, 1960 թ., էջ 631:
[2] Նույն տեղում:

Փորթուգալյանը: Այդ երկարատև լարված պայքարը Վանում ծնունդ տվեց «Լուսավորյալ» և «Խավարյալ» միություններին, որոնք ունեին նաև իրենց տպագիր օրգանները: «Խավարյալ» միությանը հարողները տեղի հետադեմ աղաներն էին, որոնք շատ հաճախ համագործակցում էին թուրքական իշխանության ներկայացուցիչների հետ: Նրանք իրենց հատվածի սուր ծայրն ուղղեցին Մկրտիչ Փորթուգալյանի և Փորթուգալյանականների դեմ: Թուրքական կառավարությունը ուղղակի թե անուղղակի պաշտպանում էր պողոսյաններին և վերջիններիս հաղորդած մատնություններով հաճախակի ձերբակալություններ էր կատարում Վան քաղաքում և գավառներում: Եվ չնայած պողոսյանների հարուցած խոչընդոտներին և թուրքական պաշտոնյաների բռնարարքներին, Վանի հայության հոգևոր զարթոնքն անկարելի էր կասեցնել կամ խեղդել:

Ազգային սահմանադրության տարելիցներին ժողովուրդը մեծ բազմությամբ խուժում էր Վարագա վանք և այնտեղ հրացանի համազարկերի հետ՝ «ամեն կողմից լսվում էր. «Կեցցե Ազգային սահմանադրություն» և միևնույն ժամանակ երգում էին «Չար սուլթանի ոսկի թախտը ջարդվեցավ, փշրվեց, թախտի տակից հազար ազգաց ազատություն պարգևեց»[1]:

Վանի հասարակության ներսում փորթուգալյանական շարժումը հետզհետե առավել հզորացավ: Այն ընդերքում հասունացող ազգային-քաղաքական կուսակցության սաղմն ու ոգին հանդիսացավ: Վան-Վասպուրականի հասարակական-

---

[1] Հայաստանի ազգային պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին, Փանոս Թերլեմեզյան, «Կյանքիս հուշերը (մեքենագիր), Ֆ 60, տ. 11, թղթ 27, 28, էջ 67-68:

քաղաքական բոլոր ոլորտներում փորթուգալյանականները ճանաչված էին որպես ազգային ճշմարիտ արժեքների կրողներ ու անկեղծ պաշտպաններ: Հենց փորթուգալյանականներից և փորթուգալյանական վերոնշյալ զարթոնքից ու շարժումից ծնունդ առավ և կազմակերպչական առումով ձևավորվեց հայ անդրանիկ քաղաքական կառույցը՝ Արմենական կուսակցությունը: Փորթուգալյան մեծ հայրենասերի գաղափարական շնչի ներքո հասունություն ձեռք բերած և ազգային պատմության երևելի դեմքերով ու հերոսական էջերով իմաստնացած սերունդը հիմք դրեց հայրենի հողի վրա առաջին քաղաքական կազմակերպության հիմնադրումին:

Մ. Փորթուգալյանի «Կենդրոնական» վարժարանում ուսանած աշակերտներից մեկը՝ Գրիգոր Պեռզիկյանը իր հուշերում նշում է այդ օրերին վերաբերող կարևոր դրվագներ, որոնք բնորոշ են վերոնշյալ ժամանակաշրջանի քաղաքական իրականության համար: Ըստ Գր. Պեռզիկյանի, 1884 թ. ամառային մի երեկո, ճոխ սեղանի շուրջ հավաքվել էին «Կենդրոնական» վարժարանի առաջին և երկրորդ տարվա շրջանավարտները: Սեղանի ճակատը «բազմած էր, իբր թամադա, Հայրիկ, Վանի այն ժամանակւայ Առաջնորդը, իր աջ կողմն ունենալով ռուսական հիւպատոս հայազգի Կ. Կամսարական, ձախ կողմը՝ անգլիական հիւպատոս Քլէյթըն»[1]: Տոնահանդեսին մասնակցում էր Վանի հայ հասարակության ընտրանին: Ջերմ, ոգեշունչ ճառով հանդես գալով Խրիմյան Հայրիկը ընդգծում է, որ միայն հավաքական, կազմակերպված ուժերով պետք է աշխատել ազգի

[1] Պեռզիկեան Գր., «Խարի տուն», «Վասպուրական» (ԱՄՆ), 1941 թ., մարտ, թիւ 3:

կողմից իրենց վրա դրված պարտականությունների կատարմանը. «ի մեծ սփոփանք իմ և համայն ազգին»[1]: Այդ պատմական խնջույքից մի քանի օր անց Մ. Փորթուգալյանը իր մոտ հրավիրելով «Կեդրոնական» վարժարանի տասներկու շրջանավարտների, բացատրում և համոզում է «Գործակցական միություն» ստեղծելու անհրաժեշտությունը, շոշափելի փաստարկներով ընդգծելով «այն մեծ բարիքներն ու օգուտները, որ ստացել էին այդ նպատակով կազմուած գործակցական միութիւններ քաղաքակիրթ երկրներում»[2]: Մեծ ուրախությամբ ընդունվում է այս առաջարկը և շուտով կազմավորվում է «Գործակցական միություն» անունով մի ընկերություն, յուրաքանչյուր անդամը՝ երեքական օսմ. ոսկի դրամագլխով:

«Միությունը» բաղկացած էր Մ. Փորթուգալյանից և իր տասներկու շրջանավարտներից, որոնց թվում էին Մ. Ավետիսյանը, Ռ. Շատվորյանը, Գր. Օտյանը, Ղ. Խանջյանը, Գ. Բաղեշեցյանը, Գր. Աճեմյանը (Գուրգեն Մահարու հայրը), Եղ. Քոնտակճյանը, Մ. Պարութճյանը, Գ. Նաթանյանը, Գր. Պեռզիկյանը, Ղ. Խանջյանը (Աղասի Խանջյանի հայրը), Գր. Թերլեմեզյանը, Գ. Ասլանյանը: «Միությունը» Կ. Պոլսից և ֆրանսիայից ներմուծում էր դասագրքեր ու գրենական պիտույքներ և փոքրիկ շահով վաճառում էր դպրոցական վարչություններին, և ընթերցասեր հասարակությանը: «Գործակցական միությունը» փաստորեն հանդիսացավ ապագա Արմենական կուսակցության կազմակերպական կորիզը: Վերոնշյալ միության կազմավորու-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

մից հետո էր, որ «Կեդրոնականի» շրջանավարտների մտքում հրամայական պահանջ զգացվեց «ի մի հաւաքուելու եւ պատրաստելու իրենց հասարակական գործունէութեան ծրագիրուղեգիծը»[1]:

Հարկավոր էր ունենալ մի հավաքավայր, ակումբ, բայց դա կապված էր մեծ դժվարությունների հետ: Վանում այդ ժամանակ արևամուտից մեկուկես ժամ հետո դադարում էր օրինական երթևեկությունը, իսկ գիշերապահ ոստիկանները բռնում և բանտարկում էին օրինազանցներին: Ուստի պետք էր ընտրել մի այնպիսի վայր, ուր կարելի լիներ անցկացնել ողջ գիշերային ժամանակը: Երկար որոնումներից հետո հարմար գտնվեց որպես հավաքավայր ընտրել Մկրտիչ և Գրիգոր Թերլեմեզյան եղբայրների հայրենական այգու հնձանը, որի միակ «կահաւորումն էր չոր գետնի վրայ փռուած մի հնամաշ խսիր, որի անունով Խսրի տուն կոչուեցաւ այդ հաւաքավայր-ակումբը»[2]:

Խսրի տուն-հավաքավայրին անդամակցում էին վերոհիշյալ տասներկու շրջանավարտներից ինը, քանզի Եղիշե Քոնտակճյանը տեսչական պաշտոնով մեկնել էր Բաղեշ, իսկ Գալուստ Ասլանյանը և Գաբրիել Նաթանյանը Կ. Պոլսում հաճախում էին բժշկագիտության և իրավաբանության բարձրագույն դասընթացներին:

Խսրի տունը քաղաքական և ընկերական մի ակումբ էր:

Եվ հենց այս քաղաքական անշուք ակումբում էր, որ որոշվեց վերակազմել ազգային պաշտոնական մարմինները, «վտա-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ելով ազգային Առաջնորդարանից կարգ մը վաշխառու և շահամոլ ճոչաղաներին և դրանց փոխարեն ազատ ու անկաշկանդ քվեարկությամբ ընտրել տալով պարտաճանաչ և իրենց դերին գիտակից անդամներ[1]:

Խսրի տան մեջ որոշվեց վերաբացել Մ. Փորթուգալյանի ձեռնարկած կիրակնօրյա վարժարանները, վերջ տալու Վանի պատանիների թաղային անմիտ կռիվներին, գիտակից դարձնելու նրանց «իրենց դերի մեծութեանը եւ միացրած լինելու զանոնք գաղափարական սերտ կապով»[2]:

Այսպիսով, Արմենական կուսակցության փաստացի հիմնադրումը տեղի ունեցավ Խսրի տան մեջ, 1885 թ. աշնանը, երբ Մ. Փորթուգալյանը արդեն հեռացել էր Եվրոպա և Մարսելում հրապարակում էր «Արմենիա» լրագիրը: Կուսակցությունը ստեղծեցին մեծ ուսուցչապետի նվիրյալ սաները, բայց ոչ անձամբ ինքը՝ Փորթուգալյանը:

Արդեն անվարան ու անկասկածելիորեն կարելի է պնդել, որ հայ քաղաքական առաջնակ ուժի՝ Արմենական կուսակցության կազմավորման ակունքների մոտ կանգնած է մեծ հեղափոխականի՝ Մկրտիչ Փորթուգալյանի դյուցազնական կերպարը:

Վան-վասպուրականում տարիներ շարունակ նրա ստեղծած գաղափարաբարոյական առողջ մթնոլորտը, ազգային շահերի հետապնդումը և հայոց հերոսական անցյալի վառ էջերի բորբոքումը Փորթուգալյանականներին ընդհուպ մոտեցրեցին

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

քաղաքական կուսակցություն կազմավորելու անհրաժեշտության գիտակցմանը:

Կուսակցության կորիզն արդեն կազմավորված էր, երբ Փորթուգալյանը աքսորվեց Վանից: *Համարձակ կարելի է ասել, որ եթե մնար Վանում, ապա ամենայն հավանականությամբ կստանձներ ապագա կուսակցության կառավարման դեկը: Այլ բան է, երբ հեռանալով հայրենիքից և փաստացի կտրվելով հայկական իրականությունից, Փորթուգալյանը հետագայում մերժեց կուսակցության գլուխ կանգնելու արմենականների առաջարկները:*

Պատմագիտական և հուշագրական գրականության մեջ Արմենական կուսակցության կազմավորումը երբեմն թյուրիմացաբար կապվում է «Հայոց հայրենասիրական միության» գործունեության հետ, մինչևիսկ այս երկու կազմակերպությունները նույնացվում են: Օրինակ, այդպես է վարվել հայկական հարցին և հայոց ազատագրական մաքառումներին քաջատեղյակ հետազոտող Մ. Սերոբյանը, գրելով, որ 1885 թ. օգոստոսի 1-ին Փորթուգալյանը Մարսելում հրապարակում է «Արմենիա» թերթը, իսկ «1889 թ. ապրիլի 17-ին կը հիմն է Հայոց Հայրենասիրական Միութիւնը, որը յետոյ փոխուեցաւ Արմենական կազմակերպութան»[1]: Սա, իհարկե, անճշտություն է, քանի որ Արմենական կուսակցության սկզբնավորումը տեղի է ունեցել Փորթուգալյանի հիմնած «Հայոց հայրենասիրական միության» գործունեությունից անկախ: Այլ բան է, որ որոշ արմենական գործիչներ եղել են Փորթուգալյանի հիմնած վերոհիշյալ

[1] Սերոբեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1937 թ., էջ 98-99:

«Միության» ակտիվ պրոպագանդիստներ: Դա վերաբերվում է նաև կուսակցության պարագլուխ Մկրտիչ Ավետիսյանին, որը Եվրոպայում եղած ժամանակ աշխատակցում է «Արմենիա» պարբերականին, ապա Մարսելից «Լոնտոն կանցնի եւ անխոնջ պրոպագանդիստ կըլլայ Հայրենասիրական Ընկերութեան»[1]:

Պատմական փաստերի անաչառ քննությունն ու համադրումը վկայակոչում է, որ անուրանալի մեծ ծառայություններ է մատուցել Մ. Փորթուգալյանը Արևմտահայաստանում՝ մասնավորապես Վանում քաղաքական կազմակերպված շարժումը սկսելու գործում:

Իսկ քաղաքական ընդդիմադիր կազմակերպված շարժումը սկսվեց Հայաստանի հարավային գավառներում, որն, առհասարակ, հայ ժողովրդի պատմության մեջ միշտ էլ ունեցել է բացառիկ կարևոր նշանակություն: Միջնադարյան շրջանում, Վասպուրականի ընդարձակ ու զարգացած թագավորության անկումից հետո անգամ «այնտեղի հայության մեջ մշտապես փայփայվեց հայրենքի պետական անկախության գաղափարը»[2]: Այդ ոգին ու գաղափարը կենսունակ մնաց մինչև 19-րդ դարակես և այդ դարի վերջերը, երբ Վասպուարականում նորից ծայր առավ ազգային ինքնագիտակցության մեծ զարթոնքը: Շնորհիվ Մ. Փորթուգալյանի և Խրիմյան Հայրիկի պես ահատների մղած տևական համառ, անզիջում պայքարի, հայ հասարակական-քաղաքական մտքի վերընթացը ընդհուպ մոտեցավ

---

[1] Տէր-Մկրտչեան Եր., նույն տեղում, էջ 456:

[2] Վ. Վարդանյան, Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Ե., 1969 թ., էջ 558:

այն կետին, որը քաղաքական բազմերանգ խմբակներից ու միություններից պետք է անցում կատարեր կազմակերպված պայքարի բարձրագույն ձևին՝ քաղաքական կուսակցության կազմավորմանը:

Այն նշանակալից նոր քայլ էր հայոց ազատագրական պայքարի ճանապարհին, քանի որ «կուսակցական նախանձախնդրությամբ գործող անձերը առավել եռանդով և հարատևությամբ կը գործեն, քան թէ չեզոք կամ անգույն մարդիկ»[1]:

Ըստ Փորթուգալյանի դիտարկման, կուսակցությունների դերը կարևորվում է նաև նրանում, որ իրենց տված «շահովն ու վնասովը միջոց կուտան ժողովրդին տեսնել, թէ ո՞ւմ պէտք է հետեւին վստահութեամբ»[2]:

Վանում գործելու տարիներին Փորթուգալյանի պահվածքն ու վարքագիծը, իրոք, կարելի և պետք է սխրալից կոչել, քանզի օսմանյան դաժան լծի ներքո տառապող արևմտահայության շրջանում կուլտուր-լուսավորչական ու հեղափոխական աշխատանք տանելն արդեն իսկ սխրանք էր, իրական սխրանք: Թուրքական իշխանությունները ուշադրությամբ հետևում, լրտեսում էին Փորթուգալյանի գործունեությանը և զգալով, որ վերջինս մշտապես բորբոքում է ազգային-հասարակական տրամադրություններն ընդդեմ իշխող ռեժիմի, նրան Վանից աքսորելու քաղաքական որոշում կայացրեցին:

Եկավ պահը, որ Փորթուգալյանն ու Խրիմյանը պիտի հրաժեշտ տային իրենց այնքան սիրելի և հարազատ Վանին:

---

[1] «Արմենիա», 1893 թ., թիվ 14:
[2] Նույն տեղում:

Սակայն Վանից նրանց հեռանալու պահին, արդեն իսկ ձևավորվել էր, կար նորահաս երիտասարդ սերունդ, որը հայրենասիրական իդեալներով տոգորված, ազատագրական գիտակցությամբ լեցուն, գաղտնի, բայց «... վճռական աշխատանքի լծուած էր կազմակերպելու, զինելու ժողովրդային խաւեր եւ պատրաստելու զայն ազգային իրաւունքներու հետապնդումին ու մայրդկայնօրէն ապրելու պահանջատիրութեան»[1]:

Խրիմյանն ու Փորթուգալյանը համարձակ, ազնիվ ջանքերով Վանում ստեղծել էին մի դյուրաբորբոք, փխրուն իրավիճակ, որն անհանդուրժելի էր թուրքական կենտրոնական ու տեղական իշխանությունների համար: Ուստի վերջիններս աճապարեցին արագ վերացնել ազգային այս երկու գործիչների հայրենանվեր գործունեության կայաններն ու հետքերը: Սուլթանի կարգադրությամբ «Կեդրոնական» վարժարանը անմիջապես փակվում է:

«Կեդրոնականի» փակումը ծանր կորուստ էր Վանի հայության համար և հենց այդպես էլ ընկալվեց ժամանակակիցների կողմից: Այն համարվում էր Վանում բացված առաջին հայկական բարձրագույն վարժարանը, որը հայ երիտասարդ մտավորական դասի մեջ ծնեց ու զարգացրեց ինքնակազմակերպվելու, ինքնապաշտպանության և հայրենիքի ազատության գաղափարները[2]:

---

[1] Ուզունեան Հ., Արեւմտահայ Ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնն իր 60-ամեակին, Լոս Անճելըս, 1986 թ., էջ 20:

[2] Տե՛ս Անդրեասյան Ա., Ուրուագիծ հայոց պատմութեան և հայկական մշակույթին, Բեյրութ, 1968 թ., էջ 7:

Մկրտիչ Փորթուգալյանի և Մկրտիչ Խրիմյանի Վանից աքսորումը և Վանի բնակչության կողմից նրանց սրտառուչ հրաժեշտի արարողությունը վերածվեցին քաղաքական հզոր լիցքեր պարունակող ջերմեռանդ ցույցի: Ժողովրդական խանդավառ ալիքի ուղեկցության ներքո Խրիմյանը Տարոնի ճանապարհով, իսկ Փորթուգալյանը Երզրումի ուղղությամբ թողեցին իրենց այնքան սիրելի ու հոգեհարազատ Վանը, որի ժողովրդին տվել էին հոգեկան անսպառելի կորովն ու ալեծուփ խանդավառությունը:

Վանից հեռանալուց հետո Փորթուգալյանը մի կարճ ժամանակով մնաց Կ. Պոլսում, հնարավոր բոլոր միջոցներով փորձեց կրկին վերադառնալ Վան, սակայն, ի վերջո, համոզվելով դեպի Վասպուրական վերադարձի անկարելիության մեջ, մեկնեց Եվրոպա: Հաստատվելով Ֆրանսիայի հարավում գտնվող Մարսել քաղաքում նա ձեռնամուխ եղավ իր փայփայած ու երազած կարևոր ձեռնարկի՝ համահայկական, համազգային պարբերականի հրատարակման աշխատանքների նախապատրաստմանը: Եվրոպայում հրատարակվող պարբերականը պիտի կոչվեր «Արմենիա»:

Փորթուգալյանը շատ էր ցանկանում, որ հրատարակվելիք պարբերականը, իրոք ունենար համազգային հնչեղություն և բովանդակություն՝ միմյանց հետ սերտորեն կապելով ու կամրջելով հայության տարբեր հատվածները:

Այդ կարգի ու այդպիսի գործառույթներ ունեցող պարբերականի անհրաժեշտությունը շատ էր զգացվում և այն պարզապես օդի պես անհրաժեշտ էր տարբեր հանգամանքներով տարբաժանված և աշխարհով մեկ ցրված հայությանը:

Փորթուգալյանի սկզբունքն ու մոտեցումը պարզ էր, հասկանալի. տարբեր քաղաքական ռեժիմների ներքո հայտնված հայությանը նախևառաջ պետք էր սերտորեն կապակցել գաղափարական ամուր կապերով և ոգեղեն լիցքավորումով: Վերոնշյալ գործառույթները կարող էր իրագործել միմիայն համազգային ոգի և չափումներ ունեցող պարբերականը: Քանզի ստեղծված չափազանց աննպաստ հանգամանքներում հայությունը այլ գործիք ու հնար չուներ՝ միմյանց կամրջելու բեկորված հատվածները:

Միաժամանակ Փորթուգալյանը հրապարակավ խոստանում էր, որ նոր պարբերականը հանդիսանալու է ճշմարտության և արդարության պատգամաբեր, ազատ ու անկաշկանդ ամբիոն՝ ինչպես անհատների, այնպես էլ ճնշված ու տառապյալ դասերի ու դասակարգերի համար:

«Արմենիան» լինելու էր ազատ ու բաց, ազատաշունչ և արդարաշունչ պարբերական՝ փնտրված ու սպասված արդարության ծարավ հոգիների համար:

Հրատարակելով նոր պարբերականը Փորթուգալյանը նորից իր հայացքը բևեռում էր Արևմտյան Հայաստանի գավառներում օրն ի բուն հարստահարվող և տառապող ժողովրդական հոծ զանգվածների վրա՝ նրանց տագնապներով, բողոքներով ու մտահոգություններով, մեծ ու փոքր հիմնախնդիրներով լցնելով «Արմենիայի» էջերը:

Երկրում մնացած հայությունը՝ այդ պարզ ու հասարակ ժողովուրդը վերստին դառնում էր Փորթուգալյանի հոգևոր ու բարոյական զինակիցը, նրան բարձր բարոյական ոգեշնչումներ հաղորդող ազդակը:

Այնքան սպասված պարբերականի ծնունդը, ի վերջո, տեղի ունեցավ 1885 թ. օգոստոսի 1-ին:

Քաղաքական գրական, ազգային, այս նոր պարբերականի ծնունդը բավական ուշագրավ ու ազդեցիկ եղավ:

«Արմենիան» միանգամից ներխուժեց արևմտահայերի ու արևելահայերի, եվրոպաբնակ ու ամերիկաբնակ շատ գաղութահայերի օջախներ՝ նրանց վերստին տոգորելով հայրենասիրության, ազատ, անկախ ու արդար հայրենիք ունենալու գաղափարներով ու երազանքով: Այն առավել սպասված հյուր էր արևմտահայերի օջախներում, քանզի տիրող համընդհանուր հուսահատության և հիասթափության մթնոլորտում պարբերականը հույս ու հավատ էր ինչեցնում գալիք ժամանակների հանդեպ:

Պետք է նշել, որ թերթի առաջին տարվա բաժանորդների 3/4 մասը կազմում էին հենց օսմանահպատակ հայերը: Թուրքական իշխանությունները սվիններով ընդունեցին «Արմենիայի» մուտքը կայսրության տարածք:

Եվ այդ հակասությունն ու բախումը միանգամայն օրինաչափ էր ու բնական, քանզի լույսի և խավարի, առաջադիմության և հետամնացության, իրավունքի, բարոյականության և բիրտ ուժի միջև ընթացող պայքար էր «Արմենիայի» և թուրքական իշխանությունների միջև սկսված կարծր ու անողոք հակամարտությունը: Փորթուգալյանի դավանած ու քարոզած առաջադեմ, ժողովրդավարական ու ազատասիրական գաղափարների դեմ օսմանյան ռեակցիոն և խավարամիտ իշխանությունները պայքարի այլ ձև չգտան, քան կայսրության տարածք թերթի վրա դրված արգելանքն էր: Թեև վերոնշյալ իրո-

դությունը մտատանջության մատնեց Փորթուգալյանին, սակայն չվիատեցրեց:

Նա սառնասրտորեն պնդեց, որ «այդ արգելք պատճառ չլինիր մեր թերթի հրատարակութիւնը դադրեցնելու»[1]:

Չնայած պաշտոնական արգելքներին, այնուամենայնիվ. «Արմենիայի» զգալի թվով օրինակներ լայն տարածում ունեին արևմտահայության շրջանում, հատկապես՝ Վանում:

Արմենական գործիչ Միքայել Նաթանյանը նշում է, որ Վանում ամեն շաբաթ առաքվում էր Փորթուգալյանի հրատարակած պարբերականը իր հորեղբոր՝ Կարապետ Նաթանյանի բնակության հասցեով ««Բթի Մարսէյէզ»-ի ծրարներու մեջ դրուած... թուրք գրաքննութիւնը դէռ կարծուած նրբութեան հասած չէր»[2]:

«Արմենիան» եղավ այն կրակոտ համահայկական պարբերականը, որի յուրաքանչյուր համարի էջերում անխնա մերկացվում էին համիդյան ռեժիմի հայահալած ու հայաջինջ քաղաքականության առօրյա ու ամենօրյա դրսևորումները արևմտահայկական գավառներում, գյուղերում ու քաղաքներում:

Այն հանդիսացավ արևմտահայության համընդհանուր բողոքի հավաքական ձիչը՝ ուղղված նախնառաջ քաղաքակիրթ կոչվող Եվրոպային ու ողջ մարդկությանը: Եվրոպայում ազգային-քաղաքական բնույթի լրագրի հիմնադրումից բացի, Փորթուգալյանը ձեռնամուխ եղավ «Հայոց հայրենասիրական միության» կազմավորմանը: Նրա հիմնած հենց այս հայրենասիրական կազմակերպությունն է, որ շատ հաճախ մեր պատ-

---

[1] «Արմենիա», 1885 թ., թիվ 10:

[2] Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990 թ., էջ 14:

մագրական գրականության մեջ շփոթել են արմենական կուսակցության հետ։

«Հայոց հայրենասիրական միությունը» ուներ իր կանոնագիրը և ձգտում էր դառնալ զանգվածային քաղաքական ուժ։ Նրա կանոնագրում նշված էր, որ «Միության» նպատակն է վարչական բարենորոգումներ մտցնել Թրքահայաստանի մեջ՝ հայոց տեղական պէտքերուն համաձայն»[1]։

Իսկ հայ ժողովրդի ցանկությունն է իրավունք ստանալ ազատորեն «Ինքզինք կառավարելու, որով միայն պիտի կրնան վերանալ այն հարստահարութիւնները, որոնք այսօր Հայաստանի թշուառութեան եւ աւերակ դառնալուն պատճառ կը լինեն»[2]։ Սակայն Փորթուգալյանին չհաջողվեց իր հիմնադրած սույն «Միությունը» վերածել ազատագրական շարժման մասսայական, կուռ ու զորեղ կազմակերպության։

Իր նախկին սաներից ոմանք սկզբնական շրջանում դարձան «Հայոց հայրենասիրական միության» գաղափարատարածիչները՝ Վանում, Ատրպատականի հայաբնակ շրջաններում և այլուր։ Սակայն արմենականները երբեք չեն նույնացել «Հայոց հայրենասիրական» կազմակերպության հետ։

Արտասահմանում գործելու տարիներին Փորթուգալյանը զգալիորեն մեկուսացավ թե՛ հեղափոխական գործիչների և թե՛ ժողովրդական հոծ զանգվածների հետ անմիջական գործնական շփումներից, որն էլ, իր հերթին, որոշակի ճակատագրական ազդեցություն ունեցավ նրա դրսևորած հետագա վարքագծի ու ընդունած որոշումների վրա։

---

[1] Նաթանեան Մ., նշվ. աշխ., էջ 11։
[2] Նույն տեղում։

ԳԼՈՒԽ III
«ԱՐՄԵՆԻԱ» ԹԵՐԹԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ «ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԻ»

«Արմենիա» թերթի ծնունդը տեղի ունեցավ Հայաստանից ու հայոց կենտրոններից շատ հեռու՝ Ֆրանսիայի Մարսել քաղաքում:

Մարսելում կար շուրջ 400 հազար բնակչություն, սակայն հոծ ու ազդեցիկ հայկական գաղութ այնտեղ դեռևս չէր ձևավորվել: Այնուամենայնիվ, տեղի ընտրությունը որպես թերթի հիմնադրման և հրատարակման վայր սխալ չէր կատարված, քանզի վերոնշյալ քաղաքը աչքի էր ընկնում մշակութային, կրթական, հրատարակչական հաստատությունների առատությամբ և բազմազանությամբ: Բավական է նշել, որ այդ պահին Մարսելում հրատարակվում էին շուրջ վեց տասնյակից ավելի լրագրեր, որն ինքնին այդ ժամանակաշրջանում նշանակալից երևույթ էր: Հետագայում Մ. Փորթուգալյանը զուգահեռներ տանելով հայերի և ֆրանսիական Մարսել քաղաքի բնակիչների միջև ընթերցվածության տարածվածության երևույթի շուրջ, նշում է, որ մեկ մարսելցին քսան հազար հայի չափ լրագիր է կարդում: Տխուր շեշտադրությամբ արձանագրվում է, որ հայերը այնքան էլ չեն սիրում կամ ետ են վարժվել ընթերցանությունից: *Մինչդեռ հանրահայտ ճշմարտություն է, որ կարդացող ու զարգացած մարդն է, որ անընդհատ և անընդմեջ պայքարում է իր իրավունքների և կյանքի ընդհանուր որակը բարեփոխելու համար, չհամակերպվելով դժբախտ կամ ստրկական վիճակի հետ:* Մինչդեռ ըստ Փորթուգալյանի կատարած մոտավոր հաշվարկների, մոլորակում ապրող շուրջ վեց միլիոն հայերից, լա-

վագույն դեպքում, լրագրեր ընթերցում է հայ «ազգի մէջ 6000 մարդէն հազիւ մէկ մարդ»[1]: Սա, իհարկե, տխրեցնող երևույթ էր և վկայում էր, որ հայ ազգի ընդհանուր զարգացածության ու մտավոր-բարոյական մակարդակը այդ ժամանակներում չէր կարող բարձր լինել: Այնքան բարձր, որ ազգովի ելնեին պայքարի՝ ընդդեմ օտարի դաժան ու նվաստացնող տիրապետության:

Պարբերականի անդրանիկ համարը լույս տեսավ 1885 թվականի օգոստոսի 1-ին: Դրանից շաբաթներ առաջ Փորթուգալյանն ու իր համախոհները հանրության առջև հանդես եկան շրջաբերական (**վիմագիր ձևով**) հայտարարությամբ, որում պարզ ու հստակ շարադրված էին նոր պարբերականի հիմնական նպատակն ու գաղափարական ուղղվածությունը: Հայտարարության առաջին պարբերության մեջ ասված էր, որ հայ ազգը ամեն կողմ ցրված լինելով, իրենցից մի փոքր մասն էլ Եվրոպայի մեջ է բնակվում: Ու քանի որ եվրոպահայ գաղթականությունը թեև հազարավոր մղոններով հեռու է մայր-հայրենիքից, տարակույս չկա, որ թերթի սույն հրատարակությունը օգտակար կարող է լինել բոլոր կողմերի հայությանը:

Այդ հարաբերության գլխավոր միջոցներից մեկը լրագիրն է, որը զանազան վայրերի լուրերն ու նորությունները «այն տեղի հայերի մտածումները այս գործունեութեան և ապրելու իրենց ազգակիցների հետ կապակցութեան միջոցները և այլ այսպիսի տեղեկութիւններ տալով, միութիւն և համերաշխութիւն կրնայ յառաջ բերել իրենց մէջ»[2]:

---

[1] «Արմէնիա», 1885 թ., թիվ 1:

[2] Արմէնիայի նպատակը և ուղղութիւնը, 1885 թ. յունիս 18-ի շրջաբերական, Հայաստանի Ազգային գրադարան, անձեռնմխելի ֆոնդ, «Արմէնիա» թերթի հավաքածու, էջ 1:

Եվ սույն պարբերականի հրատարակությանը ձեռնամուխ լինելով խմբագրությունը նպատակադրված է եղել Ֆրանսիայի հայ գաղթականության *և այլ երկրներում ապրող հայության միջև ամրապնդել միության ու համերաշխության ոգին և օգուտ քաղելով ֆրանսիական հանրապետության ազատությունը խրախուսող օրենքներից «հաստատել այստեղ մի հայկական տպարան, և որովհետև Արմենիա հայ թերթը հաղորդակցություն ունի Թուրքիայի, Ռուսաստանի և* Պարսկաստանի հայերի հետ որք մեր ազգի մեծամասնությունը կը կազմեն, բնականապէս պարտաւորուած ենք, խոհեմութիւն պահանջած սահմանին մէջ, յարգել նաև այս պետութիւնների հաստատած օրէնքները»[1]:

Հայտարարության մեջ Մ. Փորթուգալյանը փաստարկում է, որ Պարսկահայաստանում, Ռուսահայաստանում և Տաճկահայաստանում անձամբ խորությամբ հետազոտած լինելով ազգային կյանքի ընթացքն ու բաղադրությունը. «ամէն բան նոյնիսկ մեր աչքերով տեսած լինելու համար, չենք կարող յուսախաբութեան մատնել զմեզ և երջանիկ վիճակի մէջ կարծել մեր ազգ»[2]:

Ուրեմն, անհիմն լավատեսության կարիք բնավ չկա, և այդ կարգի չափազանցությունը դավաճանություն կլիներ հայ ազգի ճշմարիտ շահերի դեմ, քանզի, իրոք և իրականում հայ ազգը բոլոր առումներով (տնտեսական, վաճառականական, մտավորական ու բարոյական) գտնվում է շատ ծանր կացության մեջ: Մխիթարական ոչինչ չգտնելով (Կ. Պոլսում անգամ մի կենտրոնական վարժարան չենք կարողացել ունենալ և այդ առումով

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

անհարմար է համեմատության մեջ գտնվել հույների հետ) հետևյալն է հարցադրվում. «Հարստութեան կողմէն պետք է որ մխիթարուինք.– Այս մասին խօսքն անգամ աւելորդ է: Ամեն հայ գիտե այսօր թէ Թուրքիայի տնտեսական վիճակի անկումը ամեն աւելի հայերին վնասած է, ամիրայութեան ժամանակի սեղանաւորութեան հետքն անգամ ջնջեցին եվրոպական կամպանիաները, որոնց մէջ գրեթէ բաժին չունեն հայերը, իսկ վաճառականութեան մէջ ալ ուրիշներին հետ մրցելու անկարող դրութեան մէջ կը գտնվինք այժմ»[1]:

Իսկ ազգի նյութական և մտավորական անկումը նախապատրաստում և առաջնորդում է բարոյական անկումը: Քանզի այն բոլոր առաքինությունները, որոնք անհրաժեշտ են իբրև քաղաքացի ապրել ցանկացող ամեն անձնավորության, «մեր մէջ ոչ անուն ունեն ոչ իսկ նշանակութիւն»[2]: Ընդգծվում է, որ ներկայումս մեծագործ բարեպաշտներ, անձնվեր հայեր գրեթե չունենք, իսկ մեծագործության և անձնվիրության համար հարկավոր է «հափշտակիլ վսեմ գաղափարներէ որք այս կամ այն տեսակետով կոգեւորեն մարդկանց ոյժ կը տան և առաջ կը մղեն»[3]:

Նոր պարբերականը առաջ էր քաշելու նաև գեղեցիկի ընկալման ու գեղագիտական ճաշակի ձևավորման հարցերն ու հարցադրումները, գտնելով, որ նյութական գծուծ հաշիվները, որոնցով լցված են հայկական իրականության գրեթե բոլոր ոլորտները, թույլ չեն տալիս անհատին բարձրանալ վսեմ մի

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ատիճանին, մարդկային գեղեցիկ մտատիպարներին: Բարու, ճշմարիտի և գեղեցիկի գաղափարները հայության բոլոր խավերի շրջանում արմատավորելուն և զարգացնելուն էր ուղղելու «Արմենիան»: «Շրջաբերականը» հայտնում էր, որ պարբերականը նվիրված է պաշտպանելու մարդկային այն նվիրական իրավունքները, որ «ինչ ազգի ալ պատկանի և ինչ տերութեան տակ ալ գտնուի»[1]: Ազատության, հավասարության և եղբայրության սկզբունքները, որոնք արդեն պաշտոնապես ընդունված են քաղաքակիրթ աշխարհի կողմից, և որի մեկ մասը կկազմեն ռուսը, թուրքը և պարսիկը, ուրեմն և «Արմենիա» պարբերականը «ոչ մի տերութեան առջև ապօրինաբար շարժում չկրնար նկատուիլ»[2]:

Այնուհետև հետաքրքիր ու ծանրակշիռ սույն դիտարկումն է արվում. կընդունենք, թե ամեն մի ազգ մի մեծ ընտանիք կազմելով, այդ ընտանիքը իր ուզածի պես հանգիստ ապրելու պետք ունի սեփական բնակարանի: Բայց միևնույն ժամանակ բոլորս էլ քաջ գիտենք, որ աշխարհիս վրա շատերին վիճակված չէ առանձին տուն ունենալուն, ուրեմն նրանք ուրիշին վարձ վճարելով և ուրիշի կառավարած տան մեջ հնարավորին չափ հարմարվելով պետք է ապրեն: Ըստ այդմ, մենք ուրիշի կառավարած տան մեջ պահանջում ենք, որ «Հայեր կարող լինեն իրենց խնամող հովանուն տակ ապրել իբր **հայ-մարդ**, զարգանալ տնտեսապէս, հանգստութեամբ ապրելու միջոցներ ունենալ, ազատութեամբ պաշտել իրենց կրոն, ազատութեամբ

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

կառաւարել իրենց ընտանիքին և ազատ լինել իրենց միտք զարգացնելու և յառաջադիմելու»[1]:

Անդրադառնալով հայ եկեղեցու հանդեպ ունեցած իրենց դիրքորոշմանը, «Շրջաբերականի» հեղինակները գրում են, «Արմենիան» կրոնական թերթ չէ և հետևապես սահմանված չէ լուսավորչականություն քարոզելու: Սակայն նկատելով, թե հայ ազգը դեռևս քաղաքական կազմակերպություն չունի և հայոց հինավուրց եկեղեցին դարեր շարունակ հայոց ինքնության հիմնական ապաստանն է եղել, ուստի «Արմէնիան կհարգէ այդ եկեղեցի և կընդունի թէ նա կարող է որպես երկար ժամանակ խոր ազդեցություն ունենալ հայ ազգութեան վրայ»[2]: Միաժամանակ տագնապ էր արտահայտվում այն բանի շուրջ, որ Հայաստանի եկեղեցու մեջ կան պառակտումներ, որոնք կարող են նրան տկարացնել: Վերոնշյալ հանգամանքը շեշտադրելով հանդերձ, այնուամենայնիվ վերստին հավաստիացվում է, որ «Արմենիան» ազատության ջերմ բարեկամ է և չի կարող դավաճանել մարդկային ամենամեծ իրավունքի՝ խղճի և դավանանքի ազատության հիմնարար սկզբունքներին: Ուրեմն, հայ պաշտոնական եկեղեցուց բաժան հայերին հալածելը պարբերականի սկզբունքներին հակառակ է: Սա, իհարկե, չէր խրախուսում պառակտումները, քանզի ի վերջո, «Արմենիան» հաստատապես «կը սիրէ յուր ազգ և կը հարգէ յուր ազգի մեծամասնութեան յարգած եկեղեցի: Բայց միևնոյն ժամանակ կը սիրէ և ճշ-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

մարտութիւնը զոր չէ կարող մատնել ոչ ոքի զայն չարչարելու համար»[1]:

Սոցիալական և վարչաքաղաքական ոլորտում «Շրջաբերականը» հայտարարում էր, որ ազգային իշխանություն հաստատվելու պարագայում «մենք միշտ զրկուածների և հարստահայուածների կողմը պիտի լինենք, *ժողովրդին վրայ բռնացողների և հարստահարողների դեմ: Տկարին ու զրկուածին իրաւունքը պաշտպանել, ճշմարտութեան ջատագով կանգնել, չվհատիլ և չընկրկիլ բռնաւորի իշխանութեան դառնաշունչ քամիներեն, այդ կլինի Արմէնիայի գալիք ճանապարհի գիծը, լաւագոյն համարելով մինչև իսկ մեռնիլ այդ գծին վրայ, քան թե շաղիլ այդ գծէ»*[2] (ընդգծումը մերն է – Ա. Կ.): Սա պարզ ու հստակ քաղաքական դիրքորոշում է, որը, կարելի է ասել, հանդիսացավ պարբերականի հետագա ամբողջ գործունեության հավատո հանգանակը:

Փորթուգալյանն ու իր համախոհները երբեք չշեղվեցին վերոնշյալ գաղափարական ուղեգծից:

Անշուշտ, չափազանց գնահատելի ու դրվատելի է պարբերականի տնօրեն-խմբագրի այն հավաստիացումը, որ «Արմենիան» նվիրված է զրկվածներին «որոնք միջոց և ձայն չունին պաշտպանելու համար և սակայն հարստահարուած հայ ժողովրդի մեծամասնությունը կը կազմեն»[3]: Իսկ Թուրքիայի հայկական գավառներում ապրող հայերը, որոնք ազգի գերակշիռ մասն են կազմում, որոնք նաև ազգային խնդիրների մեջ ամե-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

նից ավելի զրկվածներն են և զավառական մի թերթ չունեն իրենց պահանջներն ու ցավերը բարձրաձայնելու համար, ուստի «այդ զավառացի իրենց ընդհանրական դատերի պաշտպանության համար ասպարեզ պիտի գտնին Արմէնիաի մէջ»[1]:

Անդրադարձ կատարելով արևմտահայության ներկա կացությանը, նշվում է, որ պարբերականի խմբագրությունը թուրքահայերի Սահմանադրությունը, նրա ոգին ու սկզբունքները ջերմագին հարգողներից է: 1860-1863 թվականների ջերմ հիշատակները «մեր պատանեկութեան օրերէն սկսած, այնպիսի խանդոտ տպաւորութիւն արած են մեր սրտի վրայ որ Սահմանադրութեան ոգուն դեմ հարուած տրուած ժամանակ, կը սարսափենք իբր սրբապղծութենէ և ամիրայական ու չորպաճիական տխուր օրերէն վերադառնալու փափակը կը յիշեցունք մեզ Եգիպտոսեն նոր ազատուած Իսրայելեան ժողովրդի վիճակ որ յուր գերութեան մէջ սոխ ու սխտորի՛ն կը ցանկար հառաչելով»[2]:

Վկայակոչվում է, որ ազգի ներսում վիճակը հետզհետև ավելի անմխիթար է դառնում, քանզի կեղծ ազգասերները ու կիսագրագետ իմաստակները զորսվոր միություն են ձևավորել: Մյուս կողմից էլ ներքին կյանքում այս տխուր վիճակը տեսնողներն ու զգացողները «կը կազմեն ազգային կեանքէ յուսահատների կուսակցութիւնը որք այսպէս մի բաւական ստուար թիւ ունեն առայժմ»[3]:

Քննադատական խիստ խոսք է ասվում հարուստների այն հատվածի վերաբերյալ, որոնք իրենց վեր են դասում հասարակ

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ժողովրդից և կարծում են, թե միության և սրտի ազատության հայելին են արտաքին փայլին ձգտողները:

Հայտարարության վերջին մասում ևս մեկ անգամ հաստատակամ ու վճռական հնչում է, այն միտքը, որ *«Արմենիան» կհանդիսանա հայ ժողովրդին նվիրված ազատական մի թերթ և որը ընդդիմադիր կլինի ազատ մտածումները բռնաբարող եկեղեցականներին, ժողովրդին արհամարհող իշխաններին և խաբեբա իմաստակներին:* Պարբերականը հարգանք էր ցուցաբերելու դեպի «ջերմապես ազատամիտ և ազատասեր եկեղեցականները, ժողովրդասեր իշխանները և անձնուեր վարժապետները որոնց էութիւնը պատիւ կհամարի իրեն»[1]:

Խմբագրությունը վստահություն էր հայտնում, որ իր գործունեությունը պարզ ու շիտակ սկսող պարբերականը ճշմարիտ բարեկամների ուժերով կկարողանա առաջ շարժվել նախանշված նպատակներին հասնելու համար: Հենց այդ վստահությամբ վերոնշյալ շրջաբերական հայտարարությունը պիտի ուղարկվեր շատերին, խնդրելով, որ իրենք էլ ուժ տան հայանպաստ նոր ձեռնարկին «թե իրենք բաժանորդ գրվելով և թե աշխատելով որ Արմէնիայի բաժանորդներ գտնեն իրենց ծանոթների շրջանին մէջ»[2]: Որոշված էր, որ պարբերականի անդրանիկ համարը լույս տեսնի 1885 թ. օգոստոսի 1-ին (հուլիսի 20), ուստի կարևորվում էր կարելի մեծ թվով բաժանորդներ ունենալու գործոնը, որով առավել ոգեշնչված ու թնավորված պիտի գործեր պարբերականի խմբագրակազմը: Իսկ ժողովրդական

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

հոծ զանգվածների աջակցությունը սույն գործին հույժ անհրաժեշտ էր, քանի որ այնպիսի երկրի մեջ, ուր ոչ հայերեն տառեր կան, ոչ հայերեն գրաշար և անպակաս են նյութական բազմատեսակ դժվարությունները, բավական աննպաստ ու աննախանձելի վիճակում էին հայտնվել պարբերականի խմբագիրն ու իր օգնականները:

Այնուամենայնիվ, բոլոր դեպքերում խմբագրակազմը վճռականորեն էր տրամադրված նախանշված օրը անդրանիկ համարով հանդիպելու իր ընթերցողների հետ և դրանով իսկ սկսելու մի նոր, դժվարին, սակայն հարատև առաքելություն:

ԳԼՈՒԽ IV

ՍԵՓԱԿԱՆ ՈՒԺԵՐԻՆ ԱՊԱՎԻՆԵԼՈՒ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՄԸ: ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՄԱՍՍԱՅԱԿԱՆԱՑՈՒՄԸ

«Արմենիա» պարբերականը, նրա խմբագրակազմը այն եզակի հայկական հասարակական-քաղաքական հաստատություններից մեկն էր, որը մշտապես փայփայեց և հավատարիմ մնաց սեփական ուժերին ապավինելու ռազմավարությանը և այն դարձրեց հայ ազգային-ազատագրական շարժման՝ եթե ոչ լայն մայրուղի, ապա գոնե բանուկ արահետ:

Հատկանշական է ընդգծել, որ պարբերականը հենց իր առաջին օրերից ու քայլերից որդեգրեց վերոնշյալ ճշմարտացի և իրատեսական դիրքորոշումը:

Իսկ դա շատ կարևոր էր, քանզի 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին հայ ազատագրական պայքարը ղեկավարելուն և ուղղորդելուն հակված որոշ քաղաքական ուժեր գտնվում էին հեղհեղուկ վիճակում՝ մերթ ապավինելով սեփական ուժերին, մերթ հույսները մասնակիորեն կամ ամբողջովին կապելով օտարերկրյա պետությունների արտաքին միջամտության հետ: Իսկ եվրոպական դիվանագետները հմտորեն օգտագործում էին հայ քաղաքական ուժերի և գործիչների միամտությունը ու անփորձառությունը սեփական շահերի սպասարկման նպատակով: Այս առումով թերևս դիպուկ է արտահայտվել հայ ազատագրական շարժման հայտնի գործիչ ու տեսաբան Արտակ Դարբինյանը նշելով, որ «... զաւեշտա-ողբեր-

գական բնույթ ստացած էր եվրոպական երեք մեծ պետություններուն միջամտությունը»[1]: Այո, վերոհիշյալ դարաշրջանում հայոց ապրած մեծ ողբերգությունը և եվրոպական դիվանագիտության երկակի սիրախաղերը հայկական կուսակցությունների և Օսմանյան տերության ղեկավարների հետ առաջացնում էր հենց վերոնշյալ «զաւեշտա-ողբերգական» կացությունը:

Որպեսզի ընթերցողը չվախենար և չխուսափեր հեղափոխական և ազատագրական շարժմանը հարելուց և մասնակցելուց, թերթի էջերում մշտապես շեշտադրումներ ու անցումներ էին կատարվում դեպի հայոց պատմական անցյալի լավագույն, փառահեղ էջերը:

«Արմենիայի» խմբագրապետը մշտապես արծարծում էր արևմտահայության շուտափույթ ազատագրության անհրաժեշտության խնդիրը: Քաջածանոթ լինելով հայրենաբնակ ժողովրդի իրական ողբերգական կացությանը (նաև անձնական փորձով ու փորձառությամբ), նա գտնում էր, որ թուրքական բիրտ լծի շարունակումը կարող է ավարտվել հայրենիքի ամբողջական կորուստով: Աչքի առջև ունենալով թուրք-օսմանյան իրականության սարսափելի պատկերը, նա քննադատության ողջ տարափն ու սլացքը ուղղեց վերոնշյալ իրականության դեմ: Անդրադառնալով հեղափոխության գաղափարին ու գործին, նա համոզված պնդում էր, որ հեղափոխության նախապատրաստման ընթացքին պետք է մասնակից լինեն հայ ժողովրդի բոլոր խավերն ու հատվածները: Իսկ այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր, որ արևմտահայության տարբեր խա-

---

[1] **Դարբինեան Ա.**, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947 թ., էջ 46:

վերի՝ հարուստների, միջակների ու չքավորների միջև հաստատվի համերաշխ փոխըմբռնման և համագործակցության ոգին: Նա գտնում էր, որ անընդհատ, անընդմեջ ու անվիատ աշխատանքի դեպքում հնարավոր է, որ վերոհիշյալ երեք դասակարգերին «... մէկ-մէկ մաս մոտեցնեն իրար և միացնէն հայրենիքի վերաշինութեան սուրբ գործի համար»[1]: Այն որ Հայաստանի վիճակը ծանր, սոսկալի և անտանելի է, բոլորին է հայտնի, սակայն, ըստ նրա, պետք է գիտենալ, որ հայոց խնդրի լուծումը «ոմանց կարծածին չափ ալ դիւրին չէ. փափուկ կէտեր, կնճռոտ կապեր ունի», որոնց լուծմանը ուշադրությամբ, զգուշությամբ և «յարատեւութեամբ պէտք է աշխատիլ»[2]: Հենց այդ հանգամանքը հաշվի առնելով է, որ երկրորդում է, թե բավական չէ միայն զգալ, պետք է նաև գիտենալ և հասկանալ: Իսկ գիտենալու համար նախնառաջ անհրաժեշտ է անցյալում նույն նպատակով կատարված փորձերն ու գործերը լավագույնս ուսումնասիրել, գրագետ կերպով ծանոթանալ մեր ազգի «մոտաւոր անցեալի պատմութեանը հետ, որի շարունակութիւնը պիտի կազմենք»:

Փորթուգալյանը նույն այդ հոդվածում նշում է, որ հարկ չկա անտեղի սնապարծությամբ տոգորվել և ինքներս մեզ չխաբենք այն մտայնությամբ, թե «մեզնէ առաջ եկող գացողները բնաւ չեն մտածած և աշխատած այս նպատակի համար, թէ մեր օրով և մեզնէ, սկսած է Հայաստանի ինքնավարութեան գաղափարը, թէ Ռուբինեանց թագաւորութեանց անկումէն մինչեւ այժմ եր-

---

[1] «Արմէնիա», 1893 թ., թիվ 13:

[2] «Արմէնիա», 1893 թ., թիվ 30:

բէք այնպիսի փառաւոր գործունէութիւն և շարժում չէ եղած այս նպատակի համար ինչպէս այժմ»[1]:

Հետաքրքրական է նրա այն դիտարկումը, որ այսպիսի ինքնախսբեբայության հետևանքը այն կլինի, թե Տաճկահայաստանի կացությունը կփոխվի, բայց ոչ թե մեր ցանկացածի, այլ օտարի ցանկացածի պես և «մենք փոխանակ պարծենալու, ինչպէս կանեն ոմանք այժմ՝ օդային և անիրագործելի ծրագիրներ կազմուելով Ազգին ժամանակ կորսնցունել տալերնուն համար, կարժանանանք ապագայ սերնդի դատապարտութեանը միայն...»[2]:

Սա իրատեսական և գրեթե մարգարեական կանխագուշակություն էր, արված եղեռնից ուղիղ 22 տարի առաջ, 1893 թվականին: Փորթուգալյանը խորը վերլուծությամբ քննելով հայկական իրականության մեջ ընթացող գործընթացները, հանգել էր վերոնշյալ եզրակացությանը:

Այո, պատմության հետագա ընթացքը ցույց տվեց նրա ճշմարտացի լինելը: Հայ քաղաքական ուժերն ու գործիչները առաւել թանկագին ժամանակ էին կորստի մատնում, քան թե իրականում նախապատրաստվում դիմագրավելու արևմտահայությանը սպառնացող աղետին: 19-րդ դարի 80-90-ական թվականներից մինչև մեծ աղետը՝ 1915 թվական, հայ քաղաքական իրականության մեջ սույն առումով պատկերը, չփոխվեց: Հայ քաղաքական ուժերը երբեմն ավելի շատ ուժ և ջանքեր էին ծախսում միմյանց վարկաբեկելու, պառակտելու, թուլացնելու

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ուղղությամբ, ինչը որ անթույլատրելի էր ուժասպառ ու արյունաքամ եղող ժողովրդի համար:

Սեփական ուժերին ապավինելու ռազմավարության մշակման համակարգում կարևոր ու առանցքային հարցադրում էր, թե Հայաստանը իր հարստահարված վիճակից ազատելու համար «գործի ասպարէզը ո՞ր տեղն է. Եւրոպա՞ մէջ, թէ Հայաստանի մէջ»[1]:

Եվ եթե հավատալու լինենք, թե հայ ժողովուրդը պիտի ազատագրի Հայաստանը, ապա գործի բուն ասպարեզը Հայաստանի մեջ է, իսկ եթե հավատանք, թե եվրոպական տերությունները և Ամերիկայի Միացյալ Նահանգները պիտի «երթան Հայաստան՝ ազատելու այդ երկիր, այն ժամանակ գործի բուն ասպարէզը այս երկիրների մէջ է»[2]:

Սույն հարցադրումներից հետո Մ. Փորթուգալյանը աներկբա հավատացնում է, որ Եվրոպայի մեջ հայերի ու հայոց դատի մասին «գրելու, խօսելու, պօռալու ազատ ասպարէզն է, իսկ գործելու բուն ասպարէզը Հայաստանի մէջ է»[3]:

Ըստ նրա, ԱՄՆ-ի և Եվրոպայի հայերը հայ դատը աշխարհին ներկայացնելու իրենց ճիգերով և մտադրություններով «մինչեւ մէկ աստիճան կրնան օգնեն Հայաստանի ազատութեան գործին, բայց այդ գործ չեն կրնար կառավարել հեռուներէն, կառավարողները բուն Հայաստանի մէջ պիտի լինին»[4]:

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 36:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Նա շեշտադրում է, որ եթե հայ ժողովուրդը չգործե Հայաստանի մեջ, երբ «հայ ժողովուրդ չլինի Հայաստանի մէջ, Հայաստանի խնդիր ալ չլինիր: Աստ համար է որ մենք ամենամեծ ցաւ կզգանք երբ կը տեսնենք թե հայեր դուրս կելնեն Հայաստանէն»[1]: Իրավացի է հայրենասեր գործիչը, քանի որ համատարած արտագաղթի պայմաններում, որը նկատելի էր արդեն այդ ժամանակ, հայազուրկ երկրում այլևս ուժերն ու ռեսուրսները չէին բավարարելու այնտեղ գործելու համար:

Փորթուգալյանը համոզված է, որ թուրքական կառավարությունը ուղղակի և անուղղակի միջոցներով ստիպում է հայերին գաղթել իրենց երկրից, մինչև անգամ «ճանապարհածախքն ալ ինք կուտայ որ հայեր Թիւրքիաէն դուրս ելնեն»[2]:

Ինչ վերաբերվում է եվրոպական տերությունների դերակատարությանը, ապա նրանց «պէտքն ու օգտակարութիւնն ալ կընդունինք մինչեւ որոշ աստիճանց»[3]:

Փորթուգալյանը բազմիցս նշում ու շեշտում է, որ հայ մարդը ինքը պետք է աշխատի Հայաստանի ազատագրության համար, հույսը դնի միմայն իր վրա, «իր աշխատանքի, իր պատրաստութեան և իր անձնուիրութեան վրայ, որպէս զի Հայաստանն ալ իրեն լինի»[4]: Հակառակ դեպքում օտարները այն օգտագործում են լոկ իրենց շահերի համար: Վերլուծելով ժամանակի հայկական իրականության դժգույն պատկերը, նա խորաթափանցորեն նկատում է, որ «Մենք այսօրէն ոչ մէկ տէրու-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1894 թ., թիվ 44:
[4] Նույն տեղում:

թեան կուսակցութիւնը կրնանք ջատագովել և միւսին բացէ ի բաց թշնամի ներկայանալ: Մենք այդ տէրութիւններէ մէկին հետ դաշնակցութիւն կապելու դիրքին մէջ չենք որ այժմէն իսկ կարենանք ապահովուիլ բոլորովին իր կողմէ և մեր դաշնակցի թշնամին մեզ ալ թշնամի հրատարակել»[1]: Օրինակներ բերելով բալկանյան ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարից, նա վերստին շեշտում է սեփական ուժերին ապավինելու ռազմավարության կարևորությունը, պնդելով, որ «պուլկարներն իրենք զիրենք ազատեցին և ոչ թէ ռուսը ազատեց զիրենք. միայն թէ ռուսը օգնեց իրենց ինչպէս և օգնեց Հէրսէք-Պոսնիացիներին»[2]: Վստահություն չտածելով օտար պետությունների վարած քաղաքականությանը, նա ուշագրավ եզրակացության է հանգում. «Հանգամանքների և օրուան պահանջներին համեմատ կը փոփոխուի այդ տէրութիւնների դէպի մեզ ցոյց տուած քաղաքականութիւնը. միայն թէ մենք պէտք է այն վիճակի մէջ գտնուինք որ կարենանք ազդել այդ քաղաքականութեան վրայ»[3]:

1894 թվականի օգոստոսի 11-ին «Պէտք է գիտնալ» հոդվածում Փորթուգալյանը նորից ու նորից շեշտում է, որ մեր հայրենիքի ազատության գործի օգտին աշխատելու համար, բավական չէ միայն զգալ, այլ պետք է նաև գիտենալ, թե այդ նպատակով ինչեր են կատարվել մինչև այժմ «անոնց ո՞ր մասերը յաջո-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ղած են և ո՞ր մասերը չեն յաջողած և ինչո՞ւ համար չեն յաջողած»[1]:

Կարևոր էր համարվում նաև հայ ազգի ներկա կացության ռեալ քննությունը, թե «հիմա ինչ վիճակի մէջ կը գտնուի մեր ազգ բարոյապէս, մտաւորապէ և նիւթապէս, ի՞նչ նպաստաւոր հանգամանքներ կան այժմ և ի՞նչ աննպաստ հանգամանքներէ պաշարուած ենք»[2]: Եվ այս ամենը վերլուծել, հիշել ու գիտենալ պետք է այն բանի համար, որ եթե որևէ մեկը ցանկանա իր հայրենիքի ազատության գործին օգտակար լինել, օգուտի տեղ վնասակար գործողություններ չանի: Սույն հոդվածը նորից եզրափակվում է այն համոզումով, որ Հայաստանի ազատությունը հայ ժողովրդի ձեռքով պետք է լինի: Ուրեմն, հայ ժողովուրդը պետք է «զգայ իր ազատութեան պէտքը, գիտնայ իր ազատութեան կերպը»[3]:

Փորթուգալյանը խիստ քննադատության է ենթարկում ազգի ներսում հուսահատ տրամադրություններ տարածողներին, որոնք ամենուր հայտարարում են, թե «մեզի ազատութեան յոյս չկայ բնաւ. այս վիճակի մէջ բան մ ալ չպիտի կրնանք անել...»[4]: Հենց այդպիսիների ջանքերով է արմատավորվում այն մտայնությունը, թե «մենք ի՞նչ ոյժ ունինք դիմադրելու համար բռնաւորի կամ բռնաւորների. մենք հարստութիւն չունինք. հայ ազգը աղքատ է»[5]:

---

[1] «Արմէնիա», 1894 թ., թիվ 4:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1894 թ., թիվ 59:
[5] Նույն տեղում:

Այս և համանման այլ պնդումները նա ընդհանրացնում է ուր կետով.

1. Հայ ազգը աղքատ է

2. Հայ ազգը զարգացած չէ մտաւորապէս

3. Հայ ազգի բարոյականն աւրուած է. ստրկական բնաւորութիւն ունի

4. Մեր ազգ հետզհետէ պակսելու վրայ է և բնական օրէնքով կոչնչանայ այսպէս

5. Մենք քիչուոր ենք և անզէն և շրջապատուած ենք բազմաթիւ և զինուած մահմետականներէ

6. Հայաստանի աշխարհագրական դիրքն ալ արդէն անյարմար է և ատոր համար է որ մենք սկզբէն ի վեր այսպէս ոտնակոխ ենք եղեր

7. Ռուսը անպատճառ պէտք է գրաւէ Հայաստանը. պարապ տեղն է մեր աշխատանք.

8. Մեր ազգ ցրուած է և մեր մէջ միաբանութիւն հաստատելն անկարելի է[1]:

Հոռետեսների և հուսահատների ենթադրելի սույն փաստարկներին, նա պատասխանում է, որ եթե պետք է հուսահատվել հայ ազգի ազատության գործից, որովհետև նա անչափ աղքատ է, դրամ չունի ազատության գործին բաշխելու, ապա «խնդրեմ ասացէք, ո՞վ է օսմանեան շռայլ ու պերճափայլ կայսրութեան ծախքերն հոգացողը»[2]: Ո՞վ է սուլթանից սկսած մինչև հետին լրտես-պաշտոնյան կերակրողն ու նրանց պետքերն ու

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

հաճույքներ գոհացնողը, չէ որ մեր ժողովրդի «վճարած տուրքերովն է որ այդ բոլոր ծախքեր կը լինին»[1]:

Նա ճշմարիտ է հարցապնդում, թե բուլղարներն իրենց ազատությունը ձեռք բերելուց առաջ ավելի հարուստ էին, քան թե հայերը: Խնդիրը նրանումն է, որ ամեն բուլղար «վաճառականէն սկսած մինչեւ պօյնիկճին, իր վաստակէ կը տասնորդէր իր հայրենիքի ազատութեան գործին համար»[2]:

Քննադատության սլաքն ուղղվում է ունևորների և մեծահարուստների կողմը, որոնք որքան հարստացան, այնքան ավելի անզգա ու անտարբեր դարձան դեպի ազգային ձեռնարկները: Խմբագրապետը վկայակոչում է «Արմենիայի» օրինակը, ցույց տալու համար, որ հարուստները ավելի անտարբեր են դեպի ազգային գործերը և նրանցից քչերն են բաժանորդագրվում հայերեն ազատական թերթին, մինչդեռ «հարուստ չեղողներն են որ թէ՛ իրենց բաժանորդագրութեամբ և թէ՛ նուիրատուութիւններով առաւելապես օժանդակ կը հանդիսանան Եւրոպայի մէջ հրատարակուող հայերէն ազատական թերթին»[3]:

Այս ամենից եզրակացվում է, որ «դրամը չէ այնչափ որ կը պակսի մեր ազգի մէջ, այլ զգացումն ու հայրենիքի ազատութեան գաղափարն է որ կը պակսի դեռ մեր մէջ»[4]:

Նա անհեթեթություն է համարում հին ազգերի բնական օրենքով ոչնչանալու տեսակետը, նշելով, եթե այն անխուսափելի լիներ, ապա հույները պետք է վաղուց անհետացած լի-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

նեին: Հայ ազգի ֆիզիկական առումով պակասելը բնական օրենքով չէ, որ տեղի է ունենում, այլ թուրքերի կատարած բարբարոսություններից և եթե Թուրքիայի մեջ պակասում են, ապա Ռուսաստանում շատանում են: Կրկին վկայակոչվում են սերբերի և բուլղարների պես փոքր ազգերի ճակատագիրը, որոնք հերոսական պայքարի գնով ձեռք բերեցին իրենց երազած անկախությունը և թե «Զուիցերիայի փոքրիկ հանրապետությունը որ չորս կողմէն շրջապատուած է մեծ ու հզոր ազգերէ որոնց երբեմն հպատակ եղած, 3 միլիոնէ բաղկացած ժողովուրդ ունի այժմ»[1]:

Փորթուգալյանը պարբերականի էջերում մշտապես զարգացնում էր այն գաղափարը, որ ազգի ներսում գտնվող «այն ամեն ոյժեր որոնք բարոյապէս կամ իրենց խելքով կամ իրենց դրամով օգտակար կը լինին ազգին պէտք է յարգել, գնահատել, բարձր պահել»[2]: Ազգի ներքին միասնականությունը պետք է ապահովել, քանի որ եթե մեր ձեռքով տկարացնենք ազգի ներսում առկա հազվագյուտ ուժերը, մինչդեռ մյուս կողմից էլ «օտարներէն մի բան չենք կրնար յուսալ մեր այս վիճակի մէջ, ի՞նչ պիտի կրնանք անել այս ընթացքով»[3]:

Թերթում մշտապես հոլովվող թեման ազատության գաղափարի արծարծումն էր: Տարբեր տեսանկյունից և դիտակետից ընթերցողներին հրամցվում էր ազատության գաղափարի ընկալման և ընդունման ծայրաստիճան անհրաժեշտությունը:

Փորթուգալյանը հաճախ և տարբեր ասպեկտներով հարցադրումներ է անում սույն թեմատիկայի առնչությամբ և ամեն

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1894 թ., թիվ 71:

[3] Նույն տեղում:

անգամ նոր փակագծեր բացում հայկական բարդ ու խրթին իրականությունը իրատեսորեն վերլուծելու ուղղությամբ: Նա գրում է, թե ոմանք կհարցնեն միամտությամբ, թե մեր մեջ մի՞թե բավական տարածված չէ ազատության գաղափարը:

Եվ պատասխանում. «Գաղափարը կա, բայց գործ չկայ»[1]: Իսկ եթե գործ չկա կամ գործնականում այն նվազ չափով է արտացոլված, ապա սույն իրողությունը ապացույցն է այն բանի, թե վերոնշյալ գաղափարը հարկ եղած չափով ու խորությամբ տարածված չէ մեզանում: Նա դժգոհում է, որ հայ ժողովրդի լայն խավերի շրջանում բավական ամուր և կայուն համոզմունքներ հայրենիքի և ազատության գաղափարի շուրջ չկան, որ դեռևս շատ է ամբոխավարության և պատեհապաշտության գործելակերպն ու ոգին: Նա ընդունում է, որ ինչպես այլոց, այնպես էլ հայ ժողովրդի մեջ «կայ մի բոլորովին տգէտ ամբոխ որ ո՛չ գիտակցութիւն ունի, ո՛չ համոզում և ո՛չ մի որոշ գաղափար, ալ կը՝ընդունի ինչ որ իրեն տայ առաջին պատահողը որ իրմէ մի քիչ աւելի խելացի կամ լեզուանի լինի. երբ քիչ յետոյ մի ուրիշ անձ սպատահի և սա ալ մի տարբեր նոր բան ասէ, այդ ալ ընդունելով նորեկին կը հետեւի»[2]: Ճշմարտացի է նրա այն դիտարկումը, որ Հայաստանի ազատագրության համար պայքարողը պետք է հիմնավոր ու փայլուն գիտենա հայոց անցյալի պատմությունը, հստակ ու կայուն համոզմունքներ ունենա, որպեսզի ամբոխին իր հետևից տանելու կարողություն ձեռք բերի:

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 35:

[2] Նույն տեղում:

Փորթուգալյանը տար պետությունների քաղաքականությանը անդրադառնալով, վերստին հավատարիմ էր մնում իր ընտրած ռազմավարությանն ու սկզբունքային մոտեցումներին: Պարբերականի քաղաքական դիրքորոշումը հստակ արտահայտված է «Ռուսիա, Անգլիա և Հայաստան» խմբագրական հոդվածում, որում նշված է, որ թեև մեզանում անգլիական և ռուսական անուններով կազմակերպված կուսակցություններ չկան, բայց քանի որ հայ ազգը իր հայրենիքի ազատության «խնդիրներովն սկսած է զբաղվիլ և ատոր համար օտար մի պետութեան պաշտպանութեանն ու աջակցութեանն ալ մէկ աստիճան հետամուտ է»[1]: Քաղաքական զուգահեռներ անցկացնելով Անգլիայի և Ռուսաստանի միջև, նշվում է, որ երկու տերությունները միշտ էլ գործել են իրենց գործնական շահերին խիստ հետամուտ: Անգլոմետները դիմելով Ռուսիայի և Հայաստանի երկու հարյուր տարվա պատմությանը, պնդում են, որ հայ ազգը այդ ժամանակամիջոցում ամեն ինչ արել է, որպեսզի ռուսական քաղաքականությունը տարածվի և արմատավորվի Հայաստանում: Սակայն ռուսը օգուտ քաղելով հայ ժողովրդի «իրեն, մի քրիստոնեայ տէրութեան, ցոյց տուած համակրութենէն, եկաւ խլեց Պարսկաստանէն Դերբէնտը, Բագուն և Կիլանը հայ մելիքների զօրքերին օժանդակութեամբը և յետոյ քաշուեցաւ գնաց Պետերբուրգ, հայերը բոլորովին մենակ թողլով իր գրգռած բարբարոս թշնամիների առջեւ»[2]:

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 39:

[2] Նույն տեղում:

Փորթուգալյանը ցավագին հնչեղությամբ հարցադրում է, որ մի ժամանակ «ոչ իսկ 100 տարի առաջ, գոնէ Մելիքներ ունէինք դեռ որոնք իրենց հրամանի տակ հայ զօրագնդեր ունէին. ատոնց մէջէն կրնար ելնել մի Դաւիթ Բէկ, Հայաստանի անկախութեան յոյսերը արծարծող»[1]: Սակայն ռուսական իշխանությունը ջնջեց հայկական կիսանկախ մելիքական կառույցները: Եվ այսքանից հետո «պատմական այնչափ փորձերէ ու փորձանքներէ յետոյ, տակաւին կարելի է յոյս դնել Ռուսիայի վրայ թէ նա կօգնէ այժմ իր դրացի Տաճկահայաստանին ինքնավարութիւն ձեռք բերելուն երբ ինք ալ միլիոնաւոր հայ հպատակներ ունի իր ճանկերի տակ»[2]:

«Արմենիայի» խմբագրապետը համոզմունք է հայտնում, որ Հայաստանը ռուսներին հետաքրքրում է լոկ իրենց նեղ-ազգայնական շահերի տեսանկյունից և ռուսական հաջորդող կառավարությունները ձգտում են կայսերական դիրքերի ամրապնդման նպատակով գրավել Հայաստանը մինչև Կիլիկիա:

Անգլիան հակառակվում է, քանի որ վտանգում է իր շահերը: Հետաքրքիր է այն դիտարկումը, որ Անգլիան միշտ փափագում է, որ «ռուսին և իր միջեւ ուրիշ ազգեր թումբեր լինին, ինչպէս այժմ թիւրքին կը գործածի իբրեւ մի թումբ ռուսին դէմ»[3]:

Հաջորդ համարներում Փորթուգալյանը խոսք է բացում հակառակ պնդումների շուրջ, որոնք արմատավորում են այն մտայնությունը, թե Ռուսաստանը շատ ավելի հուսալի և արդարասեր պետություն է հայերի համար, քան Անգլիան. «Գալով

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

հայերիս, ի՞նչ արած է Անգլիա հայերիս համար. մի թէ՞ նոյն իսկ Պէրլինի դաշնագրի 61-րդ յօդուածի ծնունդը Ռուսիայի չենք պարտիր»[1]:

Ընդգծում է հայ իրականության մեջ տարածված այն միտումը, որ Անգլիան Հայաստանից շատ հեռու է մեզ պաշտպանելու համար, միաժամանակ նա սովորություն չունի տկար ժողովուրդներին օգնելու: Անգլիացիները կօգնեն այն ազգերին միայն, որոնք թուրքական լծից «արդէն ազատուած, զօրացած և յառաջդիմելու վրայ են, այնպէս որ կրնան անոնցմէ մի շահ ակնկալել»[2]:

Հայկական իրականության մեջ անգլիամետ և ռուսամետ խմբավորումների կամ հոսանքների առկա պնդումներն ու փաստարկները ներկայացնելուց հետո պարբերականի խմբագիրը հարց է բարձրացնում. «Կուզանք այն կէտի թէ մենք ի՞նչ կուսակցութեան կը պատկանինք»[3]: Ապա, փաստառատ նյութով հիմնավորում, որ ինչպես ուրիշ «ալ անգամներ ալ կրկնած ենք, մեր կուսակցութեան նշանաբանն է հայը Հայաստանին և Հայաստանը հային»[4]:

1897 թ. սեպտեմբերի 18-ին Փորթուգալյանը պատասխանում էր ընթերցողների այն հարցին, թե ինչո՞ւ «Արմենիան» հեղափոխական կանոնադրություն չի հրապարակում: Մեր պաշտոնն է գաղափարներ տարածել, իսկ հեղափոխությունը պիտի անեն «Հայ անունով կոչուողները և ոչ թէ Հնչակեանները կամ

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 41:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1894 թ., թիվ 44:
[4] Նույն տեղում:

Դրօշակեանները և կամ Արմենականներ: Խնդիրը Հնչակի, Դրօշակի կամ Արմէնիաի խնդիր չէ այլ հայկական խնդիր է»[1]:

Ճշմարտացի է այն պնդումը, որ թղթի վրա հեղափոխական կանոններ գրելով գործ չի կատարվում, երբ ինքը՝ ժողովուրդը, դեռևս հիմնավոր հասկացողություն չունի հեղափոխական գործի վերաբերյալ: Զուգահեռվում է առ այն, որ թուրքական կառավարությունն էլ «շատ գեղեցիկ կանոններ, օրէնքներ դրած ունի, բայց ի՞նչ օգուտ երբ այդ կանոններ թղթի վրայ միայն գրուած կը մնան, գործադրող մարդ չկայ»[2]: Այո՛, անտարակուսելի է, որ ցանկացած օրենք, կանոնադրություն գործադրելու համար անհրաժեշտ որակի ու հատկությունների տեր անձինք են պետք: Այլապես ամեն ինչ մնալու է որպես թղթի կտոր: Ահա թե ինչու զգուշաբար խորհուրդ է տրվում, որ ընկերություններ կազմելուց առաջ «ընկերներ պէտք է կազմել. յեղափոխական կանոնաշինելէ առաջ յեղափոխութեան վրայ, անոր ի՞նչ լինելը և ի՞նչպէս լինելը հասկցող մարդեր պէտք են»[3]:

1897 թ. հոկտեմբերի 6-ին Փորթուգալյանը ընթերցողներին նորից հորդորում է հետևյալի մասին. «Պէտք է հայ ազգը հասկնայ վերջապէս թէ օտարի գթութեամբը չէ որ մենք կրնանք ձեռք բերել մեր ազատութիւն, այլ մեր ուժով և մեր խելացի վարմունքով»[4]:

Ընդ որում Փորթուգալյանը զգուշացնում է, որ հեղափոխական գործը պահանջում է, որ «գահավէժ չվազեն, չցատկեն, այդ

---

[1] «Արմէնիա», 1897 թ., թիվ 7:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1897 թ., թիվ 10:

զիրենք ուժասպառ կը դարձնէ և կը կործանէ»[1]: Միաժամանակ, նրա հակառակ կողմը՝ անշարժությունն ու անտարբերությունը նույնպես վնասակար է:

Նա այսպես է բանաձևում պահի խնդիրն ու լրջությունը. «Ո՛չ վազել, ո՛չ ալ անշարժ նստիլ, այլ քալել. դէպի մեր նպատակ յառաջդիմութեան և մեր վիճակի փոփոխման համար այդ պէտք է լինի մեր նշանաբան»[2]: Մարդ ամեն հասակի և ամեն վիճակի մեջ էլ պետք է միշտ գործե, միշտ աշխատե իր կարողության և հանգամանքների համեմատ: Գաղափարի տարածումը գործելով է, որ առաջ պիտի գնա: Գործելուց, շարժվելուց դադարելը «ապրել է դադրիլ է, մեռնիլ է: Թևերը ծալված և աչքերը փակածը կենալու դիրքը արձաններին յատուկ է և ոչ թէ մարդերի»[3]:

Նրա համոզումով, անտարբեր կենալու հիմար քաղաքականությունը միայն մեկ անուն ունի, այն է՝ անձնասպանություն: 1898 թ. փետրվարի 16-ին գրած առաջաբանում Մ. Փորթուգալյանը հաստատակամորեն ընդգծում է, որ բռնության դեմ հեղափոխությունն անհրաժեշտ է և անհրաժեշտություն, մանավանդ, երբ թուրքի պես «խօսք չհասկացող և նույնիսկ իր շահ չհասկացող մէկն է այդ բռնաւոր»[4]:

Սակայն սխալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե այդպիսի մի հեղափոխություն նախապատրաստելու միակ միջոցն է հրացանը ուսին դրած՝ թշնամու դեմ ելնելը:

---

[1] «Արմէնիա», 1895 թ., թիվ 43:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1898 թ., թիվ 46:

Ո՛չ: Գրիչը նույնպես հրացան է, «դրամն ալ թնդանօթ է, գաղափարի տարածումը ռումբէն աւելի պայթուցիկ բնութիւն ունի»[1]:

Ուրեմն, վերոնշյալ գենքերից ոչ մեկն էլ չի կարելի արհամարհել կամ անտեսել: Պետք է արհամարհել միայն այն, որ «ոչինչ չը գործեր հայ ազգութեան, այլ իբրև հայ կը վայելէ միայն մեր նախնիքների հազարումէկ զոհուտութիւններով մեզ ժառանգութիւն թողած եկեղեցին, լեզուն, գոյութեան պայմանները և այն ամեն ապրուստի և առնտուրի դիւրութիւններ որոնք իբրև հայ ունեցած կապակցութիւններովը ձեռք բերած է»[2]: Սույն հրապարակումը ավարտվում է այն եզրակացությամբ, որ գործելու համար շատ բաներ կան և ո՛վ ինչ կարող է, թող այն գործե:

Փորթուգալյանը հաճախ էր գրում տգիտության մասին, այդ երևույթը ներկայացնելով որպես ազգային մի մեծ չարիք: Ըստ նրա, ազգային վիճակի նկատմամբ տգիտությունը մեր ամենամեծ թշնամին եղած է և դա է մեր ազգային փափագների անհաջողության գլխավոր պատճառներից մեկը: Բոլոր հայերն էլ փափագում են ազգի ազատագրությունը, սակայն «ուզելուն վրայ մինակ չէ բանը. պէտք է գիտնալ թէ ի՞նչպէս պէտք է վարուիլ այդ ազատութիւն ձեռք բերելու համար»[3]: Իսկ վերոնշյալը հասկանալու կարողություն ունենալու համար պետք է հիմնավոր ուսումնասիրել ազգի ներկա վիճակը, պետքերը, մտահոգությունները, ռեսուրսները, գործերն ու գործիչները: Ուստի ազգային գործիչների առաջնային պարտականությունը պետք

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1897 թ., թիվ 85:

է լինի «այդ բաներ հասկնալը ընդհանրացունել մեր ազգի մէջ, ազգային գործերին նկատմամբ մտածելու, հասկանալու, դատելու կարողութիւնը մշակել մեր ժողովրդին մէջ»[1]:

Որպես այդ ամենի խտացում և ամփոփում, նա շեշտադրում է, որ ներկա պահին հայ ժողովրդի ողորմելի թշվառության ամենագլխավոր պատճառներից մեկը տգիտությունն է, իր կարողությունների և պետքերի վերաբերյալ անգիտակից վիճակ ունենալը, որով «կը խաբուի և կը հետեւի այնպիսի հրաւէրների, որոնք այսօրան, անմիջական արդիւնք կը խոստանան, թէն բոլորովին ապարդիւն և լոկ աղէտաբեր լինին»[2]:

Աստիճանաբար և քայլ առ քայլ ընթերցող լայն հասարակայնությանը ծանոթացնելով «հեղափոխություն» հասկացությանը ու հեղափոխական գործի նրբություններին, Փորթուգալյանը փորձում էր տարբերակել հեղափոխությունը հարակից այլ երևույթներից:

1898 թ. մարտի 23-ին հրապարակած «Յեղափոխութիւն և ցոյցեր» առաջնորդող հոդվածում նշում է, որ հեղափոխության համար նախ զաղափարի տարածում և երկար ժամանակյա պատրաստություն է պետք, մինչդեռ ցույցերի համար «կը բաւեն մի քիչ նախապատրաստութիւն և ժողովրդի բոպէական ոգևորութենէն օգտուելու սոիթներ»[3]:

Պարզ և հստակ պարզաբանվում է, որ վերոնշյալ տերմինի բուն նշանակությամբ հեղափոխական գործ հայ ժողովրդի կողմից վերջին տարիներին չի եղել բնավ: Որտե՞ղ է այդպիսի բան

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] «Արմէնիա», 1898 թ., թիվ 56:

եղել, որտեղ, որ գավառում, քաղաքում հայ ժողովուրդը եղել ու տապալել է տեղական կառավարությունը, «գայմագամը կամ վալին վար առնելով անոր տեղ մի ուրիշ կառավարիչ և կամ վարչութիւն հաստատած և կամ գէթ այդպիսի բան մը ընել փորձելու համար թիւրք կառավարութեան զօրքերին հետ ընդհարումներ ունեցած է»[1]:

Փորթուգալյանը հավաստիացնում է, որ մեզանում առայժմ ոչ մի հեղափոխական կազմակերպություն չկա և հայ ժողովուրդն էլ նախապատրաստված չէ այդպիսի հեղափոխական շարժման:

Քննադատվում է տարածված այն տեսակետը, թե ազգը մեծապես վնասվեց հեղափոխական շարժման պատճառով: Սա անտեղի ու ավելորդ է, քանզի նման հեղափոխական շարժում կամ գործողություն դեռևս չկա մեզանում: Միաժամանակ ընդգծվում է, որ «Ասով ըսել չենք ուզեր թէ յեղափոխութիւնը քիչ վնասով կազատէ հայ ազգը իրեն ճնշող լուծէն. այդպիսի մտածումն ալ շատ երեխայական կը լիներ»[2]: Սրանով փաստարկվում է, որ 19-րդ դարավերջին հայության կրած կորուստները հեղափոխական շարժմանը վերագրել և «անոր համեմատ դատաստան կտրելը սխալ է», որովհետև տեղի ունեցածը հեղափոխություն չէր, այլ լոկ ցույցեր և հեղափոխություն անելու համար «դեռ չէ պատրաստուած մեր ժողովուրդը»[3]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ V
ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

«Արմենիա» լրագիրը հրապարակ իջավ որպես արմատական հեղափոխական սկզբունքներով ու մոտեցումներով սառաջնորդվող քաղաքական օրգան: Հրատարակման սկզբնական շրջանից պարբերականը անընդմեջ անդրադառնում է հեղափոխության հնարավորության, նրա նախապատրաստման և իրագործման ուղիների և մեթոդների քննությանն ու քննարկմանը:

Փորթուգալյան խմբագիրն ու ազգային գործիչը համոզված էր, որ արևմտահայության ազատագրության բանալին հանդիսացող հեղափոխության նախապատրաստման գործին պետք է մասնակից լինեն հայ ժողովրդի բոլոր խավերն ու հատվածները՝ և՛ արևմտահայերը, և՛ արևելահայերը, և՛ գաղութահայությունը:

Հեղափոխությունը նախապատրաստելու համար նախնառաջ անհրաժեշտ էր գաղափարակիցների միություն կազմավորել: «Միութիւն» խորագրով ծրագրային նյութի մեջ Փորթուգալյանը հիմնավորում է, որ ընդհանուր աղետի առջև թուլանալու, հուսահատվելու և «տկարանալով ոչնչանալու տեղ, ոյժ պէտք է փնտռել դիմանալու համար... տկարները զօրավորներին դէմ իրենց ոյժ պէտք է փնտռեն իրենց միութեան մէջ»[1]: Միությունը սերտ և հաստատուն լինելու համար պետք է այն գաղափարա-

[1] «Արմենիա», 1896 թ., թիվ 6:

կիցների, միևնույն նպատակ և ուղղություն ունեցողների մեջ լինի: Առանց այդ էական պայմանի, եղած միությունը ոչ միայն խախուտ և ապարդյուն կլինի, այլև աղետաբեր: Դա այդպես է անկասկած, քանզի գաղափարակից եղողներն իրար միանալով կզորեղանան, իսկ հակառակ գաղափարներ ունեցողները իրար հետ գործակցելով, միմյանց միայն կջլատեն և գործը դրանով իսկ ամլության կդատապարտեն. «իրենց շարժում յառաջ ու յետ տատանում մը միայն կը լինի և ոչ յառաջդիմութիւն»[1]: Ահա թե ինչու «միշտ կը կրկնենք թէ նախ պէտք է գաղափար տարածել, գաղափարակիցներ ստեղծել, որոնք տարին 12 ամիս չփոփոխեն իրենց ուղղութիւն, զանազան տեղերէ փչող քամիներին համեմատ և յետոյ այդ գաղափարակիցներ կապել, միացունել իրար հետ»[2]: Որպեսզի նախատեսված միությունը բեղուն և արդյունավետ աշխատանքներ ծավալի, նրա ձևավորումը նախնառաջ համոզմունքների և սկզբունքների հիման վրա պետք է կատարվի, և միայն դրանից հետո այն հանդիսանա վարչական միություն. «այս վերջինը առաջինին հետեւանքը եղած պէտք է լինի և ոչ թէ բռնի միութիւն»[3]:

Թող ուրիշները հայկական տիեզերական միություններ կապել տալու փորձերով ու «մեծ մեծ խօսքերով զբաղին, մենք աւելի համեստ շրջանակի մը մէջ շարունակենք մեր փորձեր առանց աղմուկի և պոռոտախօսութիւնների, աշխատենք մեզ հետ միացունելով կապակցել այն հայեր որոնք իրենց գաղա-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

փարներով կը մոտենան մեզ արդէն»,– նշում է Փորթուգալյանը[1]: Նրան համախորհուրդ էր պարբերականի գաղափարական հզոր սյուներից մեկը՝ Մկրտիչ Ավետիսյանը, որը սույն հիմնահարցի շուրջ «Արմենիայի» սկզբունքները սահմանեց հետևյալ հաջորդականությամբ. «... առաջ գաղափար, յետոյ շարժում, նախ կարգապահութիւն, յետոյ եռանդ, բուն իսկ նեղուտղը (Թիւրքիայի հայ ժողովուրդը) գործունէութեան տրամադրել, տեղական ոյժերի վրա հիմնել յեղափոխական գործը, անցուցամոլ եւ երկայնամիտ լինել գործունէութեան մէջ»[2]: Ուրեմն, և՛ Փորթուգալյանը, և՛ Ավետիսյանը համակարծիք էին այն բանում, որ հեղափոխական գործը առաջին հերթին գաղափարական գործ է, որը պահանջում է նվիրում, կայուն համոզմունքներ, կարգապահություն, եռանդուն, համառ ու տևական պայքար:

Հեղափոխական գործի կազմակերպումը դիտարկվում էր մի շարք տեսանկյուններից, տեսական հարցադրումներ արվում վերոնշյալ աշխատանքի կազմակերպման այլընտրանքային տարբերակների վերաբերյալ և, ի վերջո, նժարի վրա էր դրվում ողջ դրականն ու բացասականը:

Բոլոր դեպքերում պարբերականը գտնում էր, որ որևէ ազգի, ժողովրդի ազատության գործը «... նոյն իսկ դրամական տեսակետէ նայելով, կարծուածին չափ փոքր և դիւրին գործ մը չէ և հայ անհատի մը, որչափ ալ հարուստ լինի, հարստութիւնը չկրնար երաշխաւորութիւն մը լինել այդպիսի գործի հաջողու-

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1896 թ., թիվ 3:

թեան»[1]: Սակայն սույն ժամանակաշրջանում հայ ազգի մեջ չկա ֆինանսական առումով այնպիսի հզոր մի անհատ, որն իր հարստության վրա կրթնելով կարողանա ընթացք տալ և ղեկավարել ազգային փրկության տանող շարժումը:

Ահա այս պատճառով է ասվում, որ «Մեր մէջ Օրլէանի դուքսեր, նափալէոնեան իշխաններ, Տօն Քարլոսներ և այլն չկան որ իրենց գերդաստանի ինկած գահը վերականգնելու համար մէջտեղ դնեն իրենց հարստութիւն»[2]:

Փորթուգալյանը սակայն համոզված է, որ որևէ անհատ չի կարող ժողովրդի չափ հարուստ լինել: Քանզի ժողովուրդն նույնիսկ անհատապես աղքատ լինելով, իր հավաքական ամբողջության մեջ ամենից հարուստն է:

Այս առումով ճշմարտացի հարցապնդում է արվում. մի՞թե վեհապետական շքեղություններն ու շռայլությունները ժողովրդի քրտինքով ու ստացվածքով չի կառուցվում: Օրինակ է բերվում հենց թուրքական բռնապետությունը, որի պարագլուխ սուլթան Համիդը «իր արևելեան պերճանքներով ու շռայլութիւններով, իր պահած ահագին զօրաբանակներով հարուստ ու կարող մէկը կը ներկայանայ իր լուծի տակ ճնշելու համար մի քանի ազգեր և ապրեցնելու համար իր անթիւ ձրիակեր ծառայներ, բայց իր այդ ճնշող հարստութիւն և ոյժ կը գոյանայ աղքատ համարուած ժողովրդի տուած տուրքերէն»[3]: Այսինքն, ակնարկում է, որ այդ ամենը ազատագրության գործի վրա նպատա-

---

[1] «Արմէնիա», 1899 թ., թիվ 44:
[2] Նույն տեղում:
[3] «Արմէնիա», 1897 թ., թիվ 13:

կառուցելով, հայ ժողովուրդը կարող է հասնել բաղձալի արդյունքի:

Փորթուգալյանը բազմաթիվ անգամ գրում և պնդում է, որ հայ ազգի ներսում հարատևության ոգին պետք է հաստատել, եթե «կուզենք որ ազգային մեծ գործեր յաջողին»[1]: Նա նախատանքով նշում է, որ «Հայոց հայրենասիրական միության» կազմավորումից հետո ոմանք իրենց տարեկան բաժանորդագինը վճարելուց հետո, երբ տեսան թե հայոց թագավորությունը չի վերականգնվում և իրենց երևակայած «մեծ մեծ բաներ չիրականացան անմիջապէս, ալ սկսան երկրորդ և երրորդ տարիներ ոչինչ չվճարել և սպասել որ Միութիւնը ոչնչով հրաշքներ գործէր»[2]:

Դեռևս 1886 թ. նոյեմբերի 22-ից սկիզբ առնող «Յեղափոխական գործը» ծրագրային հոդվածաշարում սահմանվում և ուղեգծվում են հեղափոխական շարժման նախնական ու հետագա աշխատանքների կազմակերպման հիմնական մոտեցումները: «*Նախնական վիճակ*» ենթավերնագրի ներքո այն շարադրված է այս կերպ. «Յեղափոխական գործին վրայ նայելու չենք իբր մի թեթև գործի վրայ: Ատոր մէջ կան այնպիսի դժարութիւններ որոնց հայ ժողովուրդը պիտի կրնայ յաղթել զիտակցութեամբ, յարատև ու անվհատ աշխատութեամբ, զոհողութիւններով և պատեհ առիթներէն օգուտ քաղելու պատրաստ գտնուելով»[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] «Արմենիա», 1896 թ., թիվ 27:

Հանդիմանական խոսք է ասվում նրանց հասցեին, ովքեր կարծում են, թե հեղափոխական գործը մի այնպիսի բան է, որ այն ասելն ու կատարելը մեկ կլինի: Այդպիսիններն են, որ որևէ լրագրում հեղափոխական հրավեր կարդալուց հետո կարծում են, թե «... իսկոյն հազարաւոր հայերէ բաղկացած ապստամբնե-րի մի բանակ կը կազմուի Հայաստանի մէջ, բնականապէս կը թուլնան երբ կը տեսնեն թէ իրենց կարծածին պէս չէ և թէ լոկ խոսքով ու գրչով կատարուած չլինիր յեղափոխական գործը»[1]: Իրավացի է այն դիտարկումը, որ հեղափոխական գործի նա-խապատրաստությունը մեկ օրվա գործ չէ: Կարելի է, օրինակ, հայ միտքերի մեջ ցանված հեղափոխական սերմերը «մէկ օրի մէջ աճին և պտղաբերեն. ամնազօրավոր բնութիւնն անգամ տարիների ընթացքին մէջ կաճեցունէ տունկերն ու պտղաբեր կը դարձունէ»[2]:

Սույն պատկերավոր համեմատությունը արվում է այն բա-նի համար, որպեսզի առավել համոզիչ լինի այն թեզը, թե հայ ժողովրդի բոլոր խավերի և հատվածների շրջանում պետք է նախապես տարածել հեղափոխական գրականությունն ու գա-դափարները:

Հայ իրականության մեջ դասական չափանիշներով առկա երեք դասակարգերին (հարուստ, միջին և աղքատ) կարևոր դեր է հատկացվում հեղափոխական գործի նախապատրաստութ-յան մեջ յուրաքանչյուրին իր կարողությունների և ընդունա-կությունների չափով:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

Ըստ պարբերականի դիտարկումների, հարուստ դասակարգը չափազանց պահպանողական է դեռ և զգուշացնում է ոչ միայն հեղափոխությանը նախապատրաստվելուց և աջակից լինելուց, այլև այդ բառը լսելուց անգամ: Իսկ միջին դասակարգի մեջ կա մի հատված, որը «այդ բառ (հեղափոխություն – Ա. Կ.) արտասանելու չափ յառաջ կերթայ, բայց գործին նուիրուելու չափ չկրնար յառաջ երթալ»[1]:

Ինչ վերաբերվում է աղքատ դասակարգին, ապա նա մինչև անգամ եռանդ և զգացում ունենալու դեպքում էլ, հարկ եղածի չափ կարողություններից զուրկ գտնվելով «... ինք իրմէ յուսահատ է և չկրնար գործին գլուխ կանգնել, այլ միմիայն ետևող կուզէ լինել զօրաւորներին»[2]:

Ահա այսքան տխուր պատկեր էր ներկայացնում հայկական իրականությունը 19-րդ դարի երկրորդ կեսում:

Հայկական հեղափոխության ուժերը ի՛ մի բերելու համար հարկավոր էր համերաշխության ու սերտ համագործակցության եզրեր ստեղծել տարբեր դասակարգերի միջև և դա անել համբերատար կերպով, տևական ժամանակի ընթացքում:

«Արմենիայի» խմբագիրը համոզված էր, որ ներկա պահին հայ ժողովուրդն ի վիճակի չէ հեղափոխություն գործելու, որովհետև անգամ նվազ չափով նախապատրաստված չէ դեռ և անպատրաստ լինելու գործնական մեկ ապացույցն էլ «սա է որ այսչափ զրկանք, այսչափ անտանելի տառապանք կրելովն հանդերձ, դարձեալ մի յեղափոխական շարժում չաներ»[3]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Այնուամենայնիվ, նորից է վստահաբար այն համոզմունքը սերմանվում, որ միմիայն հեղափոխության միջոցով պիտի կարողանանք ձեռք բերել մեր հայրենիքի դարերով տենչած ազատությունը:

Հոդվածաշարի հաջորդ մասում փորձ է արվում ուրվագծել հեղափոխական կոնկրետ, գործնական աշխատանքը ղեկավարելուն միտված կուսակցական-քաղաքական կառույցի մոտավոր կառուցվածքը:

«Կեդրոն» վերնագրի ներքո ներկայացվում է հեղափոխական կենտրոնի կազմավորման նախնական ուրվագիծը: Առանց շարժման կենտրոնը սկզբնավորելու, բնականաբար խոսք չէր կարող լինել լուրջ հեղափոխական գործունեություն ծավալելու մասին:

Իսկ այն կարող էր կազմակերպվել երկու եղանակով:

Առաջին. որևէ մի նշանավոր հայ անհատի (որը բացարձակ մեծ հեղինակության և նյութական կարողությունների տեր անհատ է) հեղափոխական շարժման գլուխ կանգնելով, որի դեպքում հեղափոխական շարժմանը կմիանան մեծ թվով հետևորդներ և աջակիցներ:

Երկրորդ դեպքում այն է, որ հայրենասիրական նպատակի «ծառայող խումբեր կը կազմուին որոնք փոքր ի շատէ հաստատուն մի վիճակ ստանալէ յետոյ կը միանան իրար հետ և մի կենդրոնաժողով կընտրեն իրենց համար»[1]: Փորթուգալյանի համոզմամբ, պետք է ոչ թե մի խումբը «ինքզինք կեդրոն ներկայացունէ և առաջարկէ որ ուրիշներ կուրօրէն հետևին իրեն, այլ

[1] «Արմենիա», 1896 թ., թիվ 32:

բոլոր հայրենասիրական խումբերն պէտք է որ մի տեսակ դաշնակցութիւն կազմեն և իրենց ձայն ունենան կենդրոնին մէջ, քանի որ ընդհանուրի ջանքերովն է որ կենդրոնի գործը յառաջ պիտի երթայ»[1]: Լավագոյն տարբերակն այն կլիներ, եթե ձևավորվեր մի այնպիսի կենտրոն, որն ինքնին նյութապես անկախ դիրք ունենար և գործի ողջ վարչական պատասխանատվությունը իր ուսերին առնելով ասպարեզ ելներ վճռականությամբ: Այդ դեպքում «հաւանօրէն ամենքն ալ կը հաւանէին ատոր մինչև մի աստիճան և իրենց բարոյական և նիւթական աջակցութիւն ալ իրեն չէին զլանար փոքր ի շատէ»[2]:

Սակայն այդպիսի մի հեղափոխական-քաղաքական կենտրոնի ձևավորումը հայկական իրականության մեջ դեռևս պատրանք էր:

Փորթուգալյանը հայտնում է, որ բոլոր կողմերից ձայներ կհասնեին խմբագրություն, թե մի կենտրոն են ցանկանում ունենալ գործելու համար և այդ նպատակով մի քանի խմբերի ներկայացուցիչներից ընդհանուր ժողով է գումարվում «... նախագահութեամբ լոնդոնաբնակ Պրն. Կ. Յակոբեանի որին ամեն կողմէ ուղերձներ կը տեղային այդ ժամանակ»[3]: Սակայն լոնդոնաբնակ Կարապետ Հակոբյանի նախաձեռնությամբ գումարված ժողովը Փարիզում ցանկալի արդյունքի չբերեց:

Վերջինիս առաջնորդությամբ 1885 թվականի դեկտեմբերի 23-ին Լոնդոնում կազմավորվեց «Հայրենասիրաց ընկ. Հայոց ի Եվրոպա» հանձնախումբը, որը նպատակադրվել էր շարունակ

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

հուզել հայկական խնդիրը եվրոպական առաջատար լրագրերի միջոցով[1]:

Փորթուգալյանի և «Արմենիայի» գծի կողմնակիցները առավել համոզվում են, թե զարգացած, հաստատուն դիրքի ու վիճակի մեջ գտնվող մասնաժողովները խիստ անհրաժեշտ են կենսունակ կեդրոն սկզբնավորելու համար: Այս առումով և զանազան հանգամանքները նկատի առնելով է շեշտադրվում, որ «նախ պետք է որ ճշմարիտ հայենասէրների խումբեր կազմուին ըստ բաւականին և նոքա իրար հետ միանալով իրենց գոյութեամբ մի կեդրոն առաջ բերեն»[2]:

Իսկ վերոնշյալ նախապատրաստությունը ենթադրում էր առաջին հերթին ազգային-ազատագրական գաղափարների և կենսահյութի տարածումը հայ ժողովրդի ամեն շրջանակների ու խավերի մեջ: Ահա այդպիսի տնական ջանքերով լեցուն գործունեություն կարող են համակարգված կերպով ծավալել վերոնշյալ մասնաժողովներն իրենց տեղական շրջանակների սահմաններում, վառելով հայրենասիրության հուրը «զիրենք շրջապատողներին մէջ, խոսելով, գրելով, իւրաքանչիւրն իւր կարողութեան չափ գործելով և խոհեմութեամբ շարժելով»[3]:

Ծրագրային հոդվածում կոչ է արվում չարհամարհել և ոչ մի ուժ, որն այս նպատակին կծառայի, որքան էլ այն փոքր կամ աննշան թվացող լինի: Իսկ հետագայում, երբ բավականաչափ ուժ և ամրություն կգոյանա, երբ իրար մոտիկ գտնվող մասնաժողովներն կճանաչեն միմյանց մոտիկից և սերտորեն կշաղ-

---

[1] **Մուշեղ Արքեպիսկոպոս**. Մանչեսթրի հայ գաղութը, Բոստոն, 1911 թ., էջ 126:
[2] «Արմենիա», 1886 թ., թիվ 32:
[3] Նույն տեղում:

կապվեն իրար և «հաղորդակցութիւններ կը սկսին, այդ ժամանակ կը դիւրանայ և կենդրոնի ընտրութիւնը»[1]: Փորթուգալյանը ենթադրում է, որ գուցե շատերը համաձայն չլինեն սույն նախագծի հետ և հակառակ տեսակետը պնդեն, թե նախ Կենտրոնը կազմավորվի, հետո մասնաժողովները ձևավորվեն: Տեղի չտալով նման կարծիքների առջև, նա վերստին համոզվածությամբ պնդում է, որ «մենք կը շարունակենք մեր ընթացք, տարածելով յեղափոխական գաղափարները, յորդորելով որ ամեն տեղեր այս նպատակով մասնաժողովներ կազմուին, առանց պոռոտախոսութեան գործեն որչափ ալ կրնան, տարածեն իրենց շրջանակների մէջ հայրենասիրութեան և զոհողութիւններ անելու գաղափարները»[2]: Այսպիսով, հեղափոխական-քաղաքական կազմակերպված աշխատանքը սկսելու ուղին Փորթուգալյանը պայմանավորում էր տեղերից բխող նախաձեռնությունների զարգացման հետ: Այսինքն, հեղափոխական, կուսակցական-քաղաքական շարժման շարժիչ ուժը պետք է հանդիսանային տեղերում կազմավորված խմբերն ու մասնաժողովները, որոնք էլ զարգացման ու հասունացման անհրաժեշտ մակարդակի հասնելով, պիտի ծնունդ տային հեղափոխական շարժման գլխավոր շտաբի՝ Կենտրոնի ձևավորմանը: Փորթուգալյանի գծագրած սույն ուրվագիծ-սցենարը որոշակիորեն նման է և հիշեցնում է 19-րդ դարի 90-ական թվականների սկզբին հայ հեղափոխականների դաշնակցություն ձևավորելու հայ ազգային գործիչների տեսական դեգերումները:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

Իսկ գործունեության ինչպիսի ձևեր էր ենթադրում հեղափոխական գործը, գաղտնի թե՞ բացահայտ։

Փորթուգալյանը փորձում է հիմնավոր կերպով բացահայտել տույն հարցադրմամբ պայմանավորված գործընթացի հիմնական փուլերն ու բաղադրիչները։

Նա գտնում է, որ այս խնդրի մեջ առկա երկու հակադիր «ծայրերն ալ իրար կը մօտենան և կը միանան մէկ կետի վրայ. այդ կէտն է անգործադրելիութիւնը։ Ծայրայեղութիւններէ հեռի մնանք եթէ կուզենք գործադրելի մի ծրագիր ունենալ»[1]։

Այդ ժամանակ հայ իրականության մեջ ձևավորվել էին երկու հակադիր մոտեցումներ հեղափոխական գործելակերպի նկատմամբ։ Գործիչների մի խումբ գտնում էր, որ պետք է բացարձակապես գաղտնի վարել հեղափոխական գործառույթները, իսկ հակառակը պնդողները կողմ էին, որ ամեն ինչ տեսանելի ու բացահայտ պետք է տեղի ունենա։

«Արմենիայի» խմբագիրը քննադատում է վերոնշյալ երկու բևեռացումները, գտնելով, որ հեղափոխական գործի մեջ կան այնպիսի հանգամանքներ, ուր «պէտք է յայտնապէս գործել և այնպիսիններ ուր պէտք է ծածուկ պահել գործողութիւնները»[2]։

Եվ նրանք, ովքեր պնդում են, որ հեղափոխությունը պետք է նախապատրաստել բոլորովին գաղտնապես, այնչափ միամիտ են, որ «կը կարծեն թէ յեղափոխական գործի մասին 3-4 անձի մէջ միայն խօսակցութիւն լինելով, առանց ժողովուրդը պատրաստելու, կարելի է յեղափոխութիւն հանել»[3]։

---

[1] «Արմենիա», 1886 թ., թիվ 35։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

Սույն դրույթի փաստարկման առումով բնութագրական է հետևյալ դիտարկումը. «ցույց տուէք ամբողջ աշխարհի վրայ որևէ երկրի մէջ, որևէ ազգի մէջ... առանց իւր յեղափոխական գաղափարներ տարածելու, իւր միտքեր բոլորովին գաղտնի պահելով, մի ժողովրդի մէջ հրաշքով յեղափոխութիւն գործած լինի»[1]: Այո՛, նրանք, ովքեր կարծում են հեղափոխական գործը բոլորովին գաղտնի կարելի է նախապատրաստել, չարաչար սխալվում են և դրանով ցույց տալիս, թե իրենք ոչ «ժողովուրդների ընդհանուր զարգացման պատմութեանը վրայ տեղեկութիւն ունին և ոչ ալ հայ ժողովրդի կեանքին և պահանջներին ծանօթ են»[2]:

Փորթուգալյանի համոզումով, սխալվում են նաև նրանք, ովքեր կարծում են, թե ամեն տեղ և ամեն բան կարելի է խոսել հեղափոխության գործի մասին, ձեռնարկումներ անել առանց ծրագրի, առանց որևէ նախապատրաստության և զգուշության: Եվ եթե մշտապես ուշադրությունը շեշտադրվում է անհրաժեշտ նախապատրաստության և զգուշության վրա, ապա դա ոչ թե անձնական վտանգներից բոլորովին զերծ լինելու, այլ գործը անհաջողության չդատապարտելու համար:

Իսկ վտանգներն ու զոհողություններն անբաժան են հեղափոխական գործից: Սակայն պետք է ձգտել, որ «այդ զոհողութիւններ կարելի եղածին չափ արդիւնաւոր լինին, այսինքն դէպի նպատակն մի քանի քայլ ևս յառաջ տանին»[3]: Սա կարևոր

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1886 թ., թիվ 37:

[3] Նույն տեղում:

պնդում է, քանզի հայությունը որպես փոքրաթիվ ժողովուրդ, ավելորդ արյուն չէր կարող թափել և անտեղի զոհեր տալ:

Սուր քննադատության սլաքն ուղղված է հատկապես նրանց դեմ, ովքեր կարծում են, թե հայկական լրագրերի մեջ մի հեղափոխական հոդված հրապարակելով կամ եվրոպական մամուլի մեջ մի համակիր հոդված տեսնելով, ամբողջ հայ ժողովուրդն անմիջապես ոտքի կկանգնի և բոլոր ուժերով կպահանջի իր մարդկային ու ազգային իրավունքների ապահովումը:

Հակադիր սույն երկու մոտեցումները հավասարապես ու անաչառ քննադատելով, Փորթուգալյանը նշում է, որ «Արմենիայի» խմբագրությունը «կը գտնուի այդ երկու ծայրայեղութիւնների մէջտեղ և այդ իսկ պատճառով նա չկրնար քայլել ո՛չ մէկին և ո՛չ միւսին հետ»[1]:

Թերթը պարզորոշ հստակեցնում էր, որ «յեղափոխական գործը պատրաստելու համար, պէտք է համարձակ և անվախ լինել բայց ոչ անխորհրդապահ. այսինքն հայ ժողովրդի մէջ յեղափոխական գաղափարներ մտցնելու համար պէտք է յայտնապէս քարոզել, ամեն կարելի միջոցներով աշխատիլ տարածել այդ գաղափարներ հայերին մէջ. բայց երբ գործի կը ձեռնարկուի, գործողութեան զանազան պարագայներն են որ տեղին և ժամանակին համեմատ պէտք է որ գաղտնի պահուին»[2]:

Այսպիսով 19-րդ դարի երկրորդ կեսի ընթացքում Մ. Փորթուգալյանը «Արմենիա» պարբերականի էջերում աստիճանաբար՝ քայլ առ քայլ հայ ընթերցողին ծանոթացրեց հեղափոխա-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

կան և քաղաքական աշխատանքի կազմակերպման կարևորագույն սկզբունքների և անկյունաքարային մոտեցումների հետ, նրանց տոգորեց ստեղծված իրավիճակը արմատապես փոխելու և շտկելու մտայնությամբ և տրամադրություններով:

Մկրտիչ Թերլեմեզյան – Ավետիսյան

ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒԺԵՐԻ ԵՎ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄԸ

Հրատարակության առաջին իսկ տարիներից «Արմենիա» պարբերականը հստակ վերաբերմունք դրսևորեց քաղաքական արժեքների, հայ իրականության մեջ գործող քաղաքական ուժերի և հոսանքների նկատմամբ:

«Արմենիան» նախևառաջ աներկբա սահմանազատեց հեղափոխական շարժումները ավազակային շարժումներից, նշելով, որ դրանք բոլորովին տարբեր բաներ են: Այդ առումով, հատկանշական է հայտնվում, որ «երկրի մը մէջ իր մէջէն ծագած կռիւը և արտաքին թշնամուն իր վրայ արշաւելով բացած կռիւը բոլորովին տարբեր բաներ են»[1]: Ուշագրավ է այն եզրակացությունը, որ «... Կառավարութեան ոյժ ըսուածը անուանական բան է. ոյժը ժողովրդինն է, անոր վրայ հիմնուած է կառավարութեան ոյժը»[2]:

Եվ եթե ժողովրդի ուժը նվազում և խախտվում է, ապա «հիմը խախտածին պէս, անոր վրայի շէնքը կը փլչի»[3]:

Փորթուգալյանը սխալ էր համարում, երբ երկրի ներքին հեղափոխական խմորումներն ու շարժումները ոմանք նմանեցնում և համեմատում են պետությունների միջև մղվող պատերազմների հետ: Նա ի սկզբանե ձգտում էր ցույց տալ, ապացուցել, որ ներկա պահին հայ ժողովրդի մղած ազգային-ազատագ-

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 66:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

բական շարժումը միանգամայն արդարացի է, օրինաչափ և այն որևէ կապ ու համեմատություն չի կարող ունենալ ոչ ավազակային բարքերի ու շարժումների, ոչ էլ պետությունների մղած արտաքին պատերազմների հետ:

Փորթուգալյանը անհրաժեշտ էր համարում ազատագրական *զինյալ* պայքարի կազմակերպումը, ընդգծելով հայը, զինված չէ, *սակայն զենք չունենալը և չկարողանալ ունենալը տարբեր բաներ են*: Հայաստանի հայը իր շրջակայքից էլ կարող է զենք հայթայթել, եթե «ինք ալ հեղափոխական գործին ընդունակ դարձուած լինի»[1]: Ուրեմն, պակասում է քաղաքական կամքը: Հեղափոխական ոգուց հեռու քրդերն իրենց ավազակությունները գործելու համար «ո՞ւրկէ կը գտնեն իրենց զէնքեր: Դեռ մի քանի տարի է որ Համիտիյե դարձած են, իսկ անկէ առաջ ո՞ւրկէ կը գտնէին հայերը կոտորելու... ատոնք մարդ չէին որկեր Եւրոպա զէնք գնելու համար և Կ. Պոլսի ու Տրապիզոնի մաքսատուններն ալ սնտուկներով զէնքեր չէին ճամբուէր յատկապէս քիւրտերին համար. այնուամենայնիւ ատոնք կը ճարէին և մինչեւ այսօր ալ կը ճարեն»[2]:

Պարբերականը հստակ արտահայտում է իր վերաբերմունքն ու դիրքորոշումը «կուսակցություն» երևույթի և կուսակցական համակարգի նկատմամբ:

«Կուսակցութիւնների հետեւանքը մեր մէջ» առաջնորդող հոդվածում պարզաբանվում է, որ հայ հայրենասիրական շարժման մեջ կուսակցությունների երևան գալը շատերի կող-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

մից մի մեծ չարիք նկատվեց, իսկ ժողովուրդն էլ այդ գործի մեջ տեղի ունեցած վնասներն ու վտանգները, հուսաբեկ վրիպումները կուսակցական ոգուն վերագրեց: Դա, իհարկե, ճիշտ չէ, քանզի հանրահայտ է, որ ժողովուրդը «ամեն դարերի մէջ ալ, միջոց չէ ունեցած մասնագետների նման ամեն մի դիպուածի բուն պատճառը գտնել և ստոր համար միշտ քմածին կարծիքներ ունեցած է պատահարների ծագման մասին»[1]:

Ինչպես սովն ու համաճարակները մի տեղ «հրէայներին վերագրած է, պատերազմները՝ գիսաւոր աստղերին, հիվանդութիւնները՝ Սուրբերի բարկութեան, առնտրի անկումը՝ գէշ տարրի...» այնպես էլ հայրենասիրական գործից ծագած աղետների բուն պատճառը չկարողանալով գտնել իր խելքին հասածի չափ որևէ մեկնություն պիտի տար, բավական է, որ «պատասխանատուութիւնը իր վրայէն հեռանար. և ահա ամեն վնասները կը վերագրէր մի քանի կուսակցական անհատների»[2]:

Առաջնորդողի հեղինակը՝ Մկրտիչ Ավետիսյանը փորձում է հիմնավորել, որ հեղափոխական գործի մեջ պատահած անհաջողությունների փոքր մասն է միայն կուսակցական սնափառության և երկպառակության արդյունք: Դա այդպես է առհասարակ, քանզի համոզմունքի ուժով կայացած կուսակցությունները չնայած իրենց պատճառած հասարակական ցնցումներին, ավելի բարիք են առաջ բերում, քան թե չարիք, որովհետև «իրենք կը ծառայեն ամեն մի պատահած երեւոյթ զանազան կողմերէ քննելու և ոչ թէ միակողմանի վարուելու.

---

[1] «Արմենիա», 1893 թ., թիվ 14:

[2] Նույն տեղում:

կուսակցական ոգին ուրեմն կրնար մեզ ալ օգտակար լինել յեղափոխական կնճռոտ գործը այլ և այլ կողմերէ ուսումնասիրելու»[1]: Ուրեմն, բոլորովին անհիմն է եղած անհաջողությունները վերագրել կուսակցական ոգուն և համակարգին: Միայն խաբեբա անձինք են, որ խորշում են ցույց չտալ իրենց կուսակցական պատկանելությունը և ներկայանում են ոչ թե կուսակցական մարդ, այլ միաբանասեր, քանզի հաճախ կարելի է ժողովրդին խաբել միաբանասիրության քողով, բայց շատ քիչ անգամ կուսակցության անունով:

Նշվում է, որ կուսակցությունների գոյություն չունենալով, ժողովուրդը «չդադրիր միամիտ, փոփոխամիտ և շլացող լինելէ, քանզի որ ղեռ նոր ջանքեր կանէ քաղաքական կեանքի մէջ մտնելու»[2]:

Թվարկվում են կուսակցական համակարգի հետևյալ առավելությունները.

1. Եթե ժողովրդի մի մասը խաբված է և ընթանում է սխալ ուղիով, ապա «միւս կուսակցութիւններին յարող մասերը կուսակցական ազդեցութեան տակ ետ մնացին այդ սխալ ճանբէ»[3]:

2. Կուսակցական անկեղծ ոգին շահախնդիրների և մատնիչների ասպարեզը սահմանափակեց, որովհետև ամեն մի խելահաս և ջերմեռանդ կուսակցող իր կուսակցության պատիվը բարձրացնելու համար «աշխատեցաւ և կաշխատի զանոնք իր մեջէն դուրս հանել և հրապարակել»[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

3. Կուսակցական նախանձախնդրությամբ գործող անձերը առավել եռանդով և հարատևությամբ կգործեն, քան թե չեզոք կամ անգույն մարդիկ. «Երբ ոսկի յոյսերին չիրականալը թէ՛ ժողովրդի, և թէ՛ չէզոք գործիչների եռանդը թուլցուցած է, ջերմեռանդ կուսակցողներն են մնացած հրապարակին վրայ իբր գործող»[1]:

4. Որ կուսակցությունները իրենց տված շահով ու վնասով միջոց կտան ժողովրդին տեսնել, թե ո՞ւմ պետք է հետևեն վստահությամբ և հետևողականությամբ:

Սույն վերլուծականը ամփոփվում է այն եզրահանգումով, որ ժողովուրդը պետք է աշխատի իր ընտրողական կարողությունները զարգացնել և որոշելով այն կուսակցությանը, որն ամենից քիչ սխալներ կանի ու ամենից շատ ծառայություններ «կը մատուցանէ բաղդատմամբ իր ստացած նպաստին... այդ ատէն թէ վնասակար կուսակցութիւնները կը տկարանան և թէ օգտակարը ժողովրդի ոյժն իր հետ ունենալով կրնայ աւելի ընդարձակ գործեր կատարել»[2]:

Պարբերականը ընդգծված վերաբերմունք դրսևորեց հատկապես սոցիալիստական գաղափարախոսությունը ներկայացնող արժեքների հանդեպ: 19-րդ դարի կեսերից սկսած սոցիալիստական գաղափարները ներթափանցում են հայկական իրականություն և գրավում թե առանձին անհատների, թե ժողովրդական որոշ խավերի:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

Նույն ինքը՝ Մկրտիչ Ավետիսյանը «Սոսիալիստական հոսանքը մեր մէջ» հոդվածում նշում է, որ այս վերջերս սոցիալիզմ անվանված ընկերական վարդապետության մի քանի թերթեր սկսեցին հրատարակվել մեր մեջ: Նրանցից «Հնչակը», որ «սոսիալիստ կուսակցութիւնը մեր մէջ ալ տարածելու համար հիմնուած է և սկզբէն լոկ սոսիալիստական բովանդակութիւն ունեցող յօդուածներով իջաւ հրապարակը, կերեւի թէ այժմ չգոհացուներ իրմէ աւելի կարմիր հայ սոսիալիստներն, որոնք թերեւս կը գայթակղին երբ կը տեսնեն որ Հնչակը, գուցէ հակառակ իր կամքին ստիպուած է աչքի առջեւը իրականութեանը վրայ նայիլ»[1],– գրում է արմենականների ճանաչված առաջնորդը: Հեգնանքի են արժանանում սոցիալիստների մտամարզանքները, որով փորձում են ընթերցողի միտքը լցնել «կապիտալի, քոլէքտիվիզմի զրույցներով»[2]: Նշվում է, որ եթե իրենց հարցնես, այդ թերթերի ավելանալը կվերագրեն հայ ժողովրդի պահանջին: Սակայն զարմանալի է, ինչպես է եղել, որ մենք՝ հայերս առանց գիտենալու «այսքան կարմիր սոսիալիստներ եղեր ենք. Գերմանիան, Ֆրանսիան որոնց մէջ մի դարէ ի վեր ծանրացող գործարանական, դրամատիրական ճնշման և անհատի անսահման ազատութեան ծնունդն եղած է սոսիալիստական բողոքը, այդ երկիրների 4-5000 թերթերէ բաղկացած մամուլին մէջ 40-50 հատով սոսիալիստ թերթեր կը գտնուին...»[3]: Սույն արտառոց, անբնական վիճակը հրապարակագիրը բացատրում է նրանով, որ հայի պահանջը, փափագը չէ, որ ներ-

---

[1] «Արմէնիա», 1894 թ., թիվ 68:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

կայացնում են այդ թերթերը, այլ հայ ուսանողների և մտավորականների որոշ մասի՝ եվրոպական արժեքներին ընդօրինակելու և նմանվելու անդիմադրելի ցանկությունը: Անտարակույս է, որ արևմտահայկական իրականության դժնդակ պայմաններում՝ նույնիսկ 19-րդ դարի կեսերից հետո դեռևս ամուր պահպանվել էին ավատատիրական հարաբերությունների բաղադրատարրերը, քան այն նպաստավոր էր կապիտալիստական հարաբերությունների կազմավորման և զարգացման համար: Այս առումով տեղին է հիշատակել հայ անվանի պատմաբան Ազատ Համբարյանի հետևյալ մասնագիտական դիտարկումը. «Ժխտել Արևմտյան Հայաստանում եղած ավատատիրական կախվածության ձևերը, մանավանդ ճորտատիրությունը, նշանակում է դեմ գնալ պատմական իրականությանը և ջուր լցնել համիդյան պատմագրության ջրաղացին»[1]: Անշուշտ, վերոնշյալ ժամանակաշրջանում արևմտահայկական գավառներում իրական հիմք գոյություն չուներ սոցիալիստական գաղափարների ծլարձակման համար:

Ճշմարտացի է Մ. Ավետիսյանի այն դիտարկումը, թե սոցիալիստական թերթերն ու ուժերը չբավարարվելով տեսությամբ, հայ իրականության մեջ են փոխադրել նաև իրենց գործնական մոտեցումներն ու սկզբունքները և «... Թիւրքիայի դէմ պատրաստուող հայ յեղափոխական ուժերը բաժնելով սկսեր են մէկ մասը միւսին դէմ հանել և կռիւ մղել ընդդէմ... չենք գիտեր ո՞ր գոյութիւն ունեցող դասակարգի»[2]: Ըստ հրապարակա-

---

[1] Ա. Համբարյան, Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914 թթ., Ե., 2003 թ., էջ 23:

[2] «Արմէնիա», 1894 թ., թիվ 68:

խոսի, ստեղծված սույն իրավիճակում հայ սոցիալիստների գործելակերպը կշարժեր Դոն Քիշոտի նախանձն անգամ: Ցավոք, սույն հիվանդությունը ուղեկցելու էր հայ հեղափոխությանն ու հեղափոխականներին տարիներ և տասնամյակներ շարունակ և թող թույլ տրվի ասելու՝ մինչև օրս: Հենց այս պատճառով է, որ հայ ազգային-ազատագրական շարժման ուժերը երբեք էլ չդարձան մի համախումբ, կուռ բռունցք: Ավելին, այն ազատագրական շարժումը միշտ ու մշտապես պառակտեց, թուլացրեց ու տկարացրեց ներսից՝ ի ուրախություն և ի նպաստ մեր հակառակորդների: Մեր պատմագրության և հրապարակագրության մեջ բազմիցս քննվել և ուղղամտության մղող խոսք է ասվել սույն հիմնահարցի շուրջ, սակայն ապարդյուն:

Հետագայում ևս պարբերականի էջերում ծավալվեց ակտիվ քննարկում և քննախոսություն վերոնշյալ արժեքների գնահատման վերաբերյալ: Մ. Ավետիսյանը արտահայտելով «Արմենիայի» խմբագրակազմի տրամադրվածությունն ու դիրքորոշումը, մատնանշում է, որ իրենք երբեք էլ միապետական, ազնվապետական և դրամատիրական կարգերի ջատագով չեն եղել և միանգամայն անհիմն են այդ առումով սոցիալիստական թերթերի հնչեցրած մեղադրանքները: «Արմենիան» լոկ հայ հեղափոխական ներկա ձգտումների և ժամանակակից պետքերի թարգմանն է, իսկ այդ անմիջական պետք ու պահանջը հայ ազգը Թուրքիայի լծից ազատագրելու գործընթացն է: Հենց այդ գործընթացի մեջ է «Արմենիան», որը «ուշադրութիւն կը դար-

ձունէ, հայ ազգին ինքզինք ազատօրէն կառավարել իրաւունքը նշանաբան ընտրելով»[1]:

Եվ քանի որ ոչ մի դրամատիրական և հողատիրական դասակարգ հաստատելու կամ միապետական կառավարություն կազմելու ծրագիր ներկայացված չէ հանրությանը և ոչ էլ Հայաստանում գոյություն ունեն «ազգային ազնուապետութեան կամ կալուածապետական որոշ դասակարգեր որ Հայաստանի ազատութիւնը լոկ անոնց նպաստաւոր լինէր, ուրեմն կարելի էր ընդունել որ ինքզինք կառավարելու ազատութիւնը հայ ժողովրդի համար կը նշանակէ ժողովրդապետական կառավարութիւն»[2]: Ուրեմն, չի կարելի եղած ուժը՝ հեղափոխական կուսակցությունները բաժանել, պառակտել տարբեր բաղձանքների պատճառով, քանի որ հայ հեղափոխությունը ունի մեկ ընդհանուր, հասարակաց թշնամի՝ թուրքական բռնապետությունը և այն տապալելուց, վերացնելուց հետո ազատ հողի վրա կուսակցական-քաղաքական ուժերը կարող են բարգավաճել:

Մ. Ավետիսյանը քննության առնելով հեղափոխական շարժման ուղիների վերաբերյալ «Հնչակի» և «Արմենիայի» դիրքորոշումները, խիստ քննադատում է հնչակյանների օրգանին, որի կարծիքով «հայերի մինչեւ իսկ անյաջող շարժումները կը նպաստեն յեղափոխական գաղափարի տարածմանը և ուժի աւելնալուն և քանի որ գործնական օրինակը աւելի շուտ կը ցնցէ անտարբեր մնացած խաւերը և հալածումը տարածում է, ուրեմն որքան շատ զոհեր, այնքան ալ բազմապատիկ նոր հա-

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 69:

[2] Նույն տեղում:

վատացեալներ»[1]: «Հնչակի» նման մոտեցումը, թե մինչևիսկ անհաջող շարժումները ժողովրդին կվարժեցնեն կռվին ու զոհին, հեզնական է նկատվում: Այո՛, հեգնական, քանզի չի կարելի ամեն մի ջարդ ու կոտորած, ամեն մի անհաջողություն, ամեն մի դիրքի կորուստը մի նոր քայլ համարել դեպի առաջ, դեպի նպատակակետ: 1894 թ. սեպտեմբերի 26-ին Փորթուգալյանը գրում է, որ վերջերս մեր հրատարակած նկատողությունները պատճառ են դարձել «որ հնչակեաններէ ոմանք սկսեր են մեզ դէմ կատաղութեան փրփուրներ թափել»[2]:

Հետագայում նա ավելի խիստ ոճով պատասխանեց հնչակյաններին: 1896 թ. ապրիլի 4-ին Փորթուգալյանը գրում է, որ հայ ազգն ունի արտաքին թշնամիներ, բայց մենք ունենք մի ներքին թշնամի «որ դեռ մի քանի տարիներէ ի վեր երեւան եկած լինելով, իր նորութեամբ յաջողուած է միամիտների բաւական թիւ մը հրապարակել»[3]: Զգացմունքի ուժով պոռթկած ատելությունը հասնում է այնտեղ, որ հնչակյանությունը ներկայացվում է օտար դիտավորություններով խորհող, բայց հայերեն խոսող մի թշնամի, որը «շատ աւելի վտանգաւոր դարձաւ հայկական դատին քան թէ նոյն իսկ մեր յայտնի թշնամի թիւրքը»[4]: Հնչակյանների նկատմամբ այս կարծր դիրքորոշման պատճառը վերջիններիս հախուռն ու փոթորկոտ գործունեությունն էր՝ շոնդալից ցուցական գործողությունների ուղեկցությամբ:

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 2:
[2] «Արմենիա», 1894 թ., թիվ 17:
[3] «Արմենիա», 1896 թ., թիվ 70:
[4] Նույն տեղում:

Փորթուգալյանի պարբերականը կոչ էր անում զգուշանալ նման գործելակերպի վտանգներից կամ բոլորովին չհետևել նրանց, գտնելով մինչև որ այդ «օտարամուտ վտանգաւոր թշնամին չհեռացունենք մեր գործերի մէջ խառնուելէ, մեր բոլոր ծրագիրներ պիտի խառնակուին և ապագայի մեր յոյսեր վաղաժամ պիտի թառամին»[1]: Նույն կարգի կարծր քննադատական վերաբերմունք դրսևորվեց նաև Հ. Յ. Դաշնակցության գործունեության նկատմամբ: 1898 թ. հունիսի 18-ին «Յոյցին պտուղները» հոդվածում ասվում է, որ «Դրօշակը» անընդհատ փառաբանում է Խանասորի ար շավանքը, այն իրագործած գործիչներին: Սակայն խորհուրդ է տրվում ցույցերով քիչ պարծենալ, մի անգամ էլ իրական հետևանքների մասին արժե մտորել: Քանզի խանասորյան արշավից հետո նրա դառն հետևանքները պետք է դիտարկել. «Պարսկաստանի կրած նեղութիւնների մասին շատ բան լսուեցաւ, շատ բան գրուեցաւ... Սալմաստի կողոպտուել ու սմայանալ, գաղթականներին հալածանք, բանտարկութիւններ, անվերջ տանջանքներ»[2]:

Թերթին բնորոշ հարցադրումն է հնչում այսպես. «Իսկ դուք, պարոն դաշնակցականներ, տեսնո՞ւմ էք ձեր ցոյցին պտուղները. Արդեօք խղճահար չէ՞ք լինում տեսնելով ժողովրդի այս ցաւալի կացութիւն և մինչև ե՞րբ պիտի շարունակէք ձեր ցուցամոլ սիւալ ուղղութիւնը»[3]: Կարծիք է հայտնվում, որ թե՛ հնչակյանները, թե՛ դաշնակցականները զանգվածների հրապուրում և խաբում են զենքի և ուժի անունով:

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1898 թ., թիվ 79:

[3] Նույն տեղում:

Հետագայում միշտ էլ անդրադարձ էր լինում երկրի ներսում հնչակյանների և դաշնակցականների կատարած ուժային ցուցական գործողությունների նկատմամբ: 1890-ական թվականները լեցուն էին այդ կարգի ձեռնարկներով:

«Արմենիայի» վերաբերմունքը նման կարգի հեղափոխական ձեռնարկների նկատմամբ բացասական էր, քանի որ առանց հիմնավոր նախապատրաստության հնարավոր չէր փոխել իրավիճակը երկրում: Ավելին, հինգ-տաս հոգով ցույց կազմել, այս կամ այն շենքի մեջ ուժանակ պայթեցնել, մահվան սպառնալիքով դրամ հավաքել, այս միջոցները «կը ցուցնեն զանունք գործադրող մարմնի տկարութիւնը և միանգամայն ժողովուրդն իր հետ չունենալը»[1]: Իսկ եթե վերոնշյալ գործընթացին ժողովուրդը չի հարում, ապա այն անհաջողության մատնվելու է դատապարտված:

Հնչակյան և դաշնակցական գործելակերպի նկատմամբ այնքան խորն էր պարբերականի խմբագրակազմի և նրան հարող շրջանակների դժգոհությունն ու հիասթափությունը, որ ժխտողական կարծիք էր ձևավորվել այս երկու ուժերի հնարավոր միավորման հարցում. «Բայց ցաւալի կողմը սա է որ մէկ սխալէն ելնելով ուրիշ սխալի մը մէջ կը մտնեն: Կը խոստովանին «Հնչակի» և «Դրօշակ»-ի մարդերի վնասակար ուղղութիւնն և դրամական զեղծումները և միեւնոյն ատեն կը պահանջեն որ այդ երկուքը միանան. Չեմ գիտեր թէ քիմիական ինչ բաղադրութեամբ երկու չարիքի միութենէն կը յուսան բարիք ստա-

[1] «Արմենիա», 1897 թ., թիվ 6

նալ»[1]: Եզրահանգվում է, թե այս մարդիկ կկարծեն, որ հայ հեղափոխությանը կենդանության ապացույց տալու համար պետք է Կ. Պոլսում մի քանի ռումբ պայթեցնեն, իբրև թե «Եւրոպան աղկէ պիտի բռնադատուի ստիպել թիւրք կառավարութեան որ բարենորոգումները գործադրէ»[2]:

Փորթուգալյանը խստորեն քննադատում է նաև ժողովրդի այն մասին, որը կուրորեն հետևելով հեղափոխական կոչվածներին և «ոչխարի բնութիւնով կը վարուի... ոչխարի պէս կը հետեւի անոր առաջնորդութեան»[3]: Ըստ նրա, ինչպիսի «յիմարական գաղափարներ որ ասես չեն տարածուած մեր ժողովրդի մէջ և իրենց մոլեռանդ հետևողներ չեն գտած բաւական թուով, բուն իսկ իրենց՝ հայ ժողովրդի վնասին աշխատցունելու համար»[4]: Մի ժամանակ այդպիսիններն առաջնորդում էր «Հնչակի» աղմուկ-աղաղակը, հիմա էլ «Դրօշակի» ձայնն է սկսել հրապուրիչ լինել. «Եթէ շարլատանութիւնը, խաբեբայութիւնը յանցանք է, ոչխարամտութիւնն ալ առաքինութիւն մը չէ»[5]: Այսպիսով, Մ. Փորթուգալյանի և իր պարբերականի վերաբերմունքը հնչակյան և դաշնակցական կուսակցությունների 19-րդ դարավերջին ծավալած գործունեության նկատմամբ ծայրաստիճան բացասական է, անհանդուրժողական: Դա պայմանավորված է Փորթուգալյանի՝ հայ հեղափոխական շարժման ուղինե-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմէնիա», 1897 թ., թիվ 86:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

րի և աշխատանքի մեթոդների վերաբերյալ ունեցած սպեցիֆիկ հայացքներով:

Առհասարակ, կուսակցական համակարգի հանդեպ Փորթուգալյանի վերաբերմունքը երկակի է, փոփոխական: Մերթ դրվատում է կուսակցական համակարգի առավելությունները, մերթ հանդես բերում կարծր դիրքորոշում: Սակայն, ընդհանուր առմամբ, գտնում է, որ կուսակցությունների գոյությունը կարևոր գործոն է և պարզապես անհրաժեշտություն: 1898 թ. հունիսի 4-ին տպագրված հոդվածում նորից փաստարկելով կուսակցությունների գործունեության դերի ու նշանակության հիմնահարցերը, ամփոփում է, որ «կուսակցութիւնը ոչ թէ բաժանում, այլ միութիւն ըսել է»[1]: Երբ միևնույն գաղափարին նվիրված, միևնույն համոզումի տեր մարդիկ իրար հետ կմիավորվեն իրենց համոզմունքները տարածելու և գաղափարները առաջ տանելու համար, ուրեմն կուսակցություն կազմավորած կլինեն: Կուսակցությունը գաղափարակիցների միություն է նշանակում: Կարելի է ասել, թե այսինչ կամ այնինչ կուսակցությունը վատ է, բայց «ընդհանուր կերպով ըսել թէ կուսակցութիւնը գեշ է, այդ յիմարական խօսք կը դառնայ»[2]: Ուրեմն, որևէ կուսակցության չհարելը և այն չքաջալերելը ոչ թե պարծանք, այլ «յանցանք մ է և այս այնքան յայտնի ճշմարտութիւն մ է որ մենք կը կարծենք թէ ատոր հակառակ խօսողները սխալ կըմբռնեն կուսակցութիւն բառին նշանակութիւնը»[3]: Այս ամենը ասում էր մի անհատ, որ ժամանակին մերժեց որևէ կուսակ-

---

[1] «Արմենիա», 1898 թ., թիվ 76:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ցության մեջ մտնելու և այն գլխավորելու բոլոր առաջարկներն ու խնդրանքները:

Ավելին, 1890-ական թվականների վերջերին գաղափարաբարոյական հարթության վրա տևական հակասություններ սկսվեցին Մկրտիչ Փորթուգալյանի և իր նախկին աշակերտների՝ արմենականների միջև, որն ավարտվեց երկու կողմերի միջև գաղափարական կապերի լիակատար խզումով: Հակասությունների պատճառները ունեին գաղափարաքաղաքական ու արժեքային խորքային բնույթ: Համոզիչ չէ պատմաբան Ա.Համբարյանի այն դիտարկումը, թե Մ. Փորթուգալյանը քարոզելով արևմտահայ բոլոր խավերի ու դասակարգերի մասնակցությամբ հեղափոխական թեզեր, դեմ էր առանձին կուսակցությունների կազմավորումներին, այդ թվում նաև արմենականների գոյությանը[1]:

Արմենականները իրենց կազմավորման պահից ոչ միայն ոգեշնչվել են «Արմենիայի» քարոզած գաղափարներով, այլև ձգտել են, որ իրենց կուսակցության ղեկը ստանձնի նույն ինքը՝ Մ. Փորթուգալյանը: Պահպանվել են որոշ վկայություններ, որ դեռևս Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարման օրոք արմենականները մի քանի անգամ դիմել են Փորթուգալյանին կուսակցության ղեկավարության գլուխ կանգնելու խնդրանքով: Սակայն վերջինս երբեք չի ոգևորվել նման առաջարկներով և հետևողականորեն մերժել[2]: Լուռ հակառակությունը շուտով վերածվում է բացահայտ հակամարտության:

---

[1] Ա. Համբարյան, Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990 թ., էջ 159:

[2] «Պայքար», 1951 թ., թիվ 63:

Արմենական կուսակցության հիմնադիր այրերից մեկը՝ Գրիգոր Պեոզիկյանը Բուլղարիայում հիմնադրում է արմենական մի ուժեղ կազմակերպություն, հրատարակում է թռուցիկներ, որոնցից ուղարկում է նաև «Արմենիայի» խմբագրություն: Ապա ինքն է մեկնում Մարսել և բանակցում Փորթուգալյանի հետ: Սակայն վերջինս մնում է անդրդվելի և 1897 թ. մայիսի 26-ին «Զգուշություն» հոդվածով խիստ մեղադրանքներ է հարուցում արմենականների հասցեին: Նրանում նշվում է, որ մեզ հարցումներ կուղղեն ոմանք «Արմենական կազմակերպութեան» մը մասին, այս «օրեր մեր ձեռք ալ անցաւ «Շրջաբերական Արմէնիական կազմակերպութեան Ե. Շրջանակի» վերնագրով թուղթ... Զարմանքով կարդացինք այդ թղթի մէջ որ յանդգնութիւն այն աստիճան առաջ տարած են որ կը յայտարարեն թէ «Արմէնիական կազմակերպութիւնը որ 12 տարիներէ ի վեր կը գործէ» և այլն, այնպէս ներկայացունելով որ իբրեւ թէ այդ անծանօթ մարդեր՝ որոնք շրջաբերականին ստորագրած չլինելով չէ կարելի որոշապէս ըսել իրենց ո՞վ լինելը, 12 տարիներէ ի վեր Արմէնիաի կազմակերպած մէկ կուսակցութիւնն են եղեր»[1]: Փորթուգալյանը, անշուշտ, չափազանցնում և որոշ չափով խեղաթյուրում էր իրականությունը, քանզի չէր կարող ծանոթ չլիներ Արմենական կուսակցության գոյության մասին: Արմենականների անուրանալի հեղինակություն Մկրտիչ Ավետիսյանը մի որոշ ժամանակ հանդիսացել է պարբերականի լավագույն կարող ուժերից մեկը: Ուստի Փորթուգալյանի զարմանքը իրական հիմք չէր կարող ունենալ: Նա քննադատում է

[1] «Արմենիա», 1897 թ., թիվ 84:

վերոնշյալ շրջաբերականի հեղինակներին, որոնք, իր կարծիքով, անհիմն լուրերով մոլորության մեջ են գցում ընթերցողներին և ժողովուրդը սխալ պատկերացում է կազմում իր պարբերականի նկատմամբ: Այնուհետև հայտնում է, որ «Արմէնիայի համար ուրախութիւն մ է անշուշտ իրեն համակրողներ և հետեւողներ ունենալը որոնց թիւը ոմանց կարծածին չափ ալ քիչ չէ. բայց Արմէնիան մինչեւ այժմ իր անունով որեւէ կուսակցութիւն կազմակերպած չէ դեռ. հետեւապէս ոչ միայն կանխահաս է Արմէնիական անունով կուսակցութեան մը կազմակերպուած լինելու լուրը, այլև բոլորովին սուտ է 12 տարիներէ ի վեր անոր գոյութիւն ունեցած լինելը»[1]:

Եվ եթե մի այդպիսի կազմակերպություն եղած լիներ, պարբերականի էջերում պիտի ազդարարվեր այդ մասին և ոչ թե այդպես առանձին «թղթի կտորների վրայ տպուելով առանց ստորագրութեան կը ցրուէր այժմ»[2]: Առավել խտացնելով գույները այն դատավճիռն է արձակվում, որ այդ շրջաբերականների հեղինակների վարմունքից երևում է, որ «իրենք ոչ միայն Արմէնիական չեն, այլ «Արմէնիայի» թշնամիներ են որոնք Արմէնիայի անունը աւրելու և անոր վնասելու աւելի յարմար միջոց կարծած են Արմէնիայի բարեկամի դիմակով մտնել միամիտներին մէջ, պղտորել անոնց միտքեր»[3]: Փորթուգալյանը հարկ է համարում ընթերցողներին հատուկ զգուշացնել, որ վերոնշյալ մարդիկ ամենևին «Արմենիայի» բարեկամները չեն, քանի որ նրանք իրենց անկարգ վարմունքով կոտրել են «Արմէնիայի

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ունեցած համբաւը՝ կարգապահութիւն և անկեղծ ուղղութիւն սիրելու մասին»[1]: Ուրեմն, ինչպես կարելի է կարգապահության և սկզբունքայնության սկզբունքի հետ համաձայնեցնել «այնպիսի անկարգ գործունէութիւն մը որով մի քանի մարդեր կելնեն Արմէնիայի անունով խօսելու և գործելու, առանց իրաւասութիւն մը ստացած լինելու Արմէնիայէն»[2]: Վերջում նորից խիստ ոճով ասվում է, որ «Արմենիան» միշտ հակառակ եղած է անկարգ և բաշբոզուկ գործունեության, ինչ անունով և որ կողմից էլ այն լինի, թե թշնամու և թե բարեկամի կամ բարեկամ ձևացնողի:

Այս խիստ հրապարակումից հետո էլ արմենականները դեռևս լիովին չէին կորցրել հույսը, որ այնուամենայնիվ կկարողանան ընդհանուր լեզու գտնել իրենց նախկին ուսուցչի հետ:

Փորթուգալյանի ամերիկյան շրջագայության ընթացքում տեղի արմենական շրջանակները նրան հրավիրեցին Բոստոն, վերստին կրկնելով և թարմացնելով իրենց առաջարկությունները: Սակայն ապարդյուն: «Արմենիայի» խմբագիրը հաստատակամ գտնվեց իր ժխտողական կեցվածքի մեջ[3]: Մարսել վերադառնալուց հետո նա նորից հանդես եկավ խիստ հանդիմանական հրապարակումով (1906 թ. օգոստոսի 29), որում կրկին շեշտեց, որ Արմենական անունով հեղափոխական կազմակերպություն երբեք չեն կազմակերպել, քանի որ «մեր կուսակցութիւնն է արդեն հայ ժողովուրդի յեղափոխական կուսակցութիւնը: Անոնք որ կըսեն, թէ իրենք յեղափոխական կուսակցութիւն

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Հայաստանի Ազգային արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13:

մ՝ են արմէնական անունով, այդ իսկ կցուցնէ, թէ զիրենք դեռ անկարող կը գտնվին ըմբռնելու Արմէնիայի սկզբունքները, որ իբր լրագրական ռեքլամ, իր անունով առանձին յեղափոխական շարժում մը գոյացնելու ծրագիր ունեցած չէ երբէք»[1]: Ի լուր ամենքի, նորից շեշտվում էր, որ միակ կազմակերպությունը, որի կազմությանը մասնակից է եղել «Արմենիայի» խմբագիրտնօրենը, կկոչվեր Հայոց հայրենասիրական միություն: Կազմակերպության անունն իսկ ուղղակի կորոշե իր նպատակը, այդ «կազմակերպութեան անունը հայրենասիրական էր, բառ մը, որ կներկայացնէ նաև Արմէնիայի գաղափարն ու նպատակը»[2]: Ուրեմն, Փորթուգալյանի սույն հրապարակումից կարելի էր այն եզրահանգման հանգել, որ իր կազմավորած միությունը հայրենասիրական էր, իսկ արմենականներինը՝ անհայտ ու անորոշ... Այս ամենից հետո Փորթուգալյանի և արմենականների հարաբերությունները էլ ավելի լարվեցին, ընդունելով փոխադարձ անհանդուրժողականության և թշնամանքի բնույթ: Թերևս ինքը՝ Մ. Փորթուգալյանը առավել անհանդուրժող էր և չէր խորշում արմենականների հանդեպ նաև վարկաբեկիչ խոսքեր ասելուց: Այսպես, 1908 թ. հունվարի 11-ին արմենականների դեմ հանդես եկավ նոր քննադատական, ժխտողական ու նաև արդեն վարկաբեկիչ հոդվածով, որում կրկին ու կրկին ժխտում էր արմենական անունով կազմակերպության հետ պաշտոնական որևէ կապի գոյությունը և այն, որ ոչ ոք «իրաւունք ունի «Արմէնիայի» անունով գործող կազմակերպութիւն մը ներկա-

---

[1] «Արմէնիա», 1906 թ., թիվ 44:

[2] Նույն տեղում:

յացնելու»[1]: Ապա նաև ավելացնում, որ չնայած բազմաթիվ նախազգուշացումներին ու ժխտողական քայլերին, նրանք «կշարունակեն տակավին իրենք զիրենք Արմէնական անվանել, փոխանակ Պեռզյուքեան կամ այսինչյան անվանելու»[2]: Արմենականներն այլևս լռությամբ չհանդուրժեցին Փորթուգալյանի այս վարքագիծը, այլ պատասխանեցին համարժեք կերպով:

---

[1] «Արմէնիա», 1908 թ., թիվ 38:
[2] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ VII
ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՃՇՄԱՐԻՏ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ: ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԻ ԻՐԱԿԱՆ ԿԱՋՄԱԿԵՐՊՉԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄԸ

«Արմենիա» պարբերականի կարևորագույն գործառույթը հանդիսացավ իրականության ճշմարիտ արտացոլումը, որի հրամայականով այն իր գործունեությունը ծավալեց առաջին իսկ օրերից մինչև վերջ: Թերթը սերտ աղերսներով կապված էր և՛ արևմտահայ, և՛ արևելահայ իրականության, նաև Եվրոպայի, ԱՄՆ-ի, Մերձավոր ու Միջին Արևելքի հայկական գաղթօջախների հետ: Շատ տեղերում գործում էին նրա թղթակիցները: Նամակագրական կապ էր հաստատվել բազմաթիվ գաղթօջախների հետ: Հային, Հայաստանին ու հայությանը հուզող ցանկացած հարց և խնդիր կարող էր տեղ գտնել ու բարձրաձայնվել պարբերականի էջերում Անգամ փոքրիկ, աննշան թվացող հարցերն ու հարցակոանները «Արմենիայի» էջերում ձեռք էին բերում հասարակական լայն հնչեղություն ու կարևորություն:

Իր գոյության ընթացքում պարբերականը կապող, կամրջող և միահյուսող օղակ դարձավ հայության տարբեր հատվածների միջև: Փորթուգալյանը մշտապես տեղ էր տալիս հայրենաբնակ գավառներից եկող թղթակցություններին, նոր մտքերին, առաջարկություններին ու դիտողություններին: «Արմենիա» պարբերականը եղավ այն բացառիկ օրգաններից մեկը, որն ամբողջ ճշմարտությամբ էր խոսում Հայաստան երկրի խնդիրներից ու

օրավուր աճող տագնապներից, հայ ժողովրդի առօրյա-ամենօրյա սոսկալի իրավիճակից: Հայ ժողովրդի բոլոր խավերի և հայության գրեթե բոլոր հատվածների ապրած կյանքի, սոցիալական, նյութական, կրթական, հոգևոր ու բարոյական կացության իրական պատկերն է արտացոլված սույն պարբերականի տարեգրության էջերում:

Սկսած առաջին իսկ համարներից թերթը ուշադրության առանցքում պահեց արևմտահայ ամենահոծ զանգվածի՝ հայ գյուղացիության վիճակին վերաբերող հիմնախնդիրները:

1885 թ. սեպտեմբերի 2-ին թերթը տագնապ էր արտահայտում, որ տնտեսական հուսահատ և անհավասար կռվի է ենթարկված հայ գյուղացին, որից նա դուրս պիտի ելնե բոլորովին հաղթած կամ թերևս անկենդան: Սույն տարվա հունձքն առատ է, սակայն դրանից ինչ օգուտ, քանզի գյուղացին «պարտաւորուած է հնձել միայն խիստ առատ բուսած տեղերը, իսկ միջակ արդիւնք ունեցող ընդարձակ արտերու հունձքը պիտի թողու դաշտը, զի ձեռք բերուելքի արդիւնքը՝ քաղելու ծախքն իսկ չհաներ»[1]: Այլևս նրա ուժերից վեր է վճարել հողի, հերկի, ոռոգման և այլ ծախսերի բացը գոցող գումարը: Իրավ է, որ հայ գյուղացու «կեանքն ամենօրեայ կռիվ մ՚է միայն մահուն դէմ և ոչ այլ ինչ»[2]:

1885 թ. հոկտեմբերի 7-ին թերթի թղթակիցը Վանից գրում էր, թե «Ո՞ր մէկն ողբամ. ներքի՞ն թէ արտաքին հարստահարութիւններն: Ո՞ր մէկի ցաւն յայտնեմ. կրոնական թէ քաղաքական տզրուկներուն որք ժողովրդի արեան մինչեւ յետին կաթիլը կու-

---

[1] «Արմենիա», 1885 թ., թիվ 6:

[2] Նույն տեղում:

զեն ծծել»[1]: Խե՜ղճ Վան. հերիք չէ, որ թուրքի անտանելի լուծը ծանրացած է քո ուսերին, պետք է, որ ավելի «անտանելի մի լուծի տակ եւս հեծես: Եւ այդ լուծը ծանրացնողը մի Սրբազանի աջն է որ դու ամենայն յարգանքով կը համբուրես և այդ սոսկալի հարստահարիչն է քո հոգևոր հայր, Վանի առաջնորդական տեղապահ Պօղոս եպիսկոպոսը»[2]: Թղթակիցը հայտնում է, որ օտարաքաղաքացի ուսուցիչներին հալածելուց և Վանից հեռացնելուց հետո «կարգը եկած է այժմ վանեցի ուսուցիչներն ալ հալածելու, դպրոցները փակման վիճակին ենթարկելու»[3]:

Եվ այդ ամենը կատարվում էր այն պատճառով, որ ռեակցիոն հոգևորականի սկզբունքներից մեկն էր, թե ուսումը մարդուն անկրոն է դարձնում և կառավարությունը «ալ չախուրժիր ուսեալներին որոնց վրայ միշտ կասկածոտ աչքերով կը նայի»[4]:

Թերթը հետագայում ևս բեռված ուշադրությամբ հետևում էր Վանում առաջադեմ և ռեակցիոն խմբավորումների միջև ընթացող պայքարին, բացահայտ համակրանք և պաշտպանություն հայտնելով ապողոսյան խմբավորման ներկայացուցիչներին: Սրանով իսկ Փորթուգալյանը բացահայտում էր առաջիկա պայքարի ու մարտնչումների հնարավոր ուղղություններն ու ուղղվածությունը: Դա լինելու էր պայքար հայ ցեցերի՝ սգետ, խավարամիտ, ազահ ու անկշտում հոգևորականության, մեծահարուստ ջոջերի և թուրքական անկիրթ ու բարբարոս

---

[1] «Արմենիա», 1885 թ., թիվ 16:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

պաշտոնեության, քուրդ և այլ կարգի ու երանգի ավազակների դեմ:

Ուրեմն, պայքարը տարվելու էր երկու ճակատով միաժամանակ՝ ներքին և արտաքին:

Ցավոք, 19-րդ դարի երկրորդ կեսում հայկական իրականությունն էր այդպիսին և հայ հայրենասեր մտավորականները ստիպված էին մաքառելու ազգը խժռող ու բզկտող ներքին ու արտաքին ուժերի դեմ: Այն, ինչ կատարեց Փորթուգալյանը արևմտահայ իրականության մեջ (ի վերջո, պետք է ընդունել, որ նա ամենից առաջ արևմտահայ իրականության ծնունդ էր և ամենից խորն էր կապված վերոնշյալի հետ), արևելահայ իրականության մեջ նույն դերը կատարեց «Մշակ» պարբերականի մեծանուն խմբագրապետը՝ Գրիգոր Արծրունին: Երկուսն էլ անօրինակ թափով ու եռանդով, անկասելի համարձակությամբ կռիվ և պատերազմ հայտարարեցին այն ամենին և բոլոր նրանց, ինչը և ովքեր խանգարում և արգելակում էին հայ ժողովրդի բնականոն գոյությանն ու գործունեությանը:

«Արմենիայի» էջերում հուճախակի խորը ընդհանրացումներ էին կատարվում երկրի սոցիալ-տնտեսական վիճակի և ներքաղաքական զարգացումների վերաբերյալ:

Արևմտյան Հայաստանում բռնությունների ընդհանուր սիստեմին քաջածանոթ լինելով՝ պարբերականը այդ ամենը ամփոփում էր այն հարթության վրա, որ քրդերը ոչ թե մի առանձնակի քաջություն և զորություն ունեն հայերին միշտ հարստահարելու, կողոպտելու ու կոտորելու, այլ «վասն զի մահմէտական լինելնուն համար, և թերեւս ուրիշ նկատառումներով ալ, թիւրք կառավարութիւնը միշտ իրենց կողմն ունին,

որ զիրենք անպատիժ թողլով կը քաջալերէ միշտ շարունակել իրենց այդ ընթացք և վնասել հայերին»[1]: Սա արևմտահայության նկատմամբ իրագործվող բռնությունների քաղաքական գնահատականն է, այսինքն՝ վերոնշյալ բռնությունները ծագում են ոչ թե տարերային կերպով, այլ թուրքական իշխանությունների ուղղորդված կամքի և գործողությունների պատճառով:

Ավելին, ըստ պարբերականի համոզման, Հայաստանի հայերն այնքան քաջություն, ուժ և դիմադրելու կարողություն ունեն, որ կարող են հաջողությամբ հակադարձել քուրդ և թուրք խաժամուժի ավազակային ասպատակություններին, եթե միայն թուրքական կառավարությունը թույլատրեր հայոց անձնապաշտպանության իրավունքը:

Ճշմարտացի է հարցադրվում, թե հիմա ո՞վ է մեղավոր Հայաստանի մեջ հարստահարությունները «վերջ չը գտնելուն համար. քիւրդը որ անուղղակի կը քաջալերուի իւր ընթացք շարունակելու. հա՞յը որ զինք պաշտպանելու ամէն միջոցներէ զրկուած է օրէնքով. թէ թիւրք կառավարութիւնը որ անձնապաշտպանութիւնը իբր ոճիր կը պատժէ»[2]:

Փորթուգալյանը մշտապես արծարծում էր վերոնշյալ բիրտ լծից արևմտահայության շուտափույթ ազատագրության խնդիրը, քանզի հստակ գիտակցում էր, որ բռնությունների երկարատև շարունակումը կարող է ավարտվել հայոց հայրենիքի ամբողջական կորուստով: Աչքի առջև ունենալով թուրքական իրականության առօրյա-ամենօրյա սոսկալի և սարսափելի

---

[1] «Արմէնիա», 1885 թ., թիվ 20:

[2] Նույն տեղում:

պատկերը, նա քննադատության ողջ ուժն ու թափը ուղղեց վերոնշյալ իրականության դեմ:

Թերթը հաճախ էր անդրադառնում երկրում մոլեգնող սովի սպառնալիքին, նշում, որ Վանում ու ամբողջ երկրում «օրուայ ամենայուզիչ խնդիրն եղած է հացի խնդիրը. հաց չիկա՛յ ժողովրդին. հացագործների կրպակներին առաջը ամեն օր այն աստիճան ահագին բազմաթիւն մը կը խոնուի որ սոսկումով մը 80-81 թվականը կը յիշեցունէ. փողոցները հաց մուրացողների թիւը՝ տունը մնացողների թուէն աւելի շատ է...»[1]: Ճշմարտացի է այն դիտարկումը, որ սովը նաև արհեստական մեթոդներով է ուժգնացվում ու սրվում, քանզի մի շարք մեծահարուստներ, փաշաներ, բեկեր ու էֆենդիներ իրենց տրամադրության ներքո ցորենի «ամբարներ ունին, բայց անոնց դռները փակում են հասարակութեան առաջ, հացի աւելի թանգանալուն կը սպասեն: Պահրի փաշան և կառավարութիւնը անոնց այդ ընթացքին պաշտպան են. կուզեն որ հայ ժողովուրդը սովամահ լինի, բնաջինջ լինի»[2]:

«Արմենիան» տեղեկություններ էր հաղորդում Սասունի հայերի ծանր, անագորույն կացության մասին, այն հերոսաշունչ գավառի, որը շրջապատված է կառավարական զորքերով ու քրդական բաշիբոզուկներով և «Երկրի ուրիշ մասերէն կղզիացած է այժմ Սասուն, բոլորովին պաշարուած քիւրտ վայրենիներէ»[3]: Հետագայում նույնպես բազմիցս թերթը անդրադառնում է Սասունի տագնապալից վիճակին:

---

[1] «Արմենիա», 1894 թ., թիվ 58:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1894 թ., թիվ 51:

Պարբերականի բազմափորձ խմբագիրը ուշադրությամբ և աչալրջությամբ հետևում էր երկրում ընթացող գործընթացներին, ինչպես նաև դրա հետ շաղկապված եվրոպական դիվանագիտության անցուդարձերին:

Թերթի թղթակիցները տեղերից ուղարկում էին թղթակցություններ, որոնցում տվայտում էր իրական ճշմարտությունը հայ ժողովրդի աննախադեպ թշվառ և ողբերգական կացության վերաբերյալ: «Թուրքաց բնական դաշնակիցներ» հոդվածում նշվում էր, որ թուրքի բնական դաշնակիցներ ու կենակից ընկերներ «... կը հասկնանք թուլութիւն, բարբարոսութիւն, աւերակ, սով և մահ»[1]:

Եվ այս անգամ խոսվում, ակնարկվում է համատարած սովի ահավոր վտանգի մասին, քանզի չափազանց դառն ու դժնդակ են առկա իրողությունները. «Ահա՛ մարտ և ապրիլ ամիսները երբ գարնան դուռներ կը բացուին. խեղճ Հայաստանի երկրագործ գիւղացին, իւր դոնակն փակ ու տնակն աւերակ՝ տկլոր, անօթի, դալկահար մանկտին հաց կուզէ... և տանուտէր՝ որ երէկ քսան լուծ եզ ու զոմէշ ունէր, այսօր ո՛չ զոյգ մ' եզ ունի խարօրի համար, ո՛չ պտուղնց մը ցորեն, գարի սերմի համար, ո՛չ մշակ, ոչ հստաղ...»[2]: Ահա այսպիսի սարսափելի, աննախադեպ աղքատության եզրին հասած, սովի և մահի ուրվականներով լեցուն պատկեր էր տիրում արևմտահայկական բնակավայրերի մեծագույն մասում: *Այսպես կենդանի նահատակ էր դառնում ողջ արևմտահայությունը*:

---

[1] «Արմէնիա», 1895 թ., թիվ 64:

[2] Նույն տեղում:

Իսկ կոտորածներից հետո ամենադժնդակ իրողությունը դեռ առջևում էր՝ սովի համատարած տիրապետությունը. «Սո՛վ, այո՛, մեր այս աւուր միակ մտածելիք սովն է, որ արհաւիրք կոտորածներուն պիտի յաջորդէ անարգել, արդի բացարձակ անապահովութեան պատճառաւ ոչ մէկ երկրագործ չի պիտի համարձակի մշակութեան ձեռնարկել, որով սովն աւելի ընդհանուր, աւելի ահաւոր պիտի լինի քան 1879/81»[1]: Թերթի էջերում հաճախ էին տեղ գտնում արտատպություններ օտարալեզու մամուլի էջերից: Այսպես, 1895 թվականի մարտի 15-ին «Սարսափի տիրապետությունը» խորագրով արտատպվել էր անգլիական «Դեյլի թելեգրաֆ» պայթբերականից թղթակցություն, որում ճշմարտացիորեն է նկարագրվում Հայաստանում առկա իրավիճակը. «Թրքական Հայաստանի կացութիւնը, շաբթէ շաբաթ, մինչեւ իսկ օրէ օր աւելի տագնապայոյզ կը դառնայ: Ամբողջ միւսլիման ժողովուրդը կրօնամոլութեան կը գրգռուի իշխանութիւններին աչքին առջեւ և քրիստոնեաները սարսափահար կը մնան բառի ամբողջ նշանակութեամբ»[2]: Ավելորդ է ասել, որ օտարերկրյա լրագրողներն ու հասարակական ակտիվիստները, ովքեր չէին վաճառել իրենց խիղճն ու մարդկային արժանապատվությունը սուլթանական ոսկու դիմաց, քաջ պատկերացնում էին, թե իրականում ինչ է տեղի ունենում Արևմտյան Հայաստանում:

1896 թ. փետրվարի 5-ին «Մալաթիաէն գոյժեր» վերնագրված թղթակցության մեջ նշվում է, որ հայոց Մալաթիան ևս

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1895 թ., թիվ 68:

զերծ չի մնացել սուլթանի անողոք հարվածից: Մալաթիա քաղաքում թուրքերից ու քրդերից զատ շուրջ 3000 հայոց տուն կար, որոնց զգալի մասը զոհ գնաց կոտորածներին: Ականատեսը այսպես է բնութագրում դժնդակ կացությունը. «Հազա՛ր երանի կուտանք մեռածներուն, որք չեն լսեր մանուկներուն և կիներուն կոծն ու հառաչանքը: Մեր տուներուն մէջ ունեցած մէկ տարուն ուտելիքի պաշարնիս յափշտակեցին վայրենի թուրքերը: Հիմա ալ մուրացկանութիւնը ձեռք առինք: Երբոր տաճիկ դրացիներուն կերթանք մուրալու, որոնց ունեցածը երկու երեք օր առաջ մերն էր, կուտան մեզի մեր կովերուն ուտելու համար պատրաստուած թեփը, որ յափշտակեր տարեր են»[1]: Սա էր իրական, սպառիչ ճշմարտությունը: Եվ դեռ այսքանից հետո խտացած սույն համեմատությունն է արվում, թե «... Մալաթիաի ծառերը գրիչ ըլլան և Մուրատ գետը մելան ըլլայ դարձեալ չբաւեր եղածները գրելու»[2]:

Նույն այդ համարում թարգմանաբար հրապարակված էր Անգլիայի մայրաքաղաքի քաղաքական ակումբներից մեկում լորդ Սոլսբերիի արտասանած ճառից հատվածներ, որում դառն իրականության հետևյալ դառն զգացողությունն է. «Պէրլինի դաշնագրի 61-րդ յօդուած խմբագրութեան մասնակցեցայ ես. բայց երբէք չէի կրնար հաւանիլ երկիրը այնպիսի վտանգաւոր ձեռնարկի մը մէջ քշել տանելու, ինչպէս է սուլթանին ստիպելը որ լաւ կառավարէ երկիր մը, որը լաւ կառավարելու տրամադիր չէ ինք»[3]:

---

[1] «Արմենիա», 1896 թ., թիվ 53:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

1895-96 թթ. թերթը «Տեղեկագիր» խորագրով նյութեր էր տպագրում Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր խոշոր կենտրոններից և տեղեկացնում հայոց կրած կորուստների մասին: «Տեղեկագիր Խարբերդէն» թղթակցության մեջ մանրամասն նկարագրվում են Խարբերդի շրջանի հայկական բնակավայրերում կատարված խժդժություններն ու կոտորածները: Ընդորում շատ բնութագրական է հետևյալ հարցականը. «Շատ կարելի է որ խորհիք թէ հայերը պէտք էր դիմադրէին. բայց ինտո՞ր դիմադրէին, իրենք անպատրաստ էին և անզօր»[1]: «Տեղեկագիր Զեյթունէն» նյութը անդրադառնում է Զեյթունի իրադարձություններին, ընդսմին նշելով, որ Զեյթունի անունը ծանոթ է ամեն մի հույի և զեյթունցիք իրենց պատերազմիկ բարքերով, քաջ և ըմբոստ բնավորությամբ հաճախակի են պատերազմել թուրքական կառավարության դեմ և դեռ «... իրենց վերջին պատերազմի, 1878-ի քաջագործութեան յիշատակները թարմ կը մնան ամեն հայի մտքին մէջ»[2]:

Պնդում է արվում, թե «թիւրք զօրքերը Զեյթունի առջեւ մի մեծ պարտութիւն կրել են: Լուր կայ նաեւ թէ 5-600 հոգէ բաղկացած հայկական 2 խմբեր որոնք զեյթունցիների օգնութեան կերթային, Զեյթունը պաշարող թիւրք զօրքերի կողմէն նեղն են ինկեր»[3]:

«Տեղեկագիր Տիգրանակերտէն» թղթակցությունը մանրամասն բացահայտում է կոտորածների դինամիկան ու կազմաբանությունը վերոնշյալ վայրում:

---

[1] «Արմէնիա», 1896 թ., թիվ 51:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Եվ ինչպես միշտ, պատկերը ընդհանրական և տիպական է, հար և նման Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում ու բնակավայրերում տեղի ունեցածին: Թուրք և քուրդ բարբարոսները գործել են նախապես մշակված նույն սխեմայով և սցենարով. «Մզկիթնեյէն ելնելով զէն ի ձեռին յարձակեցան իրենց առաջին հանդիպած քրիստոնէից վրայ. սուրով, տապարով ու կացինով ջարդուփշուր մարտիրոսեցին և հետզհետէ գազանաբար ցրուելով ձեռք ձգածնին ոչխարի պէս մորթեցին և կամ ողջ-ողջ կախեցին մսավաճառներու կեռերէն, ջարդեցին հայհոյելով զՔրիստոս և ոռնալով Մուհամմէտի սալավաթը»[1]:

Ահա այսպիսի սոսկալիորեն ճշմարիտ նկարագրություն, որում ոչինչ չափազանցված չէ, ոչինչ արհեստականորեն հորինված չէ: Այս և այլ բազմաթիվ այլ փաստեր, նկարագրություններ, վկայումներ անառարկելի են դարձնում այն ճշմարտությունը, որ 19-րդ դարավերջին թուրք վայրենին դեռևս չէր բարձրացել ենթամարդի սաստիճանից և առաջնորդվում էր քարայրային բնազդներով ու հոտառությամբ:

Եվ նորից աներկբա հիշատակում և վկայություն այն մասին, որ այս ամենը նախօրոք պլանավորված և կազմակերպված է եղել վերևներից, իշխանության բարձր մարմինների կողմից. «... Միևնույն ժամանակ քաղաքիս կառավարութիւնն ալ կը գործէր. փոլիսներէն, ժանդարմաներէն և զօրքերէն մաս մը ուղղակի աջակից էին խուժանին և ժանտարմաներու. Ալայ պաշի

[1] «Արմէնիա», 1896 թ., թիվ 54:

Ազիմար փաշան ալ խիստ զբաղեալ էր ոսկերճինայի թանկագին աւարով»[1]:

Եվ կրկին ականատեսի ուղղակի վկայությունները հաստատում են, որ հայոց ջարդերին քրդական խաժամուժի ակտիվ մասնակցությունը պայմանավորված է տեղական իշխանությունների ուղղակի, անմիջական հրահանգավորմամբ:

Եվ երբ զորանոցից փողը հնչեց «երկչոտ քուրդը խոյս տալ կը պատրաստուէր կարծելով որ զօրաց հրաման կը տրուի աւերումը դադարեցունել. գիտակից թուրքեր (այսինքն՝ իրադրությանը քաջատեղյակ – Ա. Կ.) ու աջակից զինուորներ կը պոռան. «Ո՞ւր, կեցցէք, մի՛ փախչիք, կրակի փող է, կրակ տուէք, կրա՛կ խանութներուն» և աւերիչներու բուռն ջանքերով ու կազերու շնորհիվ վայրկենաբար բոցերը բարձրացան բազմաթիւ շուկաներէ»[2]:

Նույն այդ համարում «Բալուէն գոյժեր» խորագրով տրված է Բալու քաղաքից դեպի հարավ-արևելք ընկած Սրին և Պաղին հայաբնակ գյուղերի ավերումն ու բնակչության ջարդը թուրք և քուրդ խուժանի ձեռքով:

«Արմենիայի» էջերում հաճախակի տեղեկություններ էին հաղորդվում Վան քաղաքում և Վանի նահանգի գյուղերում տիրող իրավիճակի վերաբերյալ:

1896 թ. փետրվարի 12-ին «Նամակ Թիւրքաէն» խորագրով նկարագրված է Վանի նահանգի մի շարք գավառներում ու գավառակներում տեղի ունեցած ողբերգական իրադարձություն-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ները ականատեսների աչքերով: Հստակ ընդգծվում է այն միտքը, որ ի տարբերություն այլ երկրամասերի, Վանի նահանգում համիդյան ասպատակության գլխավոր երևույթը «աւարառութիւնն եղաւ. այս անգամ աւելի յարմար տեսան անօթութեամբ և ցրտով մահացունել քան թէ սրով»[1]: Տեղեկացվում է, որ կոտորածների ընթացքում Վանի շրջանի ավերված բնակավայրերի թիվը հասնում է 257-ի՝ շուրջ 8600 ավարառված, ալան-թալանի մատնված տներով: Մինչև իսկ «հողին մէջ թաղուած պանիրները, իւղերը դուրս հանուելով տարուեցան կամ թափուեցան շների առջեւ»[2]: Կողոպտված, լիովին քանդուքարափ եղած գյուղերի բնակչության մի մասը ճարահատյալ ապաստանել է Վան քաղաքում, մի մասն էլ «դրացի գիւղերի մէջ ապաստանած են, իրենց ծանօթների կամ ազգականների մօտ»[3]:

Պարբերականի էջերում լուսաբանվեցին 1896 թվականի հունիսի սկզբներին Վան քաղաքում տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերը, որտեղ հայոց մի բուռ քաջեր հավասարը հավասարի պես մարտնչեցին թուրքական կանոնավոր զինուժի և նրան միացած բազմահազարանոց քրդական խաժամուժի դեմ:

---

[1] «Արմենիա», 1886 թ., թիվ 55:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ՍԱՍՆՈ 1904 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԵՎ ՋՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԻ ՄԱՍԻՆ

XX դարասկզբին թուրքական իշխանությունները իրենց ուշադրությունը և զգալի ուժեր կենտրոնացնում են իր ըմբոստությամբ վաղուց ի վեր հայտնի Սասունի վրա: Երկու կողմերն էլ. և հայ հեղափոխականները, և թուրքական կառավարությունը մեծ նշանակություն էին տալիս Սասունին: Հայտնի է, որ հայկական ազատամարտի պատասխանատուները որոշակի ուժեր կենտրոնացնելով այնտեղ, ձգտում էին ապստամբության միջոցով հասնել գլոբալ նպատակների իրագործման: Սակայն օսմանյան իշխանությունները, որոնք քաջատեղյակ և աչալրջությամբ հետևում էին Սասունի ու նրա շուրջը կատարվող անցուդարձին, չէին կարող հանդուրժել, որպեսզի կայսրության ներսում ձևավորված ապստամբական օջախը առավելագույնս պատրաստվեր ու հզորանար[1]:

Ողջ հայությունը բնազդով և հուզումով զգում էր այն կարևոր, վճռորոշ պահն ու նշանակությունը, որ ստացել էր Սասունը հայոց ազատամարտի հետագա ընթացքի համար: Հայկական պարբերականները իրենց հայացքը հառած ըմբոստ, հերոսական Սասունին, իրավացիորեն պնդում էին, որ հենց այստեղ է որոշվելու հայոց ազգային-ազատագրական շարժման ապագան: Անօրինակ ոգևորության պայմաններում ձոներ ու կեցցեներ են հնչում Սասնո ապստամբների հասցեին և ծավալում

---

[1] Տե՛ս **Գևորգյան Հ.**, Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012 թ., էջ 179:

նրան օգնելու, սատար կանգնելու շարժումը: Սակայն օդում թևածող ոգևորությունը և ռեալ, դժնի իրականությունը շատ էին տարբերվում իրարից: Սասունը ոչ միայն ոգեղենության ու ոգեշնչումի ազդակ էր հայության համար, այլև շուտով պիտի վեր հաներ հայկական իրականության տխուր և անիծյալ պատկերը: Հայկական ազատամարտի ուժերը սակավ, թույլ ու տկար էին օսմանյան բռնապետության դեմ հաղթանակ տանելու համար:

Թուրքական կառավարությունը 1904 թվականի գարնանամուտին սկսեց իր վճռական արշավը Սասունի ըմբոստ ժողովրդին պատժելու, ապստամբ օրրանը հիմնահատակ քանդելու և ավերելու ուղղությամբ: Բացի 10 հազարանոց կանոնավոր բանակից, թուրքական զինուժին միացավ բազմահազարանոց քրդական խաժամուժը:

Սկսվեց Սասնո հայության հերոսական ու ողբերգական էպոպեան: Պարբերականի էջերում արժանապատվությամբ լուսաբանվեց Սասնո գոյամարտը: «Արմենիան» այն պարբերականների թվում էր, որոնք սկզբից ևեթ բացառիկ ուշադրությամբ և հետևողականությամբ հետևում էին Սասունում և նրա շուրջ ընթացող իրադարձություններին, ոչ միայն տեղերից ուղարկված, այլև տեսական ու վերլուծական նյութերով կանխատեսումներ անելով ապստամբական շարժման հնարավոր զարգացումների և հետևանքների շուրջ: Սասունի իրադարձությունների հետ կապված պարբերականի էջերում վերստին պարզորոշ հստակությամբ մերկացվեցին սուլթանական կառավարության պլանավորած հայաջինջ քաղաքականության կոնկրետ դրսևորումները:

1904 թ. օգոստոսի 13-ին թերթը ահազանգ էր հնչեցնում Սասունում տիրող սպառնալից իրավիճակի վերաբերյալ, հայտնելով, որ «Սասունի աւերակ գիւղերը վերադարձող հայերն այժմ սոսկալի սովի մը ենթարկուած են: Կառավարութիւնը որոշեր է 8 զօրանոց շինել Սասունի մէջ և հայ գիւղացիների թողած հողերը քիւրտերին տալ»[1]: Ընդգծվում է, որ ժողովուրդն «անձկութեամբ կը սպասէ եւրոպական դեսպանների միջամտութեան: *Հակառակ պարագային մէջ, իրենց կը մնայ գաղթել Սասունէն կամ կռիւը շարունակել ցմահ»*[2]:

Խստագույնս քննադատության է արժանանում եվրոպական պետությունների բռնած կրավորական դիրքորոշումը Սասունի ողբերգական իրադարձությունների հանդեպ:

1904 թ. օգոստոսի 27-ին թերթը խստիվ նշավակում է Ռուսաստանի որդեգրած նենգամիտ քաղաքականությունը հայ ժողովրդի արյունով լեցուն ներկայի հանդեպ. «Ռուս քաղաքականութիւնը այդ մասին այնպիսի դիրք մը բռնած է *որ ոչ զգացման եւ ոչ նոյնիսկ հասարակ մարդասիրութեան հետ կապ մը ունի,* այլ Ս. Բէդէրսպուրկի մէջ տիրող գաղափարներին համեմատ պէտք է հայերն այնպիսի կացութեան մէջ դնել որ ստիպուին... կամ իբրև ազգ և իբրև անհատ հետզհետէ մեռնիլ ու ոչնչանալ կամ նետուիլ Ռուսիաի բազուկներին մէջ և բոլորովին անոր յանձնուիլ առանց վերապահութեան, առանց որևէ պայմանի»[3]: Քրիստոնյա տերությունները մարդասիրությունից զուրկ վերաբերմունք դրսևորեցին նաև այս անգամ, երբ թուր-

---

[1] «Արմէնիա», 1904 թ., թիվ 2,

[2] Նույն տեղում:

[3] «Արմէնիա», 1904 թ., թիվ 4:

քերի վրեժխնդրության զոհասեղանին էր դրվել Սասունի և Մուշի հայությունը: Հազարներով մարդիկ էին կոտորվում, ամբողջ գյուղեր ու գավառներ ավերվում, կատաղած թուրք և քուրդ հրոսակները դեռևս սպառնում էին ոչնչացնել և գետնին հավասարեցնել այն ամենը, ինչ դեռ կանգուն էր, իսկ եվրոպական ու ռուսական որոշ պարբերականներ ակնհայտ քամահրանքով էին արտահայտվում հայ ժողովրդի այդ մեծագույն ողբերգության վերաբերյալ[1]:

Պաշտոնական Եվրոպայի անպատիվ ու զազրելի ընթացքն ու գործելակերպը դատապարտելով, կրկին ու կրկին շեշտադրվում է, որ ոչ թուրքի չեղած բարյացակամությանը ապավինելը և ոչ էլ օտար միջամտության վրա հույսեր փայփայելն ու այդ հույսերով օրորվելը չեն կարող հայոց առօրյա-ամենօրյա դժնդակ իրավիճակում որևէ բան փոփոխել:

Ուրեմն, կյանքի և պատվի այդ հուսահատ կռվի մեջ «միմիայն սուր, հրացան չեն որ մեծ գործ կը տեսնեն. ամէն բան և միջոց, որոնք իրենց փրկության և թշնամիի տկարութեան յոյսը կը շատցունեն, զէնքեր են, զորոնք չպէտք է անտեսել և արհամարհել»[2]: Այս առումով թերևս չափազանցված չէ այն դիտարկումը, որ կատուն անգամ մահվան գոտեմարտի մեջ առյուծի կատաղություն կստանա: Ուստի, ինքնապաշտպանության անվիատ ճիգերով պետք է դուրս գալ ահավոր ու մահացու վտանգի դեմ, քանզի «... մեր պզտիկութեան հակառակ, պզտիկ ոյժ մը չենք սակայն, եթէ միայն մեզի ճանչնանք»[3]: Ակնդետ

---

[1] Տե՛ս Положение армян в Турции..., էջ 430-431:

[2] «Արմէնիա», 1904 թ., թիվ 5:

[3] Նույն տեղում:

հետևելով Սասունի շուրջ ընթացող իրադարձություններին, հրապարակվում էին երկրից և տարբեր գաղթավայրերից ուղարկվող տագնապալից թղթակցություններն ու ակնարկները: Սեմաֆոր անունով հանդես եկող մշտական թղթակիցը «Մինչև ե՞րբ...» հրապարակման մեջ հարցադրում է հետևյալը. «Դեռ հազիւ հազ մեր յիշողութեան արիւնազանգ պատկերները մոռացութեան հովերուն տուած՝ կաճապարէինք պահ մը ազատուիլ այդ դառնակսկիծ տեսիլներէն... ահա Սասունը իւր քարուքանդ վիճակով, և Մուշը իւր շրջակայ աւերուած գիւղերով բնակիչներէն ամայացած... ասդին փլատակներու տակ հայ դիակներ կը ջախջախուին»[1]: Հիշեցվում է, որ 1894 թ. Սասնո ընդվզումից, հայկական բնակավայրերի գազանային ջարդերից ու ավերից անցել էր ընդամենը 10 տարի:

Եվ տասնամյա սրընթաց «ժամանակամիջոց մ՚ ետք այս բարբարոսութեանց եւ գազանակենցաղ աշիրէթներու անլուր վայրագութեանց կրկնութիւնը, հայաշէն վայրերու հաջորդաբար մոխիրներու վերածուիլը մինչև ե՞րբ պիտի տևէ»,– պատմությանն ու սերունդներին ուղղված հարցում է անում պարբերականը[2]:

1904 թ. սեպտեմբերի 28-ին «Տարօնի արկածեալներին համար» հաղորդագրությունը տեղեկացնում էր, որ ջարդերի ու ավարությունների հետևանքով որբացածների ու տկարացածների վիճակը բարվոքելու համար «յանձնաժողով մը կազմուած է Բարիզի մէջ հետևեալ հայասէր ֆրանսիացիներէ. Տիարներ է.

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 7:

[2] Նույն տեղում:

Պէրզլո, Է. Լավիս, Միշէլ Պրէալ, Ա. Պրիան, Ֆրանսիս տը Բրէսանսէ, Բիէռ Գիյառ...»[1]:

1904 թ. հոկտեմբերի 5-ին թերթը հրապարակել էր Ամենայն հայոց կաթողիկոսի խնդրագիրը՝ կապված կոտորածներից հետո ստեղծված տագնապալից իրավիճակի և աղետյալներին անհապաղ օգնություն տրամադրելու խնդիրների հետ և որի պատճենը պիտի մատուցվեր «Պերլինի դաշնագիրն ստորագրած իւրաքանչիւր տէրութեան, ինչպէս նաև տրուեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգների նախագահ Տ. Ռուզվէլդին»[2]:

1904 թ. Սասնո ապստամբությունը դառնության մրուրը մինչև վերջ ըմպած ժողովրդի անելանելի վիճակի վերջին հուսահատական ու հերոսական ճիչն էր: Ֆիդայի զորավարները՝ Անդրանիկը, Գևորգ Չաուշը, Քեռին, Մուրադը, Կայծակ Առաքելը, Սեպուհը, Գայլ Վահանը քաջարի լեռնականների հետ երկու ամիս շարունակ մարտնչեցին թուրք և քուրդ ջարդարարների դեմ: Սակայն ուժերն անհավասար էին և ապստամբության ղեկավարները բռնեցին նահանջի ուղին: Սասնո կռիվների ահեղ բոցերի մեջ առասպելական փառք ու անուն վաստակեցին հատկապես Գևորգ Չաուշն ու Անդրանիկը:

Այնքան մեծ և ուժգին էր հնչում Սասնո կռիվների անզուգական հերոս Անդրանիկի (Անդրանիկ Օզանյան) փառահեղ անունը, այնքան բարձր ու տիրական էր նրա կերպարը, որ ոչ միայն հայ, այլև օտարալեզու լրատվամիջոցներում նրան վերագրում էին անհավանական դիրք ու քաջագործություններ:

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 9:
[2] «Արմենիա», 1904 թ., թիվ 10:

Այսպես, 1904 թ. սեպտեմբերի 14-ին «Արմենիան» տպագրեց «Հայ խմբապետ Անդրանիկ տիրեց Վանին» խորագրով ծավալուն նյութ: Նախաբան խոսքում առնված էր «Հավասի» ինֆորմացիոն գործակալության հետևյալ հաղորդագրությունը. «Հայ խմբապետ Անդրանիկ տիրեց Վանին: Սաստիկ վախ զոյացաւ: Զորքեր ղրկուեցան քաղաքը յետ առնելու համար»[1]:

Թերթը ոչ հերքում և ոչ էլ հաստատում է վերոնշյալ տեղեկությունը, գրելով, թե «Մինչև այժմ ուրիշ կողմէ լուրեր եկած չեն սոյս հեռագիր հաստատող կամ մանրամասնութիւններ հաղորդող. ուստի չգիտենք թէ տիրել (S'em-parer) բառն ի՞նչ պէտք է հասկանալ այստեղ. իր ընդարձա՞կ նշանակութեամբ թէ սահմանափակ սեղմեալ իմաստով»[2]:

Ըստ պարբերականի, եթե Անդրանիկը մտել է Վան և իր ներկայությամբ սարսափ էր տարածել քաղաքում, իր խմբի և զորքերի միջև «ընդհարումներ պատահեր են, այդ ալ մեծ գործ է»[3]: Սակայն Վանի պես ըմբոստ ու ազգային-հեղափոխական ավանդներ ունեցող քաղաքի համար դա անսովոր դեպք չէ, քանզի պետք է հիշել «... 1896-ինը որ ամէնին գիտցածն է, երբ հայեր, առանց կուսակցական խտրութեան իրար հետ միացած, դիմադրեցին նոյն իսկ թիւրք զօրաբանակի թնդանօթներին և 8 օրի չափ Վան գրէթէ հայ յեղափոխականների իշխանութեան ենթարկուեցաւ»[4]:

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 7:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Իսկ եկեղ այս անգամ Անդրանիկ զորավարն իրապես տիրել է Վանին՝ «տիրել» բառի բուն և ընդարձակ նշանակութեամբ, այսինքն քաղաքի «կառավարութիւնն իր ձեռք անցուած է վալին և պաշտօնեայներ պաշտօնանկ հրատարակելով, մեր ժամանակակից յեղափոխական կեանքին մէջ դեռ բնաւ պատահած երևոյթ մը չէ այդ, ամենամեծ գործ մը որ Անդրանիկի ուրիշ գործերին պսակը պիտի լինի»[1]: Սակայն պարբերականի համար դժվարահավատալի էր թվում այդպիսի մի մեծ գործի իրականացումը, որքան էլ այն փափագելի և ոգևորիչ էր, հաշվի առնելով հայ ժողովրդի ներկա կացությունն ու այլ հանգամանքներ:

Բայց հավատալ պետք է, քանի որ հեղափոխական սխրալից գործունեությունը «կրնայ երբեմն հրաշքներ, կամ թէ ըսենք անակնկալներ ալ գործել, թէև հրաշքը չի մտներ մեր մարդկային հաշիւների մէջ»[2]:

Անդրանիկի վերաբերյալ այս լուրերը, որքան էլ չափազանցված լինեին, այնուամենայնիվ, ցույց են տալիս, որ անվանի հայդուկապետն արդեն այդ օրերին այնպիսի համբավի էր արժանացել, որ նրա անվան հետ էին կապում նաև անհավանական թվացող ձեռնարկներ, և որի մասին ակնարկում էին աշխարհի առաջատար լրատվական գործակալությունները:

«Արմենիան» հաջորդ համարներում ևս անդրադարձ է կատարում սույն թեմային: Արտատպված էր Կ. Պոլսից «Սեմաֆոր»-ի թղթակցի այն թղթակցությունը, թե տարօրինակ բաներ տեղի կունենան Հայաստանի մեջ և բոլորովին երկյուղ կա, որ

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

կառավարությունը մոլեռանդների ճնշման ներքո, «կամայակամայ մղուի 1896-97-ի արիւնահեղ դէպքերի կրկնութեան: Անդրանիկ, այդ խմբապետ, որի Սասունի լեռների մէջ գտնուելու ենթադրութիւնը վերջերս պատրուակ եղաւ այդ կողմեր աւերակ դարձնող կոտորածներին, կերեւի թէ յանկարծական յանդուգն արշաւանք մ ըրած է... Գոնէ այսպէս կը պատմուի այստեղ կառավարական շրջանակներին մէջ»[1]: Այնուհետև ասվում է, որ Անդրանիկին ներկայացվող այս շահատակությունները պարզապես պատրվակ են կրկնելու այն դաժանությունները, որը թուրք իշխանությունների կողմից վարձած ջատագով կեղծ գրչակները անվանում են «անողորրութիւնը պահպանելու համար հայրախնամ հոգածութիւն մը»[2]:

Այստեղ նկատի է առնվում պատմական դասերը, երբ թուրքական իշխանությունները բազմաթիվ գյուղեր էին ավերում և հրկիզում՝ մեկ կամ մի քանի ֆիդայիների հետքը գտնելու և չեզոքացնելու համար:

1904 թվականի Սասնո ապստամբությունը հայ ժողովրդի ևս մեկ քաջարի, դյուցազնական ճիգն էր՝ ոչ ասելու թուրքական բռնապետությանը: Սակայն այն ցանկալի արդյունքի չհանգեցրեց, քանզի ուժերն ու հնարավորությունները խիստ անհավասար էին, իսկ հայ ժողովուրդը չստանալով միջազգային հանրության որևէ կարգի աջակցություն, մնաց միայնակ և անօգնական՝ վիթխարի ուժ ունեցող օսմանյան կայսրության դեմ զինական առճակատման ընթացքում:

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 8:

[2] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ IX
ՀԱՆՈՒՆ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԻՆՉՔԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Քսաներորդ դարի սկիզբը նս աղետաբեր եղավ համայն հայության համար: Ողջակիզվող Արևմտյան Հայաստանից պայքարի ծանրության կենտրոնը տեղափոխվում է դեպի Արևելյան Հայաստան: Պայքարի, ընդվզումի և մաքառումի նոր ճակատ բացվեց ընդդեմ ցարիզմի ու ցարական բռնապետության:

Ցարական կառավարության ազգահալած, հակահայ քաղաքականությունը հատկապես Կովկասի կառավարչապետ (փոխարքա) Գոլիցինի օրոք ընդունեց ահավոր ու սիստեմատիկ բնույթ: Վերջինս Կովկասի կառավարչապետ էր նշանակվել 1896 թվականին: Հենց սկզբից նա քայլեր ձեռնարկեց հայ եկեղեցու իրավունքները սահմանափակելու և հայոց կրթական հաստատությունների գործունեությունը ամբողջապես վերահսկելու նպատակով: Ռուսման ոլորտում, ինչպես Հայաստանում, այնպես էլ ռուսական գաղթավայրերում ցարական ռեակցիոն իշխանության վարած հակազգային քաղաքականության հետևանքով լուրջ դժվարություններ ստեղծվեցին հայկական կրթօջախների հետագա գոյատևման համար: Դեռևս 1885 թ. փակվեցին հայկական եկեղեցական-ծխական դպրոցների մեծագույն մասը: Եկեղեցուն կից 346 դպրոցներից փակվեցին 290-ը[1]: Մի փոքր անց, հալածանքները ավելի ուժգին ձևով

---

[1] Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Ե., 2006 թ., էջ 44:

կրկնվեցին և իրենց օրենսդրական վավերացումը գտան 1897 թ. հունիսին եկեղեցիներին, վանքերին կից ուսումնարանների մասին ընդունված օրենքում[1]: Սակայն առավել խիստ ու դաժան էր 1903 թ. հունիսի 12-ի ցարական հրամանագիրը հայ եկեղեցու և ուսումնարանների ամբողջ գույքը և միջոցները պետականացնելու վերաբերյալ: Հայկական ծխական դպրոցները դրանով իսկ զրկվում էին գոյատևման համար անհրաժեշտ նյութական միջոցներից: Վերոնշյալ օրենքը փաստորեն ուղղված էր ողջ հայ ժողովրդի դեմ, որի միակ պաշտոնական ներկայացուցիչը հանդիսանում էր հայ Առաքելական եկեղեցին: Հայ ժողովրդի նկատմամբ գործադրված այս աննախադեպ բռնությունը առաջ բերեց արևելահայության և արևմտահայության, ինչպես նաև աշխարհի բազմաթիվ գաղթօջախներում ապրող հայերի չափազանց բուռն բողոքը, զայրույթն ու ակտիվ հակազդեցությունը: Հայ հանրությանը այդ օրենքը հայտնի դառնալու պահից սկսվեց ընդդիմադիր լայն շարժում մտավորականության և հասարակական գրեթե բոլոր խավերի մեջ[2]:

Ընդդեմ ցարիզմի բիրտ ոտնձգության բողոքի և ընդվզման հզոր ալիք բարձրացավ ողջ հայաշխարհով: Ժողովրդական ցասումն ընդունեց աննախադեպ չափեր: «Արմենիան» նույնպես բուռն կերպով արձագանքեց հայ եկեղեցու կալվածքների գրավման իրողությանը և ամիսներ շարունակ լուսաբանեց այդ հուզումները, միաժամանակ մերկացնող հուժկու քննադատությամբ դատապարտելով ցարիզմի զավթողական նկրտում-

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

ները հայ եկեղեցու հանդեպ: 1903 թ. օգոստոսի 26-ին թերթը ընթերցողներին հայտնում էր, որ ցարը «հրովարտակ մը հաներ է 1903 յունիս 12 թուականով, որով կը հրամայէ Ռուսիայի մէջ գտնուող հայ եկեղեցիներին, վանքերին, հոգևոր հաստատութիւններին մատակարարութիւնը հայ ազգի ձեռքէն առնել... կը լսենք թէ Վեհ. Հայրիկը վշտահար իր հրաժարական պիտի տայ կաթողիկոսական պաշտօնէն թուլլտուութիւն խնդրէ քաշուիլ երթալ Թիւրքիա Ս. Երուսաղէմի Յակոբեանց վանքը»[1]:

Քննադատությունն ուղղվում է նաև այն հայ գործիչներին՝ հատկապես և մասնավորապես Մ. Չերազի պես մտածողներին, որոնց համար «այս լուր ի հարկէ շատ ծանր տպաւորութիւն մը չունենար որովհետև հայերին ռուսադաւան դառնալուն մէջ ինք մեծ վտանգ մը չէր տեսնէր, յայտարարելով թէ ռուսադաւան հայերն ալ կրնան Ս. Գրիգոր Լուսաւորչի անունին նուիրուած եկեղեցի ունենալ և հոն աղօթել...»[2]:

«Ռուսիայի հայ եկեղեցիների կալուածների գրաւումը» մշտական խորագրի ներքո թերթը սամեն շաբաթ տեղեկություններ էր հաղորդում ընթերցողներին իրադարձությունների վերաբերյալ: 1903 թ. սեպտեմբերի 16-ին բարձր ազդարարվում էր, որ հայ ժողովուրդը գրգռված է անասելի չափերով և անախորժ դեպքեր կարող են տեղի ունենալ ամենուրեք: Դրվատվում է Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի համարձակ, անվախ պահվածքը. «Վեհափառը արի է 30 տարեկան մի անձնուէր երիտասարդի նման»[3]: Նշվում է, որ Օրմանյան պատ-

---

[1] «Արմենիա», 1903 թ., թիվ 21:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1903 թ., թիվ 22:

րիարքը Թուրքիո հայ եկեղեցականների շարժման «գլուխն անցած է բողոքելու համար մեր եկեղեցական հասոյթների վարչութեան գործին մէջ ռուս կառավարութեան ոտնձգութեան դէմ»[1]:

Պարբերականի էջերում տարբեր դիտակետերից քննվում, վերլուծության են տրվում այն վարկածները, որոնք ցարական կառավարությանը մղել են դիմելու վերոնշյալ քայլին: Առաջին վարկածն այն է, որ ռուսաց կառավարությունը «ատով (վերոնշյալ հրամանագրով – Ա. Կ.) հայերը նախ ռուսադաւան դարձունելու և ապա բոլորովին ռուսացնելու նախաքայլն է որ կառնէ»[2]:

Հայ Առաքելական և ռուսական ուղղափառ եկեղեցիների միջև տարբերությունները թվարկելով, նշվում է, որ Հայաստանյանց եկեղեցու կազմակերպությունը ժողովրդապետական է, իսկ ուղղափառ եկեղեցու վարչությունը՝ միապետական: Դա, անշուշտ, այդպես է, քանի որ մեր մեջ հետին գյուղի երեցից սկսած մինչև կաթողիկոսը «ժողովրդէն կընտրուին և ժողովրդի տուրքերովն ու նուէրներովը կապրին. մինչդեռ ռուսական եկեղեցիին մէջ առաջնորդները կընտրուին հոգևոր իշխանութենէն որի գլուխ կը գտնուի ցարը և եկեղեցականներն իբրև կառավարական պաշտօնեայներ թոշակ կը ստանան»[3]: Հենց սույն գլխավոր նկատառումը պարզորոշ վկայում է երկու եկեղեցիների միջև եղած էական տարբերությունը և ռուսաց կառավարության ցույց տված այս «անխտրական նոր հոգածութենէն մեր հայ ազգութեան համար ծագելիք վտանգը. ուստի դիւրահասկնալի է որ Ռուսիա գտնուող մեր ազգակիցներ սաստիկ յուզուած,

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1903 թ., թիվ 23:

[3] Նույն տեղում:

իրենց ազգային և եկեղեցական իրաւունքների բռնաբարման դէմ կը բողոքեն այժմ մեռնիլն աչք առնելով և հայ ժողովրդին ու ռուս զօրքերին միջև այնպիսի ցաւալի ընդհարումներ տեղի կունեան»[1]:

Թերթը կոչ է անում աշխարհի մյուս երկրների՝ Ֆրանսիայի, Անգլիայի, Ամերիկայի, Հնդկաստանի, Պարսկաստանի և այլ վայրերի «հայերն ալ, օրինակ առնելով զէթ Ռուսիաի և Թիւրքիաի հայերէն, որոնք չնայելով իրենց սաստիկ ճնշուած դիրքին, համարձակած են բողոքի ձայն բարձրացունել այս խնդրի համար»[2]:

1903 թ. սեպտեմբերի 30-ին թերթը հրապարակեց Ամենայն հայոց կաթողիկոսի հեռագրերը՝ ուղղված ռուսաց ցարին, Սինոդին, ներքին գործոց նախարար Պլեհեյին, ռուսահայոց թեմակալ առաջնորդներին[3]:

«Օգուտ մը կունենա՞յ» խորագրով խմբագրականում տարակուսանք և քննադատություն է հնչում նրանց հասցեին, ովքեր առաջնորդվում են «ի՞նչ օգուտ ունի մեր բողոքելը» նշանաբանով: Այն համարելով սխալ ու վնասակար տեսակետ, պարբերականի խմբագրությունը գտնում էր, որ անիրավության դեմ պետք է օրինական բոլոր միջոցներով պայքար տարվի, քանի որ աշխարհի որևէ կառավարություն «տկար թէ՛ հզօր, թէ՛ թիւրք լինի այն և թէ՛ ռուս, իրաւունքի ձայնը բացարձակապէս չարհամարհէր, իրաւունքի բռնաբարում մը գործած ատեն կը

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1903 թ., թիվ 24:

ջանայ զէթ արտաքին երևոյթները փրկել... կը խոնարհի իրաւացի ձև մը տալու իր անիրաւ վարմունքին»[1]:

Հենց նման զգացողությամբ ռուսական կառավարությունը «արդարացումի մը փորձ չէ՞ ըրած իր յունիս 12-ի ուքազին համար, աշխատելով ցոյց տալ թէ հայ ազգի օգտին համար է որ այդպիսի նոր կարգադրութիւն մը կընէ»[2]:

Իրավացի է այն համոզումը, որ երբ իր վիթխարի զորաբանակների ուժի վրա «կրթնած հզոր կառավարութիւն մը անգամ նշանակութիւն կուտայ հանրային կարծիքի դատաստանին և «իրաւունք» անուանուած ուժին... ինչո՞ւ մենք արհամարհենք մեր իրաւունք և մեզ պաշտպանելու համար չը ներկայացուենք զայն ամէնքին առջև, քանի որ մեզ պաշտպանելու համար մեր ունեցած միակ ոյժն այդ է»[3]:

Ընթերցողներին լիցքավորելով ազգային արժանապատվության զգացումներով, թերթը համոզված էր, որ դիմումներ և բողոքի գործողություններ անելով, թերևս հույսի մի նշույլ կփայփայենք մեր օրինական պահանջներին և իրավունքներին վերատիրելու հարցում: Իսկ եթե այդ իրավունքները չստանանք անգամ, միևնույնն է, դրանով մենք չենք լինի անպատիվ:

Հետաքրքրական է այն դիտարկումը, որ պատմության ընթացքում հայերն իրենց արյունով և քրտինքով օգնել են ռուսներին Կովկասի, ինչպես նաև Հայաստանի «մէկ մասին մէջ հաստատուելուն, թող ատոր քովիկն ալ արձանագրուի թէ Ռուսաստան ալ ատոր փոխարէն հայերին տուած իր բոլոր խոստում-

---

[1] «Արմենիա», 1903 թ., թիվ 25:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ներ ու յոյսեր ոչնչացունելի զատ, անոնց եկեղեցական կալուածներ զինուորական ուժով բռնի յափշտակեց և մահմէտական տիրապետների օրով անոնց վայելաց եկեղեցական ինքնավարութիւնն անգամ ինքը ջնջեց»[1]: Այո՛, բողոքի և ընդվզումի ալիք բարձրացնելը բոլոր դեպքերում իմաստավորված և արդարացված էր, քանի որ հույսեր էր ներշնչում ոգևորվելու, կյանքի և ապագայի հանդեպ կենսունակությունը պահելու համար և գեթ իբրև բարոյական ու պատմական փաստ այն կծառայեր հետագա սերունդներին:

Ինչ-որ տեղ հույսեր էին փայփայվում Նիկոլայ II ցարի բարյացակամության հանդեպ: Համենայնդեպս, այդ է վկայում այն դիտարկումը, թե ցարը ծանոթանալով այս գործի բոլոր հանգամանքներին, հազիվ թե հաճություն տա այսպիսի «*տարօրինակ հափշտակութեան մը որ թիւրքերն անգամ չեն ըրած մեզ 500 տարիներէ՛ի վեր. իրաւ է թէ այս կամ այն եկեղեցին կոդոպտած են, բայց մեր բոլոր եկեղեցիների կալուածներն իրենց ձեռք չեն անցուցած, իրենք զանոնք կառավարելու յաւակնութիւնը չեն ունեցած*»[2]: Այս բնութագրիչ ենթատեքստով հուշվում է, որ բարբարոս թուրքերը այս կարգի զարհուրելի ոճիր դեռևս չեն իրագործել հայության դեմ:

Բավարար չափով լուսաբանվում էր բողոքի ու ըմբոստության այն հզոր շարժումը, որն սկսվել էր ամենուրեք ԱՄՆ-ի հայաշատ նահանգներում, Եգիպտոսի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հնդկաստանի, Պարսկաստանի հայոց գաղութներում: Տեղե-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ից թղթակցություններ էին ուղարկվում, որով մանրամասն նկարագրվում էին հատկապես Ռուսաստանի հայաշատ բնակավայրերում տեղի ունեցող ցույցերն ու ընդհարումները:

1903 թ. հոկտեմբերի 14-ին հրապարակվեց հունիսի 12-ի ցարական հրամանագրի (ուքազ) ամբողջական տեքստը արտատպված Թիֆլիսի հայկական պարբերականներից: Կից նախաբանում նշվում է, որ ցարական գրաքննությունը «չէ թոյլատրած այդ թերթերին ոևէ նկատողութիւն ընել անոր վրայ», իսկ Պետերբուրգի և Թիֆլիսի ռուսերեն կիսապաշտոնական թերթերում հոդվածներ են հրապարակվել «այնպէս ցոյց տալու հայերին որպէս թէ ռուս կառավարութիւնը կը փափագի հայ լուսաւորչական եկեղեցիի բարգաւաճմանը նպաստել և ատոր համար անոր կալուածներն ու հասոյթներն ինք գրաւելով պիտի աշխատի կարգ ու կանոն մտցունել անոր մատակարարութեան մէջ»[1]: Դիպուկ է ասվում, որ պետք է բոլորովին կույր լինել վերոնշյալ խոսքերին հավատալու և թաքնված բուն նպատակը չտեսնելու համար:

Նույն այդ համարում տպագրվել էր Ռուսիայի ներքին գործոց նախարարի ազդարագիրը ուղղված Վեհ. կաթողիկոսին, որում նշվում էր, որ հայ եկեղեցու գերագույն ներկայացուցիչները առաջին անգամ չէ, որ շեղվում են Բարձրագույն կամքի անհապաղ իրագործումից, այսինքն կատարում են հավատարիմ հպատակության ամենածանր պարտազանցություն: Նույն հեռագրում նշվում է, որ կայսրը մերժում է կաթողիկոսի

[1] Նույն տեղում:

խնդրանքը՝ անձամբ նրան ներկայանալու և բացատրություններ տալու[1]:

Թղթակցություններ էին զետեղված «Ռուս կառավարությունը զօրքերով պաշարած է Ս. Էջմիածնի վանքը» և «Կարսի եկեղեցիների կալուածների գրաւումը» վերնագրերով[2]:

1903 թ. հոկտեմբերի 28-ին ընդարձակ ակնարկ էր տպագրվել Էջմիածնի գանձարանի և գույքերի բռնի գրավման գործողության վերաբերյալ, որում հիացմունքով էր խոսվում Վեհափառի քաջարի պահվածքի մասին: Վերջինս մի քանի անգամ կտրուկ մերժողական պատասխաններ էր տվել հայոց եկեղեցապատկան կալվածքները ցուցակագրող հանձնաժողովի նախագահ, իշխան Նակաշիձեին և նրա անդամներին:

Շեշտադրվում է կաթողիկոսի վճռական պատասխանը. «Այն կաթողիկոս որ կոնդակներով և բերանացի հրամաններով ստիպում է իր ստորադրեալներին մասնակից չլինել յանձնման գործողութիւններին, ի՞նչպէս կուզէք որ նա ձեզ Գանձարան յանձնէ: Դարձեալ կը կրկնեմ. ո՛չ ես և ո՛չ ալ իմիններս որևէ մասնակցութիւն չպիտի ունենանք յանձնելու գործում: Այս է իմ վերջին խօսք»[3]:

Սույն միջադեպը տեղի է ունեցել 1903 թ. սեպտեմբերի 15-ին, երբ իշխան Նակաշիձեի գլխավորած հանձնաժողովը ներկայանում է Վեհափառին, գանձարանի բանալիները ստանալու նպատակով:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] «Արմէնիա», 1903 թ., թիվ 28:

Իսկ առաջին անգամ՝ նույն թվականի սեպտեմբերի 5-ին վերոնշյալ հանձնաժողովի հետ հանդիպման ժամանակ կաթողիկոս Խրիմյան Հայրիկը հետևյալ կերպ է հիմնավորել իր վարքագիծը. «Ես հաւատացած եմ որ Նորին Կայս. Մեծութիւն... կը վերցնէ դառնութեան այս բաժակ որ կախուած է այսօր 3 միլիոն հայ ժողովրդի գլխին. և ես իբրև աւանդապահ կը մնամ հազարամեայ սեփականութեանց Աստուծային տաճարին որ ընծայաբերուած է հայ ժողովուրդին... և այսօր իսկ աշխարհի ամէն կողմից հայեր ինձ դիմելով իրենց ներկայացուցիչների միջոցաւ, պատրիարք, եպիսկոպոս, առաջնորդ և ժողովուրդ կը խնդրեն ինձ միջնորդել առ թագաւոր-կայսրն անխախտ թողնելու իրենց եկեղեցու դարաւոր իրաւունքներ»[1]: 1903 թ. հոկտեմբերի 21-ին «Հայերը ռուսացնելու նախսաքայլեր» նյութում հաղորդվում է, որ լուրեր կան, թե Ռուսիայի ներքին գործոց նախարարից հրամանագիր է եկել հայոց կաթողիկոսին, ըստ որի այսուհետև «հայ եկեղեցիների մէջ Ս. պատարագի ատեն Ռուսիաի կայսրի և կայսերական գերդաստանի երկարակեցութեան համար ըսուած աղօթքը ռուսերէն լեզուով պէտք է ըսուի»[2]:

Ռուսականացմանն ուղղված քայլեր են համարվում նաև այն, որ հայերը քաղաքային և զինվորական ատյանների առջև «իրենց օրինական երդումը պէտք է ռուսերեն լեզուով և ռուս քահանային միջոցով կատարեն»[3]:

Նույն համարում «Կովկասի կառավարչապետի մէկ նոր հրամանագիրը» թղթակցության մեջ նշվում է, որ Կովկասի կա-

---

[1] Նույն տեղում:
[2] «Արմէնիա», 1903 թ., թիվ 27:
[3] Նույն տեղում:

ռավարչապետ իշխան Գոլիցինը նոր հրամանագիր է ստորագրել, որով գրեթե պաշարման վիճակի են ենթարկվել Կարս, Գանձակ, Շուշի և Նուխի քաղաքները: Շատ անձերի մեկտեղ հավաքվելն արգելված է և եթե հրապարակային վայրերում «բազմութեան մէջ գտնուողներն ոստիկանների հրամանին անմիջապէս հնազանդելով չցրուին, 3 ամիս բանտարկութեան կամ 500 ռուբլի տուգանքի պիտի դատապարտուին»[1]: Պաշարողական վիճակը վերաբերվում էր ոչ միայն վերոնշյալ քաղաքներին, այլ Արևելյան Հայաստանի և Կովկասի սահմաններում ապրող ամբողջ հայ ժողովրդին: Պարտքի տակ չէին մնում հայ վրիժառուները: 1903 թ. հոկտեմբերի 14-ին հնչակյանները մահափորձ իրագործեցին հայատյաց Գ. Գոլիցինի նկատմամբ: Հայադավ պաշտոնյան թեև դաշունահարվեց, սակայն հրաշքով կենդանի մնաց: Այնուամենայնիվ նա հեռացվեց պաշտոնից, նոր փոխարքա նշանակվեց ավելի խոհուն ու լրջմիտ գործիչ Ի. Վորոնցով-Դաշկովը, որը անմիջապես փորձեց մեղմացնել ծայրահեղ պայթյունավտանգ իրավիճակը:

Միաժամանակ, Հ. Յ. Դաշնակցության կողմից ահաբեկման ենթարկվեցին գոլիցինյան ոճի հայատյաց պաշտոնյաներ՝ Ելիզավետպոլի փոխնահանգապետ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկին: Պայքարի մեջ նետվում էին հայ ժողովրդի բոլոր կենսունակ ուժերը: Պայքարից դուրս գտնվողներին ու խուսափողներին բարոյական նախատինքի դրոշմն էր դրվում:

---

[1] Նույն տեղում:

«Արմենիան» 1904 թ. փետրվարի 13-ին գրում էր, թե «... Կրնա՞նք ձեռքերնիս խղճերնուս վրայ դրած յայտարարել թէ՝ զամենայն զոր ինչ պարտն էր առնել. տարանք մինչ ռուս դիւանագիտութիւնը՝ առանց շունչ առնելու՝ ապշեցուցիչ յանդգնութեամբ հարուած հարուածի վրայ կը տեղացնէ քաղաքական անկախութիւնը կորսնցուցած ազգի մը հնագոյն եկեղեցւոյն իրաւունքները բռնաբարելով, մենք եւրոպաբնակ Հայքս կը վարանինք բարոյական ոյժերնիս դնել ի սպաս մեր եկեղեցւոց անձեռնմխելի զուտ հոգևոր իրաւունքների պաշտպանելու մէջ»[1]: Հարց էր բարձրացվում, որ մինչև այսօր Եվրոպայի մեջ չի գումարվել համազգային հրապարակային մի համաժողով, որին հրավիրված ժողովրդական ամեն խավի ներկայացուցիչները կարող էին իրենց կարծիքները արտահայտել և ձեռնարկել միասիրտ ու միահամուռ գործակցություն: Նախատինքի և հանդիմանության խոսքն ուղղվում է եվրոպաներում բնակվող թե հարուստ և թե համեստ կարողությունների տեր հայ մարդկանց, որոնք օրինակ չեն վերցնում Ռուսահայաստանի մեջ պայքարող և ամեն տեսակի վտանգները արհամարհող իրենց ազգակիցներից:

Թերթում հրապարակվեց «Ռուսիայի հայ եկեղեցիների կալուածների գրաման մասին» պաշտոնական հաղորդագրությունների ընդարձակ ցանկը (հեռագրեր, հաղորդագրություններ, նամակներ և այլն)[2]:

---

[1] «Արմէնիա», 1904 թ., թիվ 31:

[2] «Արմէնիա», 1904 թ., թիվ 29:

Հայ եկեղեցու գույքի և կալվածքների գրավման շուրջ այնպիսի լարված ու փոթորկուն հասարակական մթնոլորտ էր առաջացել, որ հայ գործիչներից ոմանք առաջարկում էին թողնել Էջմիածինը և Ամենայն հայոց կաթողիկոսության աթոռը փոխադրել Կիպրոս կղզին:

Վերոնշյալ տրամադրությունների դեմ վճռականորեն հանդես եկավ «Արմենիայի» մեծավաստակ խմբագիրը, պատմական և տրամաբանական բաղադրիչներով փաստարկելով, թե «Հայաբնակ չեղող տեղ մը Հայոց կաթողիկոսութիւնն ի՞նչ գործ ու նշանակութիւն կունենայ... Հայ ժողովրդի վարչութիւնը հայ երկրին մէջ, հայկական կեդրոններին մէջ պէտք է գտնուի: Հայաստանեայց եկեղեցիի հոգևոր բարձրագոյն վարչութիւնը Հայաստանի մէջ պէտք է լինի և ոչ թէ Կիպրոս, Եւրոպա... Ինչ որ մերինը չէ, իբրև մեր սեփականութիւն չենք կրնար վայելել. Կիպրոսը, Եւրոպան, Ամերիկան Հայաստան չկրնար դառնալ, մենք կիպրացի, եւրոպացի, ամերիկացի կը դառնանք»[1]:

Իրավացի է, անշուշտ, մեծ հայրենասերը իր այս և մյուս դիտարկումներում: Նա համոզված է, որ իշխանությունը ժողովրդով և ժողովրդի մեջ է միայն իր ուժն ու հաստատությունը գտնում: Օրինակ է բերում պատմության մեծագույն անհատներից մեկին՝ Նապոլեոն Բոնապարտին, որը հանճարով և ուժով «բոլոր աշխարհ դողդեցուց... Ի՞նչ ոյժ կրցաւ ներկայացունել ինք Ս. Հեղինէ կղզիին մէջ երբ ալ իր երկրի մէջ չէր գտնուէր, երբ իրեններէն, իր ժողովրդէ շրջապատուած չէր»[2]:

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 36:

[2] Նույն տեղում:

Ուրեմն, ամեն երկրի վարչություն իր երկրի ու իր կենտրոնների մեջ պետք է լինի ու գոյատևի: Երբ իշխանությունը իր ժողովրդից, իր երկրից հեռանում է, գնում է դեպի տկարացում և անկում: Այո՛, դա այդպես է անկասկած, քանզի ցանկացած իշխանություն, աշխարհիկ թե հոգևոր, ուժեղ, կայուն և հարատև է միայն ու միայն իր ժողովրդով, նրա լայն զանգվածների աջակցության շնորհիվ:

Ահա այս կարևորագույն գործոնը նկատի առնելով է, որ Փորթուգալյանը միանշանակորեն մերժում էր Կիպրոս կղզին հայոց կաթողիկոսության աթոռանիստ ընտրելու առաջարկներն ու վարկածները:

Իսկ եթե կաթողիկոսության տեղափոխությունը այդ միջոցին նույնիսկ անհրաժեշտ ու ստիպողական նկատվեր, ապա, նրա խորին համոզումով, թերևս Ախթամարը, Տարոնը կամ Կարինը «աւելի յարմար լինէին իբրև հայկական կենտրոններ. բայց թիւրքին արդէն վստահութիւն չլինիր և աւելորդ է հոս երկարաբանել այդ մասին»[1]: Նա գտնում է, որ ամենևին էլ հարկ չկա կամովին ու փութով լքել Էջմիածնի կաթողիկոսությունը և դրանով իսկ խզելու Ռուսիայի, Թուրքիայի և ամեն երկրի մեջ գտնվող հայերի կրոնա-ազգային կապերն ու առնչությունները: Տեղափոխությունը ներկա հանգամանքների մեջ ավելի կնճռոտելու է խնդիրը, քան այն լուծելու է: Ուրեմն, անհրաժեշտ է բուռն կերպով շարունակել «մեր բողոքներ, մեր դիմումներ ուր որ անկ է, հետզհետէ աւելի ազդեցիկ միջոցներով, մինչև որ մեր ձայն լսելի լինի և 19-դարեան առաքելաւանդ եկեղեցիի մը սե-

[1] Նույն տեղում:

փականութիւնները, *որոնք քրիստոնեայ կառավարութեան մը ձեռքով յափշտակուիլը Ռուսիայի պատմութեան ամենէն ամօթալի մէկ երեսը պիտի կազմէ, վերադարձուին իրենց սեփականատէրն եղող հայ ազգին*»[1]: Որպես հեռատես և զգուշավորություն պահպանող գործիչ նա համոզված էր, որ «Տեղափոխութիւն կրնայ աւելի ձախորդ հետևանքներ ունենալ, Գոլիցիններրի և Պլէվէների ծրագրի յաջողութեան աւելի նպաստել քան թէ մեզ, աւելի փութացնելով Ռուսիաի հայերի ռուսացումը»[2]: Համեմատական զուգահեռներ տանելով հայոց և հունաց եկեղեցիների ճակատագրերի միջև, նշում է, որ հույներն իրենց համար ազատ երկիր և պետություն լինելով «իրենց Ոսկեբերանի պատրիարքական աթոռը տակաւին մահմետական տէրութեան մը տակ թողած կը պահեն և չեն փոխադրած Աթէնք», հապա մենք ինչո՞ւ և ինչի՞ համար մեր Լուսավորչի հիմնած Էջմիածնի կաթողիկոսական աթոռը փոխադրենք հունական Կիպրոս կղզի կամ մի այլ օտար վայր»[3]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ՄԵԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԱՉԱՌ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ: ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ՀԱՆԴԵՊ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

«Արմենիայի» էջերում հաճախակի գործածական թեմաներից էր մեծ տերությունների և եվրոպական դիվանագիտության հայկական հարցի զարգացումների հանդեպ որդեգրած դիրքորոշումների անաչառ և խիստ քննադատությունը:

Թերթը ուշադիր հետևում էր միջազգային ասպարեզում հայկական խնդրի առնչությամբ տեղի ունեցող մեծ ու փոքր իրադարձություններին և այդ առումով մեծաթիվ ու մեծածավալ նյութեր թարգմանաբար արտատպում օտարալեզու մամուլի օրգաններից: Սույն գործընթացը հատկապես ուժեղացավ 19-րդ դարի 90-ական թվականների կեսերին, երբ արևմտահայության գլխին նորից մահաբեր ամպեր էին կուտակվել:

1895 թ. փետրվարի 9-ին արտատպվել էր «Մանչեստր Գարդիան»-ից մի հրապարակում, որում նշված էր, թե Հայաստանի մեջ գործված վերջին ոճիրների առիթով գումարվել է քաղաքային մեծ միտինգ: Նրան մասնակցել են ամեն դավանություններ և կուսակցությունների ներկայացուցիչներ: Միտինգում պաշտպանվել է այն տեսակետը, որ «հայերի համար չկայ ուրիշ յոյս, բայց եթէ եվրոպական տերութիւնների ճնշումը Թիւրքիաի վրայ դաշնագրական պայմանները գործադրել տալու համար»[1]: Թերթը 1895 թ. մարտի 2-ին հաղորդում էր, որ «Սթոքքոր-

[1] «Արմենիա», 1895 թ., թիվ 55:

թի Քուրդ Հաուզ սրահին մէջ զումարված միթինգի» մասին, ուր «Ն. Վսեմութիւն քաղաքապետը կը նախագահէր և հոն հաւաքուած բազմութիւնը վերին աստիճանի ջերմ և համամիտ էր»[1]: Նույն թվականի մարտի 13-ին պարբերականը սուր քննադատության էր ենթարկում թուրքական կառավարության նկատմամբ եվրոպական տերությունների բռնած դիրքը. «Օր առաջ Ապահովութիւն պէտք է հաստատել Հայաստանի մէջ. ա՛յս պետք է լինի մեր ամենիս ջանքը: Եթէ մեր յոյս քսմիսիոնի (հանձնաժողովի – Ա. Կ.) վրայ դնենք, անգութ և անխելք թուրքը դեռ ինչ նորնոր օրօրներով պիտի օրօրէ զ Եւրոպան, մինչեւ որ հայուն ալ մահու քուն քալել տայ»[2]:

Ճշմարտացիորեն է դիտարկվում, որ 1878 թվականից ի վեր ամեն անգամ, երբ բարենորոգումներ կատարելու ճնշումն է զգացել սուլթան Համիդի կառավարությունը, ասպարեզ է նետել «մեծամասնութեան խնդիր. այնուհետեւ քսմիսիոններ, անկից վերջ «Բարեկարգութիւնը ընդհանուր պիտի ընեմ» ըսելով ժամանակ անցուցեր է, տասնեօթ տարիներ զբաղեցուցած է Եւրոպան»[3]: Հոդվածագիրը (Փայլակ-Կայծակ ծածկանունով) նշում է, որ մեծամասնության խնդիրն այստեղ բնավ կարևորություն չունի և իրավունք չի տալիս բռնավորին ճնշելու և կողոպտելու փոքրամասնությանը: Նաև հիշեցնում, որ հայոց բացարձակ մեծամասնություն գոյություն ունի Վանի և Բաղեշի կուսակալություններում. «ամբողջ Վանայ կուսակալութեան մէջ միայն 26 հազար թուրք կայ, 30-35 հազար քուրտ... Մուշի

---

[1] «Արմէնիա», 1895 թ., թիվ 61:
[2] «Արմէնիա», 1895 թ., թիվ 61:
[3] Նույն տեղում:

երկիրը բուն թուրք տարրը աննշան թիւ մը կը կազմէ, քուրտեր են միայն. մեծամասնութիւնը դարձեալ հայ»[1]:

Եվրոպական դիվանագիտության ձևական մոտեցումների և անտարբեր կեցվածքի սուր քննադատությամբ հանդես եկավ արմենականների առաջնորդ, հայ ազատագրական շարժման հմուտ տեսաբան Մկրտիչ Ավետիսյանը: Նա պարբերականի մշտական թղթակիցներից մեկն էր և հայ ազգային-ազատագրական շարժման ընթացքն ու հեռանկարները քննում և դիտարկում էր տարբեր տեսանկյուններից: 1895 թ. օգոստոսի 17-ին հրապարակված հոդվածում նա սուր քննադատության է ենթարկում եվրոպական դիվանագիտության և մամուլի օրգանների հարուցած աղմկալից վեճերն ու ցուցամոլական գործողությունները հայոց կոտորածների շուրջ և այդ ամենը համարում լոկ ձևական (ֆիկտիվ) մի բան, որպես եվրոպական թերթերի ընթերցողների ձանձրույթը մեղմելու դյուրին միջոց: Նա շեշտում է, որ հայերը միամտություն են ունենում եվրոպական մամուլի «երբեմնի հանած աղմուկները իբրեւ պետութիւնների վճիռներ» ընդունելու: Եվ եթե Լոնդոնի, Պետերբուրգի պաշտոնական և կիսապաշտոնական թերթերի հրապարակումներին նայենք, ապա մինչ այսօր «5 անգամ։ն աւելի եւրոպեան մի բանակ Հայաստան իջած պիտի լինէր 61-րդ յօդուածը գործադրելու համար: Խորհրդարանական հայասէր ճառերը եթէ հաշուի գրուէին, սուլթանը վաղուց պէտք էր իր սնտուկներ կապել տար Դամասկոս կամ Մեքքէ քաշուելու համար»[2]:

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1895 թ., թիվ 86:

Մ. Ավետիսյանը ունենալով ռեալ իրականության սուր զգացողություն, հեգնում է այն միամիտներին, որոնք եվրոպական դիվանագիտությունից ու նրան սպասարկու մամուլից այնպիսի հույսեր ու հավատ ունեն, որ թվում է «թէ մեր կողմէ միայն իրենց դիմելն է մնացեր, Եւրոպա կամ Ռուսիա գթութեան ձեռքեր բացած մեզ կսպասեն և Սասունի վրէժը քաղաքակիրթ աշխարհը պիտի հանէ թիւրքէն»[1]:

Իրավացի է այն հարցադրումը, թե մենք մեր արյունակիցների վրա ինչ գութ ունեցանք, «անոնց չկոտորուելու միջոցներ տուինք որ այժմ ալ կարենայինք աւելի մեծ բաներ յուսալ օտար և նիւթապաշտ Եւրոպաէն»[2]:

1895 թ. հոկտեմբերի 2-ին թերթը հայտնում էր անգլիական նավատորմի Դարդանելի նեղուց մուտք գործելու մասին, որը իբրև «սաստիկ յուզում պատճառած է օսմանեան պաշտօնական շրջանակներին մէջ»[3]:

1895 թ. դեկտեմբերի 18-ին պարբերականը նորից նշում է, որ սուլթանական կառավարությունը օգտվելով տերությունների սնամիաբանությունից, «պիտի յաջողի քիչ ժամանակի մէջ հայոց գոյութիւնը վերցունել և... զուտ թրքաբնակ երկիր մը ընել Հայաստանը»[4]:

Եվրոպական դիվանագիտության գործողությունների հանդեպ այնքան անվստահություն կար, որ պարբերականի կողմից այսպես է այն ամփոփվում. «Եւրոպացիք ինչ-որ գրչով մրոտե-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1895 թ., թիվ 18:
[4] «Արմենիա», 1895 թ., թիվ 40:

ցին մի քանի երես թղթի վրայ որ մեր Հայաստանի բարենորոգմանց ծրագիր կը կոչէինք, այսօր սուլթանը զայն կը գործադրէ իր պաշտպանութեան զօրաց և պաշտօնէից միջոցաւ... աւարի տալով ամբողջ քաղաքներ ու գիւղեր»[1]:

1896 թ. հունվարի 25-ին թերթը կրկին վկայակոչում է, որ տերությունների թողտվության և անտարբերության պայմաններում է տեղի ունենում հայոց մեծ ողբերգությունը. «Թող տեսնեն այն տերութիւնք որ կը յուսային թէ սուլթանը զօրք հաւաքելով բարենորոգումներ ի գործ պիտի դնէր. և քանի որ հավաքեց, աւելցուց կոտորածը, անանկ որ ոչ թէ աշխարհ, այլ սուլթանն իսկ զարմացաւ թէ տակաւին կը յաջողի խաբել տերութիւնները»[2]:

Մ. Փորթուգալյանը հավատարիմ իր որդեգրած սկզբունքներին, քննադատական խոսք է հղում նրանց, ովքեր միայն դիվանագիտական միջոցների ու միջամտության հետ էին կապում իրենց հույսը. «Դիվանագիտական դիմումներին իրենց յատուկ սահմանի մը մէջ օգտակարութիւնը ընդունելով մէկտեղ, ստիպուած ենք կրկնել թէ առանց յեղափոխական միջոցների դիմելու Հայաստանի բարեկարգութիւն Թիւրքիայէն յուսալը կը նմանի կոյր մարդի աչքէն արտասուք յուսալու»[3]:

Ընդհանրացնելով ու դասեր քաղելով հայկական կոտորածների ընթացքում միջազգային դիվանագիտության դառնաղետ դիրքորոշումներից, պարբերականը նշում է, որ պետք է հստակ գիտենանք, որ որքան էլ ճչանք, պոռանք, լաց լինենք, միևնույնն

---

[1] «Արմէնիա», 1895 թ., թիվ 42:
[2] «Արմէնիա», 1896 թ., թիվ 71:
[3] Նույն տեղում:

է, «դիւանագիտութիւն անյողդողդ կը մնայ մինչեւ որ իր շահ կամ մեր ոյժ չստիպէ զինք ի նպաստ մեզ շարժելու...»[1]:

Սա, անշուշտ, հայոց դարավոր կենսափորձից յուրացված ու քաղված ճշմարտություն է, բանաձևված բոլոր ժամանակների համար:

Եվրոպական դիվանագետների շինծու, շողոքորթ, երբեմն բացահայտ լկտի պահվածքն ու վարքագիծը անառարկելիորեն ապացուցում էին, որ մենք, այո՛, շատ միամիտ ենք լինելու հավատալու համար, թե մեծ տերությունները «լոկ մեր վրայ գթալով կուգան մեզ կազատեն»[2]: Ապա նույն տրամաբանությամբ թերևս օրինաչափ է այն պնդումը, թե Օսմանյան կայսրության որևէ քաղաքում կամ գավառում ջարդեր լինեն, ապա եվրոպացի դիվանագետների առաջին մտածումը «սա կը լինի թէ ադկէ օգտուելով ի՞նչ նոր իրաւունք կրնան ձեռք բերել Թիւրքիայի մէջ, կարելի՞ է արդեօք երրորդ պահականաւ մ ալ մտցնել Վոսփորի մէջ, կոտորած պատահած տեղը հիւպատոսութիւն մը հաստատել»[3]:

Այո՛, ճիշտ այդպիսի վարքագիծ էին դրսևորել եվրոպացի դիվանագետները հայկական կոտորածների նախօրյակին, կոտորածների ընթացքում և կոտորածներից հետո: Ողջակիզվող հայության համապարփակ ողբերգության օրերին էր, որ հայերին բարեկամ համարվող պետության՝ ցարական Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Լոբանով – Ռոստովսկին հայ-

---

[1] «Արմէնիա», 1897 թ., թիվ 75:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

տարարել էր, թե ինքը վարանում է ասել, թե որտեղ է գտնվում Հայաստանը[1]:

Մեծ տերությունների քաղաքական խաղերն ու փոխհարաբերությունները բնավ խարսխված չէին Հայկական հարցի լուծմանը նպաստող քաղաքականության վրա:

Հայկական իրականության մեջ միայն «Արմենիան» չէր, որ ճշգրիտ ու ճշմարիտ գնահատականներ էր տալիս տեղի ունեցածին: Նրան ձայնակցում էին հայկական շատ պարբերականներ:

«Մշակը» այդ զարհուրելի օրերին գրում էր. «Բայց Եվրոպան կարծես այդ բոլորը չի տեսնում, կարծես չի լսում ճնշված ժողովուրդների հառաչանքները, կարծես չի զգում գետի նման հոսող արյան հոտը»[2]:

Ոչ միայն չէին զգում արյան հոտը, այլև, ըստ էության, ծաղրում, անարգում հայոց կրած ծով տառապանքը: Այսպես, "Московские ведомости" պարբերականը կաշառված լրագրողի շուրթերով բարբաջում էր, որ «Հայերի հանդեպ թուրքական հետապնդումների մասին բոլոր ճիչերը հորինվածք են»[3]:

Պաշտոնական, կառավարական շրջանների, դիվանագետների կրավորական, անտարբեր կեցվածքը հավասարազոր էր թուրքական իշխանությունների ոճրագործ քաղաքականությունը խրախուսելուն: Սուլթան Համիդը վարպետորեն օգտվում էր տերությունների միջև առկա հակասություններից և մի կողմից

---

[1] Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Ե., ԳԱԱ հրատ, 2004, էջ 463

[2] Նույն տեղում, էջ 465:

[3] Տե՛ս Положение армян в Турции, էջ 430:

աշխարհի առջև «անմեղ» էր ձևանում, մյուս կողմից առավել սաստկացնում էր բռնություններն ու կոտորածը: Հայ ժողովրդի անմեղ արյունը զազանաբար թափելուց հետո սուլթանը սկսեց իրեն բնորոշ խաղը եվրոպական տերությունների ներկայացրած բարենորոգումների ծրագրի հետ: Եվրոպական երեք պետությունների՝ Ֆրանսիայի, Անգլիայի և Ռուսաստանի կողմից 1895 թ. մայիսի 11-ին ներկայացրած բարենորոգումների հուշագրին սուլթանը պատասխանեց իրեն հարազատ նենգ ու խարդախ ոճով: Նույն թվականի մայիսի 23-ին հրապարակած պատասխանում ասված էր, որ այդ փաստաթղթերը (հուշագիրը) սուլթանի «ուշադիր ուսումնասիրության առարկա են դարձել» և թուրքական կառավարությունը «համաձայնվում» է բարենորոգումներ անցկացնելու ոչ միայն հայկական նահանգներում, այլև կայսրության բոլոր վիլայեթներում[1]:

«Արմենիան» 1895 թ. հուլիսի 3-ի համարում հրապարակել է սուլթանին ներկայացված եվրոպական տերությունների հուշագիրը և հայկական բարենորոգումների ծրագրի պատճենը[2]: Այնուհետև սույն թեման տարիներ շարունակ մշտապես արծարծվում էր պարբերականի էջերում: 1895 թվականի մի շարք համարներում (թիվ 66, 67, 68, 69, 70, 71, 72, 73 և այլն) հրապարկվում էին բռնությունների ու կոտորածների ականատեսների պատմածները, դեպքերին վկա եղած մարդկանց ցուցմունքները քննիչ հանձնաժողովի առջև: Նշվում է, որ տեղական իշխանությունների ձեռնարկած մեծահնար պատրաստություն-

---

[1] Տոնոյան Գ., Ռուս-ֆրանսիական դաշինքը և Հայկական հարցը XIX դարի 90-ական թվականներին, «Հայոց պատմության հարցեր», թիվ 7, 2006 թ., էջ 77-78:
[2] «Արմենիա», 1895 թ., թիվ 86:

ներին հսկառակ վկայությունների կշիռը հայերի համար շատ նպաստավոր է: Նույնիսկ թրքասեր վկաների կողմից ապացուցելի է դառնում, որ կռիվը Սասունի հայերը չեն սկսել, այլ «անոնց ըրածը սոսկ ինքնապաշտպանութիւն էր քիւրդ աւազակներին դէմ»[1]: Իսկ թուրքական պաշտոնյաները արձակ ու համարձակ սպառնալիքներ են տեղում կամ կաշառք գործածում ժողովրդին ստիպելու, որ երախտագիտական հանրագիրներ հղեն կառավարությանը «օգտակար խստությունների» համար: Շատերը չստորագրելով, նախընտրում են ձերբակալվել ու բանտարկվել: Այս բոլոր իրարանցումների մեջ մահմեդական ամբոխների մոլեռանդությունը գրգռման վիճակի մեջ է և «Խարբերդի, Վանի, Բաղէշի, Մուշի և Կարինի մէջ տարածայնուած է թէ պատուիրակներին մեկնելէն վերջը քրիստոնեաները պիտի ջարդուին: Այս սպառնալիք հիմակէն կը գործադրուի մասնակի կերպով»[2]:

1895 թ. ապրիլի 20-ին հրապարակած «Մի բան պիտի լինի» առաջաբանում Մ. Փորթուգալյանը նշում էր, որ հանրային գիտակցության մեջ մեծ է հետաքրքրությունն ու ակնկալիքը, թե Սասունի դեպքերի քննության արդյունքներով մի բան կփոխվի: Ոմանք երևակայում են, թե Հայաստանն այս անգամ ինքնավարություն կստանա, այլոք գտնում են, թե վարչական կարևոր փոփոխումներ կլինեն: Իսկ մենք «կըսենք թէ մեզ պիտի տրուի այն ինչ որ մենք կարող ենք ձեռք բերել մեր ներկայ դիրքի մէջ»[3]: Նորից ու վերըստին բարձրաձայնվում է, որ քաղաքա-

---

[1] «Արմենիա», 1895 թ., թիվ 64:

[2] Նույն տեղում:

[3] «Արմենիա», 1895 թ., թիվ 74

կանության մեջ «*գթութիւն, արդարութիւն, քրիստոնէութիւն և այլ այսպիսի բառեր թէն խոշոր ձայնով կը հնչուին դիւանագետների բերնէն, բայց այնպէս ինչպէս դատարկ կարասէն խոշոր դուրս կելնէ ձայնը*»[1]:

Դիվանագիտության համար հոգ չէ, թե «8·10,000 մարդիկ մեռեր են. նա տեղէն չշարժիր եթէ այդ միջոցին այնպիսի հանգամանքներ չկան որ ծանր հետեւանքներ ծագին ընդհանուրի շահերին և հանգստութեանը համար»[2]:

Ամեն տարի տասնյակ հազարավոր հայեր զոհ են գնում թշվառության, բռնության, պարբերաբար կրկնվող սովերին, գաղթականության և պանդխտության արհավիրքներին, որոնք Հայաստանում տիրող ողբալի կացության հետևանքն են: Մի՞թե այդքանը բավական չէր ուշադրություն դարձնելու Հայաստանի վարչական սոսկալի իրավիճակի վրա, եթե «գթութեան և քրիստոնէական եղբայրութեան սկզբունքներէն միայն առաջնորդուէր եւրոպական դիվանագիտութիւնը»[3]:

Փորթուգալյանը երբեք չհոգնեց ընթերցողներին բազմիցս հուշելու և ասելու այն ճշմարտությունը, որ եթե հայությունը փոքրիշատե իր մեջ ուժ գոյավորած չլինի, ապա օտարների միջամտությունից որևէ կարևոր բան սպասել չի կարելի:

Ինչ-որ պետք է լինի, կայանա, կախված է գլխավորապես մեր ունեցած ներքին ուժից և պատրաստությունից:

Ուսանելի է այն դիտարկումը, որ եվրոպական քաղաքականության ներկա դանդաղ ընթացքը մեր խնդրի լուծման

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

շուրջ, ցույց կտա մեզ «*թե կոտորուիլը միայն բաւական չէ մեր իրաւունքի պաշտպանութեանը համար, այլ ոյժ պէտք է ցոյց տալ գործին մղում տալու համար: Շատ կամ քիչ մօտիկ ժամանակների մէջ մի բան կը լինի ներկայ յուզումների հետեւանքը. բայց կը լինի այն որին մենք արժանի ենք, որը մենք կրնանք ունենալ մեր ներքին ուժին և պատրաստութեան համեմատ*»[1]: 19-րդ դարավերջին շարադրված սույն մտքերը այսօր ևս չեն կորցրել իրենց արդիական շունչն ու նշանակությունը:

«Արմենիայի» հրատարակության 11-րդ շրջանի առիթով գրված խմբագրականում ևս շեշտադրված է, որ պարբերականը Հայաստանի վերականգման և վերակենդանության անհրաժեշտ պայման է համարում հայ ազգի ներքին ուժերը «աւելցունել և զարգացունել. չուրանար արտաքին և օտար ոյժերի նշանակութիւնը հայ ազգի վերականգման գործին մէջ, *բայց անոնց վրայ միայն յոյս դնելը վնասակար ցնորք կը համարի*»[2]: Այն համեմատությունն է արվում, որ եթե ծառը հողի մեջ տեղավորված չլինի և ինքն իր արմատներով սնունդ չառնե հողից, ապա դրսից նրա տերևների վրա ջուր թափելը որևէ օգուտ չէ պտղաբերության համար:

«Թուրքին բարենորոգում գործադրելը» խորագրով հրապարակման մեջ հեգնում, ծաղրվում էր թուրքական «բարենորոգումը: «Բարենորոգում» կոչվածը ժողովուրդն իր մաշկին ավելի լավ է զգում, քանզի առաջներում միայն «աւարի կուտային տուները, հիմայ հրդեհի ալ կուտան. յառաջ որ քիւրտերը կը գոր-

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1895 թ., թիվ 80:

ծէին կանոնաւոր զօրաց օժանդակութեամբ. հիմա քիւրտ չգտնուած տեղերն հետնակ զօրքերն կընեն անոնց գործերը. վերջապէս յառաջ որ երկիւղով կը գործէին, հիմայ աներկիւղ կը գործեն, զի եւրոպական քաղաքականությունը կը պահանջէր ժամանակ տալ սուլթանին որ այս բարենորոգումներ ի գործ դնէ»[1]: Ահա քեզ թուրք-սուլթանական «բարենորոգման» ճշմարիտ պատկերը:

Եվ սարկազմի սպանիչ ուժով հարցադրվում է, թե այս վիճակին հասնելու համար հայն իր «երախտագիտությունը» ո՞ւմն է հայտնելու. «Անգլիո՞յ, Գաղիո՞յ, Ռուսիոյ. ո՞վ կարող է, թող պատասխանէ այս հարցման»[2]:

1901 թ. հոկտեմբերի 16-ին Փորթուգալյանը նորից առիթը բաց չի թողնում հիշեցնելու, որ թուրքը երբեք խղճի մտոք բարենորոգումներ չի կատարելու Հայաստանում[3]:

Իսկ 1903 թ. փետրվարի 4-ի խմբագրական հոդվածում նորից է հարցադրվում այն մասին, թե երբ Կ. Պոլսում՝ եվրոպացիների աչքի առջև, ջարդում, կոտորում էին հայերին, հետևանքը ի՞նչ եղավ: Եթե եվրոպական դեսպանությունները առաջ Բոսֆորի մեջ մեկ պահականավ պահելու իրավունք ունեին, «երկու հատ պահելու իրաւունքը ձեռք բերին հայերի արեան գնով և խնդիրն այդպէս վերջացաւ, առանց մասնաւոր բան մը լինելու հայերին համար»[4]:

---

[1] «Արմենիա», 1896 թ., թիվ 50:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1901 թ., թիվ 3:
[4] «Արմենիա», 1903 թ., թիվ 14:

1904 թ. Սասունում ծավալված դրամատիկ ու ողբերգական իրադարձությունների առիթով պարբերականը վերստին հիշեցնում է, որ երբ թուրքը այս կամ այն բանը առիթ բռնելով իր մեթոդավոր-պարբերական ջարդերն է սկսում, ամենից ազնիվ համարված և մեզ համակիր ազգերի ներկայացուցիչները «ուրիշ գործ և ընթացք չունին որպէս պատասխան, թէ դիմեցին Թուրքիային, ստիպեցին սուլթանին, վեզիրին և այլն որ հաճի դադարեցունել արիւնահեղութիւնները ...*Ճանչնալ մեր կացութիւն, խոստովանիլ իսկ մեր ապստամբելու իրաւունք, եւ սակայն Պիղատոսի պէս ձեռք լուանալ, մեզ դահիճին մատնելու համար*»[1]:

Ահա պաշտոնական Եվրոպայի ընթացքը:

Ինչպիսի՜ ծանր ու դառն հեգնություն մեր դառն ու արյունոտ վիճակի հանդեպ:

Ահա թե ինչու նորից ու նորից հորդորվում է, որ գոնե «ասոնք հասկնայինք և հասկցնէինք մեր ժողովրդին, թէ իր յոյս, միակ յոյս իրեն վրայ դնելու է: Թէ ո՛չ թուրքի բարյացակամութեան ապաւինելը և ո՛չ էլ օտար միջամտութեան մը յոյսերով օրօրուելը չպիտի կրնան բան մը առաջացնել»[2]:

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 5:

[2] Նույն տեղում:

XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՏԱԳՆԱՊՆԵՐ ՈՒ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ

19-րդ դարավերջը հայ ժողովրդի համար արյունոտ ավարտ ունեցավ: Հայոց ազգային զարթոնքը և ազատագրական մաքառումների վերելքը սուլթան Համիդը ճնշեց ու տրորեց անխղճաբար, բացառիկ դաժանությամբ և նախճիրներով: 1895-1896 թվականների հայկական կոտորածները աննախադեպ բարբարոսություններ էին անգամ իրենց՝ սուլթանների երկրի արյունոտ տարեգրության էջերում: Դա Մեծ Եղեռնի նախերգանքն էր, որին զոհ գնաց ավելի քան 300.000 հայություն: Դա հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականության պրակտիկ կենսագործման սկիզբն էր, սկզբնական փուլը, որը հետագայում շարունակեցին անշեղորեն կենսագործել և՛ երիտթուրքերը, և՛ քեմալականները:

Ճշմարտացի դիրքորոշում են հայտնում այն հետազոտողները, որոնք գտնում են, թե «ցեղասպանություն» երևույթի բնորոշման համար ամենևին պետք չէ գերագնահատել զոհերի թվաքանակի գործոնը: Այս առումով տեղին դիտարկում է կատարել պատմագիտության դոկտոր Վարուժան Պողոսյանը, ընդգծելով, թե «Դժվարությամբ ենք ըմբռնում, սակայն, թե որքանո՞վ է արդարացի միայն XIX դարի 90-ական թվականներին պետական քաղաքականության մակարդակով, էթնիկական հողի վրա տեղի ունեցած շուրջ 300000 մարդու ոչնչացման

փասատը բնորոշել իբրև կոտորած»[1]: Այո՛, դա ոչ թե սոսկական ջարդ էր, այլ ցեղասպանության հրեշավոր քաղաքականության սկիզբը, որը տևեց մոտ երեսուն տարի և ավարտվեց ողջ Արևմտահայաստանի հայազրկմամբ ու կործանմամբ: Վերոնշյալ դեպքերից հետո հայությունը կանգնած էր առավել խորքային, տարողունակ մարտահրավերների առջև:

Խորհրդածելով նոր՝ 20-րդ դար մուտք գործելու շուրջ, Փորթուգալյանը գրում է, որ մենք մեր բախտի վրա հենվելով միայն կարող ենք Հայաստանի համար դեռևս լավագույն հույսերի հնարավորություն ստեղծել: 19-րդ դարի վերջին տարում թեև նա հրաշքների չէր հավատում և սպասում, բայց այնուամենայնիվ, հույսի նշույլ էր այն իրողությունը, որ Թուրքիան եվրոպական տերությունների ցանցի մեջ ընկած զոհ է և մի օր պիտի որոշեն «թէ ի՞նչ պէտք է ընել այդ զոհը և հետևաբար մեր վիճակին սալ մի փոփոխում յառաջ պիտի գայ. թերևս այդ կըլլայ մի բարեփոխում»[2]:

Վիպական-բանահյուսական շնչով այսպես է ներկայացնում 19-րդ հարյուրամյակի ավարտը. «Վիպական վերջին ռոպէներ շատ եղած են. մահապարտին կախաղան հանուելու վերջին ռոպէին ազատում, մահամերձ մոր վերջին շունչը չփչած իր վտարանդի որդիին գալուստ, սիրահարների յաւիտենական բաժանումի մատնուելու վերջին ռոպէին անբաժան միացում և այլն. պատմութիւնը զարդարող այսպիսի դէպքեր

---

[1] Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ, Ե., 2005 թ., էջ 5:

[2] «Արմենիա», 1899 թ., թիվ 47:

պատահած են։ Եւ մենք դեռ վերջին բոպէ մը ունինք 19-րդ դարէն – 1899 թուականը»[1]։

Պահի ներքո ցուցաբերված այս լավատեսությունը իրական հիմքեր չուներ։ Բզկտված, արյունաքամ եղած, աշխարհից լքված հայ ժողովուրդը անկարող էր արագ շտկել վտանգավոր, գրեթե մահացու իրավիճակը։ Չէր կարող, քանզի արտաքին ու ներքին հանգամանքները բոլորովին աննպաստ էին և նրան սպասվում էր ոչ թե հրաշքով թռիչք և իրավիճակի փոփոխություն, այլ ծանրաբեռ, խոչընդոտներով բազմապատկված դժվարանց և արյունոտ ճանապարհ։

Կոտորածների մղձավանջը ցրելու և վանելու նպատակով հարկավոր էր հույսերով և լավատեսությամբ հորդորներ հղել ժողովրդին։ Սույն տրամաբանությամբ «Յուսահատներին» վերնագրված հրապարակման մեջ նախատինքով է հարցադրվում հետևյալը. «Մի թե՞ միշտ յուսահատ, վիզը ծռած, լալկան ժողովուրդ մը լինել վիճակուած է մեզ։ Խեղճութիւն մը, որ անզգայութեան կը հասնի»[2]։ Հեղինակը (Վ. Շահենի – Հովհաննես Հակոբյան) նշում է, որ ինքնախաբեբայության գինով արբենալու ժամանակն անցավ։ Սակայն պատրանքներից սթափվելը չպետք է հանգեցնի նրան, որ հայ մարդը երես դարձնի իր ազգից, ազգի սուրբ գործից՝ ազգային հեղափոխությունից։ Այս անգամ՝ անզգա ու անտարբեր մնալու իրավունք չունի հայ հայրենասերը, որը ուրիշներից պետք է օրինակ առնի։ Համեմատության ալաքը ուղղվում է Կրետեի ժողովրդին, որն հարազատ որդիներով ար-

---

[1] Նույն տեղում։

[2] «Արմենիա», 1899 թ., թիվ 58։

դեն վայելում է իր կտրիճ բազկի արդյունքը: Կրետացին քաջ ու անմեհի պահեց իրեն, նա պատրաստվեց ու կռվեց. «Եւրոպական թնդանօթներ անգամ գոռացին Կրէտէի կտրիճ որդիներին վրայ. բայց Կրէտացին չյուսահատուեց, կռուեց մինչև վերջ և այսօր նա ազատ է»[1]: Այսինքն, նույն քաջությունը դրսևորելու պատիվն ու պարտականությունը այսուհետև հայազգի զավակների ուսերին է լինելու, որոնց փրկության միակ միջոցը իրենց ձեռքին է: Ուրեմն, ճանաչենք իրար, ձեռք տանք իրար և թող «հեռի լինին մեզնից յուսահատութիւն և լալկանութիւն»[2]: Հայ ազգի լավագույն հայրենասերները պետք է ճանաչեն և յուրացնեն ճշմարիտ և գիտակցական հեղափոխության ուղին, վանելով «Սուրբ Գործից ազգի տզրուկներ, շարլաթաններ»[3]:

1899 թ. մարտի 4-ի համարում ակնարկ նետելով հայկական տխուր իրականության վրա, պարբերականը վերստին հարցնում է, թե հայրենիքի սույն աղեկտուր վիճակին հանդեպ ինչ կխորհի այս դժբախտ երկրից դուրս գտնվող համայն հայությունը, ինչ «Կը խորհի ու կը գործէ մանաւանդ Ռուսահայը, հայութեան այդ ստուար ու կարեւոր մասը, որին վրայ այնքան յոյսեր կը տածէր Տաճկահայը»[4]: Պահի հրամայականը դառնում է միության խնդիրը: Ընդհանուր տագնապի, հուսահատության և շվարումի օրերից հետո «պահ մը փնտռել ջանացինք մեր անյաջողութեանց պատճառները ու կարծեցինք թէ մեր մէջ մէկէ աւելի յեղափոխական կազմակերպութեանց գոյութիւնն էր

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմենիա», 1899 թ., թիվ 59:

այդ»[1]: Սակայն կուսակցությունների միավորման հեռանկարը ևս հուսազուրկ է և «շատ շատ անհատական «ըսի, ըսաւ»-ի հարցեր կը յուզուին ու անտարբերութեան ու յուսահատութեան ահռելի ուրուականը կը նշմարուի ամենուրեք»[2]:

«Սով Հայաստանի մէջ» հրապարակումը գուժում էր, որ Հայաստանի մի քանի վայրերում, մասնավորապես Վանի նահանգում սովն ու թշվառությունը ահռելի չափերի են հասել և սովյալներին անհապաղ օգնելու նպատակով Օրմանյան պատրիարքը հատուկ շրջաբերական է հղել: Սովն աննախադեպ ծանր վիճակ է առաջացրել, որ հուսահատությունից իրենց կյանքը «կարճեցնելու փորձողներ կը գտնուին, տուն և ընտանիք լքանելով փախչողներ ալ կան, խոտի արմատներ և անբնական իրեր սնունդի տեղ կը գործածուին, այս ձմրան եղանակին՝ կիներ ու աղջիկներ իրենց մերկութիւնը հազիւ ծածկած մազէ քուրջով մը, սար ու ձոր կը թափառին վայրի խոտերով սնունդ հայթայթելու համար»[3]: Ահա այսպիսի կացություն էր տիրում հայկական գավառներում 19-րդ դարի ավարտին, որի մասին ի լուր ողջ հայ աշխարհի, ահազանգում, տագնապ էր հնչեցնում պարբերականը:

«Արմենիայի» էջերում շարունակ քննվում էին 19-րդ դարի 90-ականների սկզբին և կեսերին տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների պատճառներն ու հետևանքները: Մեղավոր էին նկատվում նաև հայ հեղափոխական կազմակերպությունների ղեկավար կառույցները. «Սակայն ի՞նչ ըրին կենդրոնն

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ու բիւրոն։ Փոխանակ ազատուած ազգերու թանկագին ու բազմարժէք փորձառութենէն օգուտ քաղելու, բոլորովին անտես առին անոնց գործունէութիւն ու ազգային ցոյցերու եղերերգական շարք մը սկսեցին»[1]։ Հայոց ճակատագրի ղեկը ստանձնած պարոններին առաջարկվում է խորապես հետաքրքրվել մեր և ուրիշ ազգերի հեղափոխական կյանքով և եթե անկեղծ են նրանք, ապա պիտի համոզված լինեն, որ մեր մեջ հեղափոխություն ասվածը դեռ սկզբնավորված չէ և «թէ մեր այս վիճակ ո՛չ թէ լոկ քաղաքական աննպաստ հանգամանքներու արդիւնք է, այլ սխալ գործունէութեան»[2]։

Ուրեմն, մեր անհաջողության պատճառները նախնառաջ պետք է որոնել նրանց սխալներում, ովքեր գործնականում առաջնորդում են հեղափոխական շարժումը։

«Քանակութիւն թէ որակութիւն» ուղենշային հոդվածում Մ. Փորթուգալյանը ընդգծում է, որ հայկական իրականության մեջ պետք է գնահատելի լինեն հեղափոխական գործիչների որակությունը, ոչ թե քանակությունը, քանի որ պրակտիկ գործի համար պատրաստված գործիչները կարող են ավելի օգտակար լինել, քան թե «առանց իրար լաւ հասկանալու, խառնաճաղանճ վիճակի մէջ և այլ և այլ նկատառումներով իրար մօտեցած և իրար կապուած բազմութիւն»[3]։

Արհեստական միջոցներով առաջ եկած խմբավորումներն ու միավորումները ոչ մի դրական արդյունքի չեն հանգեցնի։

---

[1] «Արմէնիա», 1899 թ., թիվ 60։
[2] Նույն տեղում։
[3] «Արմէնիա», 1899 թ., թիվ 62։

Ըստ Փորթուգալյանի, հենց վերոնշյալ հատկությունների դասակարգումով «... «Հնչակ-Դրօշակ»-ն ու «Արմէնիա»-ն իրարմէ բաժնող գիծերէ մին ալ այդ է»[1]: Նա ասում է, որ եթե քանակություն փնտրենք, հինգ միլիոն հայ կա աշխարհում, հույներից, բուլղարներից, սերբերից ու դարաղաղցիներից շատվոր է մեր ազգը, սակայն «ի՛նչ օգուտ ունին այդ միլիօններ երբ բան մը չեն կարող ընել»[2]: Հիշատակվում է հինգերորդ դարի հայ ազատագրական շարժումը՝ խնկելի Վարդանանք, որոնք ընդամենը 60.000 հոգի էին, սակայն «...Կռուողների քանակութիւնը չէ այնչափ որ կը յաղթէ, այլ որակութիւնը»[3]:

Փորթուգալյանը հուսահատության ճիրաններից դուրս գալու ելք է համարում փոքրիկ գործերով նախապատրաստել նոր վերելք: Իսկ ոմանք վերոնշյալ նախապատրաստական աշխատանքները «իբրև փոքրիկ գործեր կարհամարհեն և գուցէ մի գործ ալ չեն համարիր»[4]: Այդպիսիների հասկացողությունն ու դատողությունը դեռ այնչափ նեղ է, որ անկարող են ըմբռնելու, թե ժողովուրդը նախապատրաստել պետք է և ժողովրդի հոգում հաստատուն արմատ բռնած «մի գաղափարի ոյժը տինամիթէն շատ աւելի քանդելու կարող և արդիւնաւոր մի ոյժ կլինի»[5]: Նույնիսկ գերբնական համարված հրաշքներն էլի նախապատրաստական նյութեր են պահանջել և միթե հրաշքից ավելի գերբնական դյուրին միջոցով կարելի է կատարել Հայաստանի

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1899 թ., թիվ 64:
[5] Նույն տեղում:

ազատագրության գործը, որ «կերևակայեն թէ առանց նախնական աշխատանքներ կատարելու, առանց նախնական նիւթեր պատրաստելու, մի յեղափոխական ձայն կը հնչեն և Հայաստանը կազատուի»[1]:

Նա ընթերցողներին հուշում և դաստիարակում է, որ պետք է զանազանել պատրաստությունը հախտն գործունեությունից: Իհարկե, կարելի է երկրում հրոսախմբեր կազմել և գործնական օրինակներով ժողովրդին գրգռել ապստամբության, սակայն դա անելու և գործը հաջողությամբ առաջ տանելու համար հայ ազգը պատրաստված է, արդյոք, բավարա՞ր չափով: Քանզի ժողովրդական լայն խավերը զոհողություններ անելու և դրանով իսկ կամաց-կամաց նախապատրաստվելու և դեպի հաղթանակ գնալու գաղափարին դեռ ընտելացած չեն:

Ավելին, մատնանշվում է այն, որ մոտիկ անցյալում ազգի շատ անհաջողությունների և աղետների ենթարկվելու հիմնական պատճառներից մեկը անպատրաստ գործունեությունն էր: Իսկ հախտն գործունեության բացասական հետևանքներից է այն, որ անհաջողության մատնվելուց հետո ժողովուրդը այն աստիճան է հուսահատվում, որ մղոններով հետ է քաշվում հեղափոխական պայքարից:

1900 թ. նոյեմբերի 28-ին «Ամո՛թ յուսահատողներին» հորդորակով հիշեցվում էր, որ ազգի պաշտելի բանաստեղծ, ազատության երգիչ Գամառ-Քաթիպան «կարդում էր ամո՛թ, յաւիտենական ամօթ փոքրոգի յուսահատողներին: Իսկ այսօր դժբաղդաբար մեր մէջ մի ահագին բազմութիւն կայ, յուսահատ,

[1] Նույն տեղում:

անհաւատ դէպի հայ ազգի ազատութեան յուսալից ապագան»[1]: Կոչ է արվում, որ եկել է ժամանակը գաղափարական միության, ուրեմն ասպարեզը պետք է մաքրել դիմակավորներից և հույսի դողանջներով լցնել գաղափարական միջավայրը:

Մեն-Սե կեղծանունով թղթակիցը «Քննադատութիւնը կը սպաննէ՞» հոդվածում հիմնավորում էր, որ ցանկացած բնագավառում, այդ թվում՝ հեղափոխական գործի մեջ լինում են էական թերություններ ու բացթողումներ, ուստի իրապես առողջ ու առարկայական քննադատությունը շատ կարևոր է: Սակայն քննադատությունը մեզանում շատ թյուրիմացաբար (գեշ է) հասկացվում: Նույնիսկ ժողովրդի միամիտ բաղձանքը պահանջում է, որ «իր հաւատալիքին կուռքը, նոյն իսկ տակը մաքրելու մտադրութեամբ լինի անգամ, ոչ ոք վար չի բերէ իր պատոյ պատուանդանից»[2]: Հեղափոխական գործի կուսակցական վարիչները (Հ.Յ.Դ.-ից և հնչակյաններից) ամենևին չէին նպաստում վերոնշյալ քննադատական մտքի ծավալմանն ու զարգացմանը: Այդպիսինները ունեին մեծաթիվ համակիրներ, որոնց համար ուղղակի սրբապղծություն էր հեղափոխության վարիչներին քննադատելը:

Քննադատություն չընդունողները մեր հեղափոխական ամեն գործողություն՝ հալած յուղի պես մաքուր և անարատ լինելուն արդյոք կհավատա՞ն, իսկ եթե ոչ. «կարելի է ընդունիլ և յեղափոխական կեանքի մեջ՝ ամեն ազգերին էլ յատուկ՝ մեծ կամ փոքր սխալների գոյութիւնը. հարկաւոր է ատոնց մատնա-

---

[1] «Արմենիա», 1900 թ., թիվ 13:

[2] Նույն տեղում:

նիշ անել»[1]: Սույն հարցադրումներով ու հիմնավորումներով պարբերականը ձգտում էր էական տեղաշարժեր առաջացնել հանրային, հասարակական-քաղաքական մտածողության մեջ և նպաստել այն բանին, որ քննադատությունից դուրս անհատներ ու կազմակերպություններ չլինեն:

1900 թվականի հոկտեմբերի 16-ին պարբերականը վերահրատարակեց Փորթուգալյանի «պէտք է քալել» խորագրով հոդվածը, որն առաջին անգամ լույս էր տեսել տասներկու տարի առաջ: Այն վերահրատարակելով, Փորթուգալյանը ցույց էր տալիս, որ այնտեղ արտահայտված տեսական կարևոր դրույթները արդիական են նաև այժմ: Ահա թե ինչու կից խոսքում ասված է, թե «աւելորդ չհամարեցինք մեր սկզբէն ի վեր յայտնած գաղափարներ շեշտելու և մեր հակառակորդների տարածած սխալ տեղեկութիւններ հերքելու համա»[2]: Նորից է թմբկահարվում, որ մենք Հայաստանի ազատության համար հեղափոխությունը անհրաժեշտ միջոց ենք համարել միշտ, որովհետև «յոյս չունինք թէ թիւրքը երբէք խղճի մտոք բարենորոգումներ կը մտցունէ Հայաստանի մէջ: Բայց հեղափոխութիւնը պատրաստելի գործ մը համարած ենք»[3]: Առհասարակ, Փորթուգալյանը սովորություն ուներ տարիների հեռվից վերահրատարակել այն կարևոր նյութերը, որոնց արդիականությունը մնում էր ուժի մեջ օրակարգում:

Այսպես, 1901 թ. հոկտեմբերի 30-ի համարում վերահրապարակվեց «Յեղափոխական գործը» վերնագրով ուղենշային

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1901 թ., թիվ 3:

[3] Նույն տեղում:

հոդվածը՝ «յեղափոխական գործի մասին սկզբէն ի վեր Արմէնիա-ի ունեցած ուղղութիւնը ցոյց տալու համար»[1]: Այն առաջին անգամ լույս էր տեսել 15 տարի առաջ:

Հավատարիմ իր սկզբունքային դիրքորոշմանը, պարբերականը XX դարի սկզբին վերստին ամրապնդում, զարգացնում է այն տեսակետը, որ արտասահմանում ծավալած ցանկացած գործունեություն երկրորդական է, քանզի բուն երկրում է անհրաժեշտ գործելու պատրաստ ուժը: Իսկ առանց այդ «հարազատ ուժին որ ժողովուրդին մէջ ծնած, զինք պիտի ոգևորէր և առաջ մղէր, դրսի ոգևորութիւններ ոչ միայն օգտակար չեն կրնար լինել, այլ գուցէ նոյն իսկ վնասակար»[2]: Եթե բուն երկրի մեջ, անտանելի վիճակում գտնվող ժողովուրդը կոտորածներից, շարունակվող հալածանքներից ուժասպառ «գրէթէ յուսահատուել է դրսի ոգեւորութիւններ միմիայն թուրքութիւնը գրգռելու ծառայելով, իսկական յեղափոխական տեսակէտից գրէթէ ոչինչ պիտի առաջացնեն»[3]: Փաստարկվում է, որ կոտորածներից առաջ այլ էր իրավիճակը, գործիչների բավական խումբ կար երկրի մեջ, որոնք թեև շատ տկար ու նորաբույս, սակայն կարողացել էին ազատության ու հեղափոխության մասին գաղափար ստեղծել և առաջ տանել:

Իսկ կոտորածներից հետո ժողովրդի մեծամասնությունը ծայրաստիճան հուսահատվելուց «յեղափոխութիւնը չարիք մը կը նկատէ իսկ այն փոքրամասնութիւն որ յեղափոխութեան կը հաւատայ, այլև Հայաստանի ճնշիչ օղը շատ սահմանափակ և

---

[1] «Արմէնիա», 1901 թ., թիվ 5:

[2] «Արմէնիա», 1901 թ., թիվ 34:

[3] Նույն տեղում:

նեղ գտնելով, իրեն շունչը ազատ երկիրներ միայն կառնէ»[1]: Արտագաղթի ալիքը սպառնում է նոր աղետների սկիզբ դառնալ, ահա թե ինչու երիտասարդության հայրենիքը «լքանելը դաւաճանութեան հաւասար գործ մը համարելի է»[2]:

Արտագաղթի դեմ պայքարի խնդիրը մշտապես եղել է պարբերականի առանցքային թեմաներից մեկը:

Փորթուգալյանը ինքն իրենից, իր համախոհներից արդեն մեծապես դժգոհում էր, որ բառերի վրա խաղալու միայն եղած ենք. «յեղափոխութիւն, միութիւն, ընկերվարականութիւն, դիւանագիտութիւն և այլն բառեր չափազանց կրկնեցինք ու յեղյեղեցինք, թեւէ ճշմարիտ ճշմարիտ կլսեմ որ ատոնց նշանակութիւնն անգամ դեռ չենք սորված»[3]:

Մինչ հեղափոխական գործիչ կոչվածները պարծանք ու իրենց պարտքը կատարած լինելու գոհունակությունը կզգան, հայոց ոխերիմ թշնամին անընդմեջ ու անդադար կգործե և հայությանը այլևայլ միջոցներով հետզհետե Հայաստանից ջնջելու վրա է: 1901 թ. նոյեմբերի 5-ի «Ներկայ վիճակ» առաջնորդողում ասված է, որ իր կոչումը ըմբռնող հայ խմբագրի պարտականությունն է առաջնորդել հանրային կարծիքը և ոչ թե զանազան կողմերից փչող քամիների առջևն ընկած, անոնց հոսանքից մղվել այս ու այն կողմ՝ կողմնացույցը կորցրած նավի պես: Սույն ըմբռնումով է, որ «Արմէնիան չնայիր թէ այսօր ինչ տեսակ փող հնչելէ կախորժի ամբոխը որ անոր համեմատ նուագէ ինք ալ...»[4]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] «Արմէնիա», 1901 թ., թիվ 39:

[4] «Արմէնիա», 1902 թ., թիվ 1:

Կարևոր է այն պնդումը, որ ժողովրդականության դափնիներ շահելու համար չէ, որ գրում, հանդես է գալիս պարբերականը, այլ ժողովրդին օգտակար լինելու, նրա շահերին ու հոգսերին ճշմարտապես ծառայելու փափագով:

Ըստ այդմ, հարցադրվում է, թե ինչ է մեր ներկա վիճակ և ինչ կպահանջե այն: Պե՞տք է այսօր ելնել ապստամբական շարժումներ անել թուրքական կառավարության դեմ:

Օգտակա՞ր է ապստամբական հրավերներ կարդալ հայ ժողովրդին. «Չենք կարծեր. զէթ առ այժմ: Այս նկատմամբ հայաստանցիների ներկայ տրամադրութիւնը աչքի առջև ունենալ բաւական է. անոնք այս դրպէիս հանդարտութեան համամէտ են»[1]: Այս ասելով, միաժամանակ, նշվում է, որ չպետք է դադարել պահանջելուց ազգային թշվառ կացության բարվոքումը, քանի որ առօրյա հարստահարություններն ու տվյալ անապահովությունը շարունակվում են:

«Մի կարեւոր հարց հայ յեղափոխականներին» հրապարակման մեջ կարևոր դիտարկումներ են կատարվում Հայկական հարցի հնարավոր զարգացումների շուրջ՝ կապված տարածաշրջանային և միջազգային հակասությունների հետ: Միջազգային հարաբերությունների հակամարտ ընթացքի մեջ, երբ տերությունների շահերը խիստ բախվում են Փոքր Ասիային ու Օսմանյան կայսրությանը առնչվող խաչուղիներում, ինչպե՞ս ապահովել փոքրիկ ու տկար Հայաստանի գոյությունը, եթե «երբևիցէ կարելի՞ լինի նրան ստեղծել ու կեանք տալ» հզոր ուժե-

---

[1] Նույն տեղում:

րի դեմ-հանդիման[1]: Այնուամենայնիվ, միջազգային բոլոր գործոնների, արտաքին ու ներքին քաղաքական զարգացումների հնարավոր բաղադրիչների հաշվառումով կանխագուշակելի և տրամաբանական է դառնում Հայկական հարցի լուծման երեք ուղի.

«1. Հայ ցեղը բոլորովին բնաջինջ անելով.

2. Հայկական վիլայեթների գրաւումով Ռուսիոյ կողմից.

3. Քաղաքական և վարչական բարենորոգումներով»[2]:

Հատկանշական է, որ «Արմենիա» պարբերականի էջերում մեկ անգամ չէ, որ ենթադրություններ էին արվում այն բանի վերաբերյալ, որ Հայկական հարցի շուրջ ընթացող գործընթացները կարող են ավարտել հայ ժողովրդի բնաջնջումով և հայրենիքի ամբողջական կորուստով:

Փորթուգալյանը և պարբերականի շուրջ հավաքված խմբագրական ակտիվը քաջ գիտակցում էին, որ 19-րդ դարավերջին և 20-րդ դարի սկզբին հայ-թուրքական կնճիռը ընդունել է ծայրահեղ լարվածության ու թշնամանքի անդառնալի ընթացք, և որ հայ ժողովրդի և թուրքական իշխանությունների միջև հաշտության կամուրջները փլուզվել են: Սույն իրողությունը բազմաթիվ ու բազմապիսի շերտերով ու երանգներով մշտապես ակներև էր պարբերականի էջերում: 1901 թ. փետրվարի 20-ի համարում վերոնշյալի վերաբերյալ առանց ոչինչ թաքցնելու, ուղիղ և բացորոշ նշված է, որ «... Հայութեան և թր-

---

[1] «Արմենիա», 1902 թ., թիվ 2:

[2] Նույն տեղում:

քութեան միջև անջրպետն արդարև այնքան լայնացած է և խորունկ, որ այլապէս դարմանումը երազ մը պիտի լինէր»[1]:

Ուրեմն, եթե հաշտեցումն ու դարմանումը անհնարին է, ապա սկսված կռիվը պետք է շարունակել:

Եվ այդ կատաղի, անվեհեր, անհուսահատ և մինչև բաղձալի նպատակ տանող տնական կռվի մեջ միայն հայ ազգությունը կարող է իր ճակատագիրը փրկել: Սույն գաղափարը ոչ դարագլխյան է և ոչ դարավերջյան, այլ «ամբողջ ստրուկ ազգերի ազատագրութեան յաւիտենական հին երգն է: Մինչև այսօր կոշտ ու բռնաւոր ուժին դէմ՝ գաղափարն իր յաջողութիւններ անդադար մարտնչումի, անձնուիրութեան և զոհողութեան միայն պարտական է»[2]: Այո՛, դա այդպես է անկասկած, քանի որ ճնշված ու ստրկացված ժողովուրդների ազատագրությունը այլ կերպ չէր կարող լինել, քան մտքի ու բազկի համատեղ և համաձույլ պայքարով:

Պարբերականի էջերից ի՛ լուր հայության ազգային-ազատագրական շարժման պատասխանատուների հորդորվում է, որ մեր ժողովրդի հավատարմությունն ու համբերությունը այլևս չի կարող իրեն փրկել, քանզի իր կորուստը իր թշնամիներից անդառնալիորեն վճռված է: Ահա այս է մեր ժողովրդի վիճակն ու պարտքը այն օրից ի վեր, երբ իր առջև ցցվել է լինել թե՞ չլինելու անխուսափելի հարցը:

Այս խառնակ թոհուբոհում ի՞նչ կարող էին անել մի խումբ անձնվեր այրեր «մեր այս բազմապահանջ և մեծածաւալ գործին

---

[1] «Արմէնիա», 1901 թ., թիվ 25:

[2] Նույն տեղում:

մէջ, երբ ժողովրդի մեծամասնութիւն դեռ պէտք եղած գաղափարը չունի յեղափոխական դերին վրայ, ատոնք պիտի կրնա՞ն իրենց անօրինակ և հիանալի քաջագործութիւններով պահանջուած հետևանքին հասցունել մեզ»[1]:

Թերթի էջերից արտահայտվում էր գաղափարների և իրականության միջև եղած էական հակասությունը: Այն, որ վիճակը նեստված էր արդեն, մի կողմից ազատագրական շարժումը բորբոքվել էր, հասել զինյալ պայքարի աստիճանին, մյուս կողմից էլ ժողովրդի զգալի հատվածը դեռևս ֆիզիկական, հոգևոր ու բարոյական չափումներով անպատրաստ էր այդ շարժմանը զինվորագրվելուց և մասնակցելուց: Բայց միաժամանակ պետք է նշել, որ ազատագրական շարժման ղեկավար որևէ կենտրոն կամ գործիչ անկարող էին հանդարտեցնել կամ չեզոքացնել ծայր առած շարժումը: Ոմանք մեղադրում են ազգային գարթոնքի նախահայրերին և հայրերին ժողովրդի հայրենասիրական զգացմունքները բորբոքելու և ազատասիրական գաղափարներին ընթացք տալու համար: Սակայն ո՛չ այդ գործիչները, ո՛չ նույն ինքը՝ ժողովուրդը ավելին չէին կարող համբերել, սպասել, քանի որ հակառակորդը գործնական ընթացքի մեջ էր դրել Հայաստանի հայաթափման և արևմտահայության բնաջնջման պլանավորված ծրագիրը: Հենց այդ էր ակնարկում թերթը, երբ հեգնական ոճով նշում էր, որ «... *Սուլթանից չի կարելի խնդրուել որ նա հաճի իր կոտորածն ու հալածանքներ յետաձգել մինչ որ մենք կարողանաք քիչ մը ոյժ պատրաստել*»[2]:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

Քննադատվում են «Դրօշակն» ու դաշնակցական գործիչները, որոնք հաշվի չեն առնում այն հանգամանքները, երբ «մեր շարժում իր գոյութիւն պահելու չափ ժողովրդական ոյժ և սնունդ չունենայ»[1]:

Հայկական հարցի իրազեկման ու ժողովրդականացման նպատակով պարբերականն իր էջերում օգտագործում էր ցանկացած առիթ: Նրանում հաճախ իր շրջաբերական նամակներն էր տպագրում Եվրոպայի հայ ուսանողական միությունը: 1902 թ. դեկտեմբերի 31-ին հրապարակված շրջաբերականում ասվում է, որ երկու կարևոր խնդիր կա ուսանողական տեղական մարմինների գործունեության համար՝ դասախոսություններ Հայկական հարցի մասին և պրոպագանդ մամուլի մեջ իրեն իսկ՝ հայ ուսանողության անմիջական ջանքերով: Վերոնշյալ աշխատանքը փոքր առ փոքր, աննկատելի, բայց հաստատուն կերպով «կը տարածի հայկական ողբերգութեան և կռուի գաղափարը այնպիսի շրջաններում, որոնք մինչև այսօր մնացել են անտեղեակ, անգիտակ և անտարբեր»[2]:

«Ազգային գործերի շուրջ» խորագրի ներքո թերթի էջերում բազմապիսի խնդիրներ էին արծարծվում:

1902 թ. հունվարի 22-ին անդրադարձ է կատարվում ջարդերից հետո Կովկաս ապաստանած գաղթականների կացությանը: Նշվում է, որ թե ռուսական և թե թուրքական կողմին հայ գաղթականների թշվառ վիճակը չի անհանգստացնում: Ուրեմն ինչ անել, «թողո՞ւլ և լքանե՞լ այդ գործը: Հայ յեղափոխութիւնը որ

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1902 թ., թիվ 9:

այդ զաղթականութեան ծագումի պատճառներին մէջ, կամայ ակամայ, մաս և բաժին ունի, այսօր ինքն էլ ատոր համար բան մ' անելու սյարտաւորութեան մէջ չի՞ զգա ինքզինքը»[1]:

Սույն կոչը մասնավորապես հղվում է Հ.Յ.Դաշնակցությանը, որը չպետք է մոռանա այն վտանգներն ու նեղությունները, որոնք փախստականների ոչ միայն «օտարացումին, այլև անկէ աւելի հեռիներ, օտար, ցուրտ աստղերի տակ իրենց անմիջական և անխուսափելի բնաջնջումին պիտի առաջնորդին»[2]: Այսինքն, կոչ էր արվում զաղթականությանը՝ որպես հայության հատվածի, փրկել հնարավոր ուծացումից և ձուլումից՝ հանուն հայոց հավաքականության հետագա ուժեղացման: Գաղթականության ահազնացող և ավերիչ ալիքի վերաբերյալ ահազանգ էր հնչում ամենուրեք: Պետերբուրգում լույս տեսնող «Արաքս» հանդեսը դեռևս 1887 թ. նշում էր, որ գաղթականությունը օրեցօր մեծ կերպարանք է առնում, պանդխտությունը երկրի արդյունաբերող ուժերն է սպանում[3]:

1903 թ. հունվարի 21-ին թերթը հայտնում էր, որ քսան տարեկան մի պատանի՝ Հակոբ Խաչիկյանը ատրճանակով երեք անգամ կրակել է Կ. Պոլսի հայոց պատրիարք Օրմանյանի վրա, որը «արիւնլուայ ինկաւ Ս. Սեղանին առջև»[4]:

Վերոնշյալ դեպքի առնչությամբ Փորթուգալյանը հանդես է գալիս «Սխալ քայլեր» հոդվածով, նշելով, թե սպանության այդ փորձը քաղաքական նպատակադրում է ունեցել և արտասահ-

---

[1] «Արմէնիա», 1902 թ., թիվ 17:

[2] Նույն տեղում:

[3] «Արաքս», Պետերբուրգ, 1887 թ., գիրք Ա, էջ 11:

[4] «Արմէնիա», 1903 թ., թիվ 12:

մանյան որոշ հայ լրագրեր ջատագովել են այն: Սթափ մտածողություն դրսևորելով նա գտնում է, որ այդ ջատագովությունը սխալ գաղափարների արդյունք է և «*մենք կը յուսայինք որ հայ ժողովրդին առաջնորդելու յաւակնողներ, զէթ երկար ու դառն փորձերէն յետոյ, ուսումնասիրած պիտի լինէին թէ հայկական դատի յաղթանակն այս կամ այն անձնաւորութեան սպանելուն մէջ չէ, այլ Հայաստանի արդի վարչական դրութիւնը փոփոխել կարենալու մէջ*»[1] (ընդգծումը մերն – Ա. Կ.): Իրատեսական է այն մոտեցումը, թե մենք խնդրի ներքո չպիտի առնենք Օրմանյանի արժանիքները, այլ կուզենք «խօսիլ աս կետի վրայ թէ հայկական դատի յաղթանակն այժմ մի թէ՞ պատրիարքի ձեռքն է և թէ 1903 թուականին մէջ տակաւին այնչա՛փ միամի՞տ պէտք է լինի հայ ժողովուրդն որ կարծէ Կ. Պոլսի մեր պատրիարքը... և կամ Ազգ. Վարչութեան ատենապետը սպաննելով՝ Հայաստանին ինքնավարութիւն կը տրուի...»[2]:

Կամ խելացի՞ է այն պնդումը, թե Եվրոպան տեսնելով, որ հայերը իրենց պատրիարքին սպանելու ընդունակ են «ասոնք ազատութեան արժանի ժողովուրդ են եղեր ըսելով՝ Հայաստանին ինքնավարութիւն մը տրուիլը յարմար կը դասէ...»[3]: Այդպիսի թելադրությունները, ըստ Փորթուգալյանի, ինքն իր վրա հավատ և վստահություն չունեցող ժողովրդի մեջ կամրապնդեն այն համոզումը, թե հայկական խնդիրն «իր բաղձանքի համեմատ լուծումը ոչ թե իրմէն, այլ ուժով մէկէ մը... և կամ եւրոպացիների գթութենէն կախում ունի, որոնք մեր վիճակին անտե-

---

[1] «Արմենիա», 1903 թ., թիվ 14:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ղեակ մնացած են, իսկ երբ իմանան մեր խեղճութիւն, անշուշտ մեզ օգնութեան կը հասնին»[1]: Խիստ դատապարտելի է համարվում ժողովրդի շրջանում արմատավորել սույն բնույթի խոհերն ու դատողությունները, որոնք հերքումը տարիներ ի վեր տվել են դառն եղելությունները:

«Արմենիայի» էջերում դատապարտվեցին նաև ներկուսակցական և միջկուսակցական խլրտումներն ու երկպառակությունները: 1903 թ. փետրվարի 25-ին հաղորդվում էր, որ Վենետիկ քաղաքում հայերեն թերթ հրատարակող, հռչակավոր հրապարակագիր Արփիար Արփիարյանի վրա «գիշերային հարձակում է եղել սպանելու նպատակով» և այդ ոճրագործությունը քաղաքական դրդապատճառներով է: Ցանկացած հայ, Արփիարյանի հրապարակումներին համակրող լինի թե ոչ, եվրոպական թերթերի մեջ «այդ հեռագիր կարդացած ժամանակ նողկանք ու զայրոյթ զգացած է այդպիսի գարշելի ոճրագործութեան մը դէմ»[2]: Դա այդպես է, քանզի Արփիարյանը գրչի մարդ լինելով, նրա քննադատությանը իր հակառակորդները կարող են գրչով պատասխանել: *Եվ եթե ընդդիմաբար սպանելը «լռեցնելու իրաւացի միջոց մը համարուի, Եւրոպայի մէջ գրագէտ մարդ չմնար, ամէնքն ալ իրար կը սպաննեն և այդ կերպով ոչ մտքի յառաջդիմութիւն կը լինի և ոչ ալ ճշմարտութիւնը կը յայտնուի»*[3]: Ակնարկ է արվում նաև «Հնչակ»-ների և «Դրօշակ»-ների միջև ընթացող պայքարին, որոնք իրար դեմ շատ «գեշ բաներ գրած են, որ եթէ սպաննելը իրաւունք լինէր, իրենցմէ ոչ

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1903 թ., թիվ 17:

[3] Նույն տեղում:

մեկն ալ ողջ չէր մնար այսօր»[1]: Ավելին է ասվում. ընդդիմաբանին լռեցնելու համար ֆիզիկական հաշվեհարդարի ենթարկելը նրա գրավոր ու բանավոր խոսքը հերքելու անկարողության փաստ պետք է համարվի հանրության կողմից:

Սույն երևույթին անդրադառնում է անձամբ Փորթուգալյանը «Թիւրքը կը սպաննէ հային. հայը կը սպաննէ հային» վերտառությամբ հոդվածով, նշելով, որ «խորին ցաւով կը տեսնենք հնչակեան կուսակցութեան մէջ վերջերս ծագած իրարասպանութեան մրցումը... Այդ վարմունք թիւրքի հացին եղ քսել է»[2]: Ուրեմն, հերիք չէ՞, որ թուրքն արդեն առանց խտրականության կսպանե ու կբանտարկե հայ գործիչներին (ինչ կարծիքի կամ կուսակցության պատկանելիս լինեն), հայերն էլ օգնում են թշնամուն այդ գործում:

Պարբերականը անդրադառնում է հայ իրականության մեջ առկա լրագրական բարքերին՝ նշելով, որ վիճաբանությունն էլ իրեն համար սահման ունի, որմից անդին անցնիլը ներելի չէ: Կարելի է շատ տաք և խիստ բառերով վիճաբանել հակառակորդի հետ, մինչև իսկ հայհոյել... Բայց ի՞նչ անուն «պէտք է տալ լրագրի մը այն վարմունքին, որ իրեն տարակարծիք լրագրի խմբագրութիւնը տիրող կառավարութեան մատնանիշ կընէ իբրև անոր հակառակորդ մը»[3]: Այստեղ նկատի ունեն «Անահիտ» հանդեսի (տնօրեն և խմբագիր Արշակ Չոպանյան) վարմունքը: Դատապարտվում է Չոպանյանի՝ իր գրչընկերներին անհիմն ու վտանգավոր որակումներ տալու վարքագիծը («Բա-

---

[1] Նույն տեղում:
[2] «Արմենիա», 1903 թ., թիվ 21:
[3] «Արմենիա», 1901 թ., թիվ 8:

նաւսեր»-ի խմբագիր Բասմաջյանին բնութագրել էր որպես «վայրագ ռուսատյաց»):

1902 թ. փետրվարի 26-ին ««Անահիտ»-ի վարմունքը» հրապարակումով Փորթուգալյանը խիստ քննադատություն է հնչեցնում վերոնշյալ հանդեսի խմբագրին, որն «Արմենիայի» նախորդ դիտողություններին պատասխանել էր բավականին անվայել ու հակաէթիկական կերպով: Հանդիմանանքով ասվում է, որ Չոպանյանը իր «Անահիտ»-ով աւպարեզ իջած պահին մեծ-մեծ խոստումներ էր տալիս հայ ընթերցողների հոգում գեղագիտական ճաշակը զարգացնելու վերաբերյալ և միշտ գրական «էսթէդիքի վրայ խօսելու յաւակնութիւններ ունի, դեռ երէկ գովաբանած ու վրան գուրգուրացած իր մէկ բարեկամին, Սուրէն Պարթևևանին, երբ ելաւ իրեն դէմ գրեց, «մարդկային կղկղանք» սնուանեց իր թերթի մէջ, Լևոն Բաշալեանը, որի հետ դեռ երէկ գրական հրապարակին վրայ կը պագտուէր եղբայրաբար, «ականի մուկերէն աւելի անամօթ» կը կոչէ...»[1]:

«Անահիտ»-ի խմբագրին հիշեցվում է լատինական հայտնի առածը. «Արդիւը ճանճեր բռնելով չզբաղիր»[2]: Հայկական պարբերականներում տիրող վիճաբանության ու քննադատության ցածր ու զոհեիկ մակարդակը անհանգստացնում է «Արմենիային», որն առիթը բաց չի թողնում նշելու, որ «թէ վիճաբանութեանց և քննադատութեանց առթիւ մեր արտասահմանի գրիչներու և գործիչներու մէկ մասի գործածած լեզուն և ոճը իրենց օրինաւոր սահմանէն դուրս ելլելով, ոչ քաղաքավարական կանոնաց կը համապատասխանէ և ոչ ալ հայ հրապարակագրութեան պատիւ կը բերէ»[3]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ XII

ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԵՎ 1908 Թ. ՀԵՂԱՇՐՋՄԱՆ ՄԱՍԻՆ

Հին ու նոր թուրքական կարգերը միավորվում էին միևնույն ատելության մեջ հայերի նկատմամբ:

Ա. Մանդելշտամ

Հայ պատմագրության մեջ դեռևս արդիական է երիտթուրքական շարժման և 1908 թվականին նրանց կատարած հեղաշրջման հանդեպ հայ ազգային- քաղաքական ուժերի ունեցած դիրքորոշումների անաչառ դիտարկումների ու քննական վերլուծությունների գործընթացը:

Երիտթուրքական շարժման ակտիվացումը XX դարի սկզբին պայմանավորված էր Օսմանյան կայսրության ներսում տնտեսական և քաղաքական ճգնաժամի խորացումով: Նոր թափ և խորություն էին ստացել կայսրության հպատակ ու ճնշված ժողովուրդների ազատագրական շարժումները: Հենց թուրք ազգի ներսում սկզբնավորվել էին որոշ ուժեր, որոնք քաջ գիտակցելով կայսրության առջև հայտնված մարտահրավերների ողջ սրությունն ու լրջությունը, ցանկանում էին որոշ բարեփոխումների իրագործման միջոցով երկիրը դուրս բերել ծանրագույն կացությունից և ամեն գնով պահպանել նրա ամբողջականությունը: Վերոնշյալ ուժերին առաջնորդում էր 1889 թվականին կազմավորված «Իթթիհաթ վե թերաքքի» («Միություն և առաջադիմություն») կուսակցությունը, որն էլ հենց գլխավորեց

հակասուլթանական ուժերի համախմբման գործընթացը: Որպես ընդդիմադիր ուժ, երիտասարդ օսմաններն իրենց այլախոհական գործունեությունը կենտրոնացրեցին եվրոպական մայրաքաղաքներում, որտեղ նրանց հայտնի ղեկավար գործիչները դարձան Ահմեդ Ռիզան և սուլթանի ազգակիցներից մեկը՝ իշխան Սաբահեդդինը: Արտասահմանում նրանց համագործակցության ձեռք մեկնեց հայ քաղաքական ուժերի առաջատարը Հ.Յ. Դաշնակցությունը: Դաշնակցության ղեկավարները որոշակի հույսեր էին տածում, որ երիտասարդ թուրքերն իրապես կառաջնորդվեն իրենց որդեգրած նոր մոտեցումներով և վերջ կտան հայության բնաջնջման աբդուլհամիդյան քաղաքականությանը[1]:

Երիտթուրքերի գաղափարաքաղաքական խնդիրներն և գործունեությունը խորապես լուսաբանվել է Մարսելում լույս տեսնող «Արմենիա» պարբերականի կողմից:

Թերթը դեռևս 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին տարբեր առիթներով անդրադարձել է երիտթուրքերի և սուլթան Համիդի եղած գաղափարական և քաղաքական նմանություններին և տարաձայնություններին:

1901 թ. ապրիլի 3-ին «Քանի մը խօսք սուլթան Մէճիտի թոռների ընդհանուր կոչին առթով» խորագրով ծավալուն հրապարակման (այն հոդվածաշար էր) մեջ քննության առնելով Օսմանյան կայսրությունում տիրող ընդհանուր կացությունը, նշվում է, որ Հայկական խնդրի նպատակը չէ սուլթան Համիդին

---

[1] Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI – 1917 թ.), «Գիտություն» հր., Ե., 2004 թ., էջ 528:

տապալել և նրա փոխարեն ուրիշ սուլթան դնել: Գահակալների փոփոխությունը չէ կարևորը, այլ «Մեզ ճնշողը այն ստրկական դրութիւնն է որի գլուխը այսօր կը գտնուի սուլթան Համիտ մը, և վաղը պիտի գայ սուլթան Մէլիմ մը կամ Օսման մը, սուլթանին անունը պիտի փոխուի, բայց պիտի տեսնենք որ միևնոյն հարստահարութիւններ անփոփոխ կը շարունակուին, աւելի կամ նուազ անգութ կերպով»[1]: *Իրավմամբ ճշմարիտ հարցադրում է արվում, որ Հայաստանի հարստահարությունների խնդիրը սուլթան Համիդից առաջ էլ կար և Համիդից հետո էլ պիտի մնա:* Պետք է, որ «թիւրք կառավարութեան իր քրիստոնեայ հպատակների հետ ունեացած վարմունքի դրութիւնը փոխուի»[2]:

Դրվատանքի խոսք է ասվում Միդհատ Փաշայի մասին, որը մեծ եպարքոս եղած ժամանակ «նորութիւն մը գործադրեց մեր պատրիարքարան այցելութեան գալով մինչդեռ ուրիշ եպարքոսներ իրենց բարձրութենէ չէին խոնարհեր այդպիսի քաղաքավարական ցոյց մ' ընելու, կեաւուրների պատրիարքարանն անձամբ գալու»[3]:

Քննադատության սլաքն ուղղվում է երիտասարդ թուրքերի ուղղությամբ, որոնք կուզեն մոռանալ, թե մենք «Թիւրքիացի հայեր ենք, թէ Թիւրքիացի լինելով մէկտեղ հայ ալ ենք և իբրև հայ մեր մասնաւոր զգացումներ և շահեր ունինք, որոնք կրնան չհակառակիլ մեր թիւրքացիութեան, եթէ թիւրքերն իրենց տարամերժող և մոլեռանդական գաղափարներով չուզեն ոչնչա-

---

[1] «Արմենիա», 1901 թ., թիվ 31

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

ցունել ինչ որ հայութեան կը վերաբերի մասնաւորապէս»[1]: Թերթի հրապարակագիրը, ըստ էության, ճշմարիտ է նկատել երիտթուրքերի գաղափարական զինանոցի որոշակի ընդհանրությունները սուլթանական վարչակարգի հետապնդած քաղաքական արժեքների հետ, ընդգծելով, որ երիտթուրքերը նույնպես դեմ են կայսրության ազգային փոքրամասնությունների իրավունքների և առանձնաշնորհումների պահպանմանն ու բնականոն զարգացմանը: Ահա թե ինչու քննադատվում է երիտասարդ թուրքերի այն մոտեցումը, թե ««Մենք ամենքս ալ մէկ ենք. «դադարեցէ՛ք այդ առանձնաշնորհումներ ունենալէ» մեզ ըսելը՝ կը նշանակէ «դադարեցէ՛ք հայ լինելէ և մինակ Օսմանցի եղէ՛ք»»[2]:

1902 թվականի ապրիլի 23-ին «Թուրք ազատականները և «կոչնակ» խորագրով հրապարակման մեջ էլ ավելի խորամիտ և արժեքավոր եզրահանգումներ են արվում երիտասարդ թուրք ազատականների գործելակերպի և գաղափարական նկրտումների կապակցությամբ: Նախնառաջ նշվում է վերոնշյալ շարժման ոչ հետևողական, այլ կիսատ-պռատ բնույթը. ««Ազատական» շարժումը թուրքերուն մէջ գիսաւորի մը նման քանի տարիներն անգամ մը երևան եկած և աներևութացած ըլլալով՝ նպատակին պահանջած ոգին չկրնար վերագրուիլ իրենց»[3]:

Օսմանյան կայսրության պատմության խորքային վերլուծությունից բխում է, որ ամեն անգամ, երբ Թուրքիայի մի մասը վայրագությունների ու դժնդակ կառավարման հետևանքով

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1902 թ., թիվ 30:

երկրից անջատվելու «վտանգին ենթարկուած է, ահա երևան եկած են «ազատական» թուրքերը Սահմանադրութիւն պահանջելով ու վերագրելով վայրագութիւնները տիրող միապետութեան-սուլթանին վրայ»[1]: Իսկ երբ այդ վտանգի օրն ու պահը անցած է, ահա «ազատական» կոչվածների «ձայնը ձունը հաստած է»[2]:

Հիրավի խորաթափանց եզրահանգում:

Դիտարկվում է, որ 25 տարիներ առաջ երիտասարդ թուրքերը երևան եկած են ազատական դրոշին տակ Թուրքիան բարեկարգելու նպատակով: Սակայն քսանհինգ տարի կամ քառորդ դար առաջ սկսված շարժումը չպիտի երբեք առանց մի բարի արդյունքի մնացած լիներ: Թուրք ժողովրդի և թուրքական հասարակության միտքն ու հոգին լուսավորելու, բարքերն ազնվացնելու համար, եթե ժամանակին դպրոցներ, բարեսիրական ընկերություններ «հաստատուած ըլլային, անշուշտ ներկայ թուրք սերունդը ընկերական պարտաճանաչութեան և հաւասարութեան ոգով մասամբ տոգորուած և կարող վիճակի մէջ պիտի գտնուէր...»[3]: Սակայն այդ ամենը չարեցին, չիրագործեցին երիտասարդ թուրքերը, ինչին որ հավակնում էին և որի համար դուրս էին ելել ասպարեզ:

Նրանք «ռուսեթուրք խնդիրները փակուէ վերջ փակեցին և իրենց «ազատ» գաղափարներն ալ... Ու այսօրուայ թուրք ազատականներն ալ իրենց նպատակն իրականացնելու համար

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

ուղղակի բացորոշ միջոցներու չեն դիմեր ինչպէս ամեն ազգեր այդ կերպով բարեկարգուած ու վերակենդանացած են»[1]:

Հետաքրքիր և ուսանելի է թերթի այն դիտարկումը, որ ցանկացած երկրի վարչություն, հոռի կամ լավ, ժողովրդի հոգու և ներքին տրամադրությունների արտացոլանքն է:

Եվ բարեշրջված ազգերի պատմությունը «մեզ կը սորվեցնէ թէ իրենց բարեշրջումն յառաջ եկած է ժողովրդի հոգեկան տրամադրութիւններէն և իրենց բարեկարգիչներ, այդ երկրի վարչութիւնը բարեկարգելու համար, դիմած են ուղղակի ժողովրդին և անոր հոգին բարեկրթած են, ոչ թէ ազգերու կամ դահլիճներու դիմած են»[2]:

Այստեղ, անշուշտ, նկատի է առնված օսմանյան երիտասարդ բարենորոգիչների փորձերը՝ ուղղված հայ, հրեական, մակեդոնական, արաբական առաջադեմ ու հեղափոխական ուժերին, որպեսզի միասնական ճակատով առաջնորդվեն ընդդեմ սուլթանական վարչակարգի: Իհարկե, հետագան ցույց տվեց, որ երիտթուրքերը ամենևին ազնիվ չէին իրենց նպատակադրումներում:

1901 թ. ապրիլի 10-ին Մ. Փորթուգալյանը ծավալուն հոդվածում արծարծումներ կատարելով բարենորոգումների շուրջ, նշում է, որ հայերը որպես ազգ իրենց գոյությունն ու առանձնահատկությունները պահպանելուն են բնականորեն նպատակադրված:

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

Եվ այդ զգացմունքի դեմ «մաքառիլը բնականին դէմ մաքառիլ է և ինչ որ բնութեան կը հակառակի, չյաջողիր»[1]: Նա նշում է, որ ազգերի մեջ համերաշխություն գոյացնելու համար պետք է ազգային դյուրազգացությունները վիրավորելուց զգուշանալ:

Իսկ երբ բարենորոգիչ հորջորջվող սահմանադրական թուրքերը հրապարակով «կելնեն կը մերժեն հայերին ունեցած իրաւունքները Բերլինի դաշնագրին զօրութեամբ և նոյն իսկ անկէ առաջ ունեցած դարաւոր իրաւունքներն ու առանձնաշնորհումներն ալ, այդպիսի պարագայի մէջ գործածուած միութիւն ու համերաշխութիւն խօսքերը լոկ վերացական բառեր կը մնան»[2]:

Մեծանուն հրապարակախոսը զարմանք է հայտնում, որ նույնիսկ ազատական կոչված թուրքերը ժխտում և ուրանում են Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումների անհրաժեշտությունը և ընդհանուր երկրի մեջ բարենորոգումներ մտցնելու պատրվակով կջանան պատռել դաշնագրի այդ մասը, ուրեմն ո՞վ է մեղավոր «երբ օտար պետություններ ելնեն միջամտել իրենց և Թիւրքիայի ստորագրած դաշնագրի մը գործադրութիւնը պահանջելու համար»[3]:

Նա պաթետիկ ոճով շեշտադրում է հետևյալը. «դուք կուզէք ընդհանուր Թիւրքիայի մէջ բարենորոգումներ մտցունել: Շա՛տ լաւ. Հայերը հակառակ չեն ատոր. սկսեցէք ուրեմն նախ հայաբ-

---

[1] «Արմենիա», 1901 թ., թիվ 32:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

նակ տեղերէն... և հետզհետէ տարածեցէք ամեն կողմ ձեր բարենորոգումներ»[1]:

Փորթուգալյանը համոզված պնդում է, որ ազատական թուրքերի նպատակների մեջ չկա հայկական խնդրին լուծումը, այսինքն, անհապաղ գործադրութեան խոստումով. «23 տարիէ ի վեր եղած յանձնառություն գործադրելով հայաբնակ երկիրներին մէջ տեղական պահանջներին բարենորոգումներ մտցունելը»[2]: Ըստ նրա, ազատական թուրքերի գերագույն խնդիրն է տապալել սուլթան Համիդին և «Միտհաթի Սահմանադրութիւնը, որ 1877-ին պալատական խնդրին ժամանակ խաղցուած կատակերգութիւն մ' է, թերևս մի քանի յաւելուածներ և սրբագրութիւններ ընելով նորէն հրատարակել»[3]:

Թուրք բարենորոգիչների գործունեության առիթով է շեշտադրվում այն պնդումը, որ Թուրքիան եթե ուզում է ապրել, ապա նա պետք է վերանորոգվի: Իսկ եթե Թուրքիան աչքերը «գոցէ արդի պատմութեան դասերի վրայ և յամառէ իւր անշարժութեան մէջ, ապա նա խղճալի աւար կը դառնայ եւրոպական մեծ պետութեանց ձեռքին»[4]:

Ուշադրությամբ հետևելով Օսմանյան կայսրությունում և նրա շուրջ ընթացող իրադարձություններին, պարբերականը անհրաժեշտ տեսական ու վերլուծական նյութ էր փոխանցում իր ընթերցողներին: 1908 թ. փետրվարի 29-ին թերթում հրապարակվեց Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի համա-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1904 թ., թիվ 40:

ժողովի (կոնգրես) հայտարարությունը, որտեղ ի մասնավորի ասված էր հետևյալը. «Երեսնամեայ այս թագաւորութիւնը աղէտալի եղած է ոչ միայն, ինչպէս յանիրաւի կը կարծուի, քրիստոնեայ ժողովուրդներուն – զօրս սուլթանը կը հալածէր և կը ջարդէր իր սեփական շահուն համար –, այլ նաև իսլամներուն»[1]:

Հայտարարության մեջ հշմարիտ էր դիտարկվում, որ կայսրության բոլոր ազգերը հաջորդաբար դարձան Աբդուլ Համիդի եղեռնական քաղաքականության զոհերը. «անիկա յաջորդաբար մղեց զանոնք մէկը միւսին դէմ, գրգռելով և արծարծելով արհեստական ատելութիւն՝ ցեղերուն և կրօններուն միջեւ»[2]:

Պարբերականի հաջորդ համարներում արտացոլվում էր Թուրքիայի ընդդիմադիր ուժերի կոնգրեսի ընդունած վերոնշյալ համատեղ հայտարարության արձագանքները հայ իրականության մեջ:

Նշվում էր, որ այն արժանացել է իրարամերժ, հակասական գնահատականների: Հատկապես խիստ գնահատականներ էին հնչել հնչակյան կուսակցության շրջանակների կողմից:

Ըստ «Արմենիա»-ի, հնչակյանների հակառակության պատճառն «այս եղած է որ Համաժողովին նախաձեռնարկ եղող և յաջողցունողները դաշնակցականներն են եղած»[3]:

Այս առումով թերթի խմբագիրը՝ Մ. Փորթուգալյանը ընդգծում է, որ «իրօք պետք է խոստովանիլ թէ Դաշնակցութեան ներկայացուցիչ Ակնունիի եռանդուն և անվիատ ջանքերի շնորհովն էր ոչ կարելի եղաւ իրարի հակառակ շահեր ունենալ

---

[1] «Արմենիա», 1908 թ., թիվ 39:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1908 թ., թիվ 40:

կարծող թիւրքացի հայեր, թիւրքեր, արաբներ, հրեայներ և այլն միասին բերել և զանոնք համոզել իրենց ընդհանրութեան վերաբերեալ մի քանի կէտերի վրայ համերաշխաբար գործելու»[1]:

Փորթուգալյանը հաճույքով խոստովանում է, որ երբեմն կամ հաճախ դաշնակցականներից ոմանց ազգավնաս գործերն ու գեղծումները քննադատել ու պախարակել է իր թերթի էջերում, սակայն անկողմնակալությունն ու ճշմարտության սերը «կը սյահանջեն որ իրենց կատարած հանրօգուտ գործերն ալ ներկայացունեմ այնպէս ինչպէս որ են»[2]:

Եվ դա (ճշմարտությունն ասելը – Ա. Կ.) եղել է թերթի սկզբունքը, ճիշտ այնպես, ինչպես «կընդունինք թէ 2×2=4 կընէ, ո՛վ ալ լինի այդ ըսողը, ինչակեան թէ դաշնակցական, յեղափոխական թէ պահպանողական»[3]:

Ի դեպ, պետք է նշել, որ «Արմենիա» թերթի խմբագրությունը, ի թիվս այլ պարբերականների, նույնպես մասնակցել է վերոնշյալ կոնգրեսի աշխատանքներին:

1908 թ. ապրիլի 25-ին «Թիւրիմացութիւններ» խորագրով հոդվածում Փորթուգալյանը նորից անդրադառնում է Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի Փարիզյան համաժողովի հայտարարության արձագանքներին: Նա քննադատում է այն տեսակետները, թե Փարիզի համաժողովին մասնակցող հայերը հայկական դատը մեռցրել, ոչնչացրել են. «Ո՞ր տեղէն ստուած են այդ տեղեկութիւն կը զարմանանք: Իրենք իրենցմէ երևակայական լուրեր կը հնարեն և յետոյ կը սկսին վիճիլ, կռուիլ

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

և ահագին էջեր մրոտել իրենց հնարած լուրերի դէմ»[1]: Նման կարծիք տարածողներին նա հայտնում է, որ հայկական խնդիրը ներկայացված չէր Փարիզի համաժողովում և ներկա հանգամանքների մեջ տակավին չէր կարող ներկայացվել, քանզի այն թուրքաբնակ բոլոր ժողովուրդների դժգոհ տարրերից կազմված համաժողով էր և «հետևապէս Թիւրքիային վերաբերեալ ընդհանրական խնդիրներ կը կազմէին իր օրակարգը»[2]:

Փորթուգալյանը այս անգամ լավատես է դառնում, գտնելով, որ ողջ աշխարհն է շարժվում առաջադիմության ճանապարհով, թուրքերն էլ ստիպված են շարժվել այդ ուղիով, հեղափոխվելու պատրաստվել և «մենք... իբրև Թիւրքիայի հայեր, իբրև միևնոյն հողի վրայ ծնած եղբայրներ (թօփրագ գարտաշը), մենք ալ կօգտուինք այդ ազատական յառաջդիմական շարժումէն, քանի որ համերկրացիութեան ընդհանրական շահեր մեզ կապած են իրար հետ»[3]:

«Արմենիայի» խմբագիրը խիստ քննադատության է ենթարկում Վառնայում հրատարակվող և հնչակյանների ազդեցության ներքո գտնվող «Իրավունք» պարբերականի դիրքորոշումը, այն համարելով «ապուշի մը գրածներ»: «Իրավունք»-ը խստորեն դատապարտել էր ընդդիմադիր ուժերի կոնգրեսի հայտարարությունը՝ կապված Հ.Յ.Դաշնակցության մասնակցության հետ: Այս առիթով Փորթուգալյանը հակադարձում է, որ «փոխանակ... անտեղի յարձակումներ ընելու դաշնակցութեան վրայ, որ աշխատեր և յաջողեր է ազատական թիւրքերի մէկ կարևոր մասին

---

[1] «Արմենիա», 1908 թ., թիվ 41:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

եղբայրական ձեռք մեկնել տալ դեպի թիւրքացի միւս ազգութիւնները»[1]:

Հետագայում Փորթուգալյանը ավելի ու ավելի ոգևորվելով երիտթուրքական շարժման հաջողություններով, թերթի էջերում դրվատում, գունագեղ ու պայծառ գույներով է ներկայացնում երիտթուրքական հեղափոխության ընթացքն ու հեռանկարները:

Սույն երևույթը, թերևս, բնորոշ էր հայ քաղաքական իրականությունը ներկայացնող ուժերի և անհատների մեծամասնությանը: Այո, հայոց քաղաքական կազմակերպությունները, մամուլը ցնծության և խանդավառ ոգորումների մեջ էին: Երիտթուրքական հեղաշրջման ազդեցության ներքո «Արարատ» ամսագիրը գրում էր, որ երիտասարդ թուրքերի կառավարության խելոք գործունեությամբ և մակեդոնական զորքի ապստամբությամբ թուրքական դաժան իրականությունը սահմանադրական է դառնում[2]: «Արևելք» պարբերականը հաճույքով արձանագրում էր, որ «հրեշներու հրէշ Համիդ գահէն գլորվեցաւ»[3]: Երևի այդ օրերին քչերը կարող էին երևակայել ու պատկերացնել, որ երիտթուրքերն իրենց բուն իրական գործունեությամբ ավելի դաժան ու հրեշավոր կլինեն, քան նույնիսկ սուլթան Համիդը: Երիտթուրքական հեղափոխության տեսլականով հատկապես ոգևորված էր հայ իրականության առաջատար քաղաքական ուժը՝ Հ.Յ.Դաշնակցությունը: Դաշնակցական պարագլուխները իրենց պաշտոնաթերթի միջոցով հայտարարում էին,

---

[1] «Արմէնիա», 1908 թ., թիվ 43:

[2] «Արարատ», 1908 թ., հուլիս-օգոստոս, էջ 720:

[3] «Արևելք», 1910 թ., հունվարի 1, թիվ 7221:

որ եթե մինչև հիմա Հայկական հարցը միջազգային դիվանագիտության քննարկման առարկա էր, ապա այժմ դառնում է Թուրքիայի ներքին խնդիր, որի լուծումը պետք է ակնկալել ոչ թե մեծ տերություններից, այլ համաօսմանյան պառլամենտից[1]:

Սույն տրամադրություններին տուրք էր տալիս նաև «Արմենիա» թերթը: 1908 թ. օգոստոսի 5-ին Մ. Փորթուգալյանը գրում էր, որ վերջապես Թուրքիան էլ սահմանադրական տերություն դարձավ և Թուրքիայի բոլոր ժողովուրդները, առանց ցեղի և կրոնի խտրության, սկսան փոքրիշատե ազատ շունչ քաշել և ուրախության աղաղակներով ողջունել թուրքական սահմանադրության նորածագ արևը: Նա համոզված էր, որ Թուրքիայում բնակվող հայության սրտից բխած ուրախության աղաղակները հերքողական պատասխանն են «այն իմաստակությունների, զրպարտութիւնների և հայհոյանքների դէմ որ հնչակեան թերթերն այս առիթով ուղղեցին մեզ... Երբ թիւրքեր կը՝ յարգեն մեր ազգային իրաւունքներ ու դիւրազգածութիւններ և եղբայրական ձեռք կերկնցունեն մեզ, անշուշտ սիրալիր կը թոթվենք անոնց ձեռքեր, որովհետև մենք ալ հայ լինելով մէկտեղ Թիւրքիացի ալ ենք և իբր Թիւրքիացի փափաքող ենք նաև Թիւրքիայի ընդհանուր բարեկարգութեան»[2]: Ըստ Փորթուգալյանի համոզման, հնչակյանները, ինչպես երևում է, ո՛չ հայ ժողովրդի և ո՛չ թուրք ժողովրդի ներկա վիճակն ու պետքերը տակավին չեն ըմբռնել, քանզի «չեն տեսներ թէ թիւրքերն ալ կը շարժին ու կը յառաջդիմեն... Իսկ մենք հեռուէն սրտագին ար-

---

[1] «Դրօշակ», 1908 թ., թիվ 7, էջ 115:

[2] «Արմենիա», 1908 թ., թիվ 1:

ձագանգ կուտանք թիւրքիաբնակ մեր հայ եղբայրներին որոնք կը գոչեն այժմ Կեցցե՛ Սահմանադրութիւն, կեցցեն Ազատութիւն, Հաւասարութիւն եւ Եղբայրութիւն»[1]: Նույն համարում մեկ այլ հոդվածում («Շարժումը-Թիւրքիաի մէջ) գովաբանվում էր երիտթուրքերի կազմակերպչական ձիրքն ու ունակությունները, նրանց առաքինությունները:

Նշվում է, որ քաղաքների փողոցներում «միտինկներ կը գումարուին և ազատաշունչ ճառախօսութիւններ կը լինին Երիտասարդ Թիւրքերի կողմէն: Թափորներ կազմած և իրենց առջևէն դրօշակներ պարզած, որոնց վրայ գրուած են Ազատութիւն, Հաւասարութիւն, Եղբայրութիւն...»[2]: Հաղորդվում է, որ երիտթուրքերի մեծ թափոր այցելել է Գումգափուի հայոց պատրիարքարանը, որտեղ Օրմանյան պատրիարքի բացակայությամբ վարդապետ Եղիշե Չիլինկիյանն է ընդունել նրանց. «գիրկընդխառն համբուրեր, ազատաշունչ ատենախօսութիւններ եղեր և երիտասարդ թիւրքեր իրենց դրօշներ ծածանեցունելով պոռացեր են. «Կեցցեն հայերը, կեցցեն յոյները, հրեայները»»[3]: Ըստ նույն աղբյուրի, թափորներով փոխադարձ համակրության այդ կարգի ցույցեր տեղի են ունեցել նաև հույների պատրիարքարանի և բուլղարների էկզարքարանի առջև: Այս ամենի հանրագումարով է եզրահանգվում, որ երկար ժամանակ ազատության ծարավի մնացած ժողովուրդն այժմ իր ձեռք «անցուցած ազատութեան նեկտարովն արբած՝ ուրախութեան շռնդալի ցոյցեր կնէ»[4]:

---

[1] «Դրօշակ», 1908 թ., թիվ 7, էջ 115:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

1908 թ. սեպտեմբերի 9-ին «Դէպի գործ» վերնագրված հոդվածում Փորթուգալյանը շեշտում է, որ կարծես ժամանակը եկել է լրջորեն գործի անցնելու, ձեռք բերված ազատություններից առավելագույնս օգտվելու:

Եվ սահմանադրության պարգևած մեծ բարիքն այս է,– գրում է Փորթուգալյանը,– որ ժողովուրդն իր ընտրած երեսփոխանների միջոցով, իրավունք կունենա իրեն համար օրենքներ հրատարակելու և կառավարության գործերի վրա մի տեսակ հսկողություն սահմանելու: Ուրեմն, թուրքաբնակ հայերի ուշադրությունը ամենից ավելի գրավող գործը պետք է լինի հիմա «թէ մեր Ազգային ժողովի և թէ Օսմանեան խորհրդարանին համար, երեսփոխանների ընտրութիւնը: Դժբաղտաբար մենք կը տեսնենք որ Կ. Պոլսի հայ թերթերին մէջ ամէնէն քիչ տեղ բռնողն է այս խնդիրը»[1]:

Սակայն նույն 1908 թվականի աշնանը, թերթում արդեն տագնապալից լուրեր էին հրապարակվում հայոց նոր կոտորածների վտանգի առնչությամբ: 1908 թ. հոկտեմբերի 28-ին «Կոտորածի լուրեր Հայաստանէն» խորագրով հաղորդվում էր, որ «լուրեր նկատած են պրտրտիլ թէ Տիգրանակերտի, Վանի, Բաղէշի կողմեր քիւրտեր և հին դրութեան կուսակից թիւրքեր սկսած են կոտորածներ ընել»[2]: Անհերքելի էր համարվում, որ Թուրքիայի ներքին գավառներում հին բռնակալության ներկայացուցիչները սկսել են հակառակվել նոր վարչակարգի դեմ, հայերի ազատությունն ու հավասարությունը իրենց շահերին հակառակ համարելով: Թուրքական կառավարությունն էլ, «ինչպէս կերևի, պէտք եղածին չափ կառավարել գիտ-

---

[1] «Արմէնիա», 1908 թ., թիվ 6:
[2] «Արմէնիա», 1908 թ., թիվ 13:

ցող մարդեր չունի դեռ ներքին գաւառները բարեկարգելու համար»[1]: Տազնապով ասվում էր, որ Վանից եկած վերջին տեղեկությունների համաձայն, այն հարստահարիչ քուրդ բեկերն ու ցիաշաները, որոնք քաղաք «բերուած էին իբր թէ դատելու համար, քիչ մը կաշառք խաղցունելէ յետոյ արձակուէր և վերադարձուեր են իրենց տեղերու ուր վերըսկսեր են իրենց հարստահարութիւններ»[2]:

Նու-Յորքից օրիորդ Նազլուն գրում էր, որ ակնկալ-անակնկալներից անդրանիկը եղավ Թուրքիայի սահմանադրական տերությունն վերածվելը: Եվ ով գիտե, թե հետագա հինգ «տարուայ միջոցին քանի՛ քանի այդպիսի անակնկալ առիթներ պիտի կրկնուին և որոնք մեզ կրկին անպատրաստ գտնեն»[3]:

Անակնկալներ եղան, սակայն հայության համար միայն ծանր, բացառական ու ողբերգական իմաստով:

Շուտով, շատ շուտով երիտթուրքերը սկսեցին արագացնել հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման գործընթացը:

1909 թվականի ապրիլին երիտթուրքերը սոսկալի դաժանությամբ իրագործեցին կիլիկիահայության կոտորածները՝ խլելով շուրջ 40 հազար հայերի կյանքը:

Սակայն, դա ոչինչ էր այն աղետի դիմաց, որն սպասվում էր արևմտահայությանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: «Ազատասե՛ր», «եղբայրասե՛ր», «հավասարասե՛ր» երիտթուրքերը սառնասրտորեն ու անողոքաբար նախապատրաստում էին հայ ժողովրդի ցեղասպանությունը:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1908 թ., թիվ 16:

ԼՐԱԳՐԻ ԴԵՐԻ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՎՈՐՈՒՄԸ

Հրատարակության առաջին իսկ ամիսներից «Արմենիայի» խմբագրակազմը մշտապես շեշտադրել, կարևորել է ազգային-ազատական լրագրի ներկայությունը հայ ժողովրդի կյանքում: Արդեն 1885 թ. սեպտեմբերի 16-ին «Թիւրքիան չուզէր լսել» խորագրով խմբագրականում նշվում է, որ Օսմանյան տերության բարձրագույն հրամանով արգելված է «Արմենիայի» մուտքը Թուրքիայի տարածք: Սույն արգելքը մեկնաբանվում է այն բանով, որ թուրքական բարձրագույն իշխանություններին ամենևին հաճո չէ լսելու արդարության ձայնը. «Կը զարմանանք ձեր խելքի վրայ, կուզէ ասել Նորին Բարձրութիւնը, որ մինչև այժմ դեռ չէք հասկցած եղեր այն առած թէ ձուկը գլխէն կը հոտի: Մի՞թէ մենք չենք կարող, եթէ փափաք ունեանք, իմանալ և բառնալ այն հարստահարութիւններ որ դուք կը նշանակէք: Մի՞թէ դուք չէք հասկցած դեռ... այդ հարստահարութիւններ փաշաներին և չորպաճիներին անել տուողը մենք ենք և երբ դուք նոցա դէմ կը գրէք Արմէնիայի մէջ, մեր ջիղերի կը դիպչի, մեզ դէմ գրած և մեզ գրգռած կը լինիք»[1]:

Ահա այսպիսի հեգնական ոճով է Փորթուգալյանը իր ընթացողներին բացատրում է, թե թուրքական կառավարությունը ինչո՞ւ է խորշում արդարության և ճշմարտության ձայնը լսելուց:

---

[1] «Արմէնիա», 1885 թ., թիվ 10:

Եվ չնայած թուրքական իշխանությունների կողմից հետագա ճնշումներին, պարբերականի խմբագրությունը լի էր հատուկ վճռականությամբ, շարունակելու սկսած գործը: Որպես խտացումն ասվածի, վերոնշյալ խմբագրականը ասելիքն ամփոփում է այսպես. «Թիւրքիան որոշեր է վերջապէս բնաւ խօսք չհասկնալ. բայց հոգ չէ. մենք կը շարունակենք գրել»[1]: Հրատարակությունից 13 տարի անց, «Արմէնիայի գործը» խմբագրականում Փորթուգալյանը գնահատելով և իմաստավորելով նախորդ տարիների ձեռքբերումները, թերթի դերի և նշանակության մասին գրում է. «Արմէնիաի հիմնադիր-խմբագիրը պատուհմամբ կամ գործով մը եկած ինկած չէ Եւրոպա ապրուստ ճարելու համար, *այլ որոշ ծրագրով և Հայաստանի մէջ երկար տարիների գործունէութեան հետևանքն եղած էր Արմէնիաի հիմնումը*»[2] (ընդգծումը մերն է – Ա. Կ.):

Նրա կարծիքով, այդ ժամանակ մի մեծ հանդգնություն էր Եվրոպայի մեջ հայերեն ազատական թերթի հրատարակումը: Դժվարությունները և կազմակերպչական, և ֆինանսական, և հոգևոր ու բարոյական բնույթի էին: Դեռևս չկար հայ գաղթօջախների կողմից անհրաժեշտ բարոյական, ֆինանսական, գաղափարական աջակցությունը, ավելին, արտասահմանի հայերի մեծամասնությունը այն աստիճան անծանոթ էր Հայաստանի ողբալի կացությանը, որ «շատեր կըսէին այն ատեն թէ սուտ են Արմէնիաի գրածները. մի թէ այդպիսի հարստահարութիւններ կը լինին Հայաստանի մէջ»[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1898 թ., թիվ 53:

[3] Նույն տեղում:

Փորթուգալյանը հատկանշում է, որ «Արմէնիայի» հրատարակության կարևոր նպատակակետն էր հայաստանաբնակ հայության ողբալի իրավիճակին ծանոթացնել ազատ երկրներում բնակվող հայությանը և նրանց ուշադրության առարկա դարձնել Մայր հայրենիքի վիճակը:

Եվ վերջապես թերթի պարտականությունն էր «հայ զգացած մեր ցավերի համար ձայն բարձրացունել և անոնց ճար մը գտնելու համար խորհրդակցիլ ազատօրէն»[1]:

Լրագիրը այդ կերպով պետք է հանդիսանար հաղորդակցության մի միջոց՝ ճնշված և ազատ վայրերում ապրող հայերի միջև, լուրեր ստանալու և լուրեր տալու, գաղափար տարածելու մի միջոց:

Ուրեմն, հիմնելով «Արմէնիա» լրագիրը, «մենք ուզած ենք մեր ունեցած փորձութիւնների համեմատ մեր գաղափարներ հաղորդել ժողովրդին և մեզ գործակցող խումբին, մեր ու անոնց գործունէութեան փորձառութիւնները փոխանցել մեզ հետ կապուած ու մեզ յաջորդող գործիչներին որոնց հետ կցորդութեան մի կապ եղած կը լինի «Արմէնիա» լրագիրը»[2]:

Մ. Փորթուգալյանը բնատուր խելքով ու ձիրքերով ճշմարտացի էր պատկերացնում համահայկական մի ազատ պարբերականի դերը իրարից վարչական ու քաղաքական սահմաններով տարբաժանված հայության տարբեր հատվածները հոգևոր ու բարոյական կապերով միմյանց շաղկապելու գործում: Հենց այդ կարգի լրագրի միջոցով կարելի էր նպատակ և ուղղություն

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:

ցույց տալ ժողովրդին, զգուշացնելով նրան ազգավնաս ընթացքից և հիմնավորապես առաջ մղելով դեպի բարին, դրականն ու օգտակարը:

Մեկ այլ հրապարակման մեջ՝ 1898 թ. դեկտեմբերի 21-ին, Փորթուգալյանը վերստին նշում է լրագրի խաղացած կարևոր դերակատարումը համազգային հաղորդակցության ոլորտում: Նա հետևյալ հարցադրումն է անում. «Հետաքրքիր եղիր և իմացիր թէ դեռ Արմէնիան հրատարակուիլ չսկսած, 13 տարի առաջ, հայ գաղութներն ի՞նչ տեղեկութիւն ունեին ազգային վիճակին և մասնաւորապէս Հայաստանի վիճակին վրայ, ի՞նչպիսի նոր ոգի մը արթնցաւ այդ գաղութների մէջ և հետզհետէ ո՞ւր հասաւ գործը»[1]:

Շարունակելով սույն թեմայով երկխոսությունը ընթերցողների հետ՝ Փորթուգալյանը մատնանշում է այն առավելությունները, որ տալիս է լրագիրը քաղաքակիրթ ժողովուրդներին: Ըստ նրա, լրագրի անհրաժեշտությունը այնպիսի «հանրածանօթ բան մը է հիմա աշխարհի վրայ որ կիսավայրենի ժողովուրդներն անգամ սկսած են այդ պէտքը զգալ»[2]:

Լրագրային գործը հանրային, հասարակական հնչեղության գործ է և հանրային ուժով այն պետք է առաջ տանել, որպեսզի ազգօգուտ և հանրօգուտ գաղափարներն առավել լայն արմատավորվեն հասարակական գիտակցության խորքերում: Զանազան առիթով նա մշտապես հորդորում է, որ իր բուն կոչումը՝ ըմբռնող՝ հայ խմբագրի՝ պարտականությունն է առաջնոր-

---

[1] «Արմէնիա», 1897 թ., թիվ 13:
[2] «Արմէնիա», 1897 թ., թիվ 9:

դել հանրային կարծիքը, ոչ թե գլուխ ծռել տարբեր կողմերից փչող քամիների առջև:

Ուսանելի է այն դիտարկումը, որ ժողովրդականության դափնիներ շահելու համար չէ, որ հանդես կգա «Արմէնիա» պարբերականը, այլ ժողովրդին օգտակար լինելու, նրա շահերին ճշմարտապես ծառայելու նպատակով:

Եվ խուտովանանքի պես հնչեցնում, որ անշուշտ «կը սիրենք հաճելի լինել ժողովրդին, բայց աւելի կը սիրենք օգտակար լինել անոր»[1]:

Փորթուգալյանը, առանց կեղծ համեստության, բարձր էր գնահատում իր հիմնադրած լրագրի դերը հայ ազգային կյանքի վերանորոգման, ազգային տեսլականի հստակեցման գործում: Առանց հոգնելու ու ձանձրույթի, նշում էր, որ «Արմէնիան» հիմնուած է մեր հայրենիքի ազատության գաղափարը ժողովրդի մեջ տարածելու, «անոր վրայ հայ ժողովրդի ուշադրութիւնը դարձունելու և մեր ազգի իսկական վիճակի ու պահանջների վրայ ճիշտ տեղեկութիւններ հաղորդելու պաշտօնով»[2]:

Հետևապես, վերոնշյալ նպատակին ծառայող պարբերականը անձնական գործ չի կարող հանդիսանալ, այլ ընդհանրական և գաղափարական, ուստի խմբագրի անձնական ջանքերից զատ, «ընդհանուր գաղափարակիցներն ալ պէտք է իրենց ջանքեր և աջակցութիւն միացունեն յառաջդիմութեան համար»[3]: Թերթի օժանդակության, գաղափարակիցների համախմբման, հետապնդած գաղափարների տարածման գործը կանո-

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1905 թ., թիվ 43:

[3] Նույն տեղում:

նավոր կազմակերպելու համար հրապարակվեց «Արմէնիայի» օժանդակների կանոնագիրը։ Նրա առաջին կետը հռչակում էր, որ «Արմէնիայի» օժանդակ «կը կոչուին անոնք, որոնք կուզէն կանոնաւորապէս նպաստել Արմէնիայի զորանալուն և տարածուելուն»[1]։ Օժանդակի բարոյական պարտականությունն էր իր կարողությունների ներածին չափով աշխատել «Արմէնիա» լրագիրը տարածելու և նրա նյութական զարգացմանը նպաստելու։

Փորթուգալյանը գտնում էր, որ ճոճռան խոսքեր, կողմնակի և անուղղակի «ճանբաներով փախուստի մեկնութիւններ և կանոնադրական քննադատութիւններ պէտք չեն այժմ. գործ պէտք է, միանալ և կազմակերպուիլ պէտք է»[2]։ Նրան չէր վհատեցնում այն, որ քչերը կարող են ձեռք երկարացնել սույն գործին միանալու համար։ Սակայն այդ «քիչուորութիւն պէտք չէ յուսահատցունէ մեզ. ընդհակառակ այդ պէտք է աւելի սաստկացունէ մեր եռանդ, այդ պետք է մեզ համոզէ թէ դեռ շատ պէտք կայ եռանդով աշխատակցելու»[3]։

Ափսոսանք է արտահայտվում, որ հայ ազգը զարգացման այն աստիճանին չի հասել, որ ինչպես օժանդակում է իր դպրոցին ու եկեղեցուն, նույնպես նաև իր ազգային մամուլի օժանդակության անհրաժեշտությունը զգար և հարկ եղած չափով օգներ նրա տարածմանը ու զարգացմանը։

Այս առումով ճշմարտացի է հնչում այն մտահոգությունը, որ որևէ մեկ անհատ որչափ էլ անձնվիրությամբ աշխատի

---

[1] Նույն տեղում։
[2] Նույն տեղում։
[3] Նույն տեղում։

հանրային գործի համար, ինքնին չի կարող մեծ բանի հասնել, եթե հանրությունը պետք եկած չափով չօգնե նրան։ Կրկին շեշտվում է, որ «Արմենիա» պարբերականի գլխավոր գործը պետք է լինի հայրենիքի ազատության գաղափարը տարածել ժողովրդի մեջ, զգուշացնել մեր հայրենակիցներին ներքին և արտաքին թշնամիներից, հետզհետե գաղափարակիցներ ավելացնելով և իրար միացնելով զորեղ ուժ առաջ բերել մի օր նպատակին հասնելու համար։

Լրագրի գործը համեմատվում է պատերազմի դաշտում գտնվող ռազմիկի հետ, այն տարբերությամբ, որ «պատերազմին դաշտին վրայ գնդակահար մի քանի վայրկենի մէջ մէռնիլը չէ այնչափ դժուար որչափ ամբոխի տգիտութեան և նախապաշարումներին դէմ կռուիլը և երկար տարիներ իր ազգի համար հոգեմաշ տանջանքների մէջ չարչարուելով և ամէն օր մաս առ մաս սպաննուելով գործելը»[1]։ *Այո՛, սա առանց չափազանցության, ճշմարիտ համեմատություն է, քանզի հայ խմբագիրն ու գրողը, ուսուցիչն ու դաստիարակը տարիներ ու տասնամյակներ շարունակ անում էին շատ ավելի ծանր ու տառապալից գործ, քան հեղափոխականն ու զինվորը մարտի դաշտում։*

Մ. Փորթուգալյանը սովորաբար պարբերականի յուրաքանչյուր տարեշրջանի բացման առիթով հանդես էր գալիս խմբագրական ամփոփիչ խոսքով, որում ի՛մ էր բերում անցյալն ու նախանշում նոր անելիքները։ 1895 թ. մայիսի 11-ին հրապարակած «Արմենիա-ի 11-րդ շրջանին առթով» խմբագ-

---

[1] «Արմենիա», 1905 թ., թիվ 45։

բականում ասված է, որ թերթի դավանած սկզբունքներն ու մոտեցումները կմնան անփոփոխ։

«Արմէնիան» 10 տարիներ ի վեր ինչ ուղղությամբ «որ շարունակուած է, նույն ուղղութեամբ կը շարունակուի և յառաջիկային մէջ»[1]։ Կենսականորեն կարևոր էր համարվում հայրենիքի վերակենդանության և վերածնության համար ազգային գիտակցություն ու առողջ գաղափարներ տարածելը ժողովրդի շրջանում, որով պիտի ձևավորեր ներքին մի զորեղ ուժ։

Մատնանշվում է վերջին տասը տարիների ընթացքում, ինչ «Արմէնիան» ասպարեզի վրա է, ինչպիսի փոփոխություններ և շարժումներ գոյացած են եվրոպաբնակ հայ գաղթականությունների մեջ, այդ այնքան ակներև է, որ «մենք աւելորդ կը համարինք մանրամասնութիւնների և բացատրութեան մտնել, ցոյց տալու թէ լրագրի հրատարակութիւնը ի՛նչ տեսակ մի ոյժ է»[2]։ Նորից ընդգծվում է, որ ներկա ժամանակների մեջ գաղափարներ տարածելու և զորացնելու ամենակարևոր գործիքներից մեկը հենց լրագիրն է, անչափ անհերքելի ճշմարտություն ընդունված ամբողջ աշխարհի կողմից։ Այս ճշմարտությունը ընդունելի է անգամ ամենահետամնաց երկրներում, նույնիսկ «Զուլուստանի մէջ ալ սկսեր են հիմա լրագիր հիմնել իրենց լեզուով։ Ուստի, մեր ազգային գործի յառաջդիմութեան համար լրագրին պէտքը չհասկցողը Զուլուստանի մէջ անգամ հիմա զարգացած ու գործէ հասկցող մարդ մը չհամարուիր»[3]։

---

[1] «Արմէնիա», 1895 թ., թիվ 80։

[2] Նույն տեղում։

[3] Նույն տեղում։

Ուրեմն, ըստ «Արմենիայի» խմբագրի, ազգերի առաջադիմությունը մեծապես հիմնված է լրագրային գործի վրա։ Փորթուգալյանը բազմաթիվ անգամներ ստիպված է լինում հիմնավոր կերպով պատասխանել իրեն և ազգային գործը հանիրավի վարկաբեկողներին ու արհամարհողներին։ «Մի քանի դիտողութիւններ «Ազատ Բեմ»-ի գրածների առթով» հոդվածում կետ առ կետ հերքվում են Վերակազմյալ հնչակյան կուսակցության Եգիպտոսի օրգանը հանդիսացող վերոնշյալ պարբերականում արտահայտված հերյուրանքները։ Իր բոլոր հակառակորդներին ի՛ գիտություն նա հայտնում է, որ պատանեկան հասակից սկսած ազգային գործերով է մշտապես հետաքրքրվել, ազգի համար գրչով, խոսքով ու գործով աշխատել։ Բուն հայկական գավառում աշխատելով, որպես հեղափոխական թուրքական իշխանությունների կողմից հետապնդվել է, հետ է ուղարկվել Կ.Պոլիս։ Որպես խոստովանանք է հնչում այն պնդումը, որ «Կ.Պոլսէն ոչ թէ փախայ և այստեղ եկած ստիպուեցայ խմբագրութիւն ընել, այլ օրինաւոր անցաթուղթով, իմ ազատ կամքով և իմ մտադրած ծրագրով եկայ Ֆրանսիա... սկսայ հայերէն ազատ թերթ մը հրատարակել, արտասահմանի հայերին ալ ուշադրութեան առարկայ դարձնելու համար հայկական խնդիրը»[1]։

Հետագա տողերից երևում է, թե նա որքան վիրավորված է հայկական իրականության մեջ առկա ծանր, անարդարացի բարքերից։ Սույն թեման շարունակելով, հայտնում է, որ ոչ ոք

---

[1] «Արմենիա», 1906 թ., թ.թվ 38։

«զիս կանչեց այստեղէ, ոչ ոք զիս ղրկեց այստեղ և ոչ ոք ինծի պաշտօն և ամսաթոշակ յատկացուց ատոր համար»[1]:

Որպես ազգին նվիրված ճշմարիտ հայրենասեր, Փորթուգալյանը հրապարակավ ուխտել է շարունակել ազգի վերածնությանը ուղղված գործը մինչև կյանքի ավարտը: Ուստի, գտնում է, որ ոչ ոք իրավունք ունի «ինծի ըսելու թէ դադրէ ալ ազգիդ համար աշխատել է: Ես կը հաւատամ թէ ամէն մի հայի, ինչ տարիքի և դիրքի ալ պատկանի, սրբազան պարտքն է կրցածի չափ աշխատել իր ազգի համար»[2]:

Այո՛, չափազանց կարևոր է սույն խոստովանությունը, որ ոչ թուրքական կառավարության հրապուրիչ խոստումները, ոչ «ինծի հասցված վնասները, ո՛չ ալ իմ հայրենակիցներէս միամիտ մէկ մասին անգիտաբար ինձ դէմ յարուցած դժուարութիւններն ու խոչընդոտները չըկրցին զիս ցարդ հեռացունել այս ասպարեզէն»[3]:

Ընդ որում Փորթուգալյանը ընթերցողների առջև միշտ արդարանում է, որ իր պարբերականի կոչումը գաղափարի տարածումն է, իսկ իր գործակիցները նրանք են, որոնք այդ գաղափարի խորհրդանշանը հանդիսացող լրագրի տարածմանն են նպաստում: Սակայն «Արմենիա» լրագրի խմբագրությունը ինքը երբեք հավակնություն չէ ունեցել «հայկական ապստամբութեան մը կամ յեղափոխական շարժման մը իր լրագրի անունով»[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1906 թ., թիվ 44:

Սա շատ կարևոր հստակեցում է, որը վերստին վկայում է Փորթուգալյան գործչի խոհեմ և զգուշավոր կեցվածքի մասին: Ըստ պարբերականի խմբագրի, «Մեր պաշտօնն է հող մշակել, սերմանել և ջրել. մենք կը խորհինք թէ արդէն գործին ամենէն դժուար մասն ալ այս է, սկզբնական գործողութիւնն է. երբ այս գործադրուի, մնացած ալ յաջորդաբար կը կատարուի»[1]:

Ուրեմն, լրագրի կատարած գործը (գաղափարների մշակումն ու տարածումը) հեղափոխական աշխատանքի առաջին և ամենակարևոր մասն է:

Եվ քանի լրագիրն ու լրագրողները մտքի և գաղափարի մշակներ են, նրանց սերմանածը ժողովուրդը «պտղաբեր պիտի դարձունէ»[2]:

Փորթուգալյանը մեծ ուշադրություն էր դարձնում լրագրական բարքերում ազնիվ և արդարացի մոտեցումների կիրառմանն ու պահպանմանը: «Արմէնիայի» էջերում հաճախ էին քննադատվում այն պարբերականները, որոնք խախտում էին լրագրական էթիկան: «Արմէնիայի» խմբագրությունը գտնում էր, որ ցանկացած վիճաբանություն իրեն համար պետք է սահման ունենա, որից «անդին անցնիլը ներելի չէ»[3]:

Հայ լրագրական աշխարհում տեղի ունեցող անցուդարձը երբեմն ընդունում էր այնպիսի աղետալի, խայտառակ բնույթ, որ թվում էր, թե պատերազմական վիճակում են գտնվում այդ լրագրերը: Այդ կապակցությամբ «Արմէնիան» հրավեր էր կար-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմէնիա», 1901 թ., թիվ 8:

դում արտասահմանի մեջ գրական ասպարեզի վրա գտնվող գործիչներին, որ «այս մասին Զինադուլ մ' ընեն»[1]:

1902 թ. մարտի 12-ին «Արմենիան» նշում է, որ լրագրությունն էր միակ քիչ կամ շատ արտահայտիչը և անբնական չէր, որ «գիրը ամեն բան նկատուէր և անոր զօրութեամբ մինչև Յեղափոխութիւններ յարուցուելու ելլուէր»[2]:

Սակայն ինչ-որ նվազ ընդունելի է այսօր, երեկվա տխուր փորձություններից հետո տակավին շարունակվող ու բազմապատկված պղտոր խոսքի հեղեղն է, «Պղտորող մասնաւորապէս միամիտ ու տգէտ ժողովրդային դասակարգի մը հոգին, երկիրէն դուրս և անոր մէջը»[3]:

1904 թ. հունիսի 4-ին «Արմենիայի» 20-րդ տարեշրջանի առիթով թերթը շնորհակալություն էր հայտնում իր այն գաղափարակիցներին, որոնց աջակցությամբ «յաջողած է, շատ մը խոչընդոտների ու արգելքների վրայէն անցնելով և յայտնի ու գաղտնի թշնամութիւնների դէմ կուրծք տալով, 19 տարիներէ ի վեր շարունակել իր ճանբան»[4]:

Հազարերորդ անգամ շեշտվում էր թերթի հանրահայտ նշանաբանը՝ Հայը Հայաստանին և Հայաստանը հային:

Ուրեմն, թերթի առաքելությունն էր նախապատրաստել հայության փրկությունը բացառապես հայ ժողովրդի միջոցով և դրա համար նախնառաջ լուսավորել հայոց միտքը, ցույց տալ իրեն ազատության ճանապարհի կարևորությունը և անհրա-

---

[1] «Արմենիա», 1902 թ., թիվ 23:
[2] «Արմենիա», 1902 թ., թիվ 24:
[3] Նույն տեղում:
[4] «Արմենիա», 1904 թ., 4 հունիսի:

ժեշտությունը, վերջապես ցույց տալ ճշմարտությունը և կռվել ամբոխի տգիտության դեմ:

1907 թ. հոկտեմբերի 12-ին ««Մշակ» լրագիրը» ակնարկում ուրախությամբ արձանագրված է, որ Թիֆլիսում լույս տեսնող հայտնի պարբերականը սկսել է վերահրատարակվել: Կարևորելով «Մշակի» դերը որպես ժողովրդական անկախ լրագիր հիմնված 35 տարի առաջ մեծանուն հայրենասեր Գր. Արծրունու կողմից, միաժամանակ դրվատվում է այդ լրագրի անկողմնակալ, օբյեկտիվ բնույթը: Այն պարտավորված չէ «ապրելու համար շողոքորթել դաշնակցական կամ հնչակեան, այլ անկողմնակալ կերպով կը գովէ անոնց լաւ գործերը և կը պախարակէ վատ արարքը, միշտ վեր դասելով ժողովրդի շահերը այդ կուսակցութիւնների շահերէն»[1]: Ցավով ասվում է, որ Ռուսաստանի հայ մամուլի մի մեծ մասն այժմ ճնշված է ոչ այնչափ «ռուսական ցէնզորայէն որչափ դաշնակցութեան բոյկոտէն, որով չեն կարող երկարատև կեանք ունենալ»[2]: «Արմէնիան» զգաստ հնչեցնում է, որ ամոթ պիտի լիներ Ռուսիայի հայ ժողովրդին, եթե «Մշակի» պես ժողովրդական անկախ թերթը 35 տարի գոյություն ունենալուց և հայ ազգին բազմաթիվ ծառայություններ մատուցելուց հետո, դադարման վիճակին ենթարկված մնար: Հետևապես «Մշակի» գործունեության վերսկսումը շատ ուրախալի երևույթ է կովկասյան հայ մամուլի տարեգրության մեջ:

---

[1] «Արմէնիա», 1907 թ., թիվ 34:

[2] Նույն տեղում:

«Արմենիայի» էջերում բուռն բողոք ու ցասում արտահայտվեց ու արձագանքվեց ճանաչված գործիչ, գրող Արփիարյանի դաժան սպանության կապակցությամբ: 1908 թ. փետրվարի 29-ին Կահիրեից ուղարկված թղթակցության մեջ ասվում է, որ Արփիարյանի հուղարկավորությունը համազգային մասշտաբի իրադարձություն եղավ. «Ամբողջ Գահիրէն ոտքի վրայ էր: Ազգային պաշտօնական մարմնէն սկսած մինչև յետին անծանօթ գաղթականը, վերջին գերագոյն յարգանքը տալու համար այս բազմամեայ գործիչին»[1]: Դատապարտելով ոճրագործությունը և ոճրագործներին, որ խմբակի կամ հոսանքի պատկանելիս լինեն, ընդգծվում է այն հանգամանքը, թե ազատության անունից խոսողներն ու գործողները «ելած են այժմ սպաննել մարդկային ամենաթանկագին իրաւունքն եղող ազատութիւնը, մտածումի ազատությունը»[2]:

Արփիարյանի սպանության շուրջ կապված բազմաթիվ արձագանքներ հետագայում ևս տեղ գտան թերթի էջերում: Ինքը պարբերականի հայրենասեր խմբագիրը «Վայրենական բարքեր» խորագրով հոդվածում հետևյալ հարցադրումներն է անում. «Բայց մինչև ե՞րբ պիտի տեւեն մեր մէջ այս վայրենական բարքեր: Թիւրքէն կը զանգատէինք թէ կարծիքի ազատութիւնը, մամուլի ազատութիւնը կը խեղդէ գրաքննութեան ենթարկելով. հոս, արտասահմանի ազատ երկիրներին մէջ, հայեր կան, որոնք ոչ թէ թիւրքին պէս հայերին կարգիլեն գրելը, այլ կը

[1] «Արմենիա», 1908 թ., թիվ 39:
[2] Նույն տեղում:

սպաննեն գրողները և զիրենք արդարացունելու համար մատնիչ կանուանեն զանոնք...»[1]:

Փորթուգալյանը ի լուր հայ քաղաքական բոլոր ուժերի, վճռականապես հայտարարում է, թե պետք է վերջ տալ այս վայրենական բարքերին, պետք է ազատել հայ ստեղծագործ միտքն ու գրիչը տգետների ու ազատության թշնամիների բռնություններից: Դա կարևորում է սույն գործոնով, թե քաղաքական ազատություն ձեռք բերելու համար նախ մտքի և կարծիքի ազատություն է պետք:

Նա գտնում է, որ հարկ եղած քաջությունը պետք է ունենալ անվիատ ու համառ պայքարելու «մեր ազգակիցների մէջ տիրել սկսած այս բռնապետական վայրենի բարքերի դէմ. պէտք է արի լինել տգիտութեն դէմ անվախ կռուելու և ազատ երկիրների մէջ գոնէ հայ մամուլի ազատութիւնը ապահովելու համար»[2]:

Ուրեմն, պարբերականի խորին համոզմամբ, այս չարանենգ սպանությունը հիրավի նենգ ու դաժան հարված էր հայ մամուլի ազատությանը, և առհասարակ, ազատ խոսքի իրավունք ունենալուն:

Պարբերականը ամեն գնով ջատագովում և խրախուսում էր մամուլի ազատությունը: 1908 թ. հոկտեմբերի 7-ին թերթը ազդարարում էր, որ քսանչորս տարի արգելված մնալուց հետո, «Արմենիան» ազատորեն կարող է տարածվել Թուրքիայում: Այս քայլը համարելով օսմանյան սահմանադրության վերահաստատման բարիքներից մեկը, ընդգծվում էր ազատ խոսքի

---

[1] «Արմենիա», 1908 թ., թիվ 3:

[2] Նույն տեղում:

կարևորությունը ժողովրդավարական կարգերի ձևավորման բարդ ու դժվարին գործընթացներում[1]:

Լրագրի՝ ժողովրդի կյանքում կարևոր դերակատարության և գործառույթների նշանակությունն է շեշտադրվում, երբ անգամ խոսք է բացվում Մ. Փորթուգալյանի գրական ու աշխատանքային վաստակի, նաև հոբելյանական հանդիսությունների մասին:

Հայտնի է, որ գաղութներում լայնորեն նշվեց Մ. Փորթուգալյանի լրագրողական ու հասարակական գործունեության քառասնամյակը և այդ առիթով թերթի էջերում եղան առանձին հրապարակումներ և տեղեկատվական բազմազան բնույթի նյութեր: Բոլոր հրապարակումներում էլ կարմիր թելի պես անցնում է այն գաղափարը, որ Փորթուգալյանի նման անհատը չէր կարող սիրած գործը՝ լրագրությունը չծառայեցնել ազգի ազատագրության նպատակին:

Մարսելում, Կ. Պոլսում և այլուր հայությունը 1914 թ. լայնորեն ոգեկոչում է վերոնշյալ հոբելյանը: Թերթի էջերում հոբելյանի ոգեկոչումը վերածվում է հայ հանրային և ազատագրական գործի փառաբանության: Հենց այդպիսի ոգով և ոճով է գրված վաստակաշատ հոբելյարի խոսքը՝ ուղղված պոլսահայ մամուլին. «Կը սիրեմ յուսալ թէ այս յոբելեանական հանդէսը քաջալերմը պիտի լինի նաև երիտասարդ գործիչներին որոնք կը տեսնեն նսան թէ հայ ազգը գիտէ գնահատել իրեն մատուցուած ծառայութիւնները և թէ պէտք է գործեն ոչ թէ իրենց փառքի հա-

[1] «Արմենիա», 1908 թ., թիվ 10:

մար, այլ իրենց բարոյական պարտքը կատարելու զգացումով միայն»[1]:

Իսկ ավելի վաղ՝ XX դարասկզբին, երբ գաղութներում հանդիսություններ էին կազմակերպվում, ի նշանավորումն «Արմէնիայի» հրատարակության քսանամյակի, վերստին իմաստավորում էր ազգային գործերի մեջ Փորթուգալյանի անշահադետ մասնակցության կարևորությունը, որն անգամ նկատելի էր օտար միջավայրի գործիչներին: Նրանցից օրիորդ Պլաքուելը ԱՄՆ-ի հայաշատ նահանգներից մեկում կայացած հանդիսության ժամանակ այսպես է իր հիացմունքը արտահայտել. «Պր.-ն Փորթուգալյանի նկատմամբ շատ անգամներ լսած եմ իր աշակերտներէն. անոր լաւ հայրենասէր մը, անկեղծ գործիչ մը ըլլալուն լաւ տեղեակ եմ: Ես անոր աշակերտներէն քանիներուն ծանօթացած եմ. բոլորն ալ պատուաւոր ու ազնիւ երիտասարդներ գտած եմ, ուրկէ կրնամ հասկնալ պր.-ն Փորթուգալյանի ազնիւ նկարագրի մը տէր ըլլալը»[2]: Նույն հանդեսում պաթետիկ ոճով խոսք է ասում տիկ. Հայկանուշ Զաքարյանը, ընդգծելով, որ «Անկեղծ ու անձնուէր գործիչին անցելոյն մէջ ունեցած փառաւոր գործերուն և ներկային դէպի հայ ազգը տածած սիրոյն վրա յենլով՝ կը գտնենք թէ հոգիով ու սրտով ազգին նուիրող անձնուիրութեան մը մարմնացումը եղած է Տիար Փորթուգալյան»[3]: Փորթուգալյանի համակ կերպարը լավագույնս կերտող սույն գործիչը թանձրացնելով գույները, նշում է, որ այս մեծ հրապարակախոսն ու խմբագիրը «ազնուութեան վեհ ու վսեմ

---

[1] «Արմէնիա», 1914 թ., թիվ 42

[2] «Արմէնիա», 1904 թ., թիվ 11:

[3] «Արմէնիա», 1904 թ., թիվ 12:

սկզբունքներով տոգորուած, որոշած է այն կեանքը ապրիլ որն իր մէջ բարձրագոյն իտէալ մը ունի։ Անցեալ քառորդ դարուն մէջ միշտ աշխատած է իր ազգին համար, թէ՛ կրթական և թէ՛ յեղափոխական գործերու նախնական վիճակին մէջ ճշմարիտ առաջնորդի դեր կատարած է»[1]։

Իր գործունեությամբ և իր իսկ անձնական օրինակով Մ. Փորթուգալյանը ցույց տվեց, թե ինչպես կարելի է սեփական անձը զոհել ազգային ու համազգային բարձր նպատակների համար։ Գտնվելով միանգամայն աննպաստ հանգամանքների ու միջավայրի մեջ, նա չերկնչեց ծանր վիճակից ու դժվարություններից և իր պարբերականի օգնությամբ փորձեց կրթել ու շտկել հայ սերունդների միտքն ու հոգին, նրանց վարակել ազատասիրական ու հայրենանվեր գաղափարներով, հայրենիքին նվիրվելու ջերմ շնչով ու պատգամով։ *Ընդամենը մեկ պարբերական արեց այնքան շատ բան, որ հավանաբար չէին կարող անել գորքերի ընտիր դասակներն ու գումարտակները։*

Այո՛, «Արմենիան» իր նպատակասլաց հայրենասիրական գործունեությամբ յուրովի շրջադարձ նշանավորեց տվյալ դարաշրջանի և հետագա շրջանի հայ-հասարակական-քաղաքական մտքի զարգացումների համար, էականորեն նորոգեց ու փոխեց հանրային ընկալումներն ու ըմբռնումները աշխարհասփյուռ հայության հոծ հատվածների շրջանում։

---

[1] Նույն տեղում։

ԳԼՈՒԽ XIV
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ, ԳԱՂԹԱՇԽԱՐՀԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՀԱՐՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ

«Արմէնիան» որպես համազգային պարբերական, գործունեության ընթացքում մշտապես անդրադառնում էր գրականությանը, արվեստին, հայագիտությանը, գաղութահայ աշխարհին վերաբերող հարցերին ու հարցականներին: Գրականությանը և մշակույթին վերաբերող որևէ լուրջ իրադարձություն, տոնակատարություն և հոբելյան, չի վրիպել և դուրս չի մնացել թերթի տեսադաշտից: Այն անդրադարձ է կատարել ոչ միայն գրական ու մշակութային հոբելյանական իրադարձություններին, այլև բուն գրական-գեղարվեստական խնդիրներին, նաև գրողի և արվեստագետի անմխիթար, երբեմն նույնիսկ շատ ծանր սոցիալական կացությանը: Թերթը անդրադառնում էր հայագիտական այն հաստատություններին, որոնք կարևոր ներդրում են ունեցել հայոց մտավոր ու մշակութային կյանքում:

1901 թ. մայիսի 8-ին «Մխիթարյան միաբանության երկուհարյուրամյակը» խորագրով հոդվածով գնահատվում էին Մխիթարյան միաբանության ձեռքբերումներն ու վաստակով լեցուն տարեգրության էջերը: Նշվում է, որ հայ իրականության մեջ «Մխիթարի հաստատածին պէս գործ մը կատարել որ դարերով շարունակուի, շատ դժուարին բան մ' է: Եւ Մխիթար Աբ-

բայէն ի վեր 200 տարի անցած է ու դեռ չէ ելած հայ մը որ յաջողուած լինի նոյնպիսի գործ մը հիմնել որ Յարատեւէ»[1]:

Սա այն բացառիկ բարձր գնահատականն էր, որը թերթն իր շուրթերով շռայլում էր հայագիտական նշանավոր հաստատությանը: Ըստ պարբերականի, Մխիթարյան միաբանության հաջողությունների գաղտնիքը զանազան նպաստավոր հանգամանքների մեջ կարելի է որոնել, սակայն երբեք չի կարելի ուրանալ, որ «ամենէն գլխաւորն եղած է իր ազգի կրթութեան գործին ծառայելու համար անոր ունեցած վառ եռանդն ու անվհատ կամքը»[2]: Մխիթար աբբայի կողմից անկաշառ ու անանահանջ հայրենասիրության ոգին է ներարկվել իր աշակերտներին, որն էլ, ի վերջո, սույն հարատևության գլխավոր գրավականն է:

Վերջում, կրկին իմաստավորելով Մխիթարյանների երկուհարյուրամյա փառահեղ հոբելյանը, թերթը *վերջիններիս բնութագրում է որպես հայ գրականության համար լուսատու ջահի:*

1901 թ. նոյեմբերի 27-ին թերթը մահագույժով ընթերցողներին տեղեկացնում էր անվանի հայագետ, մատենագիր, Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանի վախճանի մասին, նշելով, որ հայությունը ժամանակակից մեծ դեմքերից մեկին կորցրեց և նա «անմահների կեանքովը կապրի այլևս»[3]: Այսպիսի ճշմարիտ բնորոշումով է գնահատվում նրա անցած ուղին. «Ալիշանի հոգին այս աշխարհիս վրայ ուղղութեան երկու գիծ ճանչցաւ՝ իր Ազգը և իր Միաբանութիւնը՝ որոնք իրա-

---

[1] «Արմենիա», 1901 թ., թիվ 36:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1901 թ., թիվ 9:

րու զուգահեռական նկատեց և որոնց մէջէն միշտ անսայթաք սահեցաւ գնաց մինչև իր վերջին հանգրուանը»[1]:

1901 թ. հունվարի 23-ին «Մահագոյժներ հայ գրագիտական աշխարհէն» խորագրի ներքո հաղորդվում էր հայ երկու անվանի մտավորականների «Արևելյան մամուլի» խմբագրապետ Մատթեոս Մամուրյանի և արձակագրուհի տիկ. Տյուսաբի մահվան մասին: Հատկապես կարևորելով Մ. Մամուրյանի ազգօգուտ գործունեությունը, նշվում է, որ վերջինս որպես հրապարակագիր և ազգային պաշտոնյա (վարել է Կ. Պոլսի պատրիարքարանի դիվանապետության պաշտոնը) ծանոթ էր ամենքին: Կարելի է Մամուրյանի այսինչ կամ այնինչ գրվածքին համամիտ չլինել, իր այս ինչ կամ այն ինչ խնդրի մեջ ունեցած վարմունքին չհամակրել, բայց անկարելի է ուրանալ «իր ունեցած արժանիքը իբրև հմուտ և բազմաշխատ գրագէտ մը և իբրև ազգային արդիւնաւոր գործիչ»[2]:

Իսկ տիկ. Տյուսաբի անձի և գործի վերաբերյալ ասվում էր, որ նա լինելով Մ. Պեշիկթաշլյանի աշակերտուհին, տարիների ընթացքում դառնալով հայ հռչակավոր գրագիտուհի, իր հրատարակած հանրահայտ վեպերով «կիների հաւասարութեան իրաւունքին ախոյեան մը հանդիսացած է և որին երկար ժամանակ է ի վեր հիւանդ լինելը հրատարակած էինք արդէն...»[3]:

Թերթն ընթերցողներին սնում, դաստիարակում էր հայ գրողների և նրանց գրական հերոսների լավագույն հատկութ-

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1901 թ., թիվ 21:

[3] Նույն տեղում:

յունկերով և ավանդույթների ուժով, հրատարակում ընտիր հատվածներ գրական լավագույն գործերից:

Այսպես, «Ռաֆֆիի կեանքից» խորագրի ներքո ուսանելի դրվագներ ներկայացվեցին մեծանուն վիպասանի կենսագրության էջերից, փորձելով նրա խիզախությամբ և իմաստնությամբ տոգորել պատանիներին և երիտասարդությանը: Դիտարկելով գրողի գործունեության կարևոր մանրամասները, նշվում է, որ «... Նոյն իսկ այն դէպքը, որ Ռաֆֆին տասնուվեց տարեկան հասակում, գիմնազիստ ժամանակը, մեն-մենակ ուղտի վրայ ճանապարհորդել է Փոքր Ասիայի մի մասում, ցոյց է տալիս, որ նա անձնական վտանգները արհամարհում էր»[1]: Ըստ թերթի մեկնաբանության, Ռաֆֆին շատ էր սիրում խոսել հայերի անհատական քաջության մասին և հաճախ էր շեշտում, որ եթե այդ «անհատական քաջությունը ընկերական լինէր, հայերը կարող էին աշխարհի երեսի մի զօրեղ ազգ լինել»[2]: Ռաֆֆու օրինակով, նրա շուրթերով ու պատգամներով, հանրային գիտակցության մեջ սերմանվում ու արմատավորվում էր անհատական շահն ու քաջությունը հանրայինին ու ազգայինին ստորադասելու անհրաժեշտությունը: «– Ամեն մի հայ, առանձին վերցրած – առիւծ է, ինչպէս և խելքով ու դատողութեամբ – հսկայ: Բայց ընկերական ոգու բացակայութիւնը, խմբովին գործելիս, ջլատում է նրա ոյժերը»[3]: Փորթուգալյանի առանձնահատուկ ուշադրության կենտրոնում մնում էր Վանը, որի հետ այնքան անմոռաց հիշողություններ պահպանեց իր ողջ կյանքի ըն-

---

[1] «Արմենիա», 1904 թ., թիվ 37:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

թացքում: Վանի հասարակական և մշակութային անցուդարձից թերթում հաճախ էին նյութեր հրապարակվում: Երբեմն առանձին ներկայացվում էին Վասպուրականի գավառները՝ իրենց բնորոշ վարք ու բարքերով, տնտեսական և սոցիալական վիճակով, դպրոցական հաստատություններով ու եկեղեցիներով:

Այսպես, Աղբակի գավառը ներկայացնելով ցույց էր տրվում, թե ինչպես է երբեմնի հայաշատ այդ շրջանը ֆիզիկական և հոգևոր-բարոյական առումներով դատարկվում հայությունից: Հայությունը իր հայրենիքում կանգուն կարող էր մնալ երկու կարևորագույն գործոնների զուգակցումով՝ կրթական օջախներով և հավատի տաճարներով: Հենց Աղբակի գավառը, որ մի ժամանակ ամբողջապես հայաշատ էր, իր հոգևոր խորհրդանիշ հռչակավոր «Ս. Բարթողիմէոսի վանքը իր հովանաւորութեան տակ դարերէ ի վեր խնամած պահպանած էր մի հոծ հայութիւն»[1]:

Գեղեցիկ ակնարկաշարով ընթերցողին ներկայացվեցին Վասպուրականի հինավուրց հոգևոր հաստատություններից մեկի՝ Վարագա վանքի անցած ուղին ու ներկա պատկերը: Ըստ թերթի վկայակոչման, Վարագա հանրահայտ դպրոցը 1911 թվականից սկսած գյուղատնտեսական թեքում ստացավ ժամանակի պահանջներից ելնելով: Այդ նպատակով պլանավորված էր դպրոցական շենքի երկրորդ հարկի կառուցումը, բացի դա գնվել էին նոր սիստեմի եվրոպական գործիքներ, «ինչպէս հնձող մեքենայ, գութան, արօր, սերզատ մեքենայ, թխսիչ մեքենայ (նուիրուած կուսակալ Թահսին պէյէն), ցէնտրուֆաքս և այլ

[1] «Արմենիա», 1907 թ., թիվ 19:

մեղուապահական գործիքներ, ինչպէս նաև 10 նոր տեսակ փեթակներ»[1]: Դպրոցը իր ծախսերով աշակերտ է ուղարկել Կովկաս՝ մեղվապահություն և կաթնատնտեսություն ուսանելու համար, որն արդեն վերադարձել է և որպես մասնագետ գործում է վանքի մեջ:

Դպրոցը 1914 թ. տվյալներով, ուներ 70 աշակերտ և 8 ուսուցիչ, որոնց գլուխն է տեսուչ Արտակ Դարբինյանը՝ բազմափորձ և բազմահմտաց մի անձնավորություն և իր պաշտոնին լինելով միանգամայն արժանի անհատ: Դպրոցն ուներ հինգ շրջան, որ «կսկսի Դ դասարանէն և կը վերջանայ Ը դասարանին մէջ: Դ դասարան կընդունուին գիտակցան նախակրթարան աւարտող 12-15 տարեկան աշակերտներ»[2]: Յուրաքանչյուր տարեշրջան բաժանվում էր երկու մասի՝ ամառային գործնական և ձմեռային տեսական շրջանների: Նույն պահի դրությամբ, Վարագա վանքն ուներ «1.000 լիրայի մօտ ելք ու մուտք. կը պահէ 130 անձէ բաղկացեալ բնակչութիւն մը»[3]:

Այս ամենից բացի կամ այս ամենին զուգահեռ, Վարագն իր շուրջ «արթնցուց գուրգուրանք, ոգևորութիւն և համակրանք»[4]: Վանի կրթական կյանքի անցուդարձի մեջ «Արմէնիայի» էջերում հիշատակվում է ամերիկյան տխրահռչակ միսիոներ, դոկտոր Ռեյնոլտսը, որը շուրջ 30 տարի հաստատվել և գործունեություն էր ծավալել Վան քաղաքում: 1906 թ. օգոստոսի 1-ին թերթը հիշատակում է նրան, որը եկել էր Եվրոպա, Վանում իր

---

[1] «Արմէնիա», 1914 թ., թիվ 39:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

բացած որբանոցներին ու արհեստանոցներին նպաստ հայթայթելու համար[1]:

Թերթը անդրադարձել էր Վանի կրթական ոլորտի կարևոր դերակատարներից մեկին՝ Գրիգոր Աճեմյանին (Գուրգեն Մահարու հայրը), նրա վաղաժամ մահվան կապակցությամբ: Գր. Աճեմյանը եղել է արմենականների հիմնադիրներից մեկը, երկար ժամանակ Վանի տարբեր կրթօջախներում բեղմնավոր մանկավարժական գործունեություն ծավալել: Վանի ազգ. վարժարանաց ուսուցչական մարմինը, ինչպես նաև քահանայական դասը և առաջնորդական տեղապահ Տ. Ներսես Խոպայանը Կ. Պոլսի պատրիարքարան ուղղված նամակում «գուժելով Ս. Սանդխտեան աղջկանց վարժարանի տնօրէն-դաստիարակ Գրիգոր էֆէնտի Աճէմեանի մահը... կը դրուատեն հանգուցելոյն իբր ուսուցիչ ունեցած արդիւնաշատ աշխատութիւնները և ծառայութիւնները տեղւոյն մանկաւոյն դաստիարակութեան գործին համար»[2]:

Պարբերականը մեծ ցավ ու ափսոսանք է արտահայտում Գրիգոր Աճեմյան պես ազնիվ ու վաստակաշատ մտավորականի կորստյան առթիվ:

Ռաֆֆիի մահվան 15-րդ տարելիցի կապակցությամբ 1903 թ. հոկտեմբերի 21-ին նորից անդրադարձ է կատարվում մեծ գրողի գործունեության և վաստակի գնահատմանը: Վերոհիշյալ առիթը, ըստ թերթի մեկնաբանության, գալիս է հիշեցնելու, որ գրական սույն անվանի գործիչը իր գրչով շատ բանով

---

[1] «Արմենիա», 1906 թ., թիվ 40:
[2] «Արմենիա», 1907 թ., թիվ 34:

նպաստեց ազգային ոգու և ինքնապաշտպանական գաղափարների տարածմանը թե՛ Ռուսիայի, թե՛ Թուրքիայի հայության շրջանում: Նրան հաջողվեց իր վեպերի միջոցով այնպիսի «շունչ մը փչել հային որ թմրած ժողովուրդն իրեն մէջ ոյժ մը զգայ ինքնապաշտպանութեան կռուին համար և սկսաւ շարժիլ ու պստրաստուիլ յառաջանալու համար դէպի հայ ազգային վեհ իտէալը»[1]:

Գրական և ազգային գործիչների հանդեպ թերթի էջերում միշտ խոսվել է ակնհայտ հարգանքով, գուրգուրանքով և պատկառանքով:

Մշտապես ակնածանքի զգացումներով են տոգորվում հայ գրականության մեծերը և սույն խորունկ սիրով բանաձևվում է մեծերի ճակատագիրը. «Քանինե՛ր պիտի բաղձային եթէ հայր Ալիշանի մը. Գամառ Քաթիպայի մը, Դուրեանի մը կեանքը ապրիլ հնարաւոր ըլլար իրենց համար»[2]:

Պարբերականի էջերում մշտապես անդրադարձ կար աշխարհով մեկ սփռված հայ գաղութների կյանքին: Առանձնահատուկ դիտարկումներով շոշափվում են գաղութների ներսում հայ ինքնության, հավատի և մայրենի լեզվի պահպանության խնդիրները:

«Հայ լեզուն Ամերիկայի մէջ» հոդվածաշարում տագնապ է արտահայտվում տեղի հայկական համայնքներում մայրենի լեզվին սպառնացող վտանգաշատ կացության վերաբերյալ: Ըստ վերոնշյալ դիտարկումների, հայ մարդը իր հայրենիքի զա

---

[1] «Արմենիա», 1903 թ., թիվ 27:

[2] «Արմենիա», 1904 թ., թիվ 12:

նազան գավառներից «ինքնակամ թէ բաղդի փոթորկէն մղումած, վերջապէս եկած է և կուգայ հետզհետէ հաստատուի այս հիւրընկալ, *բայց հիւրակուլ նոր Աշխարհը* (ընդգծումը մերն է – Ա. Կ.)[1]: Հյուրակուլ այդ աշխարհում՝ Ամերիկայում հայ ծնողների մեծագույն մասը հաճույքով «կը դիտեն իրենց զավակաց միմեանց հետ անգլիերէն խօսիլը նոյն իսկ իրենց ներկայութեանը և յարկին տակ»[2]: Նշվում է, որ նույնիսկ հայերեն անուններն են փոփոխվում և հարմարեցվում անգլերենին և այս վերաձևումները կատարվում են այն սին հավատով, թե իրենց զավակները նախ անգլերեն լեզվին պիտ տիրապետեն, ապա հայերենին: Սա համարելով վտանգավոր մոլորություն, թերթի թղթակիցը հետևյալ կոչն է հղում գաղութաբնակ հայությանը. «Ո՛չ, սիրելի հայ ծնողներ, ո՛չ հայերէնը պէտք է առաջ սորվեցուներ իբրև մայրենի լեզու. յիշեցէք անգամ մը թէ մեր երկրին մէջ ո՞ր ծնողք իւր զաւկին տաճկերէն կը սորվեցուներ առաջ»[3]:

Մայրենին համարելով հայ ինքնության պահպանման գլխավոր կռվանն ու զենքը, թերթը հորդորում է, որ բոլոր տարբերի հայերը պարտավոր են դառնալ այդպիսի անգին գանձի՝ մեծասքանչ հայոց լեզվի ժառանգորդներ ու նվիրյալներ և պետք է «զայն պահենք պահպանենք մեր հոգիին պէս»[4]: Հակառակ դեպքում, պատմությունը մեր ճակատին պիտի դրոշմե, թե մեր «փառաւոր նախնեաց անարժան յաջորդներ եղած ենք»[5]:

---

[1] «Արմէնիա», 1905 թ., թիվ 32:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:

1905 թ. ապրիլի 19-ին «Պուլկարիայի հայերի դպրոցական խնդիրը» հրապարակումով քննության են առնվում Բուլղարիայում գործող հայոց ազգային վարժարաններում մայրենի լեզվի ուսուցման հիմնահարցերը: Իսկ այդ երկրում հայոց լեզվի դեմ անուղակի կերպով ծագած արգելքը և «հետևապէս ապագային մէջ այնտեղ մեր ազգային գոյութեան սպառնացող վտանգը ծանօթ է Արմէնիա-ի ընթերցողներին»[1]:

Հետաքրքիր զուգահեռ է տարվում բուլղար և հայ ժողովրդի պատմական ճակատագրի ընդհանրությունների միջև, ընդգծելով որ Բուլղարիան գրեթե քառորդ դար առաջ մեզ բախտակից ժողովուրդ էր թուրքական տիրապետության ներքո և հետևապես «դեռ իր անցեալը մոռացած չը յինելով դիւրաւ կրնայ ըմբռնել մեր վիճակի մէջ գտնուող ժողովրդի մը դիւրազգածութիւնն ու գուրգուրանքը իր ազգային լեզուի ուսման համար»[2]: Հույսով և հուսալրությամբ ներշնչվում է այն միտքը, որ բուլղար ժողովուրդն ու նրա իշխանությունները, որոնք անցյալում և ներկայում փոխադարձ եղբայրակցության հիշատակներով կապված են մեզ հետ, չպետք է ցանկանան ցավացնել հայ ազգի սիրտը և իրենց երկրում գտնվող հայկական վարժարանների դեմ հարուցել ծանր խոչընդոտներ: Սակայն, ցավոք, հայ ժողովրդի եկեղեցական վարչության «ներկայացուցիչ մը, կազմակերպեալ գլխաւոր մարմին մը չկայ Պուլկարիայի մէջ որ ընդհանուրի կողմէն ներկայանալով պէտք եղած դիմումներն ընէ հոն, բուն իսկ տեղին վրայ, պուլկար կառավարութեան»[3]:

---

[1] «Արմէնիա», 1905 թ., թիվ 38:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

Գաղթաշխարի հայության գլոբալ խնդիրների ու նպատակների շուրջ Մ. Փորթուգալյանը արտահայտվել է 1906 թ. օգոստոսի 8-ին հրապարակած «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն Գահիրէի» ուղենշային հոդվածում: Ըստ նրա, Եգիպտոսի հարուստ հայ դասակարգը հիմնելով նման կարգի բարեգործական միություն, ցույց կտա, որ բնավ անտարբեր չէ հայ ազգի ներկա անմխիթար վիճակի հանդեպ և ցանկանում է օգտակար լինել իր դրամական միջոցներով:

Պարբերականի խմբագիրը բարձրախոհ մտորում է, որ եթե «Միությանը» հաջողվի նախանշված ազգանվեր ձեռնարկումներն իրագործել, ապա կարժանանա հայ ազգի անկեղծ երախտագիտությանը: Նա գրում է, թե մենք չենք ակնկալում «Վսեմ Պօղոս Նուպար Փաշաէն որ յեղափոխական ընկերութիւն մը կազմէ, ինքն ալ անոր գլուխ անցնելով: Այդպիսի բան մը ակնկալելն իսկ, մեր կարծիքով, յիմարութիւն կը լիներ»[1]: Նրա համոզմամբ, ժամանակն ու հանգամանքները դեռևս չեն հասունացել, որպեսզի հայ հարուստները նույնպես անցնեն հեղափոխական շարժման գլուխ: Այդպիսի գործերը մեկ օրով չէ որ լինում են և «ո՛չ ալ Պօղոս Նուբար Փաշան կը լինի այդպիսի յեղափոխական պետ մը»[2]:

Նա հավաստիացնում է, որ ազգի պետքերը սուրը և հրացանը չեն միայն, քանզի անոթի և անհասկացող ժողովրդի ձեռքը հրացան դնես, նա կծախե զենքը հաց գտնելու կամ առավել ստիպողական հանդիսացած պահանջները հոգալու համար:

---

[1] «Արմէնիա», 1906 թ., թիվ 41:

[2] Նույն տեղում:

Ուստի, ազգի առջև եղած բազմազան պահանջները բավարարելու համար յուրաքանչյուր հայ անհատ թող անե այն, ինչ կարող է, ինչը իրեն հարմար կհամարի: Այդ կերպով «ոմանք ուղղակի և ոմանք ալ անուղղակի օգնած կը լինին յեղափոխական գործին»[1]:

Թերթի էջերում հաճախ զուգահեռներ էին տարվում այլ երկրներում և հայկական իրականության մեջ առկա արժեքային համակարգերը համեմատելու առումով: Այսպես, անդրադառնալով ԱՄՆ-ում արմատավորված բարքերին, թերթի թղթակիցը նշում է, որ ամերիկացիները ամեն տարի ազգային տոնակատարություն են ձեռնարկում իրենց ազատարար Ջորջ Վաշինգտոնի պատվին: Ապա ավելացնում, որ ամերիկացիները իրենց ազատության համար պայքարած հերոսներին դեռևս կենդանության օրոք «պատուած ու յարգած են, բարձր դիրքի մէջ ապրեցուցած են զանոնք. Արդե՞օք մենք հայերս մեր ազգի ազատութեան համար խորհող ու աշխատողներուն ի՞նչ կը-նենք. կապրեցնե՞նք զանոնք թէ կմեռցնենք»[2]: Մի այլ հրապարակման մեջ («Վարանելու չէ՛») հորդորվում է հետևել առաջադեմ երկրներում արմատավորված այն բարքերին, որ ազգի վերածնության համար կարևոր նախապայմանը կրթված սերունդ ունենալն է: Քանզի համաշխարհային պատմության փորձն է հուշում, որ «ուսանողը Յեղափոխութեան հոգին է, յեղափոխութիւն որ կը ծնի հոս հասարակապետութիւն, հոն սահմանադրական միապետութիւն, և ամենուրեք ազատութիւն

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմէնիա», 1905 թ., թիվ 35:

և արդարութիւն: Հետևաբար «ուսանողին թև թիկունք ըլլալը ժողովրդին թև թիկունք ըլլալ է»[1]:

Ուրեմն, հայ ժողովուրդը ևս չպետք է վարանի, այլ ամեն մի հայ իր լուման պետք է ներդնի զոհողության այն գանձանակի մեջ, որից ծլարձակելու է լավագույն ապագան:

Եվ ինչո՞ւ համար «Ամերիկայի, Եւրոպայի, Ափրիկէի, Ասիոյ բոլոր գաղութներն իրենց լուման չի պիտի բերէին հանրօգուտ նպաստին»[2]: Ուրեմն, ըստ պարբերականի, այլևս վարանելու վախենալու, և քաշվելու չէ՝. «արդէն մեզ շրջապատող ազգերն ալ սույն տեսակ «սատարող մարմիններ» հաստատած են»[3]:

«Արմէնիան» հաճախ հրանդրադառնում հայաշատ գաղութներ ունեցող երկրների ներքին անցուդարձին, հասարակական-քաղաքական շարժումներին և կանխատեսումներ անում հետագա զարգացումների շուրջ:

Թերթի դիտարկումների մեջ մեծ տեղ էր զբաղեցնում հատկապես պարսկահայությունը: Շատ անգամներ նրա էջերում դրվատանքի և երախտագիտության անկեղծ ու ջերմ խոսքեր են ասվել պարսկական իշխանությունների հասցեին, որոնց հովանու ներքո տեղի հայ գաղութը ապահովագրված է ծանր զարգացումներից, հալածանքներից և կամայականություններից: 1905 թ. փետրվարի 8-ին «Պարսկահայերի ապագան» հոդվածում մտահոգություն է արտահայտված այն բանի շուրջ, թե հանկարծ մի օր ուրիշ ազդեցություն իշխի այս երկրում և գա-

---

[1] «Արմէնիա», 1905 թ., թիվ 36:

[2] Նույն տեղում:

[3] Նույն տեղում:

հընկեց անի ազատամիտ և լուսավոր սույն կառավարությանը, ապա այստեղի «հայութիւնը անդստոնալի կորստեան մը մէջ գահավէժ պիտի գլորի...»[1]: Հոդվածը եզրափակվում է այս լավատեսությամբ. «Մաղթենք որ այդ օր ու ժամանակ շատ հեռի մնած, եթէ ոչ անդարձ»[2]: Այսինքն, սույն մաղթանքը տվյալ երկրի հասարակական կայունությունը պահպանելուն է ուղղված, քանի որ անիշխանության խառնակ ժամանակներում ամենից շուտ և ամենից շատ տուժում է երկրի փոքրամասնությունը:

Ավելի ուշ, պարբերականը ուշադրությամբ հետևում էր, այսպես կոչված, պարսկական հեղափոխության հետևանքով առաջացած նոր իրավիճակին: Մ. Փորթուգալյանը 1911 թ. սեպտեմբերի 6-ին հրապարակված «Պարսկահայերի ներկայ դիրքը» հոդվածում հայացք նետելով Պարսկաստանում ընթացող քաղաքական և ռազմական ներքին բուռն ու դրամատիկ զարգացումների վրա, բարձրաձայնում էր հետևյալի մասին, թե ինչպես իրենց պահեն այնտեղի հայերը. «օգնե՞ն սահմանադրական կառավարութեան, օգնե՞ն գահընկեց Մէհմէտ Ալիին թէ բոլորովին անտարբեր կենան»[3]: Բոլոր դեպքերում, պարբերականի խմբագիրը հորդորում է շատ զգուշավորությամբ և խոհեմությամբ շարժվել թե՛ ակտիվ, թե՛ պասիվ դերակատարության ընթացքում: Սույն խնդիրը զանազան կողմերից դիտարկելուց հետո, ի վերջո, նշում է, որ «Մենք կը խորհինք թէ Պարսկաստան գտնուող հայը՝ քանի որ հայ լինելով մէկտեղ պարսկաստանցի ալ է, այդ երկրի հետ կապուած է շահերով և պարտա

[1] «Արմենիա», 1905 թ., թիվ 28:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1911 թ., թիվ 1:

կանութիւններով, որոնք չեն թոյլատրեր իրեն անտարբեր մնալ այդ երկրի յառաջդիմական կամ յետադիմական շարժումներին առջև»[1]: Սրանով իսկ թերթի դիրքորոշումը դառնում է իրատեսական: Այսինքն, տեղում ապրող հայությունը ամենից ավելի ճիշտ կարող է կողմնորոշվել պատմականորեն ստեղծված հանգամանքներում:

«Արմենիան» XX դարասկզբին մի շարք հրապարակումներով անդրադարձավ հայոց մշակույթի համար կարևոր մի հոբելյանի՝ հայ տպագրության 400-ամյակին: Թերթը դրվատեց և միացավ այն նախաձեռնություններին, որոնց նպատակն էր ողջ աշխարհի առջև արժանավայել տոնել հայերեն տպագրության փառապանծ հոբելյանը:

Թերթն այն ուշագրավ միտքն է արմատավորում, որ տպագրության տոնը լոկ Կովկասահայությանը պատկանող մասնավոր տոն չէ, այլ սույն հոբելյանը համահայկական տոնախմբության պետք է վերածվի, առանց «խտրութեան երկրի և կրօնական ու քաղաքական դաւանանքների»[2]: Դա այդպես է, քանզի գրատպության հոբելյանը աշխարհի ողջ հայության համակրության և մասնակցության արժեքն ու արժանիքն ունի: Հետագայում նս թերթն ուշադրության առանցքում էր պահում տպագրության հոբելյանի հետ կապված ոգեկոչումների և այլ ձեռնարկների լուսաբանումը:

1913 թ. նոյեմբերի 2-ին «Համազգային յոբելեանը Վանի մէջ» թղթակցությունը հավաստում էր այն մեծ խանդավառության

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1912 թ., թիվ 27:

մասին, որն առաջացել էր Վանում: Ականատես թղթակիցը այսպես է նկարագրում տեղի ունեցածը. «Վանի աշակերտութիւնն ու ժողովուրդը եռուզեռի մէջ են: Փողոցները լիքն են անցորդների երամներով, բոլորի սրտերի մէջ ալ նոյն զգացումն է, բոլորն ալ ճիշտ նոյն ժամին որոշուած տեղն է որ կը փութան... Հայ գրերու գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակի տոնն է որ կը հրաւիրէ հանդիսավայրը ողջ Վասպուրականցին»[1]: Այնուհետև նշվում է, որ ժողովրդական բոլոր խավերը, ընկերակցությունները և կուսակցությունները միահամուռ մասնակցեցին սույն համազգային մեծ տոնին՝ «հայ քաղաքակրթութեան դրօշակը աւելի բարձր բռնած»[2]:

1913 թ. դեկտեմբերի 24-ին «Մեծ յոբելեանը Բաղէշի մէջ» թղթակցությունը ազդարարում էր, որ «Դարեր ի վեր միշտ տառապող Բաղէշցիներս ալ, այսչափ սուգի և ցաւի մէջէն անդրադառնալով մեր պարտականութեան, շքեղ հանդիսաւորութեամբ մը տօնեցինք մեր հայերէն գրերի գիւտի 1500-ամեակը և հայերէն տպագրութեան 400-ամեակը կիրակի հոկտ. 13/26-ին»[3]:

Հետաքրքրական է Բաղեշում կայացած սույն շքեղ տոնակատարության հուզալից նկարագրությունը. «Թափորին առջևէն կերթար ամբողջ դպրաց դասը զգեստաւորուած, իր առջևէն կրելով մեծադիր խաչը. (առաջին անգամ է որ համարձակու-

---

[1] «Արմենիա», 1913 թ., թիվ 16:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1913 թ., թիվ 21:

թիւն կունենանք մեր դարձներէն դուրս հանելու այս մեծութեամբ խաչեր)»[1]:

Երիտթուրքական հեղաշրջումից հետո պարբերականի էջերում լայն տեղ էր հատկացվում գավառների դպրոցական կյանքի, աշակերտների և ուսուցիչների հանգստի, ուսուցչական կազմի վերապատրաստության և այլ հիմնահարցերի պարզաբանմանը: Այսպես, «Խաբրիկներ Վասպուրականէն» հոդվածը պատկերացում է տալիս Վանի գյուղական շրջանների ուսուցչական կազմի ամառային առօրյայի վերաբերյալ: Վանից տեղական թղթակիցը գրում է, որ դպրոցական արձակուրդը սկսվելուն պես գյուղական բոլոր ուսուցիչները քաղաք լցվեցին. «Փոլոցներէն անցած ատեն, մանաւանդ այս տարի, կը պատահիս խումբ-խումբ ուսուցիչներու որոնք կանցնին: Ասոնք մեծագոյն մասով Աղթամարի թեմի ուսուցիչներն են, որոնք... քաղաք կանչուած են տասն աւուր միջոցին լսելու համար մէթոտիկայի վերաբերեալ շարք մը դասախօսութիւններ»[2]: Ուսուցիչների վերապատրաստման նպատակով անցկացվող դասախոսությունները անցկացվում են օրական երկու անգամ՝ առավոտյան և երեկոյան՝ «բացատրութիւններով ու վիճաբանութիւններով հանդերձ, որոնք շատ հետաքրքրաշարժ ու արդիւնաւոր կերպով կանցնին»[3]: Սույն ձեռնարկը դրվատելուց զատ, հոդվածագիրը նշում է, որ ինչպիսի «փափագելի ու հրահանգիչ բան կը լինէր եթէ, գոնէ տարւոյն մէջ 2 ամիս չափ, գաւառացի ուսուցիչներուն հնարաւորութիւն տրուէր քաղաքը լինելու, դա-

---

[1] Նույն տեղում:
[2] «Արմենիա», 1913 թ., թիվ 1:
[3] Նույն տեղում:

սախօսութիւններ լսելու, թատրոն, երեկոյթներ տեսնելու, կարդալու, շփուելու ու նոր բաներ սորուելու»[1]:

Հայ ուսուցչի կյանքն ու գործունեությունը գտնվում էր դժնդակ իրավիճակում, աննախադեպ ծանր կացության մեջ, ուստի վերոնշյալ նվազ պայմանների բարելավումը «իրենց մարտիրոսական կեանքի մէջ գոնէ մխիթարական պարագայ մը կը լինէր»[2]:

Որպես հուսադրող լուր իրազեկվում է, որ հայտնի կրթական ու հանրային գործիչ Համբարձում Երամյանը մտադիր է իր դպրոցը Վարժապետանոցի աստիճանին բարձրացնել: Եթե վերոնշյալ մտադրությունը դառնա իրականություն, ապա «Վան պիտի ունենայ 3 բարձրագոյն դպրոցներ»[3]: Վանից ուղարկված մի այլ թղթակցություն քննադատում էր դպրոցական առօրայում տեղ գտած այն երևույթը, ըստ որի արձակուրդների ընթացքում զանազան երեկոյթներ են կազմակերպվում ոչ թե կրթիչ նպատակադրումներից դրդված, այլ «յաճախ դժբախտութիւն է խոստովանիլը, քանի մը դուրուշ ձեռք բերելու և պտոյտի մը ծախսեր հոգալու համար»[4]: Դա համարելով տգեղ երևույթ, թղթակիցը կոչ է անում պայքարել նման արարքների դեմ և «աշակերտությանը առաջնորդել դէպի մաքուր ու բարոյացուցիչ իտէալը»[5]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] «Արմէնիա», 1913 թ., թիվ 3:
[5] Նույն տեղում:

«Վանի համար մասնագէտ վարժուհիներ պատրաստելու ջանքեր» ինֆորմացիոն ակնարկում ասվում էր, որ Վանի իգական սեռի պարծանքը հանդիսացող օրիորդ Զարուհի Տերոյանը այս օրերին եկած է Եգիպտոս «ասկէ Գերմանիա անցնելու և «մանկապարտիզպանութեան» մասնագիտութիւնն ուսանելու համար»[1]: Որպես նրա անցած ուղու հարգանքի հավաստիք, նշվում է, որ սուլթան Համիդի դաժան տիրապետության օրոք 10 տարի անցկացրել է աքսորական կյանքի մեջ տառապելով և լավատեսությամբ հորդորվում է, որ եգիպտահայ հարուստ և բարեգործությանը նախանձախնդիր ազգակիցները աջակից կլինեն այս օրիորդին «իր փափագած նպատակին հասնի յօգուտ Վանայ փոքրիկ հայ մանուկներուն»[2]:

Պարբերականի ուշադրությունից դուրս չէր մնում ազգային մշակութային ու կրթական կյանքի որևէ ուշագրավ դեպք, երևույթ, անձ ու անհատ:

1914 թ. հուլիսի 8-ին «Կոմիտաս վարդապետ» ակնարկում իմաստավորվում է հայ երաժշտական մտքի քանքարի տեղն ու դերը հայ և համաշխարհային մշակույթի համապատկերում: Նրբին զգացումներով դիտարկվում է, որ հաճախ մեր բարոյական նվաստացումների մեջ «մխիթարական երևույթներ չեն պակսիր ուրախացունելու համար մեր սրտերը»[3]: Քասներորդ դարասկզբի այդ ուրախանալի երևույթների զարդապսակը Կոմիտաս հանճարն է, որն ինքն իրենով նշանավորեց հայ արվեստի նոր, բարձր թռիչքը: Հայ ազգը սքանչացնող այդ

---

[1] «Արմէնիա», 1911 թ., թիվ 27:
[2] Նույն տեղում:
[3] «Արմէնիա», 1914 թ., թիվ 45:

«երևույթներու կարգէն է նաև Փարիզի երաժշտական համագումարին մէջ հայ երաժշտութեան գտած համակրական ընդունելութիւնը յանձին Գեր. Կոմիտաս վարդապետի որուն պրպտող և ստեղծագործ եռանդը անգամ մը ևս առիթ ընծայեց Եւրոպայի ականաւոր երաժիշտ-արուեստագէտներուն ծանօթանալու հայ ինքնատիպ երաժշտութեան և հիանալու անոր գրաւիչ դաշնութեանը վրայ»[1]:

Ահա այսպես, լայնորեն ու հետևողականորեն պարբերականը լուսաբանում էր հայ իրականության հետ սերտորեն աղերսվող ու հարաբերվող այն հարցերն ու երևույթները, որոնք վերաբերում էին կրթությանն ու մշակույթին, հայագիտությանը, գաղթաշխարհին:

---

[1] Նույն տեղում:

ԳԼՈՒԽ XV
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄԸ

Թուրքական զինուժի պարտությունները 1911 թ. մկսված թուրք-իտալական պատերազմում, ապա նրա ջախջախումը Բալկանյան պատերազմի ընթացքում նորից բորբոքեցին հայ հասարակական-քաղաքական միտքը ուղղորդելով այն դեպի հայկական հարցի լուծման տենդագին որոնումները: Ինչպես «Արմենիան», այնպես էլ մյուս հայկական պարբերականները ուշադրությամբ հետևում և վերլուծականներով պարզաբանում էին քաղաքական իրադրության և իրադարձությունների ընթացքն ու հետագա զարգացումները: Արտասահմանում հրատարակվող պարբերականներն ավելի ազատ ու համարձակ դիրքերից էին հանդես գալիս: Ցավի և բողոքի նամակներով ու հանրագրերով լեցուն էր Կ. Պոլիսի պատրիարքարանը:

Իր հերթին Պատրիարքարանը փաստարկված բողոքներով և դիմումներով մշտապես դիմում էր Բ. դռանը, որոնք, որպես կանոն, մնում էին անարձագանք ու անհետևանք: Այս ամենին զուգահեռ, հայկական գավառներում առավել մասսայական էին դառնում սպանությունները, ավարն ու կողոպուտը: Հատկապես Բալկանյան պատերազմի ընթացքում կրած պարտություններից հետո թուրքական իշխանությունները կտրուկ միջոցների էին դիմում հայոց հնարավոր ընդվզումները ճնշելու

համաբ: Պահն ավելի բախտորոշ ու ճակատագրական էր դառնում:

«Արմենիայի» վարիչները թեև փորձում էին դեռ պահպանել որոշակի հավասարակշռություն և նախկին լավատեսության որոշակի տարրեր, այնուամենայնիվ, թերթի հրապարակումները ևս գուժում էին, որ Արևմտյան Հայաստանում իրավիճակը դարձել է աղետալի:

Փորթուգալյանը կրկին դիմում է իր նախընտրած մեթոդին՝ նախորդ շրջանում տպագրված, սակայն արդիականությունը բնավ չկորցրած կարևոր հոդվածները վերահրատարակելով: «Պանդխտություն» խորագրով հոդվածը նա հրապարակել էր 1876թ. փետրվարի 20-ին՝ «Մանզումէի էֆքեար» պարբերականի էջերում, որտեղից արտատպել էր «Արմենիայի» 1911թ. հուլիսի 12-ի համարում: Վերոնշյալ հրապարակումը ոչ միայն չէր կորցրել հրատապությունը, այլև ճիշտ ու ճիշտ հենց այդ պահի համար էր: Վերահրատարակման առթիվ նշվում էր հետևյալը. «Սարսռազդեցիկ էր այն ժամանակը: Հալածանք, հարստահարութիւն և բռնութիւն իրենց գագաթնակէտին հասած լինելով՝ մարդիկ այլևս զգացում ունենալուց դադարած, ակամայ կը տանէին այն ապօրինութիւններ որմէ անատուներն իսկ կը խորշէին»:[1]

Սա դաժան, սակայն ճշմարիտ խտացված եզրահանգում էր՝ խիստ բնորոշ Արևմտահայաստանում անցյալի ու նաև այդ պահին առկա իրողություններին: Դրանով Փորթուգալյանը ազդարարում էր, որ որևէ բան չի փոխվել սուլթանների երկրում:

---

[1] «Արմենիա», 1911 թ., թիվ 40:

Դեռևս 19 - րդ դարի 70 - ական թ.թ. նա գտնում էր, որ արևմտահայերի պսակնդխտության առաջն առնելու համար հարկավոր էր հաց և ապահովություն: Իսկ հաց տալու համար «պետք է երկրագործությունը ծաղկեցնել Հայաստանի մէջ»: [1]

«Բաւական չէ փոխել միայն վարչական ձևը, պետք է փոխել նաեւ մարդը» խորագրով հրապարակման մեջ մտավախություն ու տագնապ է արտահայտվում, որ կարող են կրկնվել համիդյան շրջանի հարստահարություններն ու ջարդերը: Պատահական չէ, որ օրինակ է բերվում օսմանյան չորրորդ զորաբանակի հրամանատար, քննիչ Մյուշիր Օսման փաշայի հակահայկական ագրեսիվ վարքագիծը: Վերջինս 1911թ. հունիսի 22-ին իր շքախմբով Խասգյուղից անցնում էր Մուշ քաղաք, երբ նրան դիմավորելու են գնացել հայ ազատվիրակները (երեք քահանաներ, գյուղապետեր և այլն): Օսման փաշան իր շուրջը հավաքվող հայ և քուրդ բազմությանը փոխանակ իրար հետ սիրով և համերաշխաբար ապրելու հորդորներ կարդալու, ուղղակի հայոց հասցեին հետևյալ կծու և վիրավորական հայտարարությունն է արել. «Ձեր այս շողոքորթիչ խօսքերը, ձեր այս կեղծ ու պատիր մաղթանքները արտասանել է առաջ, սիրտներիդ մաքրեցէք: Դուք հայերդ՝ Սահմանադրութեան այս երեք տարուան ընթացքին մէջ, հողային խնդիրը ամբապէս գրկած, ահագին խռովութիւններու տեղի տուիք, քիւրտերը զրկելով իրենց ապրուստի միջոցներէն: Դուք կը պահանջէք որ համիտյէները մէջտեղէն վերցուին. լաւ, վերցուցէք դաշնակցականները՝ մենք ալ կը

[1] Նույն տեղում:

վերցնենք համիտիյէները»[1]: Սույն պաշտոնյան այնուհետև փաստարկում է, որ հայերը միշտ էլ անհավատարիմ տարր են հանդիսացել օսմանյան գահի հանդեպ, միշտ վնաս են պատճառել նրա տնտեսությանն ու զանձարանին: Սույն միջադեպը աներկբա վկայում է, որ երիտթուրքերի օրոք կայսրության պաշտոնյաները պակաս թունավորված չէին հակահայկական հիստերիայով, քան առաջներում:

Գավառահայության հարստահարությունների խնդիրը ներկայացված էր ամենուրեք, թե՛ օսմանյան պառլամենտի ամբիոնից, թե՛ տեղական իշխանությունների մակարդակով: «Արմենիսն» դրվատում էր սույն հարցում հայ պատգամավորների միակամ, համերաշխ գործակցությունը. «Մեզ համար ուրախալի կէտ մ՛ է և այս, որ գրէթէ բոլոր հայ երեսփոխաններն ալ, Տիարներ Գեղամ Տ. Կարապետեան, Տօք. դ. Տաղաւարեան, Համբարձում Պոյաճեան (Մուրատ) և այլն, առանց կուսակցական խտրութեան, համերաշխութեամբ ձայնակցելով Տ. Վարդգէսին, միաձայն բողոքած են այդ կացութեան և հարստահարիչներին կառավարութեան կողմէն անպատիժ թողուելուն դէմ»[2]:

«Համերաշխություն» խորագրով այս հոդվածով Փորթոգալյանը իր բարոյական զորակցությունն է հայտնում հայ քաղաքական ուժերի ներկայացուցիչներին, որոնք փորձում են գործել համաձայնության և համերաշխության ոգով և այն «սկսած է հետզհետէ տարածուիլ Թիւրքիայի հայերին մէջ ուր

---

[1] «Արմենիա», 1911 թ., թիվ 44:
[2] «Արմենիա», 1911 թ., թիվ 34:

ասկէ առաջ կուսակցական մոլեռանդութիւնը զիրենք կը գրգռէր իրենց ոյժերը սպառելու իրար դէմ կռուելու մէջ միայն»[1]:

Սա ճշմարիտ դիտարկում էր և իրավացի դիտողություն, քանզի անմիաբանության ախտով վարակված էր հայ հասարակությունը հնուց ի վեր:

«Ա՜խ, անմիաբանութիւն, անմիաբանութիւն, և ե՞րբ պիտի դու բնաջինջ լինես հայ ազգի սրտից»[2], - ու թեև այս կարգի դատողություններով ու բացականչություններով լեցուն է հայ գրականությունն ու մամուլը, այնուամենայնիվ վերոնշյալ ախտը միշտ էլ կենսունակ մնաց հայ հասարակական - քաղաքական միջավայրում:

1911թ. հոկտեմբերի 4-ին «Հայաստանի հարստահարությունների խնդիրը» ինֆորմացիոն բնույթի նյութով թերթը տեղեկացնում էր, որ «Թիւրքիայի հայերի Ազգային ժողովը վերջապէս սեպտ. 9/22-ին մեծամասնութեամբ (74 երեսփոխանների ներկայութեամբ) նիստ ունեցաւ և Հայաստանի հարստահարությունների խնդիրը վիճաբանութեան ենթարկելով իր որոշում տուաւ»[3]: Նույն 1911 թ. հոկտեմբերի 25-ին «Նամակ Թիւրքիաէն» թղթակցությամբ դիտարկվում էր, որ Թուրքիան միշտ անակնկալներով հղի երկիր պիտի մնա «ցորչափ զուրկ ըլլայ..., անկեղծ, երկրաշէն և ուղղամիտ կառավարութեան մը ղեկավարութենէն»[4]: Գեղարվեստի շնչով շեշտադրվում է, որ տարիներ

---

[1] Նույն տեղում

[2] Աբաս. թատրերգութիւն չորս արարուածով. գործ Կարապետ Յովհաննէսեանց, Վենետիկ, 1920 թ., էջ 43

[3] «Արմէնիա», 1911 թ., թիվ 5:

[4] «Արմէնիա», 1911 թ., թիվ 8:

ի վեր, հայոց համար «ցաւալի և կսկծալի վարժութիւն մ' եղած կեանքի, ինչքի ու պատուի հալածանքներու առօրեայ լուրերն են զօրս զաւառային թղթաբերներն օրն օրին կը բերեն մեզի հրամցնել դառնակսկիծ մանրամասնութիւններով»[1]:

Այն, որ երիտթուրքական ռեժիմի օրոք հակահայկական խլրտումներն ու բռնություններն ավելի խստացան, հավաստվում է այդ ժամանակաշրջանի մամուլի, այդ թվում նաև «Արմենիայի» բազմաթիվ և բազմաբնույթ հրապարակումներով: Ավելին, երիտթուրքերի հանցագործ, շովինիստական քաղաքականությունը մերկացվում էր նաև հարևան երկրների առաջադիմական մամուլում: Վերոնշյալ հանցավոր քաղաքականությունն դրսևորումների դեմ բողոքի ձայնն են բարձրացնում սերբական սոցիալ - դեմոկրատները և բուլղարական տեսնյակները, որոնք դեռևս 1910թ. դիմում են Երկրորդ Ինտերնացիոնալի Կոպենհագենում գումարված կոնգրեսին, նշելով, որ «իրենց հանցավոր գործողություններով երիտթուրքերը հաճախ գերազանցում են նախկին Աբդուլ Համիդի վարչակարգին»[2]: 1912 թվականի հունվարի 31 - ին տպագրվել էր Թուրքիա վերադարձած մի ամերիկահայի տպավորությունները, որում նա անաչառորեն ու անկեղծորեն շարադրել էր տեսածն ու զգացածը. «Արդարև կարժէ իբր հայրենիք այցելել Թուրքիա. բայց իբր բնակութեան տեղ մը հաստատուիլ, գործի սկսիլ, ապրիլ գրեթէ անկարելի է»[3]:

---

[1] Նույն տեղում:

[2] История Второго интернационала, М., 1966г., т.2, с. 187:

[3] «Արմենիա», 1912 թ., թիվ 22:

Ահա՛ այսպես: Իր հայրենիք՝ Արևմտահայաստան, վերադարձած հայի աչքից չի վրիպել ոչինչ և նա ստացած տպավորությունները ճշմարտացիորեն ամփոփել է հետևյալով. «... համիտեան ոճիրներն անարգել կը շարունակուին այնտեղ այս սահմանադրական կոչուած շրջանին ևս և դա ուրիշ բան չէ այլ համիտեան ռէժիմի քաղաքականութեան շարունակութիւնը»[1]: Ըստ վերոնշյալ ականատեսի, թուրքական իշխանությունները «Կուզեն հայը իր բնիկ երկրէն հեռացնել և ցրուել ուրիշ տեղեր, իրենց այդ սխալ և վտանգաւոր քաղաքականութեան զոհելով թէ՛ հայերը և թէ՛ Թուրքիան»[2]: Ուրեմն, այդ պահին սրդեն պարզ ու տեսանելի էր երիտթուրքերի կողմից գծագրված քաղաքականության հիմնական միտումը. այն է, հայությանը տեղահանել, ցրել իր պապենական օջախներից, հեռացնել իր հայրենիքից, ինչը որ նրանք կատարեցին լիովին բացահայտ ու զանգվածաբար՝ ընդամենը երեք տարի անց՝ վարպետորեն օգտվելով սանձազերծված համաշխարհային պատերազմի պատեհությունից:

1912 թ. մարտի 13-ին «պետության ներքին ուժի մասին» հոդվածում Մ. Փորթուգալյանը դիտարկում է, որ օսմանյան պետության ներքին ուժը կարող է գոյանալ իսլամ և ոչ իսլամ թուրքիացիներեն, իբրև հայրենակիցների, հավասարապես նույն իրավունքները տալով՝ առանց որևէ խտրության և «երկրին ոչ միայն զինուորական, այլև մտաւորական ու տնտեսական զարգացման մեծ մղում տրուելով»[3]: Զնական առումով կամ

---

[1] Նույն տեղում:

[2] Նույն տեղում:

[3] «Արմենիա», 1912 թ., թիվ 28:

լոկ արտաքնապես վերոնշյալ սկզբունքները ընդունվել են թուրքական «հեղափոխական» կառավարության կողմից, որը սկզբնական պահին մեծ հույսեր էր ներշնչել Թուրքիայի բոլոր ժողովուրդներին: Սակայն քիչ ժամանակ անց «տեսնուեցաւ որ ոչ միայն թիւրք տարրի մեծամասնութեան մտայնութիւնը պատրաստուած չէր դեռ այդ բարեփոխութեան, այլ և նոյն իսկ կառավարութիւնն ալ շատ անգամ վարանոտ և եաւաշ եաւաշի քաղաքականութիւն մը ցոյց կուտայ»[1]:

Ընդգծենք, որ «Արմենիայի» խմբագիրը հեռվից հեռու քաջ պատկերացնում էր երիտթուրքական հեղաշրջումից հետո առկա իրողություններն ու զարգացման միտումները, քան նրանք, ովքեր գործում էին բուն երկրում:

Թերևս երկրում գտնվող ուժերին (Հ.Յ. դաշնակցություն և այլն) ևս տեսանելի էր, որ երիտթուրքական ռեժիմը չլուծեց և անկեղծորեն չէր էլ ձգտում լուծելու երկրի առջև կանգնած սոցիալական կամ հասարակական-քաղաքական որևէ կարևոր խնդիր: «Ազատասեր» ու «եղբայրասեր» երիտթուրքերը գործնականում մերժեցին ժողովուրդների ինքնորոշման իրավունքը: Նրանք սկզբում առաջ քաշեցին պանօսմանիզմի գաղափարը, հայտարարելով, որ Թուրքիայում այսուհետև չկան տարբեր ժողովուրդներ, այլ կա միայն մեկ ազգ՝ օսմանյան ժողովուրդը: Հպատակ ժողովուրդների և ազգային փոքրամասնությունների որևէ ձգտում կամ ընդվզում հանուն իրենց իրավունքների և անկախության, համարվում էր դավաճանություն օսմանյան հայրենիքի հանդեպ: Սակայն զգալով ու հասկանալով, որ

[1] Նույն տեղում:

ստեղծված հանգամանքներում պանօսմանիզմի գաղափարախոսությունն ու քաղաքականությունը ձախողվում են և ի վիճակի չեն արգելակելու կայսրության ներսում առկա ազգային-ազատագրական շարժման աճող գործընթացը, երիտթուրքերը հրաժարվեցին պանօսմանիզմից և օրակարգում որդեգրեցին պանթուրքիզմը: 1910 թ. տեղի ունեցած երիտթուրքերի տարեկան համաժողովում Թալեաթը հետևյալն է նշում. «Սահմանադրության տրամադրություններով եւ մահմեդականներու եւ քրիստոնյաներու միջեւ հավասարություն հաստատվեց, բայց այս մեկը անիրականալի իդեալ մըն է: Շերիաթը, մեր սնցյալ ամբողջ պատմությունը եւ հարյուր հազարավոր մահմեդականների զգացումները, եւ նույնիսկ զգացումները քրիստոնյաների, որոնք համառ կերպով կընդդիմանան օսմանցիության ամեն փորձի, անխորտակելի պատվար մը կը ներկայացնեն արդար հավասարության մը հաստատումին դեմ»[1]: Հաջորդ տարի՝ 1911-ին Սալոնիկում կայացած երիտթուրքերի հերթական համաժողովը որոշում է. «Կայսրության նկարագիրը պետք է լինի մահմեդական: Պետք է մերժել այլացեղ ազգությունների իրենց մեջ կազմակերպվելու իրավունքը: Ազգությունները զանցառելի քանակություններ են: Թուրք լեզվի տարածումը գերազանց միջոց մըն է հաստատելու մահմեդական գերիշխանությունը եւ յուրացնելով ձուլելու մյուս տարրերը»[2]: Ահա այսպես, երիտթուրքերը պանթուրքիզմը դարձնում են Թուրքիայի պետական քաղաքականության անկյունաքարը և կայսրությունը

---

[1] Լ. Խուրշուդյան, Հայկական հարցը, Ե., 1995 թ., էջ 38:
[2] Նույն տեղում:

լիովին մահմեդականացնելու որոշումներով մահավճիռ են արձակում, առաջին հերթին, հայ ժողովրդի հանդեպ: Այդ օրերին և հետագայում ևս սթափ դատող հայ գործիչների կողմից սառնասիրտ նշանառությամբ պիտի արձանագրվեր հայոց քաղաքական մտքի կողմից կատարված մեծագույն սխալը. «Համիդլամութիւնը գացած էր, համօսմանցիութիւնը եկած: Համիտին տեղ եկած էին Էնվերն ու Թալեաթը: Օրմանեական թրքական օրիէնթասիոնը իր ներկայացուցիչին պէս կաթուածահարուած էր: Անոր տեղ եկած էր հայ կուսակցութիւններու եւ մանաւանդ Հ. Յ. դաշնակցութեան թուրքական օրիէնթասիոնը, Օսմանեան հայրենիքին մէջ հայ-թուրք ժողովուրդներու քաղաքացիական հաւասար ու ազատ իրաւունքներով ապրելու նշանախօսով»[1]: Իհարկէ, հայ քաղաքական միտքը սխալվեց, երբ իշխանության եկած ուժի՝ երիտթուրքերի հետ սկսեց անկեղծ բարեկամական հարաբերություններ ձևավորել: Մինչդեռ պարզ էր, որ երիտթուրքերը օսմանյան մնացած վարչակարգերի պես մտադիր չեն որևէ կերպ բարվոքել հայ ժողովրդի ծանր կացությունը: 1911 թվականի Սալոնիկի համաժողովում ընդունած որոշումներից հետո ստեղծված իրավիճակի վերաբերյալ լավագույնս արտահայտվել է դաշնակցության ղեկավար գործիչներից մեկը՝ Վահան Փափազյանը (Կոմս): Նա նշում է, որ վերոնշյալ համագումարից հետո «... իբրեւ արձագանք գաւառներէն անդադար կը տեղային տեղեկագիրներ, ահաբեկ հեռագրական բողոքներ թէ՝ մեզի եւ թէ՝ պատրիարքարան: Քիւրտ աւազակային տարրերը, քլիւպներու դարձած՝ աւելի անվախ եւ լրբաբար վերսկսած էին

[1] Շ. Նայթալի, «Թուրքերը եւ մենք», Ե., 1992 թ., էջ 137:

իրենց շահատակութիւնները. իսկ տեղական իշխանութիւնները ոչ միայն անպատիժ կը թողնէին, այլ ամէն քայլափոխին պատրուակներ կը ստեղծէին՝ արգելք լինելու դաշնակցական կամ ազատական հանրային ձեռնարկներուն եւ նոյնիսկ սազատ շրջագայութեան։ Մոլեռանդ թիւրքերու եւ աւազակներու որջի վերածուած էին անոնց քլիւպները»[1]։ Սույն նկարագրությունը արդեն սպառիչ պարզաբանում է, որ երիտթուրքերի և համիդյան ժամանակների միջև արդեն որևէ տարբերություն չկա։ Թուրքական պառլամենտում ներկայացված հայ պատգամավորների անդադար բողոքները որևէ ձևով չէին ազդում իրավիճակի վրա։ Այն մնում էր անփոփոխ և արևմտահայության նվաստացումներն ու տառապանքը օրեցօր առավել սոսկալի էին դառնում։

«Արմենիան» 1912 թ. հունվարի 24-ին «Օսմ. երեսփոխան Տ. Զօհրապի յիշատակագիրը՝ ուղղուած վարչապետ Սաիտ փաշային» հրապարակումով անդրադարձել էր Արևմտահայաստանում տիրող դժնդակ իրավիճակին։ Նրանում նշվում է, որ օսմանյան երեսփոխանական ժողովի հայ անդամները, որոնց մեջ նաև դոկտոր Գրիգոր Զոհրապը, հավաքական հիշատակագիր են հանձնել Թուրքիոյ վարչապետին՝ Հայաստանի հարստահարությունների և հույժ անհրաժեշտ դիտվող տարբերական մի քանի բարենորոգումների վերաբերյալ։ Դրանից զատ, Զոհրապը վերոնշյալ թեմայով վարչապետ Սաիտ փաշային է ներկայացրել «երկար յիշատակագիր մ՚ալ որ մասնաւոր նշանակութեան արժանի կարևորութիւն մը ունենալուն հա-

[1] Փափազեան Վ., «Իմ յուշերը», հատոր երկրորդ, Պէյրութ, 1952թ., էջ 154։

մար, անոր թարգմանութիւնը «Ազատամարտ»-էն առնելով կարտատպենք այստեղ»[1]: Հիշատակագրում ասված է, որ սահմադրության հռչակումից չորս տարի է անցել, սակայն կայսրության հայաբնակ նահանգներում կացությունը հատկապես վերջին երկու տարվա ընթացքում անհանդուրժելի աստիճանի է հասել: Վերոնշյալ նահանգներում «Ինչքի, կեանքի ու պատիւի ապահովութիւն չէ մնացած, ու ջարդի սպառնալիքները պատճառ եղած են որ ժողովուրդ ահ ու սարսափի մէջ ապրի»[2]: Հիշատակագրի հեղինակի զգացողությունն ու փաստացի տեղեկացվածությունը անկասկած ճշգրիտ է ու ճշմարիտ, երբ նշում է, որ իշխանությունները պատրաստություններ են տեսնում ու հայաբնակ գավառները «դարձեալ արեան մէջ պիտի մնան, ինչպէս ատեն մը»[3]: Այս ժամանակ պարբերականի էջերում հաճախակի արծարծվող թեմաներից էին հողային հարցի և հայերի զինվորագրության հետ կապված խնդիրները: Հանրահայտ ճշմարտություն է, որ սուլթան Համիդի բռնապետական կառավարման տարիներին արևմտահայերից խլեցին լավագույն հողատարածությունները: Հայերի հողերը զավթելու գործում հատկապես սանձարձակ էին գործում քուրդ բեկերն ու աղաները: Հարցին քաջատեղյակ արևմտահայ հասարակական գործիչ Գեղամ Տեր-Կարապետյանի դիտարկումներով, մինչև 1908 թվականը արևմտահայ գյուղացիներից բռնազավել էին 1.030.000 օրավար հող (մեկ օրավարը կազմում է մոտ 0,75 հեկ. հող):

---

[1] «Արմէնիա», 1912 թ., թիվ 22:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

Վերոնշյալ զավթումներից 100.000 օրավարը բաժին էր ընկնում Էրզրումի, 200.000-ը՝ Խարբերդի, 100.000-ը՝ Վանի, 350.000-ը Բիթլիսի, 200.000-ը՝ Դիարբեքիրի և 80.000-ը՝ Սվազի վիլայեթներին[1]:

Օսմանյան պառլամենտի հայ պատգամավորներն ու ազգային-քաղաքական շրջանները ձգտում էին երիտթուրքերին համոզել, որ օրինականության սահմաններում պետք է հետ վերադարձվեին հայերից խլված հողերը, բոլոր գյուղացիները պետք է ապահովված լինեին անհրաժեշտ չափի հողամասերով: Սակայն երիտթուրքերը ոչ միայն քայլեր չարեցին վերոնշյալ ուղղությամբ, այլև գաղտնի թե բացահայտ նպաստեցին գավառահայության սոցիալական հարստահարումների սաստկացմանը: Ավելին, շուտով նրանք հանդես եկան հայ գյուղացիության հողերի բռնազավթումները արդարացնող և օրինականացնող մի շարք սահմանումներով և օրենսդրական առաջարկություններով: Հանդիպելով հայ քաղաքական ուժերի դիմադրությանը, երիտթուրքական իշխանությունները հայ ազգաբնակչությանը խաբելու, հանգստացնելու համար սկսեցին իբրև թե կազմավորել, ձևավորել զանազան հանձնաժողովներ, որոնց իրավասությանն էր հանձնվում հայերի և քուրդ աղաների միջև եղած հողային վեճերի «արդար» լուծումը: Գրաված հողերի վերաբերյալ զարմանալի արդարացում է տալիս երիտթուրքական մեզ արդեն հայտնի պաշտոնյան՝ Օսման փաշան, որը որպես քննիչ շրջագայել էր Մշո դաշտում և այլ վայրերում:

---

[1] Տէր-Կարապետեան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ. Պոլիս, 1911 թ., էջ 43-44:

Նա այդ առումով պնդում է, որ հայերը որպես անհավատարիմ տարր միշտ վնաս են պատճառել օսմանյան տերությանը, գաղթելով Ռուսաստան, Ամերիկա, և այլուր, տասնամյակներով անմշակ են թողել իրենց հողերը, ուստի թուրքական կառավարությունը «իրաւունք չունէ՞ր ուրիշներին յատկացնելու զանոնք պետութեան հասոյթին և ժողովրդեան տնտեսական օգտին համար»[1]: «Արմենիայի» 1912-13 թթ. բազմաթիվ հրապարակումներ նվիրված են հողային հարցին և հայ քրիստոնեից զինվորագրությանը: Պարբերականի թղթակիցները տեղերից ուղարկված թղթակցություններում նշում էին, որ «այս րոպէիս ազգը հողային հարցին չափ շահագրգռուի նաև զինուորագրութեան հարցովը»[2]:

Զինվորագրության հարցում նույնպես հայ հասարակայնության մեջ հակասական, իրարամերժ կարծիքներ էին ձևավորվել: Հայ գործիչների մի մասը կողմ էր, որ հայ զինակոչիկները ծառայեին օսմանյան բանակում, սակայն մեծամասնությունը մերժում էր այդ գաղափարը: Հասարակական կարծիքը մերժում էր այն, գտնելով, որ քրիստոնյաների զավակները չէին կարող ծառայել թուրքական զինված ուժերում, «ապրէին աղտոտ եւ քրիստոնատեաց Անատոլուի թիւրքերուն հետ կողք կողքի, ուտէին միեւնոյն ամանէն եւ պառկէին անոնց հետ»[3]: Հենց այդ զգացողությունը հայերին հեռու էր կանում թուրքական բանակից և շատերն էին ծախում իրենց վերջին ունեցվածքը՝ վճարելու անհրաժեշտ հարկը («պետելը»), որը կազմում էր

[1] «Արմէնիա», 1911 թ., թիվ 44:
[2] «Արմէնիա», 1913 թ., թիվ 4:
[3] Վ. Փափազեան, նշվ. աշխ., էջ 67:

շուրջ հիսուն ոսկի։ Զինվորագրության հիմնահարցն ուներ իր թեր ու դեմ կողմերը։ Ոմանց կարծիքով, դրանով իսկ արևմտահայությունը զենք կրելու և զենքին տիրապետելու լավագույն հնարավորություններ էր ստանում։ Սակայն մյուս կողմից էլ ակներև էր, որ թուրքական բանակում հայերը որպես փոքրամասնություն և որպես «անհավատներ» («գյավուր») անխուսափելիորեն ենթարկվելու էին ճնշումների ու նվաստացումների։ Կյանքը ցույց տվեց, որ թուքական բանակում հայտնված հայ զինվորների կացությունը առավել անտանելի էր, քան կարելի էր ենթադրել։

Հենց այս զգացողությամբ «Արմենիա» պարբերականը նշում է, որ «Խոստովանինք որ սույն զինուորագրութեան հարցին մէջ խաբուած ենք, պնդելով թուրք կառավարութեան մօտ որ ոչ մահմէտականներէն ալ զինուոր առնուի։ Չը մոռնաք որ Թուրքիոյ հայութիւնը ամբողջութեամբ միամտօրէն հաւատալով թուրքին ձեռքով Սահմ. վարչութեամբ գործադրուելիք բարենորոգմանց, պնդեց ու պնդեց անպայման զինուոր տալ, հակառակ յոյն հայրենակիցներու զգուշանալու թելադրութեանց»[1]։ Ընդ որում, նորից կոչ է արվում հասարակական պահանջ ձևավորել կառավարության առջև, որ հայերը պարտավոր չեն զինվոր տալ տերությանը, մինչև որ «հայ ազգը երաշխաւորութիւն ստանայ հողային հարցին կարգադրութեան հետ զինուորագրութեան օրէնքին բարեփոխումը տեսնելու մասին»[2]։ Նորից միամիտ հույսերով քարոզվում է, թե հայ ժողովուրդը իրավունք

---

[1] «Արմէնիա», 1913 թ., թիվ 4։

[2] Նույն տեղում։

և պատեհություն ունի ազդեցիկորեն հիշեցնելու երիտթուրք կառավարողներին, թե «իրենք իթթիհատականք հայ ազգին հանդէպ ունեցած յանձնառութիւնին չի գործադրելով»[1]:

Այնուամենայնիվ, պարբերականի տրամադրվածությամբ, հայերը պարզապես հարկադրված են այլևս չշարունակել զինվորական ծառայությունը, մինչև որ հայոց տեղական, կյանքական և ցեղային առանձնահատուկ պահանջների համաձայն «վերաքննուի քրիստոնէից զինտրսագրութեան օրէնքը և ընդ նմին բանաւոր և գրաւոր արդար կարգադրութեամբ մը երաշխաւորուին արևելեան գաւառներու հայոց կեանքը, ինչքը, պատիւը»[2]:

Մինչև առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը թերթի էջերում հաճախակի էին ահազանգներն ու տագնապի կանչերը բանակում հայ զինվորների նկատմամբ ծայրահեղ դաժան ու իտրական վերաբերմունքի առիթներով:

Ընդ որում աներկբա հասկացվում է, որ հայ զինվորների ենթարկված «անիրաւութեանց և ստորադաս ցեղի մը տեղ դրուելով տիրապետողին գործած բռնութեանց վրայ լալը դարման մը չի կրնար բերել»[3]:

Պարբերականը 1913 թ. հոկտեմբերի 15-ին («Հարց թրքահայոց զինուորատուութեան») իր թղթակից Մ. Կ. Միրախորյանի գրչով ազդարարում էր, որ իրական աջակցություն տածելով կայսրության բարեփոխումների հանդեպ, թուրքահայերն ու իրենց հոգևոր իշխանությունը՝ Ազգային Պատրիարքարանը

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:

«սիրայօժար փափաք յայտնեցին Տէրութեան զինուոր տալու հայրենասիրական անկեղծ և բուռն զգացումներէ դրդեալ, որպէս զի Երկրի վերահաս վտանգն անցունելով իրենց թուրք հայրենակցաց աջակցէին ի վերակենդանութիւն հասարակաց մահամերձ հայրենիքին հաւատալով թէ այնուհետև օրինաց առջև հաւասարութիւն և արդարութիւն պիտի վայելեն և ընչից կատարեալ ապահովութիւն»[1]: Գեղեցիկ է շարադրված: Ողջ արևմտահայության իղձը, տենչն ու երազանքը կարող էր լինել դա: Սակայն, սույն երազանքը իրականության վերածվելու որևէ հիմք չուներ:

Եվ թերթի դիտարկմամբ ևս օսմանյան սահմանադրական հռչակված պետությունը փոխանակ գնահատելու հայոց հավատարմության և անձնանվիրության այդ կորովի ջանքերն ու շարժումները, այլ դժոխային պատիժներով, վարձատրեց և «ցայսօր տակաւին կը վարձատրէ նմանօրինակ եղանակաւ այլև այլն ձևերու ներքև»[2]:

«Արմենիան» 1913 թ. սեպտեմբերի 3-ին «Ն. Աղբալեանի և Ա. Ջամալեանի բանախօսութիւնները Էրզրումի մէջ» վերնագրով նյութ էր արտատպել այլ լրագրից (Կարինի «Յառաջ»): Նրանում ասված է, որ Հայ Երիտ. Միության կողմից կազմակերպված բանախոսություններում հանդես են եկել «Հորիզոնի» խմբագիրներից Նիկոլ Աղբալյանը և հայտնի դաշնակցական գործիչ Արշակ Ջամալյանը «Հայկական հարցը և Բալկանյան Բ պատերազմը» թեմայով: Հայկական հարցը, ըստ Ն. Աղբալյանի,

---

[1] «Արմենիա», 1913 թ., թիվ 11:
[2] Նույն տեղում:

նախնառաջ կարգի ու ապահովության հարց է և եթե «այս երկրի մէջ տիրէ կարգ ու ապահովութիւն, բոլոր ազգերը, որոնց շարքին և հայերը, գոհ պիտի մնան ու պիտի յառաջդիմեն։ Այդ երկու պայմաններն են, որոնք կարգիլեն յառաջդիմութիւնը պատճառ դառնալով ներկայ աննախանձելի կացութեան»[1]։

Եվ նորից միամիտ հույսեր, այն հաշվով, որ եթե բոլոր երկրների նման Թուրքիայում էլ տիրե ապահովություն, հայությունը իր ստեղծագործ ու աշխատասեր ընդունակություններով շատ քիչ ժամանակ անց հասնելու է բարօրության։ Սուլթան Համիդի ժառանգորդ երիտթուրքերը ճիշտ հակառակի մասին էին մտորում և գործում։

1913 թ. հոկտեմբերի 1-ին ընթերցողներին տեղեկացնելով հայտնի ջարդարար ու ավազակապետ Մուսա բեկի սպանության մասին, թերթը նշում է, որ խոստովանելի է կառավարության այս անգամվա աչալրջությունը, որի շնորհիվ ոչ մի «անկարգութիւն չէ պատահած այդ շրջանի մէջ... մի պարագայ որ համոզել կը տայ թէ կէդրոնէն խիստ պատուէր կամ հրահանգ մը կը բաւէ, որ կառավարական որևէ պաշտօնեայ խոհեմ գործէ ու հանդարտ մնայ»[2]։

«Հայաստանի բարենորոգումները» խորագրով 1913 թ. նոյեմբերի 26-ին վերլուծական ակնարկ էր արտատպվել Մարսելի օրաթերթերից, որում քննադատության ալաքն ուղղված էր Եվրոպայի հասցեին, քանզի նա «միշտ թոյլ տուած է իր ստորագրած դաշնագիրը բողոքի (proteste) ենթարկի, թէ եւական

[1] «Արմէնիա», 1913 թ., թիվ 5։
[2] «Արմէնիա», 1913 թ., թիվ 9։

հաշիւներով վախնալով, որ խռովութիւններ կը ծագին և թէ այնպէս ձևացունելով որ իբր թէ հաւատք կընծայէ օսմանեան կառավարութեան շոայլած հաւաստիքներին»[1]: Մեկ այլ նյութում (1913 թ. դեկտեմբերի 10, «Թիւրքիայի վտանգը») արտատպված «L' Esho de Paris» օրաթերթից, փաստարկում է, որ եթե Բ. Դուռը համառի հայկական խնդիրը ճշմարտապես լուծելու ոչ մի առաջարկ չընդունելով, դրանով իսկ ոչ թե տերությունների միջև «թիւրիմացութիւն մը յառաջ բերելու վտանգը կրնայ զոյացունել, ոչ ալ Բէթէրպուրկի կառավարութեան և ռուս ժողովրդին միջև թիւրիմացութիւն մը, այլ հակառակութիւն մը թիւրք իշխանութիւններին և հայերին միջև, հակառակութիւն որ կրնայ ծանր հետևանքներ ունենալ»[2]:

Վերոհիշյալ հակառակությունը, որը ձևավորվում էր տասնամյակներով և հարյուրամյակներով, ավարտվեց հայ ժողովրդի բնաջնջումով ու նրա հայրենիքի կորստյամբ:

Եկավ 1914 թվականը: Ամանորի կապակցությամբ Մ. Փորթուգալյանը հետևյալ մաղթանքն էր հղում ընթերցողներին. «*Մեր սօտաւոր ու հեռաւոր բոլոր բարեկամներին ու ընթերցողներին կը շնորհաւորենք Նոր Տարին, մաղթելով որ գէթ այս նոր տարին թեթևացում մը բերէ մեր ազգի դարաւոր ցաւերին*»[3]: Այնուհետև շարունակում է, թե մաղթանքները որևէ օգուտ չեն ունենա, եթե չաշխատենք և փափագելի է, որ նաև նոր ոգով ու

---

[1] «Արմենիա», 1913 թ., թիվ 17:
[2] «Արմենիա», 1913 թ., թիվ 19:
[3] «Արմենիա», 1914 թ., թիվ 24:

նոր եռանդով շարժվի հայ հանրությունը «դէպի մեր ամէնիս բաղձացած նպատակը»[1]:

Գրեթե յուրաքանչյուր ամանորի կապակցությամբ «Արմենիայի» խմբագիրը նման հուսադրող բարեմաղթանքներ է հղել հայ ժողովրդին, հավատ տածելով, թե անպայման մի որևէ լավ բան է կատարվելու հայության կյանքում: Սակայն, ի դժբախտություն այդ մեծ հայրենասերի, թե արևմտահայերի և թե արևելահայերի կյանքում ամենևին դրական փոփոխություններ չէին արձանագրվում: Հատկապես արևմտահայերի կացությունը դժոխային պատկեր էր ներկայացնում: Կեղեքումները շարունակվում էին նոր ուժով ու առավել մոլեգնությամբ:

1914 թ. փետրվարի 11-ին թերթը նկարագրելով Մշո դաշտի բնակավայրերում տեղի ունեցող հարստահարությունները, նշում է, որ այդ կեղեքումները «աւելի հիմնուած են իւր նահապետական թուլամորթութեան և անմիաբանութեան վրայ»[2]: Այսինքն, առավել տուժում են այն գյուղերը, որոնք ինքնապաշտպանվելու կազմակերպվածությունը և փորձառություն չունեին:

Իսկ, արդարև հայկական այն բնակավայրերը, որոնք ինքնապաշտպանության սկզբունքով են կազմակերպված, բավական անվնաս վիճակում են: Չնայած, դրանք էլ «ստիպուած են միշտ տեսակ մը պատերազմական դրութեան մէջ լինել: Օրինակ Վարդենիս, Արդօնք նն... որոնք ստիպուած են գիշեր-ցերեկ զէն ի ձեռին պատրաստ լինել քիւրդական անակնկալ յարձակումներուն»[3]: Իսկ բազմաթիվ, թույլ, անմիաբան գյուղեր

---

[1] Նույն տեղում:

[2] «Արմենիա», 1914 թ., թիվ 28:

[3] Նույն տեղում:

ընկճված են Մուշի «խապիլաթապետներու և քիւրդ աղաներու կեղեքումներու ճնշման տակ»[1]:

«Կացութիւնը Թուրքահայաստանի մէջ» խորագրով թղթակցությունը տագնապ էր արտահայտում, որ Ռուսաստանին սահմանակից Բայազետի գավառում «մտատանջութիւն պատճառող կացութիւն մը տիրէ. Քիւրտերը գրգռուած և յուզուած են»[2]:

Խմբագրությունը բազմաթիվ թղթակցություններ էր ստանում Արևմտահայաստանի տարբեր գավառներից, որոնք պատկերավոր, սակայն առանց դույզն ինչ չափազանցությունների, տալիս էին երկրում ստեղծված ռեալ իրավիճակի պատկերը:

1914 թ. ապրիլի 22-ին հաղորդվում էր հայաբնակ Քեռփրիքո գյուղում թուրքական զինվորների և ժանդարմների կատարած գազանությունների մասին[3]:

Չարաբաստիկ 1914 թվականը՝ առաջին համաշխարհային պատերազմի բռնկումի տարին՝ աչքի է ընկել նաև եղանակային ոչ նորմալ երևույթներով:

«Արմենիայի» էջերից տեղեկանում ենք, որ նույն այդ թվականի ապրիլը եղել է ցրտոտ ու ձյունառատ: Մասնավորաբար, 1914 թ. ապրիլի 16-ին և 18-ին Վանում առատ ձյուն է տեղացել, «որմէ յետոյ թափած է կարկուտ ու ատոր հետեւանքով կանոնաւոր ցուրտ կընէ: Ծառերու պտուղները, տեղ-տեղ ալ խաղողի որթերը բաւական վնասուած են»[4]: Բնության այդ աղետը պա-

---

[1] Նույն տեղում:
[2] «Արմենիա», 1914 թ., թիվ 33:
[3] Տե՛ս «Արմենիա», 1914 թ., թիվ 38:
[4] «Արմենիա», 1914 թ., թիվ 42:

տուհասել է նաև Արևելյան Հայաստանի բնակավայրերը: «Երևանեան նահանգի աղէտը» վերնագրով նյութը պատկերացում է տալիս Երևանի, Աշտարակի և Էջմիածնի շրջաններում ցրտահարության ավերիչ հետևանքների մասին: Իրավացիորեն դիտարկում է արվում, որ բնության վերոնշյալ աղետներից հետո «գիւղացիության և հետևաբար ամէն ժողովուրդի դրութիւնը աւելի սոսկալի կերպարանքի մը տակ կը յայտնուի»[1]: Նշվում է, որ Աշտարակում 700 դեսյատին խաղողի այգիներ լիովին վնասվել են և ուտելու խաղող անգամ «դժուար թէ մնացած լինի և պետք է ասել, որ ամբողջ Աշտարակը իր 5000 բնակիչներով միայն այգիներից ստացած եկամուտով է ապրում»[2]:

«Արմենիայի» ուշադրության առանցքում էին հայկական բարենորոգումների շուրջ ընթացող բանակցությունները: Հաղորդելով անգլիական խորհրդարանում բարենորոգումների խնդրի շուրջ տեղի ունեցած քննարկումների արդյունքները, 1914 թ. ապրիլի 1-ին թերթը նշում էր, որ բարենորոգումների իրագործման գործընթացի վրա «Եւրոպիոյ վերահսկողութիւնը կայ և պիտի մնայ Հայաստանի մէջ, և այս անգամ աւելի ուղիղ և գործնական կերպով»[3]:

Բարենորոգումների հաջողության գրավական էր դիտվում այն հանգամանքը, որ ընդհանուր առաջադիմությունը և ճշմարիտ քաղաքակրթությունը «մուտք գտնելով, շուտով կը ծաւալին յօգուտ հայոց, յօգուտ Հայաստանի, յօգուտ օսմանեան պե

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] «Արմենիա», 1914 թ., թիվ 35:

տութեան և յօգուտ եւրոպական խաղաղութեան»[1]: Թերթի հաջորդ համարում (1914 թ. ապրիլի 8) հաղորդվում էր, որ մեծ տերությունների Կ. Պոլսում հավատարմագրված դեսպանները շարունակում են խորհրդակցությունները «երկու եւրոպացի վերատեսուչների պաշտօնի համար ընտրելիների ցանկը պատրաստելու մասին»[2]:

Այո՛, այդ օրերին աշխարհասփյուռ հայությունը ապրում էր հույսերով ու հավատով լեցուն խանդավառության օրեր: Հայության բոլոր հատվածներում նկատելի էր ոգևորությունը, որ այս անգամ Բ. Դռանը չի հաջողվի խուսափել բարենորոգումների իրագործումից: Հուսադրող էր նաև այն, որ այդ պահին հայության բոլոր քաղաքական ուժերի միջև համերաշխության մթնոլորտ էր ձևավորվել: Այս առումով իրավացի դիտարկում է կատարել վաստակաշատ պատմաբան Հր. Սիմոնյանը, ընդսմին նշելով, որ 1912-13 թվականներին և դրանից հետո ընդհուպ մինչև Առաջին աշխարհամարտի սկիզբը, հայ դատին նվիրված ազգային գործունեությունն այնքան կարգապահ էր ու գործնական, այնքան համերաշխ ու միակամ, ինչպես երբեք չէր եղել[3]:

Թվում էր, որ այս անգամ բարենորոգումները կարող են իրականություն դառնալ, չնայած թուրք ազգայնականների և Բ. դռան կատաղի դիմադրությանը:

1914 թ. մարտի կեսերին ռուսական դիվանագիտության համառ ջանքերով վերջապես կազմվում է հայկական վիլայեթ-

---

[1] Նույն տեղում:
[2] «Արմէնիա», 1914 թ., թիվ 36:
[3] Տե՛ս Հր. Սիմոնյան, նշվ. աշխ., էջ 815:

ների ընդհանուր քննիչների թեկնածուների անվանացուցակը: Ի դեպ, պարզ է դառնում, որ վերատեսուչների փնտրտուքը այնքան էլ հեշտ գործ չէ:

«Արմենիան» 1914 թ. ապրիլի 15-ին «Հայաստանի բարենորոգումների վերատեսուչները» խորագրով հայտնում էր, որ ընդհանուր վերատեսչության համար մեծ պետությունների կողմից ներկայացված հինգ ընտրելիների ցանկը քննության է ենթարկվել և «անոնց մէջէն 2-ը ընտրելու նախարարական յանձնաժողով մը կազմուած է»[1]: Իսկ առաջարկված հինգ ընտրելիները հետևյալներն են. «2 պէլժեր՝ Տրկիզ և Գօնկօի կառավարիչ Հսանրի. 2 հոլանտացիներ՝ Վէսթենէնք և գնդապետ Տէրմօտ և 1 նորվէկիացի՝ գնդապետ Հօֆ»[2]: Պետք է նշել այն ժամանակվա մամուլի և կապի միջոցները չունեին մեր օրերին բնորոշ սրընթաց արագությունը և հեռավոր Արևմտահայաստանից եկող լուրերը Ֆրանսիայի Մարսել քաղաքում հրատարակվող թերթում տպագրվում էին որոշ ուշացումով:

Մինչ «Արմենիայի» էջերում խոսվում էր թեկնածուների մասին, 1914 թ. ապրիլի 2-ին Բ. դուռը ընտրելիներից վստահում է հոլանդացի Լուիս Վեստենենկին և նորվեգացի Նիկոլաս Հոֆին[3]:

1914 թ. մայիսի 13-ին «Արմենիայի» էջերում «Հայաստանի բարենորոգումները» ընդարձակ նյութը տեղեկացնում էր, որ հոլանդացի Վեստենենկը և նորվեգացի գնդապետ Հոֆը ժամանել են Պոլիս ապրիլի 30-ին: Վեստենենկը հետևյալ հայտարարությունն է արել

---

[1] «Արմենիա», 1914 թ., թիվ 37:

[2] Նույն տեղում:

[3] Տե՛ս Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 г. – 10 мая 1914 г., Петроград, 1915, стр. 178.

մամուլի համար. «Հոս կուգամ, տոգորուած խորունկ սիրով մը այս երկրին հանդէպ, որուն արագ և բարեդէպ բարգաւաճումը կը փափաքիմ: Ինծի յանձնուելիք պաշտօնը նոր չէ ինծի համար, որովհետև Հոլանտական Հնդկաստանի մէջ իմ երկարատև բնակութեամբս արդէն ընտելացած եմ իսլամական իրաւունքին, բարքերուն և տովորութիւններուն: Հոս ալ բազմաթիւ ազգութիւններ, որոնք երբեմն կռիւի կը բռնուին իրարու հետ, և կառավարութեան պետին դերը պէտք է ըլլայ անոնց միջև հաւասարակշռութիւն մը պահել և մանաւանդ իրապէս աչատուատր վարչութիւն մը ունենալ»[1]:

Ըստ պարբերականի դիտարկման, երկու վերատեսչների վերաբերյալ եղած տեղեկություններն ու կարծիքները, ընդհանուր առմամբ, շատ գոհացուցիչ են և «անտարակոյս կերևի որ ամենայն ճշտութեամբ ալիտի կատարեն իրենց յանձնուած գործը»[2]: Այդ, վերատեսչների ընտրությունը հաջող էր կատարված, և եթե խաղաղությունը շարունակվեր, գուցե վերջիններիս հաջողվեր որոշ չափով կարգ ու կանոն մտնել իրենց վստահած երկրամասերում և դրանով իսկ թեթևացնել արևմտահայության կրած առօրյա-ամենօրյա տառապանքները: Հ. Ց. Դաշնակցության ականավոր գործիչ Սիմոն Վրացյանի դիպուկ արտահայտությամբ՝ բարենորոգումների հաջող ընթացքով «... Հայ ժողովրդի առջև բացում էին նոր, անսահման հրապուրիչ հորիզոններ»: Սակայն, պատմության հետագա ընթացքը ցույց տվեց, որ հայոց բարենորոգումների իրագործումը մնալու է որպես անիրականանալի երազանք:

---

[1] «Արմենիա», 1914 թ., թիվ 40:
[2] Նույն տեղում:

Շուտով պայթեց համաշխարհային պատերազմը և ողջ աշխարհը՝հայտնվեց խառնակ թռիչքում: Այլևս խոսք չէր կարող լինել Արևմտյան Հայաստանում նախատեսված բարենորոգումների վերաբերյալ:

ԳԼՈՒԽ XVI
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԸ ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՈՒ ՎԱՍՏԱԿԻ ՄԱՍԻՆ

Փորթուգալյանի անձի և գործի, գրական, հասարակական արժանիքների մասին շատ է գրվել ու խոսվել: Դեռևս կենդանության ժամանակ նրա անվան շուրջ տարատեսակ զրույցներ և պատմություններ էին հյուսվում, փառք ու ձոն էր հնչեցվում իր պատվին:

Հենց իր ժամանակակիցները պարզորոշ գիտակցում, պատկերացնում էին, թե ով է, ինչպիսի արժանիքներով է օժտված Մկրտիչ Փորթուգալյան հայ անհատը, հայրենասեր գործիչը: Եվ երբ համադրում և ամփոփում ենք այդ ժամանակաշրջանում գործած մեծ անհատների գործունեության արդյունքները և այն հեռանկարները, որ բացվել կամ գծագրվել են վերջիններիս անձնազոհ ջանքերով, ապա չենք կարող անվարան չնշել, որ Փորթուգալյանը վերոնշյալ դարաշրջանի մեծագույն անհատների շարքում է, և գուցե հենց ամենից մեծագույն գործիչն է:

Այդ հետևությանը հանգում ենք նախևառաջ այն գիտակցումով և համոզումով, որ Փորթուգալյանի հասարակական-քաղաքական բուռն ու փոթորկոտ գործունեությամբ հայ հանրային, քաղաքական մտքի զարգացման համար տեսանելի եղան կամ գծագրվեցին նոր ուղիներ ու հորիզոններ:

Նա տեսավ, տեսական, քաղաքական առումով, նախանշեց ավելի հեռուն, քան իր ժամանակակիցներն ու հետագա շրջանի գործիչները:

Մեծ հեղափոխականն իր աշխատություններում և պարբերականների էջերում սահմանեց ու նախանշեց այն մարտահրավերները, որոնք սպառնում էին հայ ժողովրդի ազգային ինքնությանը ու անվտանգությանը, նրա բուն գոյությանն իսկ: Նա էր, որ «Արմենիայի» էջերում տարիներ շարունակ բացառիկ հետևողականությամբ ահազանգում էր ողջ արևմտահայությանը սպառնացող ահավոր, զարհուրելի վտանգի մասին: Այդ վտանգը նախապատրաստվող Եղեռնն էր, որը գաղտնի, սակայն խնամքով ծլարձակվում էր թուրքական հասարակության բոլոր ոլորտներում:

Ո՞վ-ո՞վ, բայց Փորթուգալյանը բոլորից տեղեկացվածն էր ու ամենից քաջածանոթը թուրքական բիրտ ու դժնի իրականությանը: Նա գիտեր, հստակ պատկերացնում էր, թե ինչպիսի վայրենի ուժ ու բարքեր են հյուսվել ու գործում օսմանյան դժնդակ կայսրության անտեսանելի խորքերում:

Անձամբ ծանոթ լինելով թուրք ռասսայի էությանը, նա չէր կասկածում, որ հարմար առիթի դեպքում թուրքական իշխանությունները կայսրությունը լիովին կմաքրեն հայերից՝ նրանց բնաջնջելով:

Մկրտիչ Փորթուգալյանը համառելի հետևողականությամբ միշտ ու մշտապես պահեց և պահպանեց իր որդեգրած սկզբունքները մինչև վերջ: Նա երեսուն տարի շարունակ խուլ թե բացահայտ դիմակայության մեջ եղավ մեծ մարդասպան սուլթան Համիդի իշխանության դեմ:

Ուրեմն, ո՞վ էր Մ. Փորթուգալյանը, ո՞րն էր նրա ամենամեծ ծառայությունը հայ ազգին, իր ժամանակակիցներին ու հետագա սերունդներին:

Նրա կյանքի և գործունեության լավագույն սեղմ գնահատականը տվել է արևմտահայ նշանավոր մտավորական, գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը: Նա հետևյալ բնութագրումն է տվել Փորթուգալյանի կերտած գործի. «Ան եղաւ, որ ազատութեան շունչը տուաւ ամբողջ Վանի: Առանց արտասանելու յեղափոխութիւն բառը... ան պատրաստեց յեղափոխական սերունդ մը»[1]: Հիրավի, երիցս ճշմարտացի, խորունկ ու սպառիչ բնութագրություն: Այո՛, ուրացում կլինի, եթե հատուկ չնշենք ու չընդգծենք, որ Փորթուգալյանը հեղափոխական դպրոցի հիմնադիր լինելով, տարիների մեջ անաղմուկ պատրաստեց հեղափոխական հզոր սերունդ:

Հայ հանրային գործիչներից շատերն են հիացմունքով խոսել Փորթուգալյանի գործունեության և նրա գաղափարների վերաբերյալ: Նրանց շարքում կան նաև կին անհատներ, որոնք ևս շատ բարձր ու ազնիվ գնահատական են տվել վերջինիս դերակատարությանը: Օրինակ, Զարուհի Գալեմքեարյանը ոգևորված նշել է, որ Փորթուգալյանը «արիութեան համար ծնած մարդ, կարկառուն դէմք մըն է մշտանորոգ գործունէութեան. իր հաւատքի ու կորովի խարազան շաչեցնելով, իր աշակերտներու մտքին մէջ վառեր է կայծեր, ցաներ է սերմեր, քանդեր կործաներ է կանխակալ ու ծուռ կարծիքներ, մատնանշեր է ընկերային ու բարոյական խոցերը, զօրացուցեր է տկարութիւնները»[2]: Ապա ավելացնում, որ Փորթուգալյանը միշտ հանդիսացել է խավարի ու նախապաշարումների թշնամին և ուղղամտութ-

---

[1] Յափուճեան Ա., Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977 թ., էջ 18:

[2] Քառասուն տարուան աշխատաւորը, նշվ. աշխ., էջ 30:

յան և ճշմարտության բարեկամը, իրավունքի ու արդարության անձնվեր ջատագովը, ազատության և անկախության «անձուկովը բաբախած իր սիրտն ու հոգին ի սպաս դրած է տարինե՛ր իր ազգին. և դեռ մինչեւ այսօր. կը շնչէ, կը խորհի, կը խօսի և կը գրէ անոր օգտին համար»[1]:

Ըստ նույն այս հոետորի, տվորական դեմք չէր Մկրտիչ Փորթուգալյանը, որ երևաց հայ հեղափոխական հորիզոնի վրա, այլ նրա կյանքն ու գործը եղավ այնպիսին, որ «անիկա կրնայ ամէն օր նիւթ ընծայել մարդոց ուսումնասիրութեանց և խորհրդածութեանց, և իր ապրած կեանքէն բխած է կեանք մը մտքի և հոգիի, որ կարող է միշտ բարձր խոհեր և զգացումներ ներշնչել մեր նոր սերունդին»[2]:

Անվանի գրող Զապել Եսայանը «հայ կնոջ կողմէ» խորագրով նյութի մեջ մատնանշում է, որ հայ կնոջ դաստիարակությունը մեր ազգային վերածնունդի մեծ գործիչների մտահոգություններից է եղել և Փորթուգալյանը ևս խորապես «ընտանի մեր ցեղային ոգիին, իր նուիրական առաքելութեան մէջ չէ մոռցած մատնանշել թէ կինը՝ ստրուկ եւ անտարբեր, կինը՝ համալուած միայն առարկայ վայելքի և զարդ՝ կանանոցներու, օգտարամուտ եւ խորթ է մեր ազգային բարքերուն և խառնուածքին»[3]:

Փորթուգալյանի գործած սխրանքը գնահատելով հայ կնոջ հոգեկան ազատագրության և նրա բնածին իրավունքների վերականգման տեսանկյունից, սույն հեղինակը նշում է, որ մեծ առաքյալները սակավաթիվ էին, երբ ասպարեզի վրա եկավ

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 32:

Փորթուգալյանը. «բայց անոնց ցանած սերմը բեղմնաւոր եղաւ անոնց շունչը՝ սուրբ և օրհնեալ»[1]:

Ուստի այս ամենի հաշվառումով և իմաստավորումով «Աւելի գիտակցօրէն և հպարտութեամբ, այսօրուան հայ կնոջ կողմէ յարգանք ու մեծարանք իր գործին և անձին»[2]:

Գնահատելով Փորթուգալյանի մղած անձնվեր ու անձնուրաց պայքարը Վասպուրականում, տեղի ծնունդ, կրթական, մշակութային և հասարակական աչքի ընկնող գործիչ Համբարձում Երամյանը ընդգծում է, որ մեծ հեղափոխական գործիչը իր համար ուսուցիչ է հանդիսացել նաև կրթական նոր տիպի հաստատություններ հիմնադրելու, կազմավորելու առումով: Ըստ նրա պնդումների, «1876-ին հիմնուած վարժարանս՝ ջանացի ըստ կարելւոյն ձեւակերպել Վարժապետանոցի *մօտելին* վրայ և Փորթուգալեան իր խորհուրդներով յաճախ կ'աջակցէր ինձ»[3]: Իսկ Փորթուգալյանի մարդկային և հոգեոր մեծ առաքինությունները զգացվել են առաջին իսկ հանդիպումից. «Քաղաքամիջի Յիսուսեան վարժարանին մէջ պատմութեան դաս կ'աւանդէի, երբ Պոլսեցի հիւրը, Մարկոս Նաթանեանի ընկերակցութեամբ, անակնկալ այցելութիւն մը և իր առաջին բանախօսութիւնն ըրաւ՝ նիւթը քաղելով դասէն: Այնուհետև Վան հետաքրքրուեցաւ իրմով, և ո՛ւր որ խօսէր, կը վազէին զինք լսելու»[4]:

Վանի ազգաշունչ մթնոլորտում թրծված ու կոփված Հ.Երամյանը բնավ չի չափազանցնում, երբ ընդգծում է, որ Վար-

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 33:
[4] Նույն տեղում:

ժապետանոցի քննութիւններն ու հանդէսները «կը ցնցէին Վանայ ուսուցիչներն և ուսանողները, և Փորթուգալեանի կազմած Ընկերութիւններն և Սահմանադրութեան տարեդարձի հանդէսները նոր կեանք կը ծլեցնէին ամէն խաւերու մէջ»[1]:

Նրան ժամանակակից մտավորականները, հատկապես գնահատել են Փորթուգալյան անհատի միշտ պայքարի մեջ գտնվելու և սկսած պայքարը մինչև վերջ մղելու ունակությունները:

Եվ եթե ինչ-որ չափ ու չափորոշիչ է պետք բարոյական արժեքները ճշգրտորեն հստակեցնելու համար, ապա հասարակական գործիչների համար բարոյական աստիճանաչափը հենց հանուն առաջադիմության միշտ ու մշտապես պայքարի մեջ լինելու կարողությունն ու առաքինությունն է: Մեծ հեղափոխականի դերն ու գործունեությունը հենց այս կտրվածքով քննում և գնահատում է արևմտահայ անվանի մտավորական Ռ. Զարդարյանը: Նա նշում է, որ ժողովրդանվեր գործչից մշտապես պահանջվում է բացառապես լինել պայքարի և պայքարողների մեջ «արիութեամբ, ճակատաբաց, անվրհատ, տարիներով, և անցընել ամբողջ կեանք մը պատնէշին վրայ,– կը նշանակէ ունենալ իտէալ մը, որ լաւատես է»[2]: Փորթուգալյանի պես անհատի համար էականը անձնվիրությունն է, «անշահախնդիր, անյողդողդ,գիտակցական, որ կը մղէ Անհատը տալու ինչ որ ունի ամէնէն աւելի թանկագին, ստորադասելով եւ միտք, եւ խօսք, եւ անձնական երջանկութիւն, եւ կեանք

---

[1] Նույն տեղում, էջ 34:

[2] Նույն տեղում:

ուրիշներու երջանկութեան»[1]: Բայց ի՞նչ է արել Փորթուգալյանը, ո՞րն է նրա կյանքի և գործունեության կարևոր դասը,– հարցնում է հոետորը և պատասխանում այսպես. «Գացած է դէպի ժողովուրդը, այն պահուն, ուր Պոլսոյ մտաւորականութիւնը կը տեսնէր միայն պատմական Հայաստանը և կ'արբենար պատմական յիշատակներով, մոռցած կենդանի, ժամանակակից Հայաստանը՝ որ ուրիշ բան չէր այդ մտաւորականութեան համար, եթէ ոչ Գաւառացի, Խոռ կամ Խմպլը:

Գացած է՝ սիրով, խանդաղատանքով ու հաւատքով, ստեղծելու Նոր Հայաստանը»[2]: Նոր Հայաստանը արարելու, ստեղծելու համար Փորթուգալյանը տասնամյակներ շարունակ պայքարեց իբրև ազատասեր, «իբրեւ փրօփականտիսթ, իբրեւ կազմակերպիչ, և կը շարունակէ այդ պայքարը, անտարակուս ոչ երիտասարդական թափով, մինչեւ այսօր ալ, իբրեւ խմբագիր *Արմէնիայի*: Երիտասարդութիւնն սկսած է և ծերութիւնը կը վերջացնէ ահա: Կը վերջացնէ պատուով և հպարտութեամբ»[3]:

Այո՛, նոր Հայաստանի գոյությունը անտարակուսելի էր, քանզի այն լոկ աշխարհագրական ու հողային տարածություն չէր, այլ գիտակցություն ու մտածողություն, «գիտակցութիւն մը, մեր ժողովուրդին մէջ,– գիտակցութիւնը իր ազգային գոյութեան, իր ազգային ճակատագրին և իր ազգային իտէալին»[4]: Ահա սույն գիտակցումով էլ Փորթուգալյանը կարող էր կանգնել

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում, էջ 35:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

հայոց պատմության և հայ սերունդների առջև և բացճակատ հպարտությամբ ասել. «Ես իմ պարտքս կատարեցի»...

Փորթուգալյան հայ մարդու, քաղաքացու և գործչի մասին իր ծավալուն դիտարկումներն է սերունդների հիշողությանը հանձնել մեծանուն քնարերգու, հասարակական գործիչ Վահան Թեքեյանը: «Անձնական յիշատակներ» խորագրով հոդվածում նա նշում է, որ «Պէրպէրանի գրասեղաններուն վրայ, տաս-տասներկու տարեկան տղայ մը՝ էի՝ երբ առաջին անգամ Փորթուգալեանի անունը լսեցի: Առասպելական հանգամանքով մը, յոյսի և յուզման սարսուռի մը ներշնչումով տեղի ունեցաւ իմ անդրանիկ ծանօթութիւնս այդ անունին հետ»[1]:

Վ. Թեքեյանը, հետագայում շուրջ հինգ տարի ապրել էր Մարսելում և այդ ընթացքում բավական լայն շփումներ ունեցել «Արմենիայի» խմբագրի հետ, դիտարկումներ է կատարում մարսելյան միջավայրի և հայ գործչի շուրջ ստեղծված իրավիճակի վերաբերյալ: Թուրքական կառավարության շարունակական սպառնալիքների պատճառով Մարսելում բնակվող շատ հայերի համար Փորթուգալյանը «կը նկատուէր փորձանք մը ու վտանգ մը»[2]:

Չնայած այդ հանգամանքին, Փորթուգալյանը ցուցաբերելով կամային բարձր որակներ, բնավ չէր փորձում օրերից մի օր լքել Մարսելը և հեռանալ այլ վայր: Նա այդ դժվարին օրերին իր փոքրաքանակ թերթը և մեծ ընտանիքը ապրեցնել կարողանալու համար «ատեն ստեն պէտք կ՚ունենար գաղթականութեան օգնութեանը, որ այդ օգնութիւնը կ՚ընձեռէր շատ զգուշութեամբ և

---

[1] Նույն տեղում, 38:

[2] Նույն տեղում, էջ 39:

շատ դժկամակութեամբ, սամենածայրայեղ պարագաներու մէջ միայն՝ երբ գործիչին կարասիները գրաւուէր, կամ զաւակը աղետաւոր հիւանդութենէ մը պառկեր, կամ ուտելու հացը բոլորովին պակսեր էր իր տունին մէջ»[1]: Եվ միայն այդ դեպքում, ըստ հուշագրի, միայն մի քանի հոգի փոքր գումար կհավաքեին և կհանձնին ընտանիքի վշտահար հորը, թեպետ «աւելի մեծ գումար մը պատրաստ էին տալու, եթէ միանգամ ընդ միշտ զայն առնէր ու հեռանար Մարսէյլէն»[2]:

Սակայն, ի բարեբախտություն հայ մամուլի և նրա երկրպագուների, Փորթուգալյանը համառեց և չընդհատեց պարբերականի հրատարակությունը: Նա համառ, արիասիրտ ճիգերով շարունակեց թերթի հրատարակության գործը, քանզի նրան սիրում և պաշտում էր մյուս զավակներին հավասար, գուցե «ասոր վրայ գտնելով մխիթարութիւնը իր միւսներէն կրած վշտին, որովհետև ասիկա աւելի տոկուն՝ ամիսներով կը դիմանար անսուաղութեան, ձայն չէր հաներ, չէր ապրել, բայց չէր մեռներ, երբ հայրը սնունդ տալ չէր կրնար իրեն, գիտէր համբերութեամբ սպասել բաժանորդներու բարի-կամքին, իր գոյութիւնը վերստին երեւան բերելու համար»[3]: Ճշմարտացի, դիպուկ բնութագրում է տալիս անվանի տաղերգուն, երբ նշում է, որ «Արմենիան» Փորթուգալյանի թղթե զավակն էր, և չնայած իր վատառողջ կենցաղին «կ'ապրեցնեէր միւսները՝ կ'ապրեցնէր որքան որ կրնար...»[4]:

---

[1] Նույն տեղում:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:

Կ. Թեքեյանը խոսքն ավարտում է նրանով, որ Վանի Վարժապետանոցի ու Կենդրոնական վարժարանի նախկին տեսուչը և ազգային վաղեմի գործիչը տասնամյակների վշտաչարչար կյանքից ետք լիովին վաստակել է անխտիր ամբողջ հայ ազգի երախտագիտությունը «անոր վերջին կէսդարու զարթնումին աշխատած և ահաւոր ցնցումներու մէջտեղ, անոր յոյսն ու հաւատքը իր մէջ անսասան կրած ըլլալուն համար»[1]:

Փորթուգալյանի կյանքի և գործի առաջին կենսագիրներից մեկն է Պ. Ռ. Թորոսյանը, ով դեռևս 1912 թ. Նյու-Յորքում լույս ընծայեց «Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեանը» ուշագրավ աշխատությունը: Չափազանց կարևոր և առանձնահատուկ է նրա հետևյալ դիտարկումը, որը կարող է վերաբերվել Փորթուգալյանի գործունեության առաջին (ոչ տարագիր) շրջանին. «Հայրենիքի փրկութեան համար յուր գլխաւոր ծրագիրն էր ոչ հայը ապստամբեցնել թուրքին դեմ, այլ հիմնել վարժապետանոց մը, ուր ուսանողներ ընդունվեին Թուրքիայի մէջ գտնված հայ, թուրք, քաղդեացի, եզիդ, հույն և ուրիշ բոլոր ցեղերէն և ամեն կողմերէն, որոնք վերադառնալով իրենց տեղէր և ազգերուն մէջ իբրև ուսուցիչներ տարածէին միօրինակ կրթութիւն մը, որն ապագային մէջ զիրար հասկանալու, զիրար չջարդելու, իրարու հետ համերաշխ ապրելու, հայրենիքին օգտակար դառնալու և զայն ծաղկեցնելու հիմնաքարը պիտի կազմէր ուրիշ բառերով բարեկարգեալ Թուրքիա մը առաջ բերէր»[2]:

Սույն մոտեցումը կարող էր լինել Փորթուգալյան գործչի գործունեության սկզբնական փուլի հավատո հանգանակը, երբ

---

[1] Նույն տեղում, էջ 40:

[2] Թորոսյան Պ. Ռ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեանը, Նյու-Յորք, 1912 թ. էջ 9-10:

համոզված էր, որ անհրաժեշտ ու բարձր մակարդակի լուսավորություն և մշակույթ տարածելով, կարելի էր փոխել կայսրության ներսում տիրող իրավիճակը:

Ժամանակակից գործիչներից նրա գործունեության վերաբերյալ բուռն հիացմունքով է արտահայտվել Գարեգին Խաժակը, որը «Տոկուն մարդը» խորագրով հրապարակագրության մեջ բազում արժանիքներ է մատնանշում: Նա անվերապահորեն հետևյալն է շեշտադրում. «Ու այսօր 40 տարի-երկա՛ր, սև՛ տարիներ,– անոր ձայնը հնչելէ ետք, եկեր հասեր է ծերութեան հանգրուանը: Սակայն այդ հուժկու և տոկուն ձայնը չի մարիր, չի մեռնիր: Դեռ կը հնչէ: Քառասո՛ւն տարի... քար ըլլար կը փշրուէր, ծով ըլլար կը ցամքէր: Սակայն անոր եռանդը երբէք-երբէք չցամքեցաւ, երբէք չթերացաւ»[1]:

Հարություն Շահրիկյանը նրա գործունեության մասին արտահայտվելով կարևորում է հետևյալը. «Ինքնատարազիրի առաջին աշխատանքը եղաւ հիմնել Արմենիան՝ որ եղաւ առաջին յեղափոխաշունչ օրգանը, որի անուամբ մկրտուեց առաջին յեղափոխական կազմակերպութիւնը թքահայոց մէջ: Բայց Փորթուգալեան իր ամբողջ հոգին դրած եղաւ իւր «Հաւատամք»-ին մէջ, և որ կը ցանկար տեսնել Հաւատքը ամբողջ հայ ազգի»[2]:

Շարունակելով արևմտահայ ազատագրական շարժման շուրջ խորհրդածությունները, սույն հեղինակը գտնում է, որ 1875-1885 թթ. թրքահայոց սերնդի այն ակտիվ մասը, որը նվիրվել էր հասարակական դատին և գնաց միանալու ազգային հեղափոխական երեք կուսակցություններից մեկն ու մեկին, ան-

---

[1] Քառասուն տարուան աշխատաւորը, նշվ. աշխ., էջ 41:

[2] Նույն տեղում, էջ 53:

պայմանորեն կրել է Մ. Փորթուգալյանի ու նրա «Հաւատամք»-ի սկզբնական ազդեցությունը:

Մեծ հեղափոխականի կյանքի և գործունեության վերաբերյալ ծավալուն հուշագրություն է թողել ժամանակաշրջանի աչքի ընկնող հասարակական գործիչ Ասքանազ Մ. Չթչյանը: Արժևորելով Խրիմյանի անձնուրաց ջանքերը Հայաստանի վերածնության գործը բուն իսկ երկրի մեջ նախապատրաստելու առումով, միաժանամակ ընդգծում է, որ Փորթուգալյանը «կուզար հայոց Հայրիկի նոր ուղղութեան, զաղափարական նոր դպրոցի անձնուէր մշակը հանդիսանալու»[1]:

Ըստ նրա, Փորթուգալյանի հիմնած կրթօջախները դարձան ոգևորության ու ոգեշնչումի իսկական հնոցներ, ուր հաջողվեց դարբնել «Ազրիպպասեաններու, Աւետիսեաններու, Գունտազճեաններու, Վազգէններու, Ախիկեաններու նոր սերունդ մը, ներշնչելով անոնց հայրենասիրութեան և զոհաբերութեան ոգին»[2]:

Չափազանցություն չէ այն դիտարկումը, որ հենց Փորթուգալյանը հայոց երկիր բերեց հեղափոխական ոգին ու կրակը: Եվ հետագայում իր աշակերտները ամբողջովին թրծված իր զաղափարական կրակով նույնքան անձնվիրությամբ դարձան ազգային և հեղափոխական գործի վարիչներն ու պատասխանատուները Վասպուրականի գավառներում, Բաղեշում, Ատրպատականում:

Ահա այսպես, շատ-շատերը իր ժամանակակիցներից ջերմ ու իրատեսական գնահատական են տվել մեծ հայրենասերի

---

[1] Նույն տեղում, էջ 58:
[2] Նույն տեղում:

աննկուն ազգային գործչի ծավալած բազմաբեղուն ու վիթխարի գործունեության վերաբերյալ: Ոչ ոք չի չափազանցնում: Իրոք, Փորթուգալյանն ինքն իրենով նշանավորեց հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացման մի նոր, ավելի բարձր ու վերընթաց աստիճանը:

Փորթուգալյանի գործած սխրանքը, այո, անանձնական էր, վեհ ու վսեմ: Եվ ժամանակակիցները, և հետագա բոլոր սերունդները ըստ արժանվույն գնահատականներ տվեցին մեծանուն հայորդու գործին ու վաստակին:

Բոլորը միաբերան նշում են Փորթուգալյանի գաղափարական ու բարոյական կարևոր արժանիքների մասին, որոնց շնորհիվ նա հավատարմորեն ծառայեց հայ ազգային-ազատագրական շարժմանը:

Եվ եթե ուրիշները ճանապարհի կեսին հուսահատվեցին ու դասալիք եղան այս կամ այն կերպ, ապա Փորթուգալյանը մինչև վերջ քայլեց հեղափոխության փշոտ ու վտանգավոր ճանապարհով:

Հենց այդ ամենի շնորհիվ նա անվերապահորեն արժանացավ համայն հայության ջերմ վերաբերմունքին, հարգանքին ու ակնածանքին:

Փորթուգալյանին նվիրված երգեր ու բանաստեղծություններ են ձոնվել, որոնցից է Սիպիլի գրչի պատկանող սույն քերթվածքը.

ՀԵՐՈՍԸ

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼՅԱՆԻՆ

Ով մա՛րդ հերոս, հանճար եւ կամ նահատակ.
Որ քու անձիդ համար երբեք չես ապրած,
Ով Հրայրք մը ունիս քեզի նըպատակ,
Գաղափար մը անձնուրաց,

Թողած կեանքին լայն ուղիները փափուկ,
Անպատըսպար՝ տօթերուն տակ ու ձիւնին,
Միշտ բարձրացար քարուտ ճամբէ դերբուկ,
Ուր ոտքերը կ'արյունին։

Սըրահներու մէջ երբ բոցը կը վառէր,
Երբ ջահերը կը շողային լուսարձակ,
Դուն՝ մեկնեցար հոն ուր ցուրտ էր, խաւար էր,
Եւ հեռու էր լուսածագ։

Թափթըփեցան թարմ երազներդ անհամար,
Դեռ ափըթիթ օրերդ անցան հոգերով.
Չըծաղկեցաւ ոչ մէկ զարուն քեզ համար.
Արտասուեց իղձդ ու գորով։

Պըսակուեցան վարդերով ցած գըլուխներ.
Աշխարհ չունի հերոսին փառք արժանի.
Փուշ-պըսակին ներքեւ՝ մաքուր, անվեհեր
Իր ճակատը կ'արիւնի։

Զրպարտեցին ու դատեցին քեզ մարդիկ,
Մըրոտեցին սրտիդ յոյզերը պայծառ։
Դո՛ւն, ըզգացման, իտէալի վեհ մարտի՛կ,
Միշտ աննըկուն կըռուեցար։

Բարձրը բռնած ջահը լոյսին ծիածան,
Թափառեցար մագըլցելով սարէ սաք.
Ըստուերները, մէջերն եղան ցիր ու ցան
Լոյս դրօշակովդ ուր հասար։

Ազգիդ տըւիր դալար ուժերը կեանքիդ,
Ու խամրեցար որ անոր յոյսը ծաղկի.
Արդ, աւերակ խորշերուն մէջ անժըպիտ
Չե՞ս տեսներ բոցը կեանքի,

Ու հայ միտքը՝ որ թեւ առած կը թըռի
Դէպի այգերն ու ըսփիւռները հեռուն,
Քու անունիդ արձագանքը սխրալի
Միշտ կրկնելով դարերուն։

Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ

Արխիվային

1. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 427, ց. 1, գ. 4, թ. 13
2. Հայաստանի ազգային պատկերասրահ, հուշաձեռագրային բաժին, Փանոս Թերլեմեզյան, կյանքիս հուշերը (մեքենագիր), ֆ. 60, տ. 11, թղթ. 27, 28
3. Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Շահեն Կուժիկեանի ֆ. 3բ

Գրականություն

1. Արմենիայի նպատակը և ուղղութիւնը, 1885թ. յունիս 18-ի շրջաբերական, Հայաստանի Ազգային գրադարան, անձեռնամխելի ֆոնդ, «Արմենիա» թերթի հավաքածու
2. Ալոյան Լ., «Մշակի» հրապարակախոսները 19-րդ դարավերջ, 20-րդ դարասկիզբ, Ե., 2014թ.
3. Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ, Կ. Պոլիս, 1876թ.
4. Անդրեասեան Ա., Ուրուագիծ հայոց պատմութեան և հայկական մշակոյթին, Բէյրութ, 1968թ.
5. Աբաս. թատերգութիւն չորս արարուածով Գործ Կարապետ Յովհանջանեանց, Վենետիկ, 1920թ.
6. Բայրամյան Լ., Արևմտյան Հայաստանը անգլիական իմպերիալիզմի պլաններում, Ե. 1982թ.
7. Բարխուդարյան Վ., Համառոտ ուրվագիծ ռուսական կայսրության հայկական դպրոցների պատմության, Ե., 2006

8. Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI-19172.), Ե., 2004թ.
9. Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի ռազմավարությունը և էջեր նրա հերոսապատումից, Ե., 2012թ.
10. Գևորգյան Մ., Գրիգոր Զոհրապը հրապարակագիր և գեղագետ, Ե., 2010թ.
11. Դարբինեան Ա., Հայ ազատագրական շարժման օրէրեն, Փարիզ, 1947թ.
12. Եազըճեան Գ., Ապտ'իւլ Համիտ Բ. Կարմիր սուլթանը, Պէյրութ, 1980թ.
13. Թորոսեան Պ., Ո՞վ է Մկրտիչ Փորթուգալեանը, Նիւ-Յորք, 1912թ.
14. Խուրշուդյան Լ., Հայկական հարցը, Ե, 1995թ.
15. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Ե., 1980թ.
16. Համբարյան Ա., Հայ հասարակական-քաղաքական միտքը արևմտահայության ազատագրության ուղիների մասին, Ե., 1990թ.
17. Համբարյան Ա., Արևմտյան Հայաստանի տնտեսությունը 1856-1914թթ., Ե. 2003թ.
18. Մուշեղ Արքեպիսկոպոս, Մանչէսթրի հայ գաղութը, Բուրսան, 1911թ.
19. Յաւիւճեան Ա., Համառօտ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան կազմութեան, Գահիրէ, 1977թ.

20. Նաթալի Շ., Թուրքերը և մենք, Ե. 1992թ.
21. Նաթանեան Մ., Արմենական կուսակցութիւնը, Գահիրէ, 1990թ.
22. Նորեան Ա., Դրուագներ Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութիւնից, Բոստոն, 1917թ.
23. Չերազ Մ., Թէ ինչ շահեցանք Պէրլինի վեհաժողովէն, Կ. Պոլիս, 1878թ.
24. Պողոսյան Վ., Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական մտքի գնահատմամբ, Ե., 2005թ.
25. Սերոբեան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Պէյրութ, 1937թ.
26. Սարրաֆեան Կ., Ակնարկ մը արմենական կուսակցութեան պատմութեան վրա, Պէյրութ, 1960թ.
27. Վարդանյան Վ., Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, Ե. 1969թ.
28. Վարդիվառեան Յ., Մեծ երազի ճամբուն ուղեւորները եւ հայմապարփակ պատմութիւն Ռամկավար Ազատական կուսակցութեան պատմութեան, հատոր Ա, Նուիր Ճրագի, 2015թ.
29. Տէր-Մկրտչեան Եր., Գանձեր Վասպուրականի, հատոր 1, Պոսթոն, 1960թ.
30. Տէր-Կարապետեան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներու մէջ, Կ. Պոլիս, 1911թ.

31. Տոնոյան Գ., Ռուս-ֆրանսիական դաշինքը և Հայկական հարցը XIX դարի 90-ական թվականներին, «Հայոց պատմության հարցեր», թիվ 7, 2006թ.
32. Ռաֆֆի, Երկերի ժողովածու, հատոր 10, Ե., 1991թ.
33. Ուզունեան Հ., Արեւմտահայ ազատագրական պայքարին ծագումը Արմենական կուսակցութեան մէջ եւ Ռամկավար Ազատական կուսակցութիւնն իր 60-ամեակին, Լոս Անճելըս, 1986թ.
34. Փափազեան Վ., Իմ յուշերը. հատոր 2. Պէյրութ, 1952թ.
35. Քառասուն տարուան աշխատաւորը, Կ. Պոլիս, 1914թ.

Ռուսերեն

1. Германские источники о геноциде армян, Е., 1991г.
2. Положения армян в Турции до вмешательств держав в 1895г., М., 1896г.
3. Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 1, М.-Л., 1928г.
4. История Второго интернационала, М., 1966г.Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912г.-10 мая 1914г., Петроград, 1915г.

Մամուլ

1. «Արեւելք», 1910թ., Հունվարի
2. «Արաքս», (Պետերբուրգ), 1887թ., գիրք Ա
3. «Դրօշակ», 1908, թիվ 7

4. «Մշակ», 1880թ., թիվ 207
5. «Պայքար», (ԱՄՆ), 1951թ., թիվ 65
6. «Պայքար», (Երևան), 1995թ., թիվ 2-3
7. «Ազատամարտ», (Երևան), 1993թ., թիվ 14
8. «Արմենիա», 1885թ., թիվ 1
9. «Արմենիա», 1885թ., թիվ 6
10. «Արմենիա», 1885թ., թիվ 10
11. «Արմենիա», 1885թ., թիվ 16
12. «Արմենիա», 1886թ., թիվ32
13. «Արմենիա», 1886թ., թիվ 35
14. «Արմենիա», 1886թ., թիվ 37
15. «Արմենիա», 1886թ., թիվ 55
16. «Արմենիա», 1893թ., թիվ 13
17. «Արմենիա», 1893թ., թիվ 14
18. «Արմենիա», 1894թ., թիվ 2
19. «Արմենիա», 1894թ., թիվ 4
20. «Արմենիա», 1894թ., թիվ 17
21. «Արմենիա», 1894թ., թիվ 30
22. «Արմենիա», 1894թ., թիվ 35
23. «Արմենիա», 1894թ., թիվ 36
24. «Արմենիա», 1894թ., թիվ 39
25. «Արմենիա», 1894թ., թիվ 44
26. «Արմենիա», 1894թ., թիվ 58
27. «Արմենիա», 1894թ., թիվ 59
28. «Արմենիա», 1894թ., թիվ 66
29. «Արմենիա», 1894թ., թիվ 68

30. «Արմենիա», 1894թ., թիվ 69
31. «Արմենիա», 1894թ., թիվ 71
32. «Արմենիա», 1895թ., թիվ 6
33. «Արմենիա», 1895թ., թիվ 16
34. «Արմենիա», 1895թ., թիվ 20
35. «Արմենիա», 1895թ., թիվ 40
36. «Արմենիա», 1895թ., թիվ 42
37. «Արմենիա», 1895թ., թիվ 43
38. «Արմենիա», 1895թ., թիվ 61
39. «Արմենիա», 1895թ., թիվ 64
40. «Արմենիա», 1895թ., թիվ 68
41. «Արմենիա», 1895թ., թիվ 71
42. «Արմենիա», 1895թ., թիվ 74
43. «Արմենիա», 1895թ., թիվ 80
44. «Արմենիա», 1895թ., թիվ 86
45. «Արմենիա», 1896թ., թիվ 3
46. «Արմենիա», 1896թ., թիվ 6
47. «Արմենիա», 1896թ., թիվ 27
48. «Արմենիա», 1896թ., թիվ 32
49. «Արմենիա», 1896թ., թիվ 50
50. «Արմենիա», 1896թ., թիվ 51
51. «Արմենիա», 1896թ., թիվ 53
52. «Արմենիա», 1896թ., թիվ 54
53. «Արմենիա», 1896թ., թիվ 70
54. «Արմենիա», 1896թ., թիվ 71
55. «Արմենիա», 1897թ., թիվ 10

56. «Արմենիա», 1897թ., թիվ 13
57. «Արմենիա», 1897թ., թիվ 75
58. «Արմենիա», 1897թ., թիվ 86
59. «Արմենիա», 1898թ., թիվ 46
60. «Արմենիա», 1898թ., թիվ 56
61. «Արմենիա», 1898թ., թիվ 76
62. «Արմենիա», 1898թ., թիվ 79
63. «Արմենիա», 1899թ., թիվ 46
64. «Արմենիա», 1899թ., թիվ 47
65. «Արմենիա», 1899թ., թիվ 58
66. «Արմենիա», 1899թ., թիվ 59
67. «Արմենիա», 1899թ., թիվ 60
68. «Արմենիա», 1899թ., թիվ 62
69. «Արմենիա», 1899թ., թիվ 64
70. «Արմենիա», 1900թ., թիվ 13
71. «Արմենիա», 1901թ., թիվ 3
72. «Արմենիա», 1901թ., թիվ 5
73. «Արմենիա», 1901թ., թիվ 8
74. «Արմենիա», 1901թ., թիվ 9
75. «Արմենիա», 1901թ., թիվ 21
76. «Արմենիա», 1901թ., թիվ 34
77. «Արմենիա», 1901թ., թիվ 39
78. «Արմենիա», 1902թ., թիվ 1
79. «Արմենիա», 1902թ., թիվ 2
80. «Արմենիա», 1902թ., թիվ 9
81. «Արմենիա», 1902թ., թիվ 17

82. «Արմենիա», 1902թ., թիվ 23
83. «Արմենիա», 1902թ., թիվ 24
84. «Արմենիա», 1903թ., թիվ 12
85. «Արմենիա», 1903թ., թիվ 14
86. «Արմենիա», 1903թ., թիվ 17
87. «Արմենիա», 1903թ., թիվ 21
88. «Արմենիա», 1903թ., թիվ 22
89. «Արմենիա», 1903թ., թիվ 23
90. «Արմենիա», 1903թ., թիվ 25
91. «Արմենիա», 1903թ., թիվ 27
92. «Արմենիա», 1903թ., թիվ 28
93. «Արմենիա», 1904թ., թիվ 2
94. «Արմենիա», 1904թ., թիվ 4
95. «Արմենիա», 1904թ., թիվ 5
96. «Արմենիա», 1904թ., թիվ 7
97. «Արմենիա», 1904թ., թիվ 9
98. «Արմենիա», 1904թ., թիվ 8
99. «Արմենիա», 1904թ., թիվ 10
100. «Արմենիա», 1904թ., թիվ 11
101. «Արմենիա», 1904թ., թիվ 12
102. «Արմենիա», 1904թ., թիվ 29
103. «Արմենիա», 1904թ., թիվ 31
104. «Արմենիա», 1904թ., թիվ 36
105. «Արմենիա», 1904թ., թիվ 37
106. «Արմենիա», 1904թ., թիվ 40
107. «Արմենիա», 1905թ., թիվ 28

108.«Արմենիա», 1905թ., թիվ 32
109.«Արմենիա», 1905թ., թիվ 35
110.«Արմենիա», 1905թ., թիվ 36
111.«Արմենիա», 1905թ., թիվ 38
112.«Արմենիա», 1905թ., թիվ 43
113.«Արմենիա», 1905թ., թիվ 45
114.«Արմենիա», 1906թ., թիվ 40
115.«Արմենիա», 1906թ., թիվ 41
116.«Արմենիա», 1906թ., թիվ 44
117.«Արմենիա», 1907թ., թիվ 19
118.«Արմենիա», 1907թ., թիվ 34
119.«Արմենիա», 1908թ., թիվ 1
120.«Արմենիա», 1908թ., թիվ 3
121.«Արմենիա», 1908թ., թիվ 6
122.«Արմենիա», 1908թ., թիվ 7
123.«Արմենիա», 1908թ., թիվ 10
124.«Արմենիա», 1908թ., թիվ 13
125.«Արմենիա», 1908թ., թիվ 16
126.«Արմենիա», 1908թ., թիվ 39
127.«Արմենիա», 1908թ., թիվ 40
128.«Արմենիա», 1908թ., թիվ 43
129.«Արմենիա», 1911թ., թիվ 1
130.«Արմենիա», 1911թ., թիվ 5
131.«Արմենիա», 1911թ., թիվ 8
132.«Արմենիա», 1911թ., թիվ 27
133.«Արմենիա», 1911թ., թիվ 34

134.«Արմենիա», 1911թ., թիվ 40
135.«Արմենիա», 1911թ., թիվ 44
136.«Արմենիա», 1912թ., թիվ 22
137.«Արմենիա», 1912թ., թիվ 27
138.«Արմենիա», 1912թ., թիվ 28
139.«Արմենիա», 1913թ., թիվ 1
140.«Արմենիա», 1913թ., թիվ 3
141.«Արմենիա», 1913թ., թիվ 4
142.«Արմենիա», 1913թ., թիվ 5
143.«Արմենիա», 1913թ., թիվ 9
144.«Արմենիա», 1913թ., թիվ 16
145.«Արմենիա», 1913թ., թիվ 17
146.«Արմենիա», 1913թ., թիվ 19
147.«Արմենիա», 1914թ., թիվ 24
148.«Արմենիա», 1914թ., թիվ 28
149.«Արմենիա», 1914թ., թիվ 33
150.«Արմենիա», 1914թ.. թիվ 35
151.«Արմենիա», 1914թ., թիվ 36
152.«Արմենիա», 1914թ., թիվ 37
153.«Արմենիա», 1914թ., թիվ 38
154.«Արմենիա», 1914թ., թիվ 40
155.«Արմենիա», 1914թ., թիվ 42
156.«Արմենիա», 1914թ., թիվ 45

Խոսք Արմեն Կարապետյանի աշխատության մասին

Հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում հաճախ է հայտնվել հասարակական-քաղաքական մտքի, քաղաքական հոսանքների և կուսակցությունների գաղափարախոսության լուսաբանումը: Այդ շարքում իր առանձնահատուկ տեղն է զբաղեցնում «Արմենիա» թերթի, նրա խմբագիր ու գաղափարախոս Մ. Փորթուգալյանի և վերջինիս գործունեության արգասիք համարվող հայ իրականության առաջին քաղաքական կազմակերպության՝ Արմենական կուսակցության գաղափարների և գործունեության հետազոտումը:

Հետխորհրդային հայ պատմագրության մեջ այդ խնդրի հետևողական ու համակողմանի ուսումնասիրմանն է նվիրվել պ.գ.թ. Ա. Կարապետյանը, որը հայ ընթերցողի ուշադրությունն է հրավիրում Մ. Փորթուգալյանի և «Արմենիա» թերթի գաղափարների խորքային վերլուծությամբ:

Հրատարակության ներկայացվող աշխատությունը նախ և առաջ աչքի է ընկնում նրանով, որ հեղինակի կողմից ընտրվել է հիմնահարցերի լայն ու ընդգրկուն խումբ, ինչը և գրավական է դարձել սպառիչ և ամբողջական պատկեր ձևավորելու համար:

Առանձնապես հաջողված են «Հայ քաղաքական ուժերի և հոսանքների նկատմամբ վերաբերմունքի արտահայտումը», «Հանուն հայ եկեղեցու ինչքի և իրավունքների պաշտպանության», «Մեծ պետությունների և եվրոպական դիվանագիտության անաչառ քննադատությունը», «Բարենորոգումների ծրագրի հանդեպ դիրքորոշումը» ենթաբաժինները, որտեղ լավագույնս արտահայտվել են հեղինակի քննական մոտեցման և վերլուծական կարողությունները:

Ուշագրավ են հեղինակի մեկնաբանությունները արմենականների և Արմենական կուսակցության շուրջ շրջանառվող վիճելի և հակասական հիմնադրույթի, այն է՝ Մ. Փորթուգալյանի կողմից կուսակցության և առհասարակ կուսակցությունների ձևավորման նկատմամբ ունեցած անմիջական մասնակցության խնդրի կապակցությամբ:

Մ. Փորթուգալյանի գործունեության վերաբերյալ թերևս սպառիչ մեկնաբանություն է հնչում Արփ. Արփիարյանի գնահատականի մեջ. «ան եղաւ, որ ազատութեան շունչը տուաւ ամբողջ Վանի: Առանց արտասանելու հեղափոխութիւն բառը ան պատրաստեց հեղափոխական սերունդ մը»:

Աշխատությունը շարադրված է գիտական պատշաճ մակարդակով, պարզ, գրագետ և հարուստ ոճով, ընթերցվում է հետաքրքրությամբ:

130 տարուց ավել գործող հայ ազգային կուսակցության գաղափարական հոր և զավակի՝ «Արմենիա» պարբերականի քարոզած առաջադիմական գաղափարների ժամանակակից մեկնաբանությունը, կարծում ենք արդի գիտական, քաղաքական ու քաղաքագիտական նշանակություն է ձեռք բերում, այդ թվում և հայկական քաղաքական դաշտի առողջացման և ակտիվացման նկատառումներից ելնելով:

Այս համատեքստում կարևորում ենք Ա. Կարապետյանի աշխատությունը, ուստի և այն երաշխավորում ենք հրատարակության:

Մ. Հերացու անվան ԵՊՀ Հասարակագիտական առարկաների ամբիոնի վարիչ, պ.գ.դ., պրոֆեսոր
Վ. Հ. Մելիքյան

Կարծիք

Պատմական գիտությունների թեկնածու Արմեն Կարապետյանի «Մկրտիչ Փորթուգալյանը և «Արմենիան» հայ ազգային-ազատագրական պայքարում» աշխատության մասին

Ուշադրությամբ կարդացի պատմաբան Արմեն Կարապետյանի «Մկրտիչ Փորթուգալյանը և «Արմենիան» հայ ազգային-ազատագրական պայքարում» աշխատությունը: Այն խորությամբ բացահայտում է Մկրտիչ Փորթուգալյանի ունեցած բացառիկ դերակատարությունը 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարի հոլովույթում: Փորթուգալյանի հեղափոխական կերպարը, նրա դյուցազնական գործունեությունը դիտարկված է համահայկական իրականության լայն խորապատկերի վրա: Համոզիչ տրամաբանությամբ ներկայացված են Փորթուգալյանի գործունեության գաղափարա-քաղաքական առումով աճման ու հասունացման փուլերը՝ որպես մանկավարժ, դաստիարակ, հրատարակիչ, կրթական գործիչ, լրագրող, հրապարակախոս, խմբագիր, հասարակական-քաղաքական գործիչ:

Աշխատության էջերում Մ. Փորթուգալյանի գործունեությունը, «Արմենիա» պարբերականի միջոցով արտահայտված նախաձեռնություններն ու գաղափարները սերտորեն շաղկապվում են հայկական իրականության մեջ տե-

ղի ունեցող հասարակական-քաղաքական գործընթացների հետ:

Հիմնավոր փաստական նյութով տրված է «Արմենիա» պարբերականի հիմնադրման նախադրյալներն ու ընթացքը, պարբերականի արտահայտած հիմնարար սկզբունքները, գաղափարական ու բարոյական կողմնորոշումներն ու մոտեցումները: «Արմենիան» գլուխ առ գլուխ, քայլ առ քայլ ներկայացված է որպես հայկական իրականության մեջ հեղափոխական և ազգային-ազատագրական գաղափարներ սերմանող և արմատավորող առաջադեմ պարբերական, որի գործունեության շնորհիվ միմյանց հետ հոգևոր-գաղափարական առումներով շաղկապվեցին և աղերսվեցին Եվրոպայի, Ամերիկայի, Մերձավոր ու Միջին Արևելքի հայ գաղթօջախները: Աշխատության էջերից պարզ ու հստակ ցոլանում է այն ճշմարտությունը, որ «Արմենիա»-ն իր ժամանակի ամենահամարձակ, ըմբոստ պարբերականն էր, որը սուր քննադատության թիրախում էր պահում սուլթան Համիդի բռնապետության առօրյա-ամենօրյա հալածանքներն ու կամայականությունները Արևմտյան Հայաստանում:

Աշխատության հեղինակը համոզիչ փաստերով ներկայացնում է այն իրողությունը, որ «Արմենիան» տարիներ ու տասնամյակներ շարունակ բարձրաձայնում, ահազանգում էր, որ բռնություններն ու հալածանքները կարող են ավարտվել Արևմտյան Հայաստանի լրիվ հայաթափմամբ,

ինչը իրողություն դարձավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

Աշխատության էջերում քննության են առնվում նաև այլ հարցեր ու խնդիրներ՝ կապված լրագրի դերի, նշանակության, կատարած գործառույթների հետ: Լայնորեն տրված է պարբերականի էջերում հայ գրականության, մշակույթի, կրոնական հիմնահարցերի լուսաբանման ընթացքը:

Ամփոփելով, ընդգծենք, որ պատմաբան Արմեն Կարապետյանի գրախոսվող սույն աշխատանքը պարունակում է զգալի նորույթ հայ պատմագիտական մտքի առումով և էապես հարստացնում է սույն հիմնահարցի շուրջ եղած գիտական գրականությունը:

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Էդիկ Մինասյան

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄԻ

Մ. Փորթուգալյանը և «Արմենիան» հայ ազգային-ազատագրական պայքարում

Համակարգչային ձևավորումը՝ Ա. Ղազարյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության
Տպաքանակը՝ 100 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ԱՐՄԵՆ ՀՈՎԱԿԻՄԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Ծնվել է Արարատի մարզի Ջանգակատուն գյուղում: 1987թ. գերազանցությամբ ավարտել է Խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-աշխարհագրական ֆակուլտետը: Սովորել է նույն բուհի լրացուցիչ մասնագիտությունների ֆակուլտետում («լրագրություն» բաժնում):

1988թ. ընդունվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ասպիրանտուրան (առկա) և այն ավարտել 1991թ.: Նույն ինստիտուտում 1995թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արմենականների դերը արևմտահայության ազգային-ազատագրական շարժման մեջ» թեմայով: Նրա բազմաթիվ հոդվածներ տպագրվել են գիտական հանդեսներում և ժողովածուներում: